


2129

84

2-15



34
2-15
us

ԼԻԻՏՈՎԻԳ ՀՍԼԵՎԻ



Ա.Բ.ԲԱՅ

ՔՕՆՍՏԱՆՔԻՆ

ԹԱՐԳԱՆՆԵՅ

9401

ԵՒՓԻՄԷՊ ՕՏԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Բ.ԲԱՅ

Ա.Բ.ԲԱՅ

Պատր Ալի, Քեօբա Ք.Ք. Կամի

B. P. 558

Կ. ՊՈԼԻՍ

STAMBOUL

1928

2011

26883 4-3

9

[Handwritten signature]



5844-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՐՈՒՆՆԵՐՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

Սիրելի Քոյր իմ,

Արքա Քոնստանդինի քարգմանութիւնդ կարգացի մեծ ախորժով: Երբ այսպիսի քարգմանութիւնք խիղճով ու խնամով պատրաստուած ըլլան, լեզուն ահա կամաց կամաց կը նոխանայ, բռները կը հեղին, եւ բացատրութիւնները կը սկսին նկիլ նոր իմաստներու: Ոչ մէկ բան մէկէն ի մէկ կրնայ փոխուիլ, բայց ամեն բան կամաց կամաց կը փոխուի. լեզուներն ալ ամեն բանի պէս են: Հեղինակութիւն եւ քարգմանութիւն երկուքն ալ կը ծառայեն այս նպատակին. բերես քարգմանութիւնը հեղինակութենէն ալ աւելի, զի քարգմանողը խաբեբայ մը չ'է, պէտք է զտնէ բարձր կամ բացատրութիւնը գոր հեղինակը գործածեր է, զտնէ հանկ լեզուին մեջէն կամ լեզուին հոգւոյն համեմատ ի լոյս բերէ: Թարգմանողը պէտք է մաքուր լինի, մազլլի, ու վերջապէս հաւասարի բնագրին: Քու քարգմանութիւնդ ոչ քէ միայն նմանած այլ հաւասարած է: Ուղղախօս չ'ես միտ, զի լեզուն դեռ կանոն չ'ունի եւ բերես դու ալ, ինծի պէս, այս անկանոնութեան մեջ առաւելութիւն մը կը զտնես, տեղի չիոփոխութիւն եւ աւելի տարածութիւն. այլ միտ. քաղցրախօս ես, եւ ոչ մէկ անգամ կարծես գրչիդ ներքեւ հանդպած է խիստ բարձր կամ խիստ բացատրութիւն մը: Ու-

2003

Տի բարգմանութիւնդ մեծ բարեմասնութիւն մ'ալ ունի, ինչ որ գրին ալ մեծ բարեմասնութիւնն է, ինչ որ յասկութիւնն է ամեն գեղեցիկ բանի, պարզութիւն եւ բնականութիւն:

Ինչ գեղեցիկ վեպ է վեպն որ ընտրեալ ես բարգմանելու: Ես չորս տարի է, նամանաւանդ շատ տարի է, այսպէս գեղեցիկ վեպ չը կարդացի: Ըստ վիճակագրական հաշուոյ՝ օրը վեպ մը կը հրատարակուի Բարիգի մեջ. բայց տար տարիս մէկ անգամ չը հրատարակուիր այսպիսի վեպ մը: Անտարակոյս՝ հօգո՛ր երեւակայութեան գործք մը չ'է Հէլէվիլիին այս գործք. անտարակոյս չ'է ժողովուած նա, իր գրին մեջ, ինչ որ մարդկութիւնը անձինք ունի որք նիւաղներու կը նմանին, ինչ որ աշխարհի իր պատահմունքներ ունին որ նակասագիրներու կը նմանին, որք իրար մղելով եւ իրարու բախելով, իրենց հօգո՛ր գնացին մեջ գոր կը գծեն նարսար ու կորովի ձեռքեր, կոխկոտելով ծաղկանց բերքերն ու բոյսք բարուց անմեղութեան, կռիւնք է կռիւնն ու հանգոյցի ի հանգոյց, բունն կիրքերու եւ աւելի բունն եղելութեանց դաւալցութեան մը միջեւէն, սոսկումք է սոսկում, կը հասնին մինչեւ ինչ որ վերջին բառն է ամենայնի մահ: Կամ թէ՛ խունապք որ խունքն բարեպետ կամ փառաստե կեանքներու մեջ, որք չ'ազգեցին կծկիլ՝ ամփոփուի, որք աննուէր ժամանակի եւ աննպաստ պարագայից մեջ հալովեցան, յորս սկզբնական հակասութեանց խառնուե-

լով նաեւ այն հակասութիւնն որ կը ձնին տարապայման անհամեմատութիւններէ, կենսոներ ձեւացան խրքին եւ անու, որպէս խուքք ի ծովու, ուր հուսկ ուրեմն կուգան խրիլ հոն կամ փերիլ՝ փոքրիկ մակոյկն ալ ու մեծ առագաստաւոր: Ոչ այս՝ ոչ այն. ոչ ալ հղնիմ նկարագրութեան մեջ հեղութիւն փնտելով ու գայրակոյրութեան մեջ հրապոյր, տեղոյ եւ ժամանակի գոյներուն հաւատարմութիւնն ընելու ելած է, ինչ որ սոսկալի չ'է՝ բայց մեծ ալ չ'է, այնպիսի իրական աշխարհի մը մեջ փոխադրելով ընթերցողը՝ ուր գծում Եաներ ու աղկաղի կիրքեր միայն կը Եարժին ու ի տես կուգան, ուր խղնմանաց, պատուի եւ սիրոյ առուստի մը մեջ բռնուած կը տեսնես ամեն կարգի մարդիկ, ի վաճառ հանելով՝ սա իր սկզբունքները, նա իր առաքինութիւնը, մին հաւատք, միւսը սերը, սա իր տոհմն՝ զինանցանը, նա իր տաղանդը. ինչ որ զգուտն կուտայ մարդուն, կարոտ կիներ՝ պատուաւ պատանիներ, Եամփուէ ձեռունքներ՝ որոնց Եունչը ապակաւութիւն մըն է բարձ եւ աղարժի մանկութեան, Եոսպոյրութեան եւ Եուայութեան Եուրջը դարձող Եորիկ երիտասարդներ, եւ անոնք որ իրենց անձր ասելու չափ պատճառներ ունին՝ զայն ամենուն սիրոյն բնձալելու պատճառս վարարներ. Իրա է որ՝ Բարիգի կեանքն ալ լի է այսպիսեօք:

Վեպն ինչու է. որպէս զի մարդը մխիթարուի իրականութենէ: Այսպէս է Բու բարգմանած

վեպդ. անոյ՛ց գոյնով՛ անոյ՛ց հոսով՛ գասկի-ծա-
 դիկ, որ գասկի օրուան գգացու՛մը կուսայ մար-
 դուն. կամ թէ բսեմ՛ սերունսի՛րսք՛ որ կը փչէ ա-
 ուսուց, բոլոր բու՛մու՛նքները բերելով հետք,
 երբ ննդուկներն ու խայտիկներն իրենց բոյներէն
 դուրս կ'ելնեն ու օդին մէջ կը սարածուին նյութ-
 սալով: Ոչինչ կայ հոն բուռն ու բունագբօսիկ.
 գործողութիւնը հանդարտ ու բնական կարգով
 յառաջ կ'ընթանայ, սահուն ու հոսուն, կենդանի-
 այլ ոչ կասաղի ջուրի մը պէս, որ առանց եզեր-
 ներ պատելու՝ փայփայելով կարծես կ'անցնի,
 ծառերուն սակէն, խիներուն վրայէն, աստե
 անդ՝ մերք անուշակ, մերք սեւուշակ ցոլացնելով
 երկնից գոյները ու վայրացն ու կը քաւալէ մերք
 շուրս ու մերք շափառուկը, մինչեւ որ հասնի հո-
 րիզանին ընդ որ մարդուս աչքը կը գօրէ հեռու-
 են՝ ծիածաւալ դառեր՝ մշտականաչ դարբտօք ու
 ծովն ալ կապուտակ ալիւններով:

Իրականութիւն. ո՞վ կ'ըսէ թէ այսպիսի գոր-
 ծողութիւն մը՝ իրականութեան հետ չը համեմա-
 սիր երբէք, ո՞վ կ'ըսէ թէ մարդուս կեանքին պա-
 բագայները չ'են նկիր նաեւ երբեմն բարեյաջող
 պատահականութեանց, ո՞վ կ'ըսէ թէ ամեն մարդ
 հաւատար կերպով՝ դժբախտութեան կնիքը կը
 կրէ ծնած օրէն մինչեւ մեռած օրը: Ես որ առաջ
 չ'էի հաւատար, հիմա կը հաւատամ բացառու-
 րեանց. եւ մանաւանդ կը հաւատամ այն երկու
 նկարագիրներուն որք երկու հրաշակերտ են այս

վեպին մէջ, կոտայ քան թէ գրեալ, Աբբա Քօնր-
 քանքէնն ու Օրիորդ Պերինան: Ինչ պայծառ
 դէմքեր երկունն ալ, որոնց ինքնուրոյն անձնակա-
 նութիւնքը առջի տղերէն կ'ըսկսին գասուիլ
 որուուիլ, երբալով կը հաստատուին ու գրքին
 վերջը իրենց բոլոր բնդարձակութիւնը կ'ըսա-
 նան:

Մեր ազգայնոց ականջները շատ լեցուցած են
 չար երեցներու վեպերով. շատ Հայեր կան որ
 Դաղդիացի ու Խալապցի բոլոր քահանայից հա-
 մար անուն մը միայն գիտեն, ժեզուրք: Մակայն
 ո՛րչափ շատ է բարի երեցներուն թիւը, մանա-
 ւանդ զիւղերուն մէջ: Իր պատճօնին բնութեամբն
 իսկ բարի կ'ըլլայ պարզ քահանայն, այն որ թե-
 ռեւս կարեւորագոյնն է եկեղեցական դասակար-
 գութեան մէջ, այն որ ժողովուրդին հետ կը կե-
 նակցի, այն որուն համար մարդոց սիրտերը գաղ-
 նիւ չ'ունին, այն որուն առջեւ անպատուակ կը
 հոլանին մարդկային քուսառութիւնն ու տեսակ
 տեսակ խեղճութիւններ, այն որուն պատճօնն է
 մխիթարել եւ օրհնել, այլ որուն պատճօնն է
 առաւօտ եւ երեկոյ աղօթել ամենուն համար:

Այսպէս է Աբբա Քօնրքանքէն: Այն բնութիւն-
 ներէն է նա որ ոչ բոլորովին անստրակայ, ոչ
 ալ մանաւանդ ստրափառ, խոշանալ չ'են կարող
 այլ մանաւանդ սողալ չ'են կարող. խորին ապա-
 ուստուտ տեսլեր չ'են սիրեր, դիւր դառն ու ան-
 մեղս հարկոն կը սիրեն. ինչ բան գիտեն, ալ

գիտցածնին ասոնք են, ուղղութիւն, պարկետութիւն, պարսաւորութիւն, սերն բնկերին եւ Ասուծոյ: Աբբա Փօնոքանքէն բարի մարդ եւ բարի փանայ է: Հարուսին բարեկամ՝ զի աղփասին բարեկամն է. հիւանդին մանիհին ու հոգեվարժին սնարին միտ ներկայ, ինչպէս միտ ներկայ է Ասուծոյ սանր մեջ: Քիչ մը մանուկ, քիչ մ'ալ ծեր, շոյլ մարդու մը պէս սակար կը ցանկ ու լիաձեռն կուտայ ուզողին չ'ուզողին. կծծի մարդու մը պէս կը համրէ ու կը համրէ: ու կը փայփայէ ոսկիներն որ իրենը չ'են եւ որ պիտի անհետս բնեն ցականքն ու սառապանքը իր գիւղէն: Կերուխումէ չը փայտչիր ու քիչ մ'ալ անձնդիր է. նստելով գոհ չ'ըլլար, քիչ մ'ալ ընկողմանիլ կ'ուզէ ու հանգիստ քիկնարտ կը փնտռէ. այլ կը նայիս պատերազմի կ'երթայ որ փոկերնին գտնուի անոնց որ հայրենեաց համար պիտի մեռնին: Եւ այն ի՞նչ սիրով՝ անհուն գորովով՝ գուգուրալով կը սիրէ ժամը, իր բարեկամին որդին որ իր աչացն առջեւ մեռած էր պատերազմի դատին վրայ: Եւ իրեն համա՛ր է որ ժամ կ'անի կը զարգանայ, ամեն տեսակ ձիւրբերով, սպայ բանակին մեջ՝ տղայ իր գիւղին մեջ, պատկանելի եւ սիրելի. ու իրեն համա՛ր է որ շնորհաց ու նազոյից դոխոյ մը, Պէրիման, ծովեր անցնելով կ'ելլայ կուգայ, հետք բերելով շնորհաց գերագոյնը, սերը որպէս զի Աբբա Փօնոքանքէն՝ իր ծեր օրերուն՝ ժամին երջանկութիւնը տեսնէ:

Եւ ո՞վ է այդ աղջիկը, շնորհաւոր գեղանի,

արժարի հանգե ունի եւ հանգե ունի բարձր ու փափուկ զգացումներու. որ մասամբն մանկան՝ նիհար դալկանար այտերուն վրայ ժպիտ կ'ածէ, ու ծեր երեցին՝ արտասուքը այտերը կը բերէ, երբ եկեղեցւոյն մեջ դաւանակ կ'ածէ որ լուր էր ժամանակաց հետէ: Ի՞նչ տեսակ աղջիկ է այդ, խիզախ՝ յանձնապատասան եւ անխոռով ամենուն առջեւ մինչեւ սիրոյ առջեւ ալ. մեծ տոյր մը ունի, տեղայր ունի, ի՛նքն է որ իր անձին կը հրամայէ, այնպէ՛ս պիտի բնէր երբ հայր ու մայր ալ ունենար: Քառաձի կը վարէ, կ'աւտանակէ, ուր ալ ըլլայ, երբ ալ ըլլայ, նոյն իսկ անձնեայ պատանոյ մը հետ երբ ըլլայ: Յապուրակի կը հասնի, կը նայի համարձակ. ու երբ իր կակուղ քննու ձեռքերը զինուորականի մը խոտոր ձեռքերուն մեջ կը դնէ, զինուորականին խոտոր ձեռքն է որ կը դողայ: Ի՞՞՞տան՝ փաշազուն՝ արհայազուն՝ անգղիական լորտեր ու հայացի լորտեր, դարպաս են կազմեր իր շորս դին, յօններն ի վե՛ր կը պնտէ, ու կ'երթայ ժամին ձեռքը կը խնդրէ ու իրեն ամուսին կ'ածէ:

Ամերիկացի՛ է:

Պէրիմայի նկարագիրը լաւ ըմբռնելու համար՝ պէտք է հանչցած ըլլայ Ամերիկացի աղջիկներ: Անոնք ոչ բնաւորութեամբ, ոչ դաստիարակութեամբ կը նմանին Եւրոպացի աղջկանց: Ամերիկացի աղջիկ մը նոր եւ ուժով հոգի վրայ բուսած ծաղիկ մըն է որ ամեն կողմէ ծիլ կ'արձակէ

բաց օդին մեջ. Եւրոպացի աղջիկը գրեթէ նման է ջերոց, մեջ հասած տուկի. մէկուն շրեւ պէս է որ չը նեղի, միւսին գոց տեղ պէս է որ գոյնն ու հոտն պահէ. Եւրոպացի աղջկան բնաւորութիւնը՝ հինգամ բնկերութեան մը ներօրիւնները, պատշաճից պատկառանքը ու ձեւամուտքիւնն ունի: Ամերիկացի աղջիկը՝ կրնայ շառագունիլ, Եւրոպացի աղջիկը՝ միտ կ'աղափարի: Եւրոպացի աղջիկը՝ կը սիրահարի, Ամերիկացի աղջիկը՝ կը սիրակցի որ տեսակցելուն մէկ կերպն է եւ որ հետեւանք մ'ալ երէ ունենայ, այն եւս ամուսնութիւնը կ'ըլլայ ի ճորճս անկախութեան եւ ազատութեան աղջկանց: Եւրոպայի մեջ աղջիկները կ'ամուսնացնեն, Ամերիկայի մեջ կ'ամուսնանան. ճնողաց միջնորդութիւնը եւ օժիտ հարկաւոր չ'են հոն: Բայց Ամերիկացի աղջիկը որչափ կարելի է ետ կը ձգէ, չը փութացնէր ամուսնութեան ժամը, զի վարժարանէն մինչեւ ի վիճակն ամուսնութեան՝ այդ միջոցին է որ կ'ըսկսի նա զգալ ինքզինքը ու հանչնալ գաւխարհ. այդ միջոցին է որ կը վայելէ նա ազատութիւն եւ անկախութիւն. անկէ ետք պիտի սկսի պարտաւորութեանց խիստ կեանքը եւ Ամերիկացի աղջկան ազատութիւնը ա՛լ կը լքենայ. ի՛նչու կը լքենայ. վասն զի՝ երէ կեղծուպատիւ ամօրխածութիւնն ու կեղակարծ պարտաւորութիւններ չ'են կապեր կաշկանդեր զնա, սակայն՝ երբ իրական եւ լուրջ պատաւորութիւնը կը խօսի՝ Ամերիկացի

աղջիկը կը հնազանդի (*): Ամերիկացի աղջիկը՝ ազատ է մինչեւ որ ամուսնանայ: Եւրոպայի բնկերութեանց մեջ՝ կիներ ամենայն ինչ է, Ամերիկայի բնկերութեանց մեջ՝ աղջիկը ամենայն ինչ է. աղջիկները կը նախազանեն ամեն տօներու, զրուարձութեան վերաբերեալ ամեն հանդիսներու: Պարտանազեսի մը մեջ երէ եռտուն կանայք ըլլան, հարիւր աղջկունք կը գտնուին: Ամերիկայի մեջ աղջիկներն բնորոշութեան օր ունին:

Այս եական տարբերութիւնը Եւրոպացի աղջկան ու Ամերիկացի աղջկան վիճակին ու բնրացին մեջ, բոս իս, բոլորովին ի նպաստ է Ամերիկացի աղջկան զոր անբասնանելի բրած են բնկերութեան սովորութիւններն ու ազգային բարք: Ասկէ ծագած է անձնականութեան հզօր զգացումը որ ունին Ամերիկացի աղջկունք. ոչ երբէք այլուր եւ ոչ իսկ յԱնգղիա եւս այնչափ զարգացած ու զօրացած է ու այն ետին հառազայրմամբ կ'ըլլան բարի եւ առափինի՝ երբ մարդ իր

(*) Երբ ամենէն մեծ Ամերիկացին մեռաւ, կիներ տասն եւ ուր ամիս փակուեցաւ մնաց սենեկին մէջ առանց դուրս ոտ կոխելու, պատուհանի մ'առջեւ նստած՝ ուրկէ կը տեսնէր հեռուանց ամուսնոյն գերեզմանը, մինչեւ այն օր ուր ինք ալ մեռաւ: Չ'եմ բեր թէ ամեն Ամերիկացի Վաշինկթըն է ոչ ալ ամեն Ամերիկոսի անօր կնոջ նման. այլ անաշտ պատմիչ ու համապատեօրոյնը կը վկայեն թէ ամուսնական սէրն ու հաւատարմութիւնը՝ ազգային աւանդութեան ու բարոյից անանչաս մասն է յ'Ամերիկայ:

անձին տեսն է, երբ մեծ կը զգայ սիրքը ներսիդին, այն աստի զուրս կը ծաւալի: Ուրի՞նչ տեսակեալ անձնականութեան զգացումն է միայն՝ որուն յառաջ բերած արդիւնքները արժեք կրնան ունենալ մարդկային գործոց մէջ, եւ իր ուղղակի ու բնդհանրապէս սիրելի արտայայտութիւնն են՝ անկեղծութիւնն եւ համարձակութիւնն յանդգնութեան չափ: Նախ քան ըլլալու է, ապա կարելի է երջանիկ ըլլալ: Եւ այս է այս վեպին ալ եզրակացութիւնը Պերինային համար, քանի որ երջանիկ:

Եւ այս վեպին մէջ ուր եղբերեզական բան մը չը կայ, ի՞նչ արտաբերած տեսարաններ կան սակայն, այնչա՛փ իրաւ է որ մարդու սրտին առջեւ մեծ ու պզտիկ չը կայ եղբուրեանց: Եւ ի՞նչ աւելի արտաբերուող ու արտաբերուող տեսարան կրնայ ըլլալ, քան երբ յանկարծ կը սրտի ուղղափառ փոփոխուան որ սահմարկեր մնացեր էր երկու Ամերիկոնեաց առջեւ գորս երկու հերետիկոսունի կը կարծէր, լսելով իրենցմէ թէ ուղղափառ են եղեր, կը գոչէ ձեր երեցը. ուղղափառ են եղեր, կ'աղաղակէ պառաւ Բոլինը, քրքռալով բոլոր անձովը սրտին սեմին վրայ, ազգանի ամանը ձեռքը. ուղղափառ են եղեր, կը հնչէ արձագանգն երիտասարդ սպային ակամջին՝ որ նա ալ շագոյնն ի ձեռին կը ներկայանայ եւ որուն անորո՞ւ ձայն մ'արդէն ուրի՞նչ բան ալ սկսեր էր մտնել սրտին մէջ այն միջոցին: Այսպէս վառ հոգով գրուած ուրի՞նչ տեսարաններ ալ կան, որ կը խօսին ու կը

բարախեն, գործինակ՝ երկու հազար ֆրանկնոց ծրարներու տեսարանը որ նոր յուզմանց եւ նոր ու շառաչածայն արտայայտութեանց պատճառ կ'ըլլայ երեցին ու Բոլինին կողմէն: Այլ ինչ որ վեր կը հանէ իմ սիրս ու արտաբերուող ալ աչքերս, վերջին տեսարանն է այն . . . երբ կամաց մը երիցասան զուրք կը գալանն ուր ապաստաներ է ժանն եւ ուր յանկարծ կ'երեւնայ Պերինան . . . եւ ա՛յ ժանն ոչ էս կրնայ փախչիլ՝ երջանկութեան ձեռքէն:

Այսպէս է անա այս վեպը, արժանի՛ որ բարգմանելի, արժանի՛ որ կարդան հայ ընթերցողք, արժանի՛ որ նուիրես գայն, ինչպէս մտադիր էս մեր Հօրն յիշատակին:

Բոլը


Գ. Ս. ՕՏԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ ԽՕՍԲԸ

Մեծանուն գրագէտ Գրիգոր Օսեանին գեղեցիկ յառաջաբանէն յետոյ, զոր գրին սկիզբը հրատարակած ենք, մեզի շիջնար գործին գրական արժեք վերլուծել: Միայն խղճի պարտք մը կատարած ըլլալու համար, ըսենք որ Արքայ Քօնսթանդուլինի լեզուն փոխելու պէտք տեսած ենք, քարգմանիչ եւ փիմէ Օսեանի սանունը ոճը պահելով հանդերձ: Եւ փիմէ Օսեան իր քարգմանած վեպը ձօնած էր իր ծնողին յիշատակին: Մենք ալ իբր երախտագիտութեան նշան, սոյն վեպին երկրորդ հրատարակութիւնը կը ձօնենք ամբողջ Օսեան գերդաստանին, որ հայ գրականութեան փառք եղած է:

2. ԿՕՇԿԱՐԵԱՆ

ԱՐԲԱՅ ՔՕՆՍՏԱՆԹԷՆ



Ա.

ՏԱՔ արեւուն տակ, փոշիով ծածկուած ճամբուն վրայէն, ծեր քահանայ մը կ'երթար՝ տակաւին առոյզ ու հաստատուն քալուած քով: Արդէն երեսուն տարիէն աւելի էր որ արքայ Քօնսթանթէն երէցն էր այն փոքրիկ դիւղին որ կը քնանար հունա, դաշտին մէջ, Լիզօթ ըսուած նեղ առուակի մը եզերքը:

Քառորդէ մը ի վեր, արքայ Քօնսթանթէն կը յառաջանար Լօնկվայի դղեակին պատի երկայնքին, երբ դղեակին մուտքի վանդակադրան առջև հասաւ, բարձր եւ միաձոյլ, հինաւուրց քարերէ երկու սիւներու վրայ յեցած, որոնք ժամանակէն մաշած ու կրծուած էին, երէցը կանգ առաւ եւ տխրութեամբ նայեցաւ ստուար և կապոյտ յայտարարութիւններուն, որոնք սիւներուն վրայ փակցուած էին:

Այս յայտարարութիւնները կը ծանուցանէին թէ չորեքշաբթի օրը, 18 մայիս 1881, կէս օրէն ժամ մը յետոյ, Լօնկվայի կալուածին վաճառու մը, չորս մասի բաժնուած, տեղի պիտի ունե-

նար Սուվինիի քաղաքային դատարանի աճուրդի
ատեանին առջեւ :

Ա. Լօնկվալի դղեակը եւ յարակից շէնքերը,
փառաւոր աւազաններ, համաստան, հարիւր յի-
սուն արտավար տարածութեամբ դարաստան մը՝
պատերով շրջապատուած, եւ որուն մէջէն կ'անցնի
Լիզօթ գետը. վաճառման գին՝ վեց հարիւր հա-
զար ֆրանք.

Բ. Ապիտակ-թագին ազարակը, երեք հարիւր
արտավար. վաճառման գին՝ հինգ հարիւր հա-
զար ֆրանք.

Գ. Ռօզընէյի ազարակը, երկու հարիւր յի-
սուն արտավար. վաճառման գին՝ չորս հարիւր
հազար ֆրանք.

Դ. Միօնի բալձրաբերձ անտառը ու պուրակ-
ները՝ չորս հարիւր յիսուն արտավար տարածու-
թեամբ. վաճառման գին՝ հինգ հարիւր յիսուն
ազար ֆրանք.

Այս թիւերը յայտարարութեան տակ գումար-
ուելով՝ երկու միլիօն յիսուն հազար ֆրանքի
պատկառելի գումարը յայց կուտային :

Այսպէս ուրեմն, բաժան բաժան պիտի ըլլար
այդ շքեղ կալուածը, որ երկու դարերէ ի վեր
ազատ մնացեր էր յօշոտումէ եւ անեղձ փոխան-
ցուէր էր զաւկէ զաւակ, Լօնկվալի ընտանիքին
մէջ : Յայտարարութիւնը կը ծանուցանէր նաեւ
թէ այսպէս մաս առ մաս աճուրդի դրուելէն ետ-
քը՝ թոյլտուութիւն պիտի ըլլար միացնելու եւ

կալուածը ամբողջովին աճուրդի հանելու. սա-
կայն պատճառը շատ մեծ էր եւ հաւանաբար
բնաւ գնորդ մը չպիտի գտնուէր ամբողջին :

Տը Լօնկվալ մարքիզուհին վեց ամիս առաջ
մեռած էր. 1875ին կորսնցուցած էր իր միակ
որդին՝ Ռօպէտ տը Լօնկվալ. ժառանգորդներն
էին մարքիզուհիին երեք թոռները. Բիէն, Էլէն
եւ Քամիլ : Էլէն եւ Քամիլ անչափահաս ըլլալ-
ուն, հարկ եղած էր կալուածը աճուրդի դնել :
Բիէն՝ քսան երեք տարեկան երիտասարդ մը՝
խենթութիւններու հետեւանքով կէս մը սնան-
կացած էր, հետեւաբար չէր կրնար Լօնկվալը զըն-
նելը միաքէն անցնել :

Կէս օր էր : Մէկ ժամէն, Լօնկվալի դղեակը
նոր տէր մը պիտի ունենար : Ո՞վ պիտի ըլլար
այս տէրը : Ո՞ր կինը պիտի դար նստէր այն հի-
նաւուրց օթոցներով ծածկուած մեծ սրահին մէջ,
վառարանին անկիւնը, մարքիզուհիին՝ գիւղա-
կան երէցին վաղեմի բարեկամուհիին տեղ : Ան
վերականգնած էր գիւղին եկեղեցին. ան, յանձն
առեր էր պէտք եղած նիւթերը մատակարարել
եւ հողալ զեղարանին, զոր երէցին սպասուհին
Բօլին կը բանեցնէր երիցատան մէջ. ան էր որ
չաբաթը երկու անգամ իր լանսօին մէջ, ուր
խոնած էին փոքրիկ հանդերձեղէններ եւ բուր-
դէ հաստ շրջազգեստիկներ, կուգար Քօնսթան-
թէն արբան կ'առնէր և անոր հետ կ'երթար աղ-
ֆաներու որսաբուսիկն, ինչպէս կ'ըսէր ինք :

75-4485

Բոլոր ասոնք մտածելով՝ ծերունի քահանան նորէն սկսաւ քալել... ան յետոյ կը յիշէր, — ամենէն սուրբերը մանր մունր տկարութիւններ ունեցած են — նաեւ իր երեսնամենի քաղցր սովորութիւնները, որոնք յանկարծ ընդհատուեր էին: Ամէն հինգշաբթի եւ կիրակի օրերը դղեակը կը ճաշէր...: Ո՛րքան զինքը կը շփացնէին, կը շոյէին, կը փաղաքշէին դղեակին մէջ...: Փոքրիկ Գամիլ, որ ութը տարեկան էր, կուգար ծուկերուն վրայ կը նստէր ու կ'ըսէր իրեն.

— Գիտէ՞ք, տէր երէց, ձեր եկեղեցիին մէջ կ'ուզեմ պսակուիլ. այն օրը անուշիկ մայրիկս շատ շատ ծաղիկներ պիտի զրկէ, անանկ որ եկե- եղեցին ծաղիկներով պիտի լենայ, լեփ լեցուն պիտի ըլլայ...: Մարեմայ ամիսէն (*) աւելի: Մեծ պարտեզի մը պէս պիտի ըլլայ, ճերմակ, ճերմակ,

Մարեմայ ամիսը...: Եւ անա ճիշդ Մարեմայ ամիսն էր. երբեմն խորանը այս օրերս դղեակէն բերուած ծաղիկներուն տակ կը ծածկուէր: Այս տարի, վայրի շուշաններու ու ճերմակ եղ- րեւանիներու մէկ քանի խեղճուկ փունջեր կը տեսնուէին խորանին վրայ, ոսկեգօծեալ ճենապակիէ անօթներու մէջ:

Ատենօք. Մարեմայ ամսուն ամէն կիրակիներ- րը ձայնաւոր Պատարագի ատեն եւ ամէն իրի-

(*) Կարդիկները մայիսը Ս. Կուսիմ նուիրած են եւ կ'ըսեն Մարեմայ ամիս: Մ. Ք.

կուն, օրիորդ Հէպէր, տիկին տը Լօնկվալի ըն- թերցուհին, կուգար փոքրիկ դաշնավիճը զար- նելու, զոր մարքիզուհին նուիրած էր եկեղեցի- ին...: Այ՛որ խեղճ դաշնավիճը լուծեան դա- տապարտուած թալ չէր ընկերակցեր տիրացու- ներու ձայնին եւ մանկանց երգերուն: Օրիորդ Մարգօ, թղթատարութեան անօրէն, որ քիչ շատ նուագող էր եւ սիրայօժար կուգար օրիորդ Հէպէրին տեղ նուագելու, չէր համարձակեր, որովհետեւ կը վախնար որ գիւղապետին կողմէն կը մատնանշուի իբրեւ կղերամիտ, քանի որ գիւ- ղապետը ազատամիտ էր: Իր յառաջդիմութեան փնտրակար կրնար ըլլալ այսպիսի բան մը:

Դարաստանին պատին ծայրը հասած էր, այն դարաստանին՝ որուն ամէն մանուածապատ խոր- շերը ընտանի էին ծերունի երէցին: Հիմա ճամ- բան կը շարունակուէր Լիզօթի եղերքը. վտա- կին անդիի կողմը կը տարածուէին երկու ազա- րակներուն մարգագետինները. իսկ անկէ անդին, կը տարածուէր Միօնի բարձրաբերձ անտառը: Այդ ստացուածքը պիտի բաժնուէր ... մա՛ս մա՛ս պիտի բաժնուէր...: Այս մտածումը խեղճ քահանային սիրտը կը ճմլէր: Իրեն համար, երե- տուն տարիէ ի վեր, այս ամենը յարակից էին, մէկ մարմին եղած էին: Քիչ շատ իր ինչքն եղած էր, իր առարկան եղած էր այս հոյակապ ստացուածքը: Ինքզինքն իր տանը մէջ կը զգար, երբ Լօնկվալի հողերուն վրայ կը կոխէր: Շատ անգամ կը պատահէր որ յօժարակամ կանգ

կ'առնէր ցորենի ծայրածաւալ արտի մը առջեւ, հասկ մը ցորեն կը փրցունէր, կը ստկէր ու կ'ըսէր իւրովի:

— Օ՛ն անդր, ազուո՛ր հատիկ, աճուր ու առօք. լաւ հունձք մը պիտի ունենանք այս տարի:

Եւ խնդութեամբ կը շարունակէր ճամբան իր արտերուն, իր արօտներուն եւ իր մարմանդնեօրուն մէջէն: Կարճ խօսքով, իր կեանքին բոլոր բաներով, իր բոլոր սովորութիւններով իր բոլոր յիշատակներովն այս ստացուածքին կապուած էր, օրհասական այդ կալուածին:

Արբան հեռուն կը նշմարէր Սպիտակ-Թագին ագարակը, որուն կարծիք աղիւսէ ծածքերը անստաօին կանաչութեան վրայ որոշ կ'երեւային: Հոն ալ երէցը իր ասնը մէջ էր: Պէճնար՝ մարքիզուհիին ագարակագետը՝ իր բարեկամն էր, եւ երբ ձերբակալուած անոր աղքատներուն եւ հիւանդներուն ըրած այցելութիւններէն ուշ կը մնար, երբ արեւը հորիզոնին մօտենալով՝ արբանքիչ մը խոնջէնք կը զգար ծունկերուն վրայ եւ ձգտում ստամոքսին մէջ, կանգ կ'առնէր եւ Պէճնարին տունը կ'ընթրէր. խոզի ճարպով համեմալից միսը եւ գետնախնձորը կը ճաշակէր ու մրգօղիի ախանը կը պարպէր. ընթրիքէն յետոյ, ագարակագետը իր սեւ ու ձեր գամբիկը կը լծէր իր փոքր երկանիւ կառքին ու երէցը Լօնկվալ կը տանէր: Երկու բարեկամները բոլոր ճամբան կը ճոճոյային ու կը կոռւրտէին... Երէցը կը յանդիմանէր ագարակագետը թէ պատարագի

չէր երթար, ու ան սապէս կը պատասխանէր:

— Կինս ու աղջիկներս կ'երթան ինձի համար... Դուք գիտէ՛ք, տէր երէց, մեր մէջ այսպէս է. կիները կրօնք ունին էրիկ մարդոց համար. անոնք մեր առջեւ բանալ պիտի տան արքայութեան դռները:

Ու չարամտութեամբ կը յարէր, խարազանի փոքրիկ հարուած մը տալով սեւ զամբիկին.

— Եթէ արքայութիւն մը կա՛յ, Մերունի երէցը վեր կը ցատկէր նստած տեղէն:

— Ինչպէ՛ս եթէ կա՛յ: Բայց անշուշտ արքայութիւն մը կայ:

— Ուրեմն դուք հոն պիտի ըլլաք, տէր երէց: Կ'ըսէք թէ ապահով չէ հոն ըլլալնիդ... Ես կ'ըսեմ թէ ապահով է... հոն պիտի ըլլաք դուք, հոն պիտի ըլլաք. դուռը կայնած՝ ձեր ձուխերը պիտի դիտէք եւ պիտի շարունակէք մեր փոքրիկ գործերով զբաղիլ... Ու պիտի ըսէք սուրբ Պետրոսի... քանի որ Սուրբ Պետրոսն է որ արքայութեան բանալիները ունի, այնպէս չէ՛:

— Այո՛, Սուրբ Պետրոսն է:

— Ուրեմն, պիտի ըսէք Սուրբ Պետրոսին, եթէ ուզէ դուռը երեսիս գոցել, առարկելով թէ պատարագի չէի երթար, պիտի ըսէք անոր. «Բէ՛հ, ի՛նչ ալ ըլլայ, թողէ՛ք որ անցնի... Պէճնարն է ան, մարքիզուհիին ագարակագետներէն մէկը, բարի մարդ մը որ Բաղաքագետական

Խորհուրդին անդամ էր և մայրապետներուն մնալուն համար քուէ տուաւ, զորս կ'ուզէին վարժարանէն վտարել»։ Այս խօսքը պիտի շարժէ Սուրբ Պետրոսին սիրտը. ուստի սապէս պիտի պատասխանէ ան. «Լաւ ուրեմն, անցի՛ր նայինք Պէճնար. բայց աղէկ գիտցիր, որ տէր երէցին հաճոյք պատճառելու համար է»։ Որովհետեւ դուք վերէն ալ երէց պիտի ըլլաք, և Լօնկվալի երէց, Ձեզի համար տխուր բան կ'ըլլար արքայութիւնը, եթէ արգելք ըլլար որ Լօնկվալի երէց մնաք։

Լօնկվալի երէց, այո՛, բոլոր կեանքին մէջ առ միայն եղած էր. չէր երազած և ուզած ըլլալ ուրիշ բան։ Երեք չորս անգամ անոր առաջարկած էին դաւառական մեծ երէցութիւններ, ճոխ եկամտուով, մէկ կամ երկու տեղապահով. մերժած էր։ Ան իր փոքրիկ եկեղեցին կը սիրէր, փոքրիկ գիւղը, փոքրիկ երիցատունը։ Հոն առանձին էր, հանգիստ, ու ամէն բան ինք կ'ընէր. ճամբուն վրայ էր միշտ, արեւին կամ անձրեւին տակ, հովին ջուլ կարկուտին դէմ։ Մարմինը խոնջէնքէն կարծրացած էր։

Իր երիցատան մէջ կ'ապրէր, զիւղական մեծ տուն մը՝ որ գերեզմանոցով միայն կը զատուէր եկեղեցիէն։ Երբ երէցը սանդուխին վրայ կ'ելլէր՝ տանձենիներուն ու զեղձենիներուն ոստերը կապչուլու համար, պատին վրայէն գերեզմանները կը տեսնէր, որոնց վրայ վերջին ազօթ քնները

ըսած և հողի առաջին թին պարպած էր։ Այն ապէն իր պարտիզպանի պաշտօնը կատարելով հանդերձ, մտքէն փոքրիկ ազօթ մը կը զրուցէր մեռեալներուն մէջէն այնպիսիներու փրկութեան համար, որոնց նկատմամբ սիրտը հանգիստ չէր և որոնք կրնային քաւարանին մէջ բռնուած ըլլալ։ Միամիտ և անխոռով հաւատք մը ունէր։

Իսկ այս գերեզմաններուն մէջ, գերեզման մըն ալ կար, որ միւսներէն աւելի յաճախ կ'ընդունէր իր այցելութիւնները և ազօթ քները։ Իր վաղեմի բարեկամին տօքթէօն Ռէյնօի գերեզմանն էր, որ իր թեւերուն մէջ մեռած էր 1871ին, և ինչ պարագաներու տակ։ Տէօքթէօրը Պէճնարին պէս էր, երբեք պատարագի ու խոստովանանքի չէր երթար, բայց շատ բարի, շատ ողորմած ու տառապեալներուն շատ կարեկից էր...

Մեծ մտատանջութիւն, մեծ սրտատանջութիւն եղած էր երէցին. ո՛ւր դացած էր արդեօք իր Ռէյնօ բարեկամը։ Յետոյ միտքը կը բերէր զիւղական բժիշկին ազնիւ կեանքը, որ անձնուրացութեամբ և քաջասրտութեամբ լի էր, կը յիշէր անոր մահը, մանաւանդ մահը, ու կ'ըսէր ինքնիրեն.

«Արքայութեան մէջ, արքայութեան մէջ միայն կրնայ ըլլալ ան։ Ամենաբարին Աստուած թերեւս զայն զրկեց քիչ մը քաւարան... ձեւի

համար, բայց հինգ վայրկեանէն անկէ դուրս հանած ըլլալու է...»:

Ահա այս բաները կ'անցնէին ծեր երէցին մտքէն, երբ կը շարունակէր ճամբան դէպի Սուվինեի: Քաղաք կ'երթար՝ մարքիզուհիին փաստաբանին տունը, իմանալու համար թէ կալուածին վաճառումը ի՛նչ արդիւնք ունեցաւ և ո՛րոնք էին Լօնկվալի նոր տէրերը: Արբան տակաւին մէկ քիլօմէթր ճամբայ ունէր կտրելիք, Սուվինեի առաջին տուները հասնելէն առաջ. Լավառտանսի դարաստանին պատին տակէն կ'երթար, երբ գլխուն վերեւ ձայներ լսեց, որոնք կը կանչէին զինքը.

— Տէ՛ր երեց, տէ՛ր երէց:

Այս տեղ, թմբիներու երկար ծառաստան մը որմը չըջապատելով՝ դարատափ մը կը ձեւացնէր ու արբան գլուխը վեր առնելով՝ տեսաւ տիկին տը Լավառտանսը ու իր որդին Բօլը:

— Ո՛ւր կ'երթաք, տէր երէց, հարցուց կոմսուհին:

— Սուվինեի, դատարանը, հասկնալու համար...:

— Կեցէ՛ք... Պ. տը Լարնաք հոս պիտի գայ, վաճառումէն յետոյ արդիւնքը պատմելու համար: Արբայ Քօնսթանթէն դարատափին վրայ ելաւ:

Ժէրթրիւտ տը Լաննիլի՝ կոմսուհի Լավարտանսի շատ դժբախտ եղած էր: Տասնըութ տարեկանին մէջ յիմարութիւն մը ըրած

էր, միակը իր կեանքին մէջ, այլ անդամանելի: Սիրոյ խանդովն ու հրայրքով յափշտակուած, ամուսնացեր էր Պ. տը Լավառտանսի հետ, որ այն ժամանակի ամենէն հրապուրիչ եւ ամենէն մտացի մարդոց մէկն էր: Պ. տը Լավառտանս չէր սիրեր զինքը, եւ միայն ի հարկէ ստիպուած կ'ամուսնանար. իր հօրենական հարստութեան մինչեւ վերջին ընդունը մտխած էր, և երկու երեք տարիէ ի վեր ճար ճարակ ընելով ինքզինքը կը բռնէր ընկերութեան մէջ: Օրիորդ տը Լաննիլի այս ամենը գիտէր ու ինքզինքը խաբել չէր ուզեր, այլ կ'ըսէր ինքնիրեն. «Պիտի սիրեմ մինչեւ որ ան ալ զիս սիրէ»:

Ա՛սկէ առաջ եկած էին բոլոր իր դժբախտութիւնները, իր կեանքը հանդուրժելի կ'ըլլար, եթէ ամուսինը այդքան սիրած չըլլար, սակայն չափազանց կը սիրէր: Այնքան սիրեց որ ի վերջոյ յողմեցուց գայն: Ամուսինը վերսկսաւ ու շարունակեց իր առջի անկարգ կեանքը: Տասնըհինգ տարիներ անցան այսպէս երկար նահատակութեամբ, զոր կրեց տիկին տը Լավառտանս անկարեկից համակերպութեան դրսերեւոյթով, համակերպութիւն մը որ չի կար սրտին մէջ: Ոչինչ կրնար զինքը սփոփել կամ բուժել այդ սէրէն որ զինքը կը տանջէր:

Պ. տը Լավառտանս մեռաւ 1869ին. տասնըչորս տարեկան զաւակ մը կը թողուր, որուն վրայ արդէն կ'երեւային իր հօրը բոլոր թերու-

Թիւնները եւ բոլոր յատկութիւնները: Տիկին տը Լավառտանսի հարստութիւնը ծանրապէս վտանգուած ըլլալուն, քիչ մը խախտած ու պակասած էր: Տիկին տը Լավառտանս Բարիզի ապարանքը ծախեց ու զիւրը քաշուեցաւ. շատ խնայողութեամբ եւ շատ կանոնաւորապէս կ'ապրէր, ինքզինքը իր զաւակին դաստիարակութեանը նուիրելով բոլորովին:

Սակայն հոն ալ վիշտեր եւ տխրութիւններ կը սպասէին իրեն: Բօլ տը Լավառտանս թէեւ ուշիմ, սիրուն և բարի, բացարձակապէս կ'ըմբոստանար ամէն պարտաւորութեան և ամէն աշխատութեան դէմ: Յուսահատեցուց այն երեք չորս դաստիարակները որոնք ի դուր ջանացին այս տղուն գլխին մէջ լուրջ բան մը մտցնել. Սէն-Սիռի վարժարանը ներկայացաւ ու չընդունուեցաւ, և սկսաւ Բարիզի մէջ երկու երեք հարիւր հազար ֆրանք մոխել արագօրէն ու յիմարօրէն:

Այս բանը ընելէն ետքը՝ Ափրիկէի որսորդներու զօրագունդին մէջ մտաւ. իր սկզբնաւորութեանը մէջ բախտը ունեցաւ Սահարա զրկուած փոքրիկ վաշտի մը մասնակցելու. քաջաբար կուուեցաւ հոն, ընդհուպ ենթասպայի աստիճան առաւ և երեք տարի ետքը փոխ-տեղակալ պիտի անուանուէր, և ահա մանկամարդուհի մը սիրահարուեցաւ, որ Ալժէրիի թատրոնին մէջ Մասամ Անլիօ կը խաղար: Բօլին ժամանակը լրացած ըլլալուն, պաշտօնը ձգեց և Բարիզ եկաւ իր մանկամարդ

դերասանուհիին հետ... յետոյ անոր յաջորդեց պարուհի մը... ապա դերասանուհի մը. ի վերջոյ ձիարշաւի մէջ խաղացող կին մը: Ամէն տեսակը կը փորձէր: Դատարկասպորտներու փայլուն այլ թշուառ կեանքն ապրեցաւ...: Սակայն Բարիզի մէջ երեք չորս ամիս միայն կ'անցնէր: Մայրը երեսուն հազար ֆրանք թոշակ յատկացուցած էր, յայտարարելով թէ աւելի դրամ չպիտի վճարէր կենդանութեանը, ամուսնանալէ առաջ: Բօլ լաւ կը ճանչնար իր մայրը և զիտէր որ անոր խօսքերը ծանրակշիռ էին: Ուստի Բարիզի մէջ ինքզինքը ցուցնելու և ցնծուն կեանք մը վարելու համար, իր երեսուն հազար ֆրանքը մարտէն մայիս ամիսներուն մէջ կը մոխէր. յետոյ ամենայն հլու թեամբ կուգար Լավառտանս, գեղազուարճ կեանք մը անցնելու. երբեմն որսի կ'երթար, երբեմն ձուկ բռնելով կը զբաղէր և կամ ձի կը հեծնէր թնդանօթածիգներու զօրագունի սպաներուն հետ, որոնք Սովիէի զօրանոցն էին: Դաւառացի նորթիկներ ու ցնծուհիներ յաջորդած էին Բարիզի երգչուհիներուն և դերասանուհիներուն, առանց լմոցնելու զանոնք: Քիչ մը փնտռելով կարելի է միշտ գաւառներու մէջ գտնել ցնծուհիներ, ու Բօլ շատ կը փնտռէր:

Երէցը տիկին տը Լավառտանսի առջեւ ելաւ — կրնամ, բաւ անոր տիկին տը Լավառտանս, առանց Պ. տը Լարնաքի գալուն սպասե-

չու, ըսել ձեզի թէ ո՛րոնք են Լօնկվալը գնողները: Կատարելապէս հանդիստ եմ և չեմ տարակուսիր մեր գործին յաջողութեան վրայ: Իրարու ղէմ անմտօրէն չպայքարելու համար, համաձայնեցանք մէջերնիս, դրացիս Պ. Կալլաո՛ Բարիզի մեծ սեղանաւոր մը ու ես: Պ. տը Լաոնաք պիտի առնէ Միօնը. Պ. Կալլաո՛ դղեակը և Սպիտակ-Թագը. ես՝ Ռօզըրէն: Ես ձեզ կը ճանչնամ, տէր երէց, հիմա պէտք է մտահոգութեան մէջ ըլլաք ձեր աղքատներուն նկատմամբ. սակայն ապահով եղէ՛ք: Այս Կալլաոները շատ հարուստ մարդիկ են և ձեզի շատ դրամ կուտան:

Այս միջոցին՝ փոշիի ամպի մը մէջ կառք մը երեւցաւ հեռուն, ճամբուն վրայ:

— Ահա Պ. տը Լարնաքը, գոչեց Բօլ: Իր ձիերը կը ճանչնամ:

Երեքն ալ փութով դարատափէն վար իջնելով՝ դղեակ վերադարձան...: Դղեակ հասան այն միջոցին, ուր կառքը կանգ կ'առնէր դրան առջեւ:

— Է՛, ի՞նչ եղաւ, հարցուց տիկին տը Լափառտանս:

— Ի՛նչ պիտի ըլլայ, պատասխանեց Պ. տը Լաոնաք, ոչինչ կրցանք գնել...:

— Ի՛նչպէս, ոչինչ, հարցուց տիկին տը Լափառտանս, գոյնը նետելով ու սաստիկ յուզուելով:

— Ո՛չինչ, ո՛չինչ, բոլորովին ոչինչ, ո՛չ մէկս, ո՛չ միւսս:

Եւ Պ. տը Լաոնաք, կառքէն վար ցատկելով, պատմեց թէ ի՛նչ տեղի ունեցածէր՝ Սուվինեիի դատարանի աճուրդի ատեանին մէջ:

— Նախ ամէն բան յաջող զնաց, ըսաւ: Դղեակը Պ. Կալլաոին վրայ մնաց վեց հարիւր հազար յիսուն ֆրանքի: Ուրիշ զնորդ չգտնուեցաւ... Յիսուն ֆրանքի աճուրդը բաւական չլաճ էր: Ասոր փոխարէն, Սպիտակ-Թագին համար փոքրիկ պայքար մը տեղի ունեցաւ: Աճուրդը հինգ հարիւր հազար ֆրանքէն մինչեւ հինգ հարիւր քսան հազար ֆրանքի ելաւ, եւ դարձեալ յաղթութիւնը Պ. Կալլաոին մնաց: Ռօզըրէյի համար նոր պայքար եւ աւելի սաստիկ. ան ալ վերջապէս ձեր վրայ մնաց, տիկին, չորս հարիւր յիսուն հազար ֆրանքի...: Իսկ ես Միօնի անտառը առանց մրցման առի, հարիւր ֆրանք աւելցընելով: Այսպէս ամէն բան լմնցած կ'երեւար. ամենքը արդէն ոտքի ելած էին երթալու, ամենքը մեր փաստաբաններուն շուրջը կը հաւաքուէին, իմանալու համար թէ ո՛վ են գնողները: Սակայն վաճառումը ստանձնող դատաւորը Պ. Պրազիէ լութիւն կը պահանջէր, եւ բարապանը վաճառման կը հանէր չորս մասերը միացած, երկու միլիոն հարիւր հազար յիսուն կամ հարիւր վաթսուն հազար ֆրանքի. միտքս չէ ո՛րն է ճիշդը...: Հեզնական շունչ մը կը շրջէր ատեանին մէկ ծայրէն միւսը: Ամէն կողմէ սա խօսքերը կը լսուէին. «Բաներնիդ նայեցէք, ո՛չ ոք

պիտի ըլլայ...» Մէյ մըն ալ կարճահասակ ժիպէն, փաստաբան մը որ առաջին կարգին մէջ նստած էր և որ մինչեւ այն ատեն կենդանութեան նշան ցոյց չէր տուած, ոտքի կ'ելլէր և կ'ըսէր հանդարտութեամբ. «Չորս մասը միատեղ գնող ունիմ, երկու միլիոն երկու հարիւր հազար ֆրանքի» Շանթի հարուած մըն էր կարծես: Մեծ ազաղակ մը բարձրացաւ, որուն յաջորդեց խոր լռութիւն: Սրահը լեցուն էր ագարակապաններով և հողագործներով, որոնք քաղաքին չորս կողմէն եկած էին: Հողի համար այսքան դրամ. կ'ապշէին կը մնային ակնածանքով...: Սակայն Պ. Կալլառ դէպի Սանտրիէ ձռեցաւ, այն փաստաբանը որ իր կողմէ գին կ'աւելցնէր...: Պայքարը սկսաւ ժիպէոին ու Սանտրիէին մէջ...: Երկու միլիոն հինգ հարիւր հազար ֆրանքի հանեցին գինը...: Պ. Կալլառ պահ մը վարանեցաւ...: Ապա որոշեց...: Մենջեւ երեք միլիոնի ելաւ...: Հոն կեցաւ և կալուածք ժիպէոին վրայ մնաց...: Ամենքը վրան ինկան, շրջապատեցին զայն, ջախջախեց...: Անո՛ւնը, անո՛ւնը: — Ամերիկուհի մըն է, պատասխանեց ժիպէն. տիկին Սքոթ:

— Տիկին Սքոթ, գոչեց Բօլ տը Լավառտանս:

— Կը ճանչնամ զայն, հարցուց տիկին տը Լավառտանս:

— Կը ճանչնամ մի... կը ճա՛...: Ոչ բնաւ...: Սակայն իր տունը պարահանդէսի գացի, վեց շաբաթ կայ:

— Իր տունը պարահանդէսի գացիր ու զինքը չես ճանչնար...: Ի՞նչ տեսակ կին է ուրեմն:

— Հրաշագեղ, չքնաղ, մտատիպար կին մը հրաշալի՛ք մը:

— Պ. Սքոթ մըն ալ կա՞յ հոն:

— Անշուշտ, բարձրահասակ ու խարտեաչ: Պարահանդէսին ներկայ էր...: Ինծի ցոյց տըւին...: Աջ ու ձախ կը բարեւէր դիպուածաբար: Բնաւ չէր զբօսնուր, ասոր տարակոյս չունիմ...: Մեզի կը նայէր և կարծես թէ ինքնիրեն կ'ըսէր. «Ո՞վ են այս մարդիկը...: Ի՞նչ ընելու եկեր են հոս իմ տանս մէջ...» Մենք հոն դացած էինք տիկին Սքոթը և տիկին Սքոթի քոյրը՝ օրիորդ Բէրսիվալը տեսնելու...: Ու կ'արժէր որ երթայինք:

— Աս Սքոթները կը ճանչնամք, ըսաւ տիկին տը Լավառտանս, Պ. տը Լառնաքին ուղղելով խօսքը:

— Այո՛, տիկին, կը ճանչնամ...: Պ. Սքոթ մեծահարուստ Ամերիկացի մըն է, որ անցեալ տարի եկաւ Բարիզ հաստատուեցաւ...: Այս անունը լսելուս պէս՝ հասկցայ որ յաղթանակը երբեք անորոշ չէր մնացած: Կալլառ կանխալ յաղթուած էր: Աս Սքոթները նախ սկսան Բարիզի մէջ երկու միլիոնի ապարանք մը գնել, Մօնսօի դարաստանին մօտերը:

— Այո՛, Միւռիլլօ փողոցը, յարեց Բօլ՝ ձեզի ըսի թէ իրենց տունը պարահանդէսի գացի. աս էր...:

— Թ՛՛ղ որ Պ. տը Լառնաքը խօսի: Դուն տիկին Սքօթին տունը պարահանդէսի երթալու պատմութիւնդ ետքը կ'ընես մեզի:

— Այսպէս ահա մեր Ամերիկացիները Բարիզ տուն տեղ կ'ըլլան, շարունակեց Պ. տը Լառնաք, և ոսկին կը սկսի տեղալ: Իրաւ է որ ետքէն տեսած մարդիկ են, որոնք դրամը խենթի պէս պատահաններէն վար նետելով կը զուարճանան: Այս մեծ հարստութիւնը նոր բան է. կը պատմեն թէ տիկին Սքօթ տասը տարի առաջ կը մուրայ եղեր Նիւ-Եօրքի փողոցներուն մէջ:

— Կը մուրայ՝ եղեր:

— Այնպէս կ'ըսեն, տիկին: Յետոյ այս Սքօթին հետ ամուսնացեր է... որ Նիւ-Եօրքի սեղանաւորի մը որդին է և յանկարծ դատ մը շահելով ձեռք անցուցած են ո՛չ թէ միլիոններ, այլ տասնաւոր միլիոններ: Ամերիկայի մէջ, տեղ մըն ալ, արծաթի հանք մը ունին, բայց ծանրակշիռ հանք մը, ճշմարիտ հանք մը, արծաթի հանք մը... որուն մէջ արծաթ կայ... Ա՛հ, պիտի տեսնէք ի՛նչ պերճանք, ի՛նչ պաճուճանք պիտի ըլլայ Լօնկվալի մէջ...: Մենք ամենքս ալ աղքատի կերպարանք պիտի ունենանք երկրին մէջ: Կ'ըսեն թէ օրը հարիւր հազար ֆրանքի ծախք ունին:

— Ահա՛ մեր դրացիները, գոչեց տիկին տը Լավառտանս: Բախտախնդի՛ր մը: Ու ասիկա բան մը չէ տակաւին... հերիտիկոսուհի՛ մը, տէ՛ր արբայ, բողոքականուհի՛ մը:

Հերիտիկոսուհի՛ մը, բողոքականուհի՛ մը: Խեղճ երէց, ան ալ այդ բանը մտածեր էր անմիջապէս, երբէք սա բառերը հնչեր էին ականջին: Ամերիկոսի մը, սկիլիս Սօք: Դղեակին նոր տիրուհին չգիտի երթար պատարագ տեսնելու: Իրեն ի՛նչ փոյթ որ ատնօք մուրացած ըլլար ան: Ի՛նչուն պէտք էր որ՛ան ունէր քանի մը տասնակ միլիոններ: Կաթոլիկ չէր ան: Ինք չգիտի մկրտէր այսուհետեւ Լօնկվալի մէջ ծնած երախաները, և դղեակին մատուռն ալ, ուր ա՛յնքան անդամներ պատարագ ըրած էր, բողոքականներու աղօթարանի պիտի փոխուէր, հոն պիտի լսուէին միայն կալվիճական կամ լուտերական հովուի մը սառն խօսքերը:

Բոլոր այս սրտաբեկ ու ցաւագին մարդոց մէջ՝ միայն Բօլ տը Լավառտանս պայծառ կ'ըրեւար:

— Բայց և այնպէս, հիանալի հերիտիկոսուհի մը, ըսաւ, մանաւանդ երկու հիանալի հերիտիկոսուհիներ: Չանոնք տեսնելու է, Բարիզի Պուլօնեի պուրակին մէջ՝ ձիով, երկու փոքր ձիամարդիկներ ետևնին ձգած, հասակնին սաչափ բարձր...:

— Օ՛ն ուրեմն, Բօլ, պատմէ՛ մեզի ինչ որ գիտես, սա պարահանդէսի մասին որուն մասին խօսեցար քիչ առաջ...: Ի՞նչպէս եղաւ որ այս Ամերիկուհիներու պարահանդէսին գացիր:

— Ամենամեծ դիպուածով մը...: Հօրաքրո-

ըըս վալանթիւնի ընդունելութեան օրն էր այն իրիկուն...: Ես ալ հոն գացի ժամը տասնին... ափսո՛ս զուարճալի չեն վալանթիւն հօրաքրոջս չորեքշաբթիները...: Քօսան վայրկեան կար որ հոն էի, երբ Ռօժէ տը Բիւմարթէնը տեսայ, որ կամացուկ մը կծիկը կը դնէր: Ներքնազաւիթիւն մէջ գտայ զինքը ու ըսի. «Միասին տուն դառնանք: — Օ՛հ, ես տուն չեմ երթար հիմա: — Ո՛ւր կ'երթաս ուրեմն: — Պարահանդէս: — Որո՞ւն տունը: — Սքօթներուն. դուն ալ հետս կուգաս: Բայց հրաւիրուած չեմ: — Եւ ո՛չ ալ ես: — Ինչպէ՛ս, և ո՛չ ալ դո՞ւն: — Ո՛չ, բարեկամներէս մէկը միասին պիտի առնեմ: — Բարեկամք կը ճանչնա՞յ Սքօթները: — Հազիւ հազ, այլ բաւական մեզ երկուքս ալ ներկայացնելու համար...: Դուն ալ եկ՛՛ւր...: Տիկին Սքօթը պիտի տեսնես: — Օ՛հ, ես զայն տեսած եմ ձիով Պուլօնի անտառը. — Զիտն վրայ ուսամերկ չըլլար: Ուտերը տեսած չես... մանաւանդ ուտերը պետք է տեսնել...: Բարիզի մէջ, այս միջոյիս, ասկէ աղէկ բան չկայ...:» Եւ ան գացինք պարսնադէսը... ու տեսայ տիկին Սքօթիւն կար իր մագերը... տեսայ տիկին Սքօթի սպիտակ ուտերը... և յուսամ թէ նորէն պիտի տեսնեմ դանոնք, երբ Լօնկվալի մէջ պարտահանդէսներ ըլլան...:

— Բ՛՛լ, ըսաւ տիկին տը Լավառտանս, արբան ցուցնելով անոր:

— Օ՛հ, տէր արբայ, ներողութիւն կը խընդրեմ ձեռէ...: Արդեօք աւելի կամ պակաս բան մը ըսի՞...: Ա՛յ, կարծեմ...:

Սեղծ քահանան չէր լսած իսկ: Իր մտածումը ուրիշ տեղ էր: Գիւղին փողոցներէն մէկուն մէջ, ան արդէն կը կարծէր տեսնել զղեակին բողոքական հովիւը որ ամէն տան առջև կանգ կ'առնէր և զոներու տակէն աւետարանական փոքրիկ տետրակներ կը սահեցնէր:

Բայ իր պատմութիւնը չարունակելով՝ սկսաւ խանդավառ նկարագրութիւն մը ընել տիկին Սքօթի սպարանքի մասին որ հրաշալիք մըն էր...:

— Գէշ ճաշակով... ու պոռոտ դարդարանքով, յարեց տիկին տը Լավառտանս:

— Բնա՛ւ, մայրիկ, բնա՛ւ... աղմկալից բան չկայ հոն... հիանալի կարասիներ, և անոնց կարգադրումն ալ շնորհալի և նորահնար...: Աննաման ջերոց մը՝ ելեքտրական լոյսով ողողուն. ընթրասեղանն ալ շերտերն մէջ խաղողով ակազձուն ձողաքարձի մը ներքեւ... ապրի՛լ ամսուն... փրցո՛ւր փրցո՛ւր, ձեռքդ լեցո՛ւր: Քօթիեօնի նուէրներուն համար միայն քառասուն հազար ֆրանք ծախք եղած էր: Գոհարներ, շտաբաւաւփեր, գեղօրներ... մէյ մէկ յիշատակ անոնցմէ առնել տանելու խնդրանքով: Ես բան մը չառի, այլ շատերը ձեռքերնին լեցուն գացին...: Բիւմարթէն այն իրիկունը ինձի ըսաւ տի-

ջըս վալանթինի ընդունելութեան օրն էր այն իրիկուն...: Ես ալ հոն գացի ժամը տասնին... ափսոս զուարճալի չեն վալանթին հօրաքրոջս չորեքշաբթիները...: Քսան վայրկեան կար որ հոն էի, երբ Ռօժէ տը Բիւմարթէնը տեսայ, որ կամացուկ մը կծիկը կը դնէր: Ներքնագաւիթին մէջ գտայ զինքը ու ըսի. «Միասին տուն դառնանք: — Օ՛հ, ես տուն չեմ երթար հիմա: — Ո՛ւր կ'երթաս ուրեմն: — Պարահանդէս: — Որո՞ւն տունը: — Սքօթներուն. դուն ալ հետս կուգաս: Բայց հրաւիրուած չեմ: — Եւ ո՛չ ալ ես: — Ինչպէ՛ս, և ո՛չ ալ դո՛ւն: — Ո՛չ, բարեկամներէս մէկը միասին պիտի առնեմ: — Բարեկամդ կը ճանչնա՞յ Սքօթները: — Հազիւ հազ, այլ բաւական՝ մեզ երկուքս ալ ներկայացնելու համար...: Դուն ալ եկո՛ւր...: Տիկին Սքօթը պիտի տեսնես: — Օ՛հ, ես զայն տեսած եմ ձիով՝ Պալօնի անտառը. — Ձիուն վրայ ուսամերկ չըլլար: Ուսերը տեսած չես... մանաւանդ ուսերը պէտք է տեսնել...: Բարիդի մէջ, այս միջոցիս, ասի՛ւ աղէկ բան չկայ...:» Եւ ան գացինք պարահանդէսը... ու տեսայ տիկին Սքօթին կարիքը մտաբերը... տեսայ տիկին Սքօթի սպիտակ ուսերը... և յուսամ թէ նորէն պիտի տեսնեմ զանոնք, երբ Լօնկվալի մէջ պարահանդէսներ ըլլան...:

— Բօ՛լ, ըսաւ տիկին տը Լավառտանս, արբան ցուցնելով անոր:

— Օ՛հ, տէր արբայ, ներողութիւն կը խընդրեմ ձեռնէ...: Արդեօք աւելի կամ պակաս բան մը ըսի՞...: Չէ, կարծեմ...:

Սեղճ քահանան չէր լսած իսկ: Իր մտածումը ուրիշ տեղ էր: Գիւղին փողոցներէն մէկուն մէջ, ան արդէն կը կարծէր տեսնել դղեակին բողոքական հովիւր որ ամէն տան առջև կանգ կ'առնէր և զոներու տակէն աւետարանական փոքրիկ տետրակներ կը սահեցնէր:

Բօլ իր պատմութիւնը շարունակելով՝ սկսաւ խանդավառ նկարագրութիւն մը ընել տիկին Սքօթի ապարանքի մասին որ հրաշալիք մըն էր ...:

— Գէջ ճաշակով... ու պոռոտ զարգարանքով, յարեց տիկին տը Լավառտանս:

— Բնա՛ւ, մայրիկ, բնա՛ւ... աղմկալից բան չկայ հոն... հիասալի կարասիներ, և անոնց կարգադրումն ալ շնորհալի և նորահնար...: Աննման ջերոց մը՝ երկարական լոյսով ողողուն. ընթրասեղանն ալ չկրօցին մէջ խաղողով տկաղձուն ձողաքարձի մը ներքև... ապրի՛լ ամսուն... փրցո՛ւր փրցո՛ւր, ձեռքդ լեցո՛ւր: Քօթիեօնի նուէրներուն համար միայն քառասուն հազար ֆրանք ծախք եղած էր: Գոհարներ, շաքարապահներ, գեղօրներ... մէյ մէկ յիշատակ անոնցմէ աննել տանելու ինչդրանքով: Ես բան մը չառի, այլ շատերը ձեռքերնին լեցուն գացին...: Բիւմարթէն այն իրիկունը ինձի ըսաւ տի-

կին Սքօթին պատմութիւնը... սակայն Պ. աը
 Լաոնաքին պատմածին պէս չէր բոլորովին...
 Ռօօթէ ըսաւ թէ կաշըմբունն անպարարներ ան-
 ւանգեր էին տիկին Սքօթը իր մանկութեան և
 թէ ի վերջոյ հայրը զայն գտած էր, երբ ան ձիու
 վրայ կը ճախրէր շարժուն կրկէսի մէջ, զբօշակ-
 ներու վրայէն կ'ոտոտօտէր, և թուղթէ շրջանակ-
 ներու մէջէն կ'անցնէր...:

— Զի խաղցնող ուրեմն, գոչեց տիկին տը
 Լափառտանս. կը նախընտրէի որ մուրացի կ'ըլար:

— Մինչ Ռօօթէ ինծի կը պատմէր Բըքի-ժուռ-
 Եալի այս նոր վէպը, կը տեսնէի որ նրբանցքին
 ծայրէն ելեր կուզար տօնավաճառի կրկէսներու
 մէջ ձի խաղցնող այդ կինը, սնդուսներու և
 ժանեակներու հիասքանչ խառնակոյտի մը մէջ,
 ու կը հիանայի այն ուսերուն, այն շլացուցիչ
 ուսերուն վրայ, ուր վէտ վէտ կը ծփար յուրանի
 խցանի չափ խոշոր աղամանդներով քայռաման-
 եակ մը: Կ'ըսէին թէ ելմտական պաշտօնատարը
 արքունական թագին աղամանդներուն կէսը տի-
 կին Սքօթին ծախեր է զաղանապէս և այսպէս
 նախորդ ամիս հաշուեցուցակին մէջ ունեցած է
 տասներհինգ միլիոնի յաւելուածական հատոյթ մը:
 Աւելցուր նաև որ աշուուականի հով ունէր փոքրիկ
 լարախաղացուհին և այնքան փառաւորութեան
 մէջ անդոյր և անխոռով:

Բօլ շատ թափ առած էր. հարկ եղաւ որ՝
 մայրը կնքնէ զայն: Պ. աը Լաոնաքին առջև որ

բուն սիրտը նեղացած էր, միամտաբար քր' բո-
 լոր ուրախութիւնը զուրս թափած էր մտարե-
 րելով որ հրաշագեղ Ամերիկուհին զբացի պիտի
 ըլլար իրեն:

Աբբայ Բօնսթանթէն կը պատրաստուէր Լօնկ-
 վալի ճամբան բռնելու. իսկ Բօլ տեսնելով որ
 կ'երթայ ան, ըսաւ:

— Ո՛հ, չէ՛, չէ՛. տէրաբբայ, չպիտի թողում
 ձեզ որ երկրորդ անգամ ոտքով կտրէք Լօնկվալի
 ճամբան, այս սաստիկ տաքուն: Երեքէք որ ձեզ
 կառքով տանիմ մինչև հոն: Շատ կը ցաւիմ,
 այսպէս վշտացած տեսնելով ձեզ: Պիտի փոք-
 ձեմ ձեզ զբօսցնել: Ո՛հ, որքան այ սուրբ ըլլաք,
 դարձեալ ձեզ կը խնդացնեմ երբեմն իմ խենթ
 խելօք խօսքերովս:

Կէս ժամ յետոյ, երկուքը միասին, երէցն ու
 Բօլ, քովէ քով նստած, գէպի գիւղ կը գլէին
 կառքը: Բօլ կը խօսէր ու կը խօսէր անդադար:
 Մայրը հոն չէր որ համ դնէր, չափ դնէր: Ու-
 ըրախութիւնը անհուն էր:

— Չէ՛, տէր արբայ, կը սխալիք ողբերգական
 դոյն տալով իրերուն...: Տեսէ՛ք սա փոքրիկ
 զամբիլիս ի՛նչպէս կը շարժէ թաթեղը, ի՛նչպէս
 կը վերցնէ: Չէիք տեսած զայն: Գիտէ՛ք քանիի
 գնած եմ: Չորս հարիւր ֆրանքի: Պարտիզպանի
 մը յոպնակին քեզիներուն մէջ գտայ հանեցի,
 տասներհինգ օր կայ: Երբ մէյ մը սկսի վազել,
 մէկ ժամուան մէջ չորս փարսախ ճամբայ կ'առնէ:

ա՛յ պէտք է բոլոր ձեռքով սանձը բռնել: Տե-
սէ՛ք, տեսէ՛ք, ի՛նչպէս իրեն կը քաշէ...: Օ՛ն,
թօ՛... թօ՛... թօ՛...: Արտորալու բուն մը չու-
նիք, այնպէս չէ՛, տէր արքայ: կ՛ուզէ՞ք պուրա-
կին մէջէն երթալ: Աղէկ կ՛ըլլայ որ քիչ մը հով-
թփիք...: Եթէ գիտնայիք, տէր արքայ, ո՛ր-
քան կը սիրեմ ձեզ... եւ ո՛րքան կը յարգեմ...: Ծառ
անշնորհք խօսքեր չըրի, այնպէս չէ՛, պահ
մը առաջ, ձեր առջեւ: Եթէ ըրի, շա՛տ կը ցա-
ւիմ...:

— Չէ՛, զաւակս, բան մը չլսեցի ես:

— Ուրեմն դպրոցի տղոց ճամբէն երթանք:
Չախ կողմը պուրակին մէջ մտնելէն յետոյ,
Բօլ իր առջի խօսքը կրկնեց:

— Ձեզի կ՛ըսէի, տէր արքայ, թէ իրաւունք
չունէիք ողբերգական դոյն տալու իրերուն:
կ՛ուզէ՞ք որ այս մասին իմ կարծիքս ըսեմ ձեզի:
Ծառ աղէկ որ ասանկ եղաւ:

— Ծա՛տ աղէկ:

— Այո՛, շատ աղէկ...: Աւելի կ՛ուզեմ որ
լօճկվալը Սքօթներունն ըլլայ, քան թէ Կալ-
լաոներուն: Չլսեցի՞ք Պ. տը Լաոնաքը՝ որ պահ
մը առաջ կը պարսաւէր զանոնք, ստակնին խենթ
ու խելառ վատնելուն համար: Երբեք խենթու-
թիւն չէ ստակը վատնելը: Խենթութիւնը պա-
հելն է: Ձեր աղքատները, — աղէկ գիտեմ որ
ձեր աղքատները կը մտածէք ամեն բանէ աւելի:
— է՛ ուրեմն, ձեր աղքատներուն համար բարի

օր՝ մըն է այսօր: Ահա իմ կարծիքս: Կրօ՞նքը...
այո՛, կրօնքը...: Պատարագ լսելու չպիտի եր-
թան...: Աօի վիշտ կը պատճառէ ձեզի,
բնակաւէ այդ, այլ ստակ, շատ ստակ...
և դուք պիտի առնէք անոնց զրկածը,
և իրաւունք ունիք առնելու: Տեսա՞ք, դուք ալ
հակառակը չէք ըսեր կոր: Բոլոր երկրին վրայ
ոսկիէ անձրեւ մը պիտի տեղայ...: Ծարժով
մը, զրիւնդիւն մը որ... քառածի կառքեր,
փոշեանդոյր ձիավարներ, թղթենի որսարչաւ,
խոնջիների որսակալութիւն, պարահանդէսներ,
հրախաղութիւններ...: Եւ հոս, այս պուրակին
մէջ, այս ծառաստանէն մէջ ուրկէ կ՛անցնինք
անա, շատ չանցած, Բաթիզը պիտի գտնեմ նորէն
թերեւս: Նորէն պիտի տեսնեմ այն երկու ամա-
զօնները և այն երկու փոքրիկ ճորտերը, որոնց
վրայ խօսեցայ պահ մը առաջ: Եթէ գիտնայիք
ի՛նչ աղուորիկ են ձիւ վրայ, երկու քոյրերը:
Առաւօտ մը անոնց ետեւէն Պուլօնեի անտառը
պտտեցայ Բարիզի մէջ: Դեռ աչքիս դիմացն են:
Մոխրագոյն գլխարկներ ունէին բարձր ձեռով,
փոքրիկ սեւ քօղեր՝ երեսուն վրայ աղէկ մը
փակած, և երկու երկայն ամազօններ հագած
էին լայն մէջքով, կոնակը վերէն վար մէկ կա-
րով... և պէտք է որ կին մը պանծալիօրէն
ձեւաւոր եղած ըլլայ՝ որ այս ձեռով ամազօն
հագնի...: Նայեցէ՛ք, տէր արքայ, մէջքը լայն
ամազօնով խաբէութիւնը անկարելի է...:

Քիչ մը առնէ ի վեր՝ երէցը բնաւ ուշա-

դրութիւն չէր ընծայեր Բօլին շաղակրատու-
թեան: Կառքը բաւական երկար և կատարելա-
պէս ուղիղ ծառաստանի մը մէջ մտած էր: Այս
ծառաստանին ծայրէն երէցը ձիաւոր մը տեսաւ,
որ ձին չորս վազցնելով կուգար:

— Նայեցէ՛ք, ըսաւ երէցը Բօլին, նայեցէ՛ք.
ձեր աչքերը աւելի լաւ կը տեսնեն. սա եկողը
Ժանը չէ՞ միթէ:

— Այո՛, Ժանն է. իր մտխրագոյն ճայիկը կը
ճանչնամ:

— Բօլ ձիերը կը սիրէր, և միշտ, ձիաւորին
նայելէ առաջ, ձիուն կը նայէր: Արդարեւ,
Ժանն էր եկողը, և, հետուէն երէցն ու Բօլը
նշմարելով՝ իր քերին հաներ, օղին մէջ կը տա-
տանէր, երկու ոսկեզօծ ժապաւէններովը: Ժան
Սուվինեի գտնուող Թնդանօթածիգներու գուն-
դին մէջ տեղակալ էր:

Մէկ քանի վայրկեանէն, փոքր կառքին քովը
հասած, կ'ըսէր երէցին.

— Ձեր տունէն կուգամ, կնքահա՛յր. Բօլինը
ըսաւ թէ Սուվինեի գացեր էք, վաճառման հա-
մար...: Ըսէ՛ք, ո՞վ առաւ զղեակը:

— Ամերիկուհի մը, տիկին Սքօթ:

— Սպիտակ-Թա՞ղը:

— Նորէն տիկին Սքօթը:

— Հապա Ռօզըրէ՞ն:

— Դարձեալ տիկին Սքօթը:

— Իսկ անտա՞ռը... միշտ տիկին Սքօթը:

— Ինչպէս որ ըսիր, պատասխանեց Բօլ...:
Ես կը ճանչնամ այդ տիկին Սքօթը... պիտի
դրօնունք Լօնկվալի մէջ...: Ես քեզի կը ներ-
կացնեմ...: Միայն թէ արբային ցաւ կը պատ-
ճառէ... որովհետեւ Ամերիկուհի մը, բողոքա-
կան մըն է:

— Ա՛հ, իրաւ, խեղճ կնքահայրս...: Ինչ որ
է, վաղը կը խօսինք ասոնց վրայ: Ձեզի հետ
պիտի ճաչեմ վաղը. Բօլինին իմաց տուի: Հիմա
Ժամանակ չունիմ կենալու, կարգը իմս է այս
շաբթու, և պէտք է որ ժամը երեքին զօրանո-
ցը գտնուիմ:

— Սրախաղութեան համար, ըսաւ Բօլ:

— Այո՛, սրախաղութեան համար...: Ցտե-
սութի՛ւն, Բօլ...: Վաղը կը տեսնուինք, կըն-
քահայր:

Սկսաւ նորէն քառասմբակ ընթանալ. Բօլն
ալ իր ձին ձգեց որ երթայ:

— Այս Ժանը ի՛նչ բարեմոյն տղայ է, ըսաւ
Բօլ:

— Ո՛հ, այո՛:

— Աշխարհիս մէջ Ժանէն լուագոյն մէկը
չկա՛յ:

— Ձէ, չկա՛յ արդարեւ:

— Երէցը դարձաւ, նորէն Ժանը տեսնելու,
որ անտառին խորութեանը մէջ անյայտ կ'ըլլար:

— Ո՛հ, կա՛յ, այո՛, շուք կաք, տէ՛ր արբայ:

— Ո՛հ, ես չէ՛, ես չէ՛ :

— Ուրեմն, ձեզի բան մը ըսե՞մ, տէր արքայ, աշխարհիս մէջ ոչինչ կա, լաւագոյն քան դուք երկուքնիդ, զուք և ժանր: Ահա՛ աս է ճշմարտութիւնը...: Ո՛հ, տեսէ՛ք, ի՛նչ աղէկ տեղ վարագելու համար...: Թողում...: Թողում որ Նիւնիշ քալէ քիչ մը...: Նիւնիշ զբի ձիուս անուներ:

Բօլ խարազանին ծայրովը զգուեց Նիւնիշին կողը, որ սկսաւ դիւային վազքով ընթանալ, ու Բօլ ցնծալով ըսաւ.

— Բայց նայեցէք, տէր արքայ, ան ի՛նչպէս թաթերուն վրայ կ'առնէ, նայեցէ՛ք մէյ մը: Եւ ի՛նչ կանոնաւոր կերպով...: Ըշմարիտ մեքանիկ մըն է...: Ծոնցէք որ տեսնէք:

Արքան, Բօլին հաճոյք պատճառելու նպատակով, ծոնցաւքիչ մը տեսնելու համար թէ Նիցիօ ի՛նչպէս քարերը վեր կ'առնէ... բայց ինք ուրիշ բան կը մտածէր:

Բ.

Այս թնդանօթաձիգներու տեղակալին անունն էր Ժան Ռէյնօ: Որդին էր գիւղական բժիշկին, որ կը հանգչէր Լօնկվալի գերեզմանատան մէջ: Երբ արքայ Քօնսթանթէն եկաւ 1846ին իր փոքրիկ Ժողովրդապետութեան տիրանալու, սօքթէօն Ռէյնօ մը՝ Ժանին մեծ-հայրը, գեղածիծաղ տան մը մէջ ընակութիւն հաստատած

էր, Սուլիմեիի ճամբուն վրայ, Լօնկվալի և Լաւառտանսի երկու զղեակներուն միջև:

Մարսէլ՝ սօքթէօն Ռէյնօի որդին՝ իր բժըշկական ուսումը աւարտած էր Բարիզի մէջ: Շատ աշխատասէր էր ու չգտնուած բարձր մտքի տէր: Գասատուութեան աւտիճանի մրցման մէջ ռաջին ընդունուողը եղաւ: Որոշած էր Բարիզ մնալ, և հոն փորձել բախալ... և արդէն ամէն ինչ իրեն կը խոստանար փայլուն և երջանիկ ասպարէզ, երբ իմացաւ 1852ին իր հօրը մահուան լուրը, որ կաթուածահար եղած էր: Մարսէլ վազեց եկաւ Լօնկվալ. սիրալ ըզիկ ըզիկ եղած, կը պաշտէր իր հայրը: Ամիս մը մօրը քով մնալէն յետոյ՝ յայտնեց անոր թէ Բարիզ վերադառնալու էր.

— Արդարեւ, ըսաւ մայրը, պէտք է որ երթաս:

— Ի՛նչպէս կրթամ... Պէտք է որ միասին երթանք: Կը կարծե՞ս որ քեզ միս մինակ հոս պիտի ձգեմ...: Քեզ ալ հետ կը տանիմ:

— Ե՛ս երթամ Բարիզ ապրիմ...: Թողում այս երկիրը ուր ծնայ, ուր հայրդ ապրեցաւ, և ուր մեռաւ...: Չէ, զաւակս, երբեք չեմ կրնար ընել այս բանը, երբեք: Դուն մինակ գնա՛, որովհետեւ քու կեանքդ ու ապագադ հոն են: Ես քու սիրտդ կը ճանչնամ: Գիտեմ որ չպիտի մոռնաս զիս, յաճախ պիտի գաս զիս տեսնել, չատ յաճախ:

— 24', մայր իմ, պատասխանեց, պիտի մնամ:

Ու մնաց...: Իր յոյսերը, իր իղձերը, մէկ վայրկեանի մէջ ամէն բան մարեցաւ, անհետացաւ: Բան մը միայն տեսաւ, իր պարտականութիւնը, որ կը պահանջէր չթողուլ իր տարիքոտ և հիւանդոտ մայրը: Պարզութեամբ ընդունուած և պարզութեամբ կատարուած սոյն պարտականութեան մէջ գտած էր երջանկութիւնը: Այնպէս ալ է, երջանկութիւնը պարտականութեան մէջ է միայն:

Մարտէլ մտադիր և սրտանց յարմարեցաւ իր նոր կենցաղին: Իր հօրը կեանքը վարել սկսաւ, հետեւելով անոր բացած շաւղին... Գիւղացի բժիշկի աննշան արհեստին նուիրուեցաւ բոլորովին, առանց ցաւելու և առանց մտքէն ուրիշ բաներ անցնելու: Հայրը քիչ մը զբամ թողած էր իրեն, քիչ մըն ալ հող: Շատ պարզութեամբ կ'ապրէր, և իր կեանքին կէսը աղքատներուն կը նուիրէր, որոնցմէ չուզեց երբեք զբամ ընդունիլ: Եթէ պերճանք մը ունեցաւ, ան ալ աս եղաւ:

Ճամբուն վրայ մանկամարդ աղջկան մը պատահեցաւ, առանց հարստութեան, սիրուն և աշխարհի մէջ մինակ: Ամուսնացաւ անոր հետ, 1885ին. իսկ հետեւեալ տարին՝ մեծ վիշտ մը ու մեծ ուրախութիւն մը ունեցած էր ամբողջօր մէջնօ. իր պառաւ մօրը մահը և իր ժամն զաւկին ծնունդը:

Վեց շաբաթուան ընթացքին՝ արբայ Գօնսթանթէն ննջեցեալներու աղօթքը ըսաւ մեծ մօրը վերեզմանին վրայ և թոռանը մկրտութեան գտնուեցաւ կնքահայրի պաշտօնով:

Այդ քահանան և այդ բժիշկը տառապեալներու և հոգեվարքներու սնարին քով այնքան իրարու հանդիպած էին որ՝ մէկ սրտով ու մէկ աշխուժով իրարու մօտեցած ու իրարու կապուած էին: Միևնոյն ընտանիքէ, միևնոյն ցեղէ կը զգային զիրենք, գլխասիրաներու, արգարաներու և բարեգործներու ցեղէն:

Տարիներ յաջորդեցին տաճարներու, խաղաղ, անուշ, հանդարտ, աշխատութեան և պարտականութեան լիութի սփոփանքին մէջ: Ժամն կը մեծնար...: Իր առաջին ուղղապարտութեան դասերը հօրմէն առաւ, առաջին լատիներէնի դասերն ալ՝ երէցէն: Ժամն ուշիմ և աշխատասէր էր. այնքան մեծ յառնջլիմութիւններ ըրաւ որ երկու վարժապետներն ալ, — մանաւանդ երէցը, — մէկ քանի տարիներ անցնելէ յետոյ, անճրկիլ սկսան: Աշակերտը շատ վարպետ եղած էր իրենց համար: Այս միջոցին էր որ կոմսուհին, ամուսնին մահուընէն յետոյ, եկաւ Լավարտանս հաստատուեցաւ: Հետը դաստիարակ մը բերած էր իր զաւկին՝ Բօլի համար, որ թէև սիրուն, գողտրիկ, այլ ծոյլ և յոյլ մարդուկ մըն էր: Այս երկու տղաք միևնոյն տարիքն ունէին. իրենց մատաղ հասակէն ի վեր զիրար կը ճանչնային:

Տիկին տը Լավառտանս շատ կը սիրէր տօքթէօն Ռէյնօն. օր մը սա առաջարկութիւնը ըրաւ անոր.

— Ամէն առաւօտ ժանը ինծի զրկեցէք, ըսաւ, իրիկունները նորէն ձեզի կը դարձնեմ: Բօլին դաստիարակը նշանաւոր երիտասարդ մըն է. մեր երկու տղաքը միասին կ'աշխատցնէ...: Ասով ծառայութիւն մը ըրած կ'ըլլաք ինծի: Ժանը բարի օրինակ կ'ըլլայ Բօլին:

Այսպէս ալ կարգադրեցին. արդարեւ, փոքրիկ քաղքենին առձմիկ պատանիին աշխատութեան ուջանքի ընտիր օրինակներ տուաւ, բայց այս ընտիր օրինակները հետեւող չունեցան:

Պատերազմը ծագեցաւ: Սեպտեմբեր 14ին, առաւօտեան ժամը եօթին, Սուվիինեիի պահապան զօրքերը, որոնք պատերազմի պիտի զրկուէին, քաղաքին մեծ հրապարակին վրայ կը հաւաքուէին, վաշտին քահանան էր արքայ Քօնսթանթին, և վիրաբուժապետը՝ տօքթէօն Ռէյնօն. նրկուքն ալ նոյն մտածութիւնը ունեցած էին միւսներն ալ. քահանան վաթսուն երկու տարեկան էր, բժիշկը՝ յիսուն:

Վաշտը Լօնկվալի մէջէն անցնող ճամբան բռնեց, բժիշկին տանը առջևէն անցնելով, Տիկին Ռէյնօն և ժան ճամբուն եզերքը կը սպասէին: Տղան հօրը թեւերուն մէջ նետուելով ըսաւ. «Զիս ալ տա՛ր, հայր, զիս ալ տա՛ր» Տիկին Ռէյնօն կուլար: Տօքթէօնը երկարօրէն համբուրեց

երկուքն ալ. յետոյ ճամբան շարունակեց:

Հարիւր քայլ անդին՝ ճամբան անկիւն մը կը դառնար: Բժիշկը ետին դարձաւ, կնոջն ու զաւկին վրայ ուղղեց երկար նայուածք մը... վերջինը, ա՛լ չպիտի տեսնէր զանոնք:

1871 յունվար Տին, Սուվիինեիի զօրքերը Վիլլէրսէքսէլ աւանին վրայ կը յարձակէին զորքաւած էին Բրուսիացիները և որուն պատերուն գազաթները առամուսնու էին. իրենք ալ տուներուն մէջ ամրացեր էին: Հրացանները սկսան պարպուիլ: Զինուորներէն մէկը որ առաջին կարգին հետ կ'երթար, կարծքէն վիրաւորուեցաւ գնդակով մը և վար ինկաւ: Վաշտիկան մը շիտթ ու վարանք տիրեցին: Յետոյ «Յառա՛ջ, յառա՛ջ», պօսացին սպաները: Զինուորները անցան իրենց ընկերով մարմինն վրայէն և զընդակներու կարկուտի մը տակ գիւղը մտան: Տօքթէօն Ռէյնօն և արքայ Քօնսթանթին զինուորներուն հետ կը քայլէին: Վիրաւորեալին քով կանդ առին: Բերնէն արիւնջ կը հոսեր:

— Ոչինչ կայ ընկիւթ, ըսաւ տօքթէօնը. մեռնելու վրայ է, ա՛լ ձերն է:

Քահանան ծնրադրեց հոգեվարքին քով և բժիշկը սոքի ելլելով՝ գէպի գիւղ ուղղուեցաւ: Տասը քայլ չէր գացած, երբ կանդ առաւ, երկու թեւերը օդին մէջ տատանեց ու մէկ հարուածով գետին տապալեցաւ: Քահանան քովը վազեց: Մեռած, քունքին վրայ ստացած գնդակով մը սպաննուած էր:

Իրիկուան, աւանը մէկը եկած էր. հետեւեալ օրը՝ Վիլլէրսէքսէլի հողվարքին մէջ տօքթէօտ Ռէյնօի մարմինը կը թաղէին: Երկու ամիս յետոյ՝ արբայ Բօնսթանթէն իր բարեկամին դատաւարը Լօնկվալ կը բերէր, ու դատաւարին հետեւէն կ'երթար որը տղայ մը, երբ դատաւարը եկեղեցիէն դուրս կը հանէին: Ժան իր մայրն ալ կորսնցուցած էր: Ամուսինն մահը իմանալով, խեղճ կինը քսանըչորս ժամ անէացած ու խոցուած մնացեր էր, առանց բառ մը արտասանելու, առանց արտասուք մը թափելու: Յետոյ վրան տենդ եկած էր, և ետքը՝ զառանցանք, ապա ասանընչօրէն՝ մահը:

Ժան միայնակ մնացեր էր աշխարհի վրայ: Տասնըչորս տարեկան էր: Այս ընտանիքին բոլոր անդամները մէկ դարէ ի վեր բարի ու պարկեշտ եղած էին, ու առկէ մէկ տղայ մը միայն կը մնար գերեզմանի մը վրայ ծննդադրած և որ կը խոտանար ինքն ալ ըլլալ ինչ որ եղած էր իր մեծ հայրը և ինչ որ եղեր էր իր հայրը, պարկեշտ և բարի: Կան այսպիսի ընտանիքներ Ֆրանսայի մէջ և շատ կան, ու շատ աւելի քան զօր չեն համարձակիր ըսել. մեր խեղճ երկիրը զանազան բաներու համար անողորմաբար զերպարտած են վիպագրերէն սմանք, որոնք խիստ ու չափազանց նկարագրութիւններ կ'ընեն: Իրաւ է որ բարի մարդոց պատմութիւնը շատ անպամ միօրինակ կամ վշտագին է: Ներ-

կայ պատմութիւնն ալ ապացոյց մըն է անա: Ժանին կակիծը այր մարդու կակիծ մը եղաւ: Երկար ատեն տխուր և լռակեաց մնաց: Իր հօր թաղման իրիկունը՝ արբայ Բօնսթանթէն երիցատունը տարաւ զայն: Օրը անձրեւոտ և ցուրտ էր: Ժան վառարանին անկիւնը նստած էր: Քահանան իր աղօթագիրքը կը կարդար: Պառաւ Բօլին կ'երթար ու կուզար, ամէն բան իր տեղը գնելով կը շտկէր: Ժամ մը անցեր էր այսպէս լռին, երբ Ժան յանկարծ գլուխը վեր առնելով.

— Կնքահայր, ըսաւ հայրս դրամ ձգե՞ց ինծի:

Այս հարցումը այնքան տարօրինակ էր որ արբան ապշեցաւ մնաց. կարծեց թէ սխալ հասկըցած էր:

— Կը հարցնես ինծի թէ հայրդ...

— Կը հարցնեմ ձեզի, կնքահայր, թէ հայրս դրամ ձգե՞ց ինծի:

— Այո՛, դրամ ձգած ըլլալու է...

— Շա՛տ, այնպէս չէ: Լօսած եմ շատ մը անգամ թէ հայրս հարուստ է եղեր: Ըսէք ինծի թէ ո՛քրան դրամ թողած կրնայ ըլլալ:

— Բայց չեմ գիտեր... Այնպիսի՛ բաներ կը հարցնես որ...

Խեղճ քահանան կը զգար որ սիրտը կը յօշոտուի: Այսպիսի հարցում մը ընել այնպիսի վայրկեանի մը մէջ: Սակայն կը կարծէր ճանչնալ ժա-

նին սիրտը, ու այս սրտին մէջ չէին կրնար այս տեսակ մտածութիւններ տեղ գտնել:

— Կ'աղաչեմ, կնքահայր, ըսէ՛ք, շարունակեց ժան քաղցրութեամբ: Վերջէն պիտի հասկցնեմ ձեզի թէ ինչո՛ւ համար կը հարցնեմ:

— Լաւ, կ'ըսեն թէ հայրդ երկու երեք հազար հազար ֆրանք ունէր:

— Շատ դրամ է աս:

— Այո՛, շատ դրամ է:

— Այդ բոլոր դրամը ի՞մո է:

— Այո՛, բոլորն ալ քու կը է:

— Ա՛յ, լաւ, վասն զի այն օրը ուր իմ հայրս սպաննուեցաւ հոն, պատերազմի ատեն, Ռոսսիացիները միեւնոյն ատեն սպաննեցին Լօնդրայի խեղճ կնոջ մը որդին... Գլխման խաթունին որդին, գիտե՞ք: Սպաննեցին նաեւ Ռօզալին եղբայրը, որուն հետ կը խաղայի երբ տղայ էի: Որովհետեւ ես հարուստ եմ և անոնք աղքատ են, հօրս ինծի թողած դրամին՝ Գլխման խաթունն ու Ռօզալին կ'ուզեմ որ մասնակից ըլլան:

Այս խօսքերը լսելով՝ քահանան ոտքի ելաւ, ժանի երկու ձեռքերը բռնեց և իրեն քաշելով թեւերուն մէջ առաւ ու ողջագուրեց զայն: Սպիտակ գլուխը հանգչեցաւ խարտեաչ գլխին վրայ: Երկու խոշոր արտասուքներ ելան ձեռքունի քահանային աչքերէն, յամբարար գլորեցան այտերէն վար ու սահեցան դէմքին խորշոմներուն մէջ:

ՊՐՈՒՆ ԾԱՆՈՒՄՆ

Սակայն երէցը հարկադրուեցաւ ժանին բացատրել որ՝ թէ եւ իր հօրը ժառանգութեան տէր դարձած էր, սակայն տակաւին իրաւունք չուներ իր ուղած կերպովը գործածելու զայն: Ընտանեկան խորհուրդ մը պիտի հսկէր վրան, իբր խնամակալ:

— Դո՛ւք անշուշտ, կնքահայր:

— Ո՛չ, ես չէ, զաւակս. քահանայ մը իրաւունք չունի խնամակալութիւն ընելու: Կը կարծեմ թէ պարոն Լընիանը պիտի ընտրեն, Սուվինիի նօտարը, որ հօրդ լաւագոյն բարեկամներէն մէկն էր: Անոր հետ պէտք է խօսիս ու պէտք է յայտնես քու փափաքդ:

Արդարեւ, ընտանեկան խորհուրդը որոշեց որ պարոն Լընիան խնամակալութեան պաշտօնը վարէ: Ժանի թախանձանքը այնքան սաստիկ ու այնքան սրտաշարժ եղաւ որ նօտարը հաճեցաւ եկամուտներուն մէջէն երկու հազար չորս հարիւր ֆրանքի գումար մը հանել ու ամէն տարի, մինչեւ ժանին չափաճատութիւնը, Գլխման խաթունին և փոքրիկ Ռօզալին միջեւ բաժնել զայն:

Տիկին տը Լավառտանս այս պարագային մէջ կատարեալ վարմունք մը ունեցաւ: Գինաց Քօնսթանթէն արքան դաւաւ:

— Ժանը ինծի տուէք, ըսաւ, տուէ՛ք բոլորովին, մինչեւ որ իր ունեւոր աւարտէ: Ամէն տարի արձակուրդի ատեն ձեզի կը բերեմ: Ես

ձեզի ծառայութիւն մը ըրած չպիտի ըլլամ,
այլ ձեռնէ կը խնդրեմ որ այս ծառայութիւնն
ընէք ինձի: Իմ զաւկիս համար ասկէ աւելի
բարեյաջող բան չեմ կրնար ցանկալ: Ժամանակի
մը համար Լավառտանսը թողլու յանձնառու
կ'ըլլամ. Բօլ կ'ուզէ Սէն-Սիւ մտնել և զինուոր
ըլլալ: Բարիզի մէջ միայն կրնամ ուսուցիչ և
ամէն ճար գտնել: Երկու տղաք միասին հոն կը
տանիմ. եղբօր պէս միասին կը դաստիարակուին
աչքիս առջեւ: Խտրութիւն չեմ դներ երկուքին
միջեւ, կրնաք ապահով ըլլալ:

Դժուարին էր այսպիսի առաջարկ մը չընդու-
նիլ: Օերունի երէցը շատ կ'ուզէր ժանը իր մօտ
պահել, ու սիրտը կտոր կտոր կ'ըլլար, մտածե-
լով այս բաժանման վրայ, բայց ի՞նչ կը պա-
հանջէր տղուն շահը, ահա՛ աս միայն պէտք էր
հարցնել իւրովի: Մնացածը բան մը չէր...
Ժանը բերել տուին:

— Զաւակս, ըսաւ անոր տիկին տը Լավառ-
տանս, կ'ուզե՞ս ինձի և Բօլին հետ դալ ապրիլ
քանի մը տարի: Զեզ երկուքդ ալ Բարիզ պիտի
տանիմ:

— Շատ բարի էք, տիկին, բայց շատ կը
փափաքիմ հոս մնալ:

Երէցին կը նայէր, որ աչքերը անդին դար-
ձուց:

— Ինչո՞ւ երթանք, յարեց, ինչո՞ւ Բօլն ու
զիս կը տանիք:

— Որովհետեւ Բարիզի մէջ միայն կրնաք
կատարեալ և օգտակար կերպով աւարտել ձեր
ուսումը: Բօլ պիտի պատրաստուի Սէն-Սիւի
քննութիւններուն. գիտե՞ս որ զինուոր ըլլալ
կ'ուզէ:

— Ե՛ս ալ, տիկին, ե՛ս ալ զինուոր ըլլալ
կ'ուզեմ:

— Դուն զինուոր, ըսաւ երէցը, բայց հօրդ
դադափարը ատ չէր քեզի նկատմամբ...: Շատ
անգամ հայրդ, իմ ներկայութեանս խօսած է
քու ապագայիդ և ասպարէզիդ վրայ: Դուն
պարտիս բժիշկ ըլլալ, և իրեն պէս, գիւղական
բժիշկ Լօնկվալի մէջ... և իրեն նման, պար-
տիս աղքատներու այցելել, ու իրեն պէս,
հիւանդները խնամել: Ժան, զաւակս, միտքդ
բե՛ր:

— Միտքս է, միտքս է:

— Ուրեմն, պէտք է հօրդ կամքը կատարել...: Բու պարտականութիւնդ ատ է, ժան,
պարտականութիւնդ է: Պէտք է երթաւ Բարիզ:
Դուն հոն մնալ կ'ուզես, ո՞չ կը հասկնամ ատի-
կա... ես ալ կը բողբոջամ... բայց անկարելի
է...: Պէտք է Բարիզ երթալ, աշխատիլ, շատ
աշխատիլ: Ատիկա չէ որ ինձի մտահոգութիւն
կը պատճառէ. դուն հարազատ որդին ես հօրդ:
Պարկեշտ և աշխատասէր մարդ մը պիտի ըլլաս
դուն: Ոչ ոք կրնայ ըլլալ մէկը առանց միւսին:
Ու օրին մէկը, քու հօրդ տանը մէջ, այս տեղն

իպի, ուր ան այնքան բարիք գործեց, այս երկ-
րին աղքատ մարդիկը ուրիշ տօքթէօս Ռէյնօ-
մը պիտի դանեն, որ իրենց ձեռնտու պիտի ըլ-
լայ նոյնպէս: Եւ եթէ ես տակաւին այս աշխար-
հին վրայ գտնուիմ դիպուածով, այն օրը, ա՛յն-
քան երջանիկ պիտի ըլլամ, ա՛յնքան երջա-
նիկ...: Բայց իրաւունք չունիմ ինքզինքս
մէջ խառնելու...: Պէտք չէ որ... ես հաշիւի
մէջ մտնեմ...: Ինչ հօրդ վրայ պէտք է մտածել:
Կը կրկնեմ ժամ, իր ամենէն ջերմ բաղձանքն
էր աս: Չես կրնար մոռցած ըլլալ:

— Չէ, չեմ մոռցած. բայց եթէ հայրս վերէն
գիս կը տեսնէ ու կը լսէ, ապահով եմ որ զիս կը
հասկնայ ու կը ներէ, որովհետեւ իրեն համար
է որ...:

— Իրե՛ն համար:

— Այո՛, երբ իմացայ թէ մեռեր է և թէ ի՛նչ
կերպով մեռեր է, անմիջապէս, առանց խորհրո-
ղածելու պէտքը զգալու, որոշեցի զինուոր ըլ-
լալ... և պիտի ըլլամ զինուոր...: Կնքահայր,
և դուք, տիկին, կ'աղօչեմ ձեզի, արգելք մի՛
ըլլաք ինծի...:

Տղան սկսաւ արցունք թափել յուսահատու-
թեան ճշմարիտ տազնապով մը: Կոմսուհին ու
արքան քաղցր խօսքերով հանդարտեցուցին
զայն:

— Այո՛... այո՛... շատ լաւ... ի՛նչպէս որ

կ'ուզես, ի՛նչպէս որ կ'ուզես՝ թող այնպէս ըլ-
լայ...:

Երկուքն ալ սա մտածումը ունեցած էին.
Թողունք որ ժամանակը գործէ: Փան դեռ տղայ
է. օր կուգայ՝ միտքը կը փոխէ: Այս մասին եր-
կուքն ալ կը սխալէին. ժամ չփոխեց միտքը:

1876ի սեպտեմբեր ամսուն, Բօլ մերժուեցաւ
Սէն-Սիոէն, և ժամ իբր՝ տասնըմէկերորդը
ընդունուեցաւ Բազմարուեստեան վարժարանէն:
Այն օրը, ուր ընդունուած ընթերցիչներուն ցան-
կը հրատարակուեցաւ, ժամ կը գրէր արքայ
Քօնսթանթէնին.

«Ընդունուեցայ, և շատ աղէկ ընդունուեցայ.
Կ'ուզեմ հոսկէ ելլել ու բանակ մտնել, և ոչ թէ
քաղաքային պաշտօնի թեկնածու ըլլալ: Վեր-
ջապէս, եթէ վարժարանին մէջ իմ կարգս պա-
հեմ, ընկերներէս մէկուն գործին պիտի գայ: Իմ
տեղս ինք պիտի անցնի:»

Այնպէս ալ եղաւ...: Ժամ կարգը պահելէն
աւելի լաւը ըրաւ: Եթերորդ ելաւ վարժարա-
նէն: Սակայն, փոխանակ չափազիտական դպրո-
ցը մտնելու, Ֆօնթէնպլօի հրետանիի վարժա-
րանը մտաւ 1888ին: Քսանըմէկ տարու եղած
էր. ուստի չափահաս էր, տէր իր հարստութեան.
Երբ սկսաւ իր հարստութիւնը մատակարարել,
առաջին գործը եղաւ մեծագումար ծախք մը
ընել: Գլէման խաթունին և պզտիկ Ռօզալիին
համար, որ մեծցած էր այն ատեն, երկու ար-

Ժեթուղթ դնեց, իւրաքանչիւրը հազար հինգ հարիւր ֆրանք եկամուտով: Եօթանասուն հազար ֆրանքի նստաւ իրեն, գրեթէ ձիշղ ինչ որ Բօլ իր ազատութեան առաջին տարին մօխած էր Բարիզ, Բալէ-Ռուայալ թատրոնին դերասանուհի օրփորդ Լիզ Պաիւլէռի համար:

Երկու տարի յետոյ, Ժան առաջին կ'ելլէր Ֆօն-Թէնպլօյի վարժարանէն, որով իրաւունք կ'ունենար թափուր պաշտօններուն մէջ իրեն համար ուզած տեղն ընտրելու: Աուվինի Լօնկվալէն երեք քիլօմէթր անդին է: Ժան այդ պաշտօնը ինչորեց և ստացաւ:

Անա՛ ինչպէս Ժան Ռէյնօ, թնդանօթածիղներու Զրդ գունդին տեղակալը, 1880 Հոկտեմբեր ամսուն, եկաւ աօքթէօ Մարսէլ Ռէյնօի տանը տէր եղաւ նորէն: Անա՛ ինչպէս ինքզինքը նորէն այն երկրին մէջ գտաւ, ուր իր մանկութիւնը անցած էր և ուր ամենքը պահած էին իր հօրը կեանքին և մտնուան յիշատակը: Անա՛ ինչպէս վայելեց նաեւ արքայ Բօնօթանթէն իր բարեկամին որդին դարձեալ տեսնելու ուրախութիւնը...: Եւ, ամէն բան ըսելու համար, ա՛լ չէր արանջար Ժանի դէմ՝ բժիշկ չըլլալուն համար: Երբ ձերուհի երէցը եկեղեցէն դուրս կ'ելլէր, պատարագը ըսելէն յետոյ, ճամբուն վրայ կը տեսնէր հեռուէն պմպի մը փոշիին տատանումը, երբ կը լսէր գետնին զրդիւնը թընդանօթները տարուած ատեն, կանգ կ'առնէր,

և աղու մը պէս կը հրճուէր զօրագունդին անցնիլը տեսնելով...: Բայց զօրագունդը իրեն համար Ժանն էր: Այն կարչնեղ ու պնդակազմ հեծեալն էր, որուն դէմքին վրայ բացորոշ կը կարդացուէր ուղղութիւն, քաջութիւն և բարութիւն:

Երբ Ժան հեռուէն հեռու տեսնէր երէցը, քառամբակ կը վազցնէր ձին ու կուգար իր կնքահօր հետ քիչ մը կը խօսէր: Ժանին ձին զլուխը երէցին կը դարձնէր, որովհետեւ գիտէր որ իրեն համար միշտ շաքարի կոշկոտ մը կը գտնուէր այն հին սեւ վերարկուին տակ զօր՝ առաւօտները կը հագնէր: Աբբան շքեղ վերարկու մըն ալ ունէր բոլորովին նոր, զօր կը պահէր, ընկերութեան մէջ հագնելու համար... երբ մարդու մէջ լիլլէր:

Զօրագունդին փողերը կը հնչէին գիւղին մէջ ջէն անցնելու ժամանակ... և ամէնուն աչքերը Ժանը կը փնտռէին, պղտիկ Ժանը: Լօնկվալի ձերերուն հարթ միշտ պղտիկ Ժան մնացած էր ան: Այն ինչ գիւղացին, երեսը թարչամած, քամակը կորացած, չէր կրցած մէկգի թողուլ բարեւելու այդ սովորոնթիւնը՝ երբ կ'անցնէր, ըսելով. «Է՛հ, բա՛րեւ, ստահակ, ի՛նչպէս ես!» Այս ստահակը վեց ոտնաչափ բարձրութիւն ունէր:

Ժան չէր ըլլար որ գիւղէն անցնէր, առանց դիտելու երկու պատուհաններ, մէկուն մէջ Գլեման խաթունին մագաղաթանման և թշնամ դէմքը, և միւսին մէջ Ռօզալիին խնդում երեսը: Այս վերջինը նախորդ տարին ամուսնացեր էր:

Ժան անոր վկայ եղած էր, և հարսնիքին իրի՞
կունն ալ, ուրախ զուարթ պարած էր Լօնկվալի
աղջնակներուն հետ:

Այսպիսի մէկն էր Թնդանօթածիղներուն տե՛
ղակալը, որ 1881 մայիս 28ին, կէս օրէն հինգ
ժամ ետքը՝ Լօնկվալի երիցատան առջեւ ձիէն
վար իջաւ: Ներս մտաւ. իր ձին ալ հլութեամբ
մտաւ ետեւէն և ինքնիրեն զնաց բակին մէջ
երգարի մը տակ կեցաւ: Բօլին խոհանոցին
պատուհանն էր կեցած, գետնայարկին վրայ...
Ժան մօտեցաւ ու սրտաղին գրկեց եւ համբուրեց
երկու այտերէն:

— Բարի՛ լոյս, ազնիւ Բօլինս, աղէ՞կ ես:

— Շատ աղէկ...: Կերակուրդ կը պատրաս-
տեմ...: Կ'ուզե՞ս գիտնալ թէ ի՞նչ կայ ուտելու:
Գետնախնձորով ապուր, խորոված զիստ մը և
հաւկիթով կաթնապուր...:

— Սքանչելի՛: Ամենքն ալ կը սիրեմ և անօ-
թութենէ կը մեռնիմ...:

— Աղցանը կը մոռնայի կոր. քիչ մը յետոյ
ինծի հետ պիտի գաս քաղես: Ժամը ճիշդ վե-
ցուկէսին է կերակուրը, տէր երէցը Մայեմայ
ամսուն ժամերգութիւնը պիտի ընէ:

— Ո՛ւր է կնքահայրս:

— Պարտէզն է...: Շատ տխուր է սա երէկ-
ուան վաճառման համար:

— Այո՛, գիտեմ, գիտեմ:

— Բեզ տեսնելով քիչ մը պիտի մխիթարուի:

Որքա՛ն ուրախ կ'ըլլայ երբ դուն հոս ըլլաս:
Բայց ինծի նայէ՛ քիչ մը...: Լուլուն մազլենի
վարդենիները պիտի ուտէ...: Ի՛նչ տաքցեր է
Լուլուն:

— Անտառէն անցնելով մեծ շրջան մը ըրի և
շատ վազցուցի:

Ժան բռնեց Լուլուն որ գէպի մազլենի վար-
դենիները կ'երթնար. սանձը հանեց, թամբը
հանեց փոքրիկ երգարին տակ հասկնայ, և մէկ
դարձուածքով, յարդի մեծկանկ կապոցով մը բե-
րանը թխմեց: Յետոյ Ժան առն մտաւ, սուրը
հանեց մէջքէն, փերիին տեղ՝ հարիւր փարանոց
յարդէ հին զլխարկ մը դրաւ գլուխը և պարտէզ
զնաց, երէցը գտնելու:

Արդարեւ, շատ տխուր էր խեղճ արբան:
Գիշերն ի բուն՝ աչքը չէր գոցած. սովորաբար
այնքան դիւրաւ և այնքան անուշ կը քնանար,
անմեղ մանուկի մը պէս: Յօշոտուած էր սիրտը:
Լօնկվալ օտարականի ձեռք անցած, հերետիկո-
սուհիի մը, բախտախնդրի մը ձեռք: Ժան կը
կրկնէր ինչ որ Բօլը ըսեր էր նախորդ օրը:

— Դրա՛մ պիտի ունենաք, շատ դրամ ձեր
աղքատներուն համար:

— Դրամ դրամ...: Այո՛, աղքատներս բան
մը չպիտի կորսնցնեն, թերեւս շահին ալ...:
Բայց այդ դրամը պէտք է որ ես երթամ խնդ-
րեմ, և այն սրահին մէջ, իմ վաղեմի և սիրելի
բարեկամուհիիս տեղ, այդ կարմիր մազերով Ա-

մերիկուհին պիտի գտնեմ, — կ'երեւայ թէ մազերը կարմիր են եղեր: — Անշուշտ պիտի երթամ, աղքատներու համար պիտի երթամ...: Դրամ պիտի տայ ինծի, այլ միայն դրամ: Մարքիզուհին ուրիշ բան կուտար: Անի իր սիրտն ու կեանքը կուտար: Անոր հետ միասին կ'երթայինք ամէն շաբթու աղքատներուն ու հիւանդներուն այցելելու: Երկրին բոլոր վիշտերն ու թշուառութիւնները գիտէր ան: Երբ ես յօդադաւէտ բռնուած, թիկնաթոռիս վրայ գամուած կը մնայի, ան առանձին կը շրջէր, ինծի չափ ու ինչէ լաւագոյն: Բօլին եկաւ ընդհատել այս խօսակցութիւնը: Փաւեակէ ահագին աղցանոց մը բռնած կուգար, որուն վրայ կը շաքիւնի կարմիր ու թորթոշ ծաղիկներ՝ բունն և պոռոտ:

— Ահա՛, ըսաւ Բօլին, աղցան քաղեցի եկայ...: Ժա՛ն, հազա՛ր կ'ուզես թէ եղերդ:

— Մանտրտիկ եղերդ կ'ուզեմ, պատասխանեց ժան գուարթագին...: Շատոնց է որ չկերայ մանտրտիկ եղերդ:

— Է՛հ լաւ, այս իրիկուն պիտի ուտես...: Ահա, ա՛ռ աղցանոցը...:

Բօլին սկսաւ կտրել եղերդը, և ժան կը ծռէր, տերեւները աղցանոցին մէջ ընդունելու համար: Երէցն անոնց ըրածին կը նայէր:

Այս միջոցին լուսեցաւ բոժոժներու չնկոց մը: Կառք մը կը մօտենար, հնոտի երկաթներ կը ընչեցնելով քիչ մը...: Աբբայ Գօնսթանթէնի

պարտիզակը ցածուկ ցանկապատով մը միայն կը զատուէր փողոցէն, մէկ կանգուն բարձր, որուն մէջ տեղը փոքրիկ դուռ մը կար վանդակաչէն:

Երեքը մէկէն նայեցան և տեսան որ նախնական ձևով կառք մը շուգար, որուն երկու խոշոր ձերմակ ձիեր լրուած էին և զոր կը վարէր պլուզ կապայով ծէր կառապան մը: Այս ձեր կառապանին քով՝ բարձրահասակ ծառայ մը կեցած էր նմանազգեստով, խստադէմ և անօգիւտ երեւոյթով: Կառքին մէջ երկու կիճճը կային, երկուքն ալ ճամբորդի զգեստ հագած, վայելչագեղ այլ բոլորովին պարզ:

Երբ կառքը պարտէզին ցանկապատին 'սուջեւ եկաւ, կառապանը կայնեցուց ձիերը և արբային ուղղելով ըսաւ. — Տէ՛ր երէց, տիկիներ են որոնք կը խնդրեն ձեզ տեսնել:

Յետոյ կիներուն դառնալով ըսաւ.

— Ահաւասիկ Լօնկվալի տէր երէցը:

Աբբայ Գօնսթանթէն մօտենալով փոքրիկ դուռը բացած էր: Ծամբորդուհիները վար իջան կառքէն: Իրենց նայուածքը զարմանքով ուղղուեցաւ այն երիտասարդ սոլային, որ հոն կը գըտնուէր, քիչ մը նեղուած, իր յարդէ օլխարկը աջ ձեռքը և ձախովը աղցանի խոշոր ամանը բռնած, որուն մէջէն դուրս կը պոթկար մանտրտիկ եղերդը:

Երկու կիները պարտէզ մտան... և երիցագոյնը, — որ քսանըհինգ տարեկան կ'երեւար,

— քիչ մը օտարական արտասանութեամբ՝ շատ
ինքնատիպ ու շատ ինքնուրոյն, գարձաւ ըսաւ
արքայ Քօնսթանթէնի։

— Ուրեմն, տէր երէց, պէտք է որ ձեզի
ներկայացնեմ ինքզինքս...։ Տիկին Սքօթ։ Տի-
կին Սքօթն եմ։ Ես էի որ երէկ զնեցի զղեա-
կը... ազարակը և չըջակաները։ Չեզ անհան-
գիստ չընեմ, կրնա՞ք հինգ վայրկեան չնորհել
ինձի։

Յետոյ իր ընկերուհին ցոյց տալով։

— Օրիորդ Պէթինա Բէռսիվալ... քոյրս,
զուշակեցիք, կարծեմ։ Եստ կը նմանինք իրա-
րու, այնպէս չէ։ Ա՛հ, Պէթինա... կառքին
մէջ մոռցանք մեր փոքրիկ շագոյրները... պէտք
պիտի ունենանք անոնց։

— Կ'երթամ կ'առնեմ։

Երբ օրիորդ Բէռսիվալ կը պատրաստուէր
երթալ շագոյրները բերելու, ժան ըսաւ իրեն.

— Կ'աղաչեմ, օրիորդ, ներեցէ՛ք ինձի...։

— Արդարեւ, կը ցաւիմ, պարոն, այս ձանձ-
րոյթը ձեզի տալու համար...։ Սպասաւորը
ձեզի կուտայ զանոնք...։ Առաջին նստարանին
վրայ դրուած են։

Ճիշդ քրոջը արտասանութիւնը ունէր, նոյն
խոշոր սեւ աչքերը, ծիծաղկոտ և զուարթ, ու
միեւնոյն մազերը, — ո՛չ կարմիր, — այլ զեղ-
ձան ոսկեգոյն ցոլքերով, ուր նրբօրէն կը խա-
ղար արեւուն լոյսը։ Գեղեցիկ ժպտով մը բարե-

ւեց ժանը, և սա ալ եղբրդի աղջանոցը Բօլինին
տալով, գնաց երկու փոքրիկ շագոյրները բերե-
լու։

Այս միջոցին, արքայ Քօնսթանթէն, սիրտը
և կոնակը ծեծելով, երիցքտունը կը մտցնէր
Լօնկվալի նոր զգեկատիրուհին։

Գ.

Պալատ մը չէր Լօնկվալի երիցատունը։ Գետ-
նայարկին վրայ գտնուած միեւնոյն սենեակը
թէ՛ ընդունելութեան սրահի և թէ՛ սեղանատան
համար կը գործածուէր, ու խոհանոցին հետ ուղ-
ղակի հաղորդակցութիւն ունէր դուռով մը,
որ միշտ բաց կը մնար. այս սենեակին մէջ կա-
րելի եղածին չափ քիչ կարասի կար. երկու
թիկնաթոս, վեց յարդէ աթոս, մէկ դարան և
մէկ կրօր սեղան։ Արդէն՝ այս սեղանին վրայ
Բօլին դրած էր արքային ու ժանին երկու սպաս-
ները։

Տիկին Սքօթ և օրիորդ Բէռսիվալ կ'երթային
կուգային, մանկական հետաքրքրութեամբ մը
զննելով արքային բնակութիւնը։

— Բայց պարտէզը, տունը, ամենքն ալ օի-
րուն են, կ'ըսէր տիկին Սքօթ։

Երկուքն ալ, առանց վարանելու, խոհանոց
մտան։ Արքայ Քօնսթանթէն հտուհուն կ'եր-
թար, հեղձամղձուկ, ապահար, սասանած այս

յանկարծակի ամերիկեան արշաւանքէն: Պատաւ
Բօլին, վրդովուած ու արամած դէմքով, կը
դիտէր երկու օտարուհիները:

— Ասո՛նք են ահա, կ'ըսէր ինքնիրեն, սա
հերիտրկոսուհիները ու անիծեալները:

Ու իր գողգօշուն և յուզնալ ձեռքերով մե-
քենաբար կը ստկէր եղբորը:

— Կը շնորհաւորեմ ձեզ, օրիորդ, ըսաւ անոր
Պէթինա. ձեր փոքրիկ խոհանոցը ո՛րչափ մա-
քուր բռնուած է: — Նայեցէք (*) Սիւզի, ըս-
տրովին ձեր փափաքած երիցատունը չէ՞ միթէ:

— Երէցն ալ նմանապէս, յարեց տիկին
Սքօթ: Ո՛հ, այո՛, տէր երէց, կը ներէ՞ք որ այս
բանը ըսեմ ձեզի: Եթէ գիտնայիք թէ ո՛րքան
երջանիկ կը զգամ ինքզինքս, այսպիսի մէկը ըլ-
լալնուդ համար: — Պէթինա՛, ի՞նչ կ'ըսէի այս
առաւօտ երկաթուղիին մէջ, ու պահ մը առաջ
ալ կառքին մէջ:

— Բոյրս կ'ըսէր, տէր երէց, թէ ամէն բանէ
աւելի կը փափաքէր որ երէցը ըլլայ ո՛չ
երիտասարդ, ո՛չ տխուր, ո՛չ դաժան... այլ
երէց մը ճերմակ մազերով, բարի ու քաղցր
դէմքով:

— Եւ դուք բոլորովին այնպէս էք, տէր
երէց, ըտրովին: Չէ, աւելի լաւը չէինք

(*) Անգլիացիներ եւ Ամերիկացիներ «դու»ով, «ու»ով չեն
խօսիր բնու, ո՛վ ալ ունենան իբր խօսակից: Այլ սիւս յոգնա-
կի խօսելու սովորութիւնը կը պահեն.
Կ. Թ.

կրնար գտնել: Ներեցէք ինձի, կ'աղաչեմ, ձեզի
հետ այս կերպ խօսելու համար: Բարիգունհիները
չատ լաւ գիտեն ոլորել իրենց խօսքերը, ճարտա-
րութեամբ ու մանուածոյ դարձուած քներով: Ես
չգիտեմ... երբ Ֆրանսերէն խօսիմ, շատ դժուա-
րաւ մէջէն կ'ելլեմ, եթէ չըսեմ ամէն բան պար-
զօրէն, անո՞ն և անոպայ, ինչպէս որ դայ: Վեր-
ջապէս, գոհ եմ, շատ գոհ եմ, և յուսամ թէ
դուք ալ, տէր երէց, դուք ալ գոհ պիտի ըլլաք,
չատ գոհ պիտի ըլլաք ձեր ծուխերէն:

— Իմ ծուխերս, ըսաւ հիւսիսը, այն ատեն
գտնելով, իր խօսքը, շարժումը, կեանքը և
ամէն ինչ զոր քանի մը վայրկեանէ ի վեր բոլո-
րովին կորսնցուցած էր: Իմ ծուխերը: Ներե-
ցէք ինձի, տիկին, օրիորդ... ա՛յնքան մեծ է
յուզումս: Արդեօք... ուղղափա՛ն էք:

— Անշուշտ, ուղղափա՛ն ենք:

— Ուղղափա՛ն են, ո՛ւղղափառ, կրկնեց
երէցը:

— Ուղղափա՛ն են եղեր, ուղղափա՛ն, դոչեց
պառաւ Բօլինը, որ խոհանոցին սեմին վրայ ե-
րեւցաւ ծիլ ծիլ բացուած, լուսաճաճանչ, թե-
ւերր երկինք տարածած:

Տիկին Սքօթ երէցին կը նայէր, Բօլինին կը
նայէր, խիստ զարմացած, մէկ բառով այսպիսի
ներգործութիւն մը ըրած ըլլալուն: Եւ որպէս
զի տեսարանը կատարեալ ըլլար, ժան երեւցաւ
երկու փոքր շագոյրները բերելով: Երէցը ու Բօ-

լին ողջունեցին միեւնոյն բառերով :

— Ուղղափառ են եղեր, ուղղափառ :

— Ա՛հ, կը հասկնամ, ըսաւ տիկին Սքօթ խնդալով, մեր անունին, մեր երկրին համար է. կարծեցիք թէ բողոքակա՛ն ենք: Ամենեւին. մեր մայրը Գանատացի էր, Ֆրանսական ցեղէ և ուղղափառ. ահա անոր համար քոյրս ու ես Ֆրանսերէն կը խօսինք, անչուշտ քիչ մը շեշտով և երբեմն ամերիկեան ձեւերով, բայց վերջապէս կրնանք քիչ շատ ուզածնիս հասկցնել: Ամուսինս բողոքական է, բայց զիս ազաւ ձգած է, և երկու զաւակներս ալ կաթոլիկ են: Ասոր համար է, տէր արքայ, որ առջի օրէն ուզեցինք գալ ձեզ տեսնել:

— Ասոր համար, յարեց Պէթինա... և ուրիշ բանի համար ալ... բայց այս ուրիշ բանին համար, մեր փոքրիկ շագոյրներուն կարօտ ենք բոլորովին:

— Աւասիկ, օրիորդ, պատասխանեց ժան:

— Եւ աւասիկ իմս:

Մինչդեռ փոքր շագոյրները ժանին ձեռքէն տիկին Սքօթին և Պէթինային ձեռքը կ'անցնէին, երէցը կը ներկայացնէր ժանը երկու Ամերիկուհիներուն. սակայն դեռ այնքան յուզման մէջ էր որ ներկայացումը բոլորովին կանոնաւոր չեղաւ: Երէցը բան մը միայն մոռցաւ ըսելու, և ներկայացման ատեն այս բանը շատ էական է. ժանին մականուանը:

— Ժանն է ըսաւ, իմ սանս, Սուվինետի թնդանօթաձիղներու գունդին տեղակալ: Տունէն է:

Ժան երկու մեծ խոնարհութիւն ըրաւ. Ամերիկուհիներն ալ երկու փոքր խոնարհութիւն ըրին, և յետոյ սկսան շագոյրները ալափել և իւրանքանչիւրը մէյ մէկ հազար Ֆրանքնոց ծրար դուրս հանեց զօր աղբորիկ զետեղեր էին օձի կաշիէ շինուած կահնայ պատեաններու մէջ՝ սկիիէ շրջանակով:

— Ասի ձեր աղքատներուն համար բերի, տէր երէց, ըսաւ տիկին Սքօթ:

— Ես ալ ասի, ըսաւ Պէթինա:

Իրենց նուէրը փափուկ կերպով սանեցուցին ծեր երէցին աջ ձեռքին ու ձախ ձեռքին մէջ, ու ան ալ, փոփոխակի մէյ մը աջին, մէյ մը ձախին նայելով, կ'ըսէր իւրովի.

— Ի՞նչ են այս երկու պզտիկ բաները: Շատ ծանր է: Ոսկի ըլլալու է մէջը... Այո՛, բայց ո՞րքան, ո՞րքան:

Յօթանասուներկու տարեկան էր արքայ Քօնսթանթէն, և շատ դրամ անցեր էր ձեռքէն, թէեւ ձեռքին մէջ չէր մնացած երկար ատեն. այդ զրամը փոքրիկ գումարներով եկած էր իրեն, և այդպիսի մեծ գումարի մը նուէրը չէր կրնար խելքին մէջ սեղմեցնել: Երկու հազար Ֆրանք: Երբեք ձեռքը ունեցած չէր երկու հազար Ֆրանք և ոչ իսկ հազար:

Ուստի չգիտնալով թէ ի՛նչ կուտային իրեն, չէր գիտեր թէ ի՛նչպէս շնորհակալ ըլլար: Կը կակաղէր:

— Շատ երախտապարտ եմ ձեզի, տիկին, շատ բարի էք, օրիորդ:

Մէկ խօսքով՝ բաւական շնորհակալութիւն չէր յայտներ: Ժան հարկ համարեց միջամտել:

— Կնքահայր, այս տիկինները երկու հազար Փրանք է որ տուին ձեզի:

Բօլին նորէն երեւցաւ յանկարծ:

— Երկո՛ւ հազար Փրանք. քերկո՛ւ հազար Փրանք:

— Այո՛, ըսաւ երէցը, այո՛...: Ա՛ն Բօլին, պահէ այս դրամը և զգուշութիւն ըրէ...:

Պառաւ Բօլին ամէն բան էր այս տան մէջ, սպասուհի, խոհարարուհի, դեղագործ, գանձապետ: Անոր ձեռքերը դողդալով և մեծարանքով ընդունեցին ոսկիէ երկու փոքր ծրարները, որոնք այնքան թշուառութիւն և խեղճութիւն պիտի մեղմացնէին, այնքան տառապանք պիտի թեթեւցնէին:

— Ամէնը աս չէ, տէր երէց, ըսաւ տիկին Սքօթ, ամէն ա՛խս հինգ հարիւր Փրանք [պիտի տամ ձեզի:

— Ես ալ քրօջս պէս պիտի ընեմ:

— Հազա՛ր Փրանք ամիրսը: [Ուրեմն ա՛լ աղօքատ չպիտի մնայ երկրին մէջ:

— Մեր ուղածն ալ ան է: Ես հարուստ եմ,

չատ հարուստ... քոյրս ալ հարուստ է... ան ինէ աւելի հարուստ է... աղջիկ մը շատ ծախք ընելու առիթ չունի... մինչդեռ ե՛ս: Ա՛հ, ե՛ս...: Կը վատնեմ, ինչ որ կրնամ՝ կը վատնեմ: Երբ մէկը շատ դրամ ունենայ, չափազանց շատ ունենայ, իրաւունքէն աւելի ունենայ, ըսէ՛ք, տէր արքայ, որպէս գինեբերի ըլլայ ան, կա՞յ ուրիշ միջոց մը՝ քան թէ տալ, լիարուսն տալ, և կարելի եղածին չափ շատ, ու կարելի եղածին չափ արժանաւորին տալ: Արդարեւ, դուք ալ բան մը պիտի տաք ինձի:

Ու Բօլինին ուղղելով խօսքը:

— Հաճեցէք, օրիորդ, դաւաթ մը պաղ ջուր տալ ինձի: Չէ՛, ուրիշ բան չեմ ուզեր... դաւաթ մը պաղ ջուր... ծարաւ կը մարիմ կոր:

— Ես ալ, ըսաւ Պէթինա ինդալով, մինչդեռ Բօլին վազեց ջուր բերելու, ես ալ անօթութեանէ կը մարիմ կոր...: Տէր երէց... գիտեմ շատ անհարկի բան է ըրածս... բայց կը տեսնեմ որ սեղաննիդ շտկուած է...: Արդեօք կարելի չէ՞ որ մեզի ալ ճաշ հրամցնէք:

— Պէթինա՛, ըսաւ տիկին Սքօթ:

— Չգեցէք, Սիւզի, ձգեցէք...: Կը հաճիք, այնպէս չէ՞, տէր երէց:

Իսկ ծերունի երէցը բան մը չէր գտներ պատասխանելու: Չէր գիտեր թէ ի՛նչ կ'ընէ, ի՛նչ կ'ըլլայ: Այս կիները յարձակումով անած էին երիցատունը: Ուղղափա՛ռ էին: Երկո՛ւ հազար

Ֆրանք բերած էին իրեն: Ամէն ամիս հազար
 Ֆրանք կը խոտանային: Կ'ուզէի՛ն իր տունը
 ճաշել. ա՛հ, վե՛րջին հարուածն էր աս. սոսկում
 կուգար վրան, մտածելով որ իր խորովածները
 ու հաւկիթով կաթնապուրը պիտի հրամցնէր խօշ
 հարստութեան տէր եղող այս երկու Ամերիկու-
 հիներուն, որոնք անշուշտ արտակարգ, արտառոց
 ու արտասովոր բաներով կը սնանէին: Ու մըր-
 մընջեց:

— Ծա՛ղի... ճա՛ղի... հո՞ս ճաշել կ'ուզէք:
 Ժան հարկադրուեցաւ նորէն միջամտել:

— Կնքահայրս շատ ուրախ պիտի ըլլայ,
 ըստ, եթէ դուք հաճիք ընդունիլ միայն զինքը
 անհանգիստ ընողը սա է...: Երկուքնիս միասին
 պիտի ճաշէինք, և պէտք չէ որ, տիկիններ,
 խնջոյքի մը սպասէք...: Վերջապէս ներողամիտ
 պէտք է դառնուիք:

— Այո՛, այո՛, շատ ներողամիտ, պատասխա-
 նեց Պէթինա:

Ապա, քրոջը ուղղելով խօսքը, ըսաւ.

— Օ՛ն, Սիւզի, մի՛ խոժոռիք, որովհետեւ...
 գիտէք որ իմ սովորութիւնս է քիչ մը...: Հոս
 կենանք, կ'ըլլայ: Ժամ մը այս տեղ հանդիստ
 անցնենք ու հանգչինք: Ա՛յնպիսի օր մը ան-
 ցուցինք որ երկաթուղիին մէջ... կառքին մէջ...
 փոշիին... տաքուն...: Այս առաւօտ, սոսկալի
 պանդոկի մը մէջ շատ գէշ նախաճաշ մը ըրինք:
 Դարձեալ նոյն պանդոկը պիտի երթայինք, ժամը

եօթին, ճաշելու համար, և յետոյ Բարիզի կա-
 ոսխումը պիտի նստէինք...: Բայց հոս ճաշելը
 ստուգիւ շատ աւելի աղուոր բան պիտի ըլլայ:
 Ա՛լ չէ չէք ըսեր...: Ա՛հ, ի՛նչ բարի էք, Սիւ-
 զա՛նդ իմ:

Այս խօսքը ընելէ յետոյ՝ քոյրը համուրեց
 մեծ փաղաքշանքով ու խանդաղատանքով. ապա
 երէցին դառնալով.

— Եթէ գիտնայի՛ք, տէր երէց, ի՛նչ բարի
 է քոյրս:

— Պէթինա՛, Պէթինա՛:

— Օ՛ն, շուտ բրէ՛, Բօլին, ըսաւ Ժան. եր-
 կու սպաս բե՛ր: Ես ալ կ'օգնեմ քեզի:

— Ես ալ, գոչեց Պէթինա, ես ալ պիտի օգ-
 նեմ ձեզի: Ո՛հ, կ'աղաչեմ, շատ պիտի զուար-
 ճանամ: Միայն թէ, տէր երէց, ներեցէք որ
 հոս իրրեւ իմ տունս վարուիմ քիչ մը:

Նախ յօդիկը վրայէն հանեց հապճեպով: Ժան
 հիացաւ, տեքնելով քնքուշ, անստղիւտ, սքան-
 չելի իրան մը, այնքան կակուղ ու շնորհագեղ:

Յետոյ օրիորդ Բէրսիվալ գլխարկը հանեց,
 քիչ մը չափազանց ամապարանքով և անա՛/
 սխրալի քայքայման մը նշան եղաւ: Հիւսք մը
 ուսէն բաժնուեցաւ և Պէթինային ուսերուն վը-
 րայ ծաւալեցաւ հեղեղներով ու ջրվէժի պէս եր-
 կայն հոսումով. այդ միջոցին պատուհանի մը
 առջեւ կը դառնուէր, ուր արեւուն ճառագայթ-
 ները ալիքներով ներս կը մտնէին... այս ոսկի

լոյսը այդ ոսկի մագերուն վրայ լիալիբ շողալով, սխրալի շրջանակ մը կը յօրինէր մատաղատի աղջկան պայծառափայլ գեղեցկութեանը: Պէթինա շիկնելով ու շփոթելով՝ քոյրը օգնութեան կանչեց և տիկին Սքօթ շատ նեղութիւն կրեց, այս անկարգութիւնը քիչ մը կարգի դնելու համար: Երբ աղէտը դարմանուեցաւ, ոչինչ կրցաւ Պէթինան արգիլել որ խուժէ պնակներուն, դանակներուն ու պատառաքաղներուն վրայ:

— Բայց, պարո՛ն, կ'ըսէր Ժանին, ես շատ լաւ սեղան շտկել գիտեմ: Քրոջս հարցուցէ՛ք... Ըսէ՛ք, Սիւզի, երբ պզտիկ էի, նիւ-Յօրք, սեղանը շատ լաւ չէի՞ շտկեր:

— Այո՛, շատ լաւ, պատասխանեց տիկին Սքօթ:

Ու Պէթինային անպատկառութեանը համար երէցէն ներողութիւն խնդրելով հանդերձ, ինքն ալ գլխարկն ու լօղիկը հանեց, այնպէս որ Ժան երկրորդ անգամ մըն ալ սիրուն մէջքի մը և հիանալի մազերու քաղցր տեսարանը ունեցաւ աչքերուն առջեւ: Սակայն գանգուերներու քայքայումը երկրորդ ներկայացում չունեցաւ, և Ժան ցաւեցաւ ասոր համար:

Քանի մը վայրկեան ետքը, տիկին Սքօթ, օրիորդ Բէրսիվալ, երէցը ու Ժան երիցատան փոքր սեղանին շուրջը կը բազմէին. յետոյ ընդհուպ, խօսակցութիւնը սրտաբաց և սրտազեղ ընտանութեան ձեւը կ'առնէր, շնորհիւ յանկար-

ծական և նորանշան ձեւին այս հանդիպման, շնորհիւ մանաւանդ Պէթինայի շէնչող տրամագրութեան ու քիչ մըն ալ խիզախօրէն զուարթ մտքին:

— Պիտի տեսնէք, տէր երէց, ըսաւ Պէթինա, պիտի տեսնէք թէ սո՛ւտ ըսի արդեօք, թէ կը մարիմ անօթութենէ: Առաջուց կ'ըսեմ թէ պիտի լափեմ: Երբեք այսքան ախորժով սեղան նստած չունէի: Այս ճաշին շնորհիւ ի՛նչ աղէկ պիտի վերջանայ օրերնիս: Որքան գո՛հ ենք քոյրս ու ես, այս դղեակը, այս ագարակները, այս անտառը առնելնուս համար:

— Եւ այս ամէնը, շարունակեց տիկին Սքօթ, այնքան տարօրինակ, այնքան անակնկալ կերպով ունենալնուս համար: Միտքերնէս շատ քիչ կ'անցնէր ասանկ բան մը:

— Կրնաք ըսել, Սիւզի, թէ բնաւ չէր անցնէր...: Բայց նախ ներեցէք, պարո՞ն... պարոն Ժան, այնպէս չէ՞:

— Այո՛ օրիորդ, պարոն Ժան:

— Ուրեմն, պարոն Ժան, քիչ մըն ալ տուէք սա ընտիր ապուրէն, կ'աղաչեմ:

Արբայ Բօնսթանթէն կը սկսէր խելաբերիլ, ինքզինքը դռնել. սակայն դեռ շատ յուզուած էր տանտիրոջ պարտականութիւնները կանոնաւոր կերպով կատարելու համար. Ժան յանձն առած էր կառավարել իր կնքահօր համեստ ճաշը: Ուստի այս հրաշագեղ Ամերիկուհիին պնակը

մինչեւ բերանը լեցուց. ան անքթիթ իր վրայ կը սեւեռէր երկու մեծ աչքերուն նայուածքը, ուր կը ցոլային անկեղծութիւն, յանդգնութիւն և զուարթութիւն: Ժանին աչքերն ալ արդէն փոխարէնը կը հատուցանէին օրիորդ Բէրսիվալին: Երեք քառորդ չէր անցած տակաւին որ երէցին պարտէզին մէջ մանկամարդ Ամերիկուհին և երիտասարդ սպան առաջին անգամ իրարու հետ խօսած էին, և արդէն երկուքնին դէմ դիմաց, անդոյր համարձակ, իրարմէ անկասկած, և գրեթէ իրարու ընկեր կը զգային ինքզինքսնին:

— Արդ, կ'ըսէի թէ, տէր երէց, ըսաւ Պէթինա, երէկ քոջս տօնն էր, իր ծննդեան տօնը: Գեոայրս, ութ օր կայ, հարկադրուեցաւ Ամերիկա երթալ. գացած ատենը ըսեր էր քոջս. «Յս հոս չգիտի ըլլամ ձեր տօնախմբութեան օրը, բայց ինէ լուր կ'առնէք»: Ուստի երէկ ընծաներ ու փունջ փունջ ծաղիկներ եկան քիչ շատ ամէն կողմէ. բայց քեոայրս ոչինչ՝ մինչեւ ժամը հինգը... ոչինչ: Ելանք երկուքս մէկտեղ Պուլօնեի անտառը գացինք ձիով պտոյտ մը ընելու... և ձի ըսելով՝ միտքս եկաւ...:

Կանդ առաւ, և քիչ մը մէկ կողմ ծռելով, հետաքրքրութեամբ նայեցաւ ժանին փոշոտ կօշիկներուն, յետոյ գոչեց.

— Բայց, պարոն, խթաննե՞ր ունիք կօշիկսներնուդ վրայ:

— Այո՛, օրիորդ:

— Հեծելագօրքի մէջ է՞ք:

— Թնդանօթածիգերուն մէջ եմ, օրիորդ, և Թնդանօթածիգ ըլլալը՝ հեծելագօրք ըլլալ է:

— Ձեր զօրագունդը ո՞ւր է...

— Հոս, մօտը:

— Ուրեմն մեզի հետ ձի կը նստի՞ք:

— Ամենամեծ հաճոյքով, օրիորդ:

— Լաւ: Տեսնենք, ո՞ւր ձգեցի խօսքս:

— Դուք ալ չէք գիտեր Պէթինա, և այնպիսի բաներ կը պատմէք այս պարոններուն որ ամենեւին կարեւորութիւն չունին իրենց համար:

— Ո՛հ, կը ներէք, տիկին, ըսաւ երէցը: Դղեակին վաճառումը, — բոլոր երկրին մէջ ատոր վրայ կը խօսուի — և օրիորդին պատմութիւնը շահագրգռական է մեզի համար:

— Կը տեսնէք, Սիւզի, պատմութիւնս շատ շահագրգռական է տէր երէցին համար...: Ուստի կը շարունակեմ: Ձիով պտոյտնիս ըրինք, տուն դարձանք ժամը եօթին, դարձեալ լուր չկայ...: Ծաշերնիս ըրինք և այն միջոցին երբ սեղանէն կ'ելլէինք, երկու տող հեռագիր մը եկաւ Ամերիկայէն. «Այսօր ձեզի համար, և ձեր անուանը Լօնկվալի դղեակը և կալուածը գնել տուի, Սուվինիի մօտ, հիւսիսի գծին վրայ:» Այն ատեն երկուքս ալ սկսանք խնդալ խենթի պէս, մտածելով որ...:

— Ձէ՛, չէ՛, Պէթինա, ձիչդ չէ ատ: Երկուք-

նիս ալ կը զրպարտէք կոր: Նախ յուզման և
 երախտագիտութեան անկեղծ շարժում մը ունե-
 ցանք: Բոյրս ու ես շատ կը սիրենք գիւղը:
 Ամուսինս, որ պատուական անձ մըն է, գիտէր
 որ շատ կը փափաքէինք Ֆրանսայի մէջ հող ու-
 նենս: Կեց ամիսէ ի վեր կը փնտռէր ու չէր
 գտներ: Վերջապէս, և առանց մեզի ըսելու, այս
 դղեակը գտեր էր որ ճիշդ իմ ասոնախմբութեանս
 օրը կը ծախուէր...: Այս ըրածը մեծ փափկա-
 նըկատութիւն մըն էր ինձի համար:

— Այո՛, Սիւզիւ, իրաւունք ունիք, փոքրիկ
 յուզման յաջորդեց մեծ ցնցում:

— Այնպէս եղաւ...: Երբ սա խորհրդածու-
 թիւնը ըրինք թէ յանկարծ երկուքնիս ալ,
 —ի՛նչ որ մէկունս է՝ միւսինս ալ է, — գղեակի
 մը տէր կը գտնուինք, առանց գիտնալու թէ
 ո՛ւր կը գտնուի այս դղեակը, ի՛նչպէս շինուած
 է և քանի՛ գնուած է, ասիկա շատ կը նմա-
 նէր պարիկներու պատմութեան...:

— Վերջապէս, ամբողջ հինգ վայրկեան, բո-
 լոր սրտով խնդացինք...: Յետոյ աշխարհացոյ-
 ցի մը վրայ ինկանք, և բաւական նեղութեամբ
 յաջողեցանք Սուվինեին գտնել անոր մէջ: Աշ-
 խարհացոյցէն ետքը՝ կարգը եկաւ ուղեցոյցի մը,
 և այս առաւօտ, ճեպընթացով Սուվինեի ելանք
 ժամը տասնին:

— Բոլոր օրերնիս դղեակը, ախօռները, ա-
 զարակները այցելելով անցուցինք: Ամէն բան

չտեսանք, որովհետեւ ծայրը չի դար... բայց տե-
 սածներնու վրայ սքանչացանք: Միայն, տէր-
 երէց, բան մը կայ որ իմ հետաքրքրութիւնս կը
 շարժէ: Գիտեմ որ այդ ստացուածքը երէկ հրա-
 պարակաւ ծախուեցաւ...: Ծամբան մէկ ծայրէն-
 միւսը խոշոր յարտարարութիւններ տեսայ...:
 Բայց այն մարդոց, մատակարարներուն և ազա-
 րակը վարողներուն, որոնք ինձի հետ պատե-
 ցան, չհամարձակեցայ հարցնել, — թէ անգի-
 տութիւն ցուցնէի՝ յիմար պիտի երեւնայի,
 — թէ քանի՛ ապրանք եղեր է ինձի: Ամուսինս
 իր հեռագրին մէջ մոռցած է ըսելու...: Ասիկա
 մանրամասնութիւն մըն է միայն, քանի որ
 այնքան ուրախ եմ գնուած ըլլալուն, սակայն
 չպիտի նեղանամ, իմանալով...: Ըսէ՛ք, տէր
 երէց, եթէ գիտէք, քանի՞ է գինը:

— Տարապայման գին մը, պատասխանեց
 երէցը, որովհետեւ շատ յոյսեր և շատ փառասի-
 րութիւններ կը յուզէին Լօնկվալի շուրջը:

— Տարապայման գին մը: Կը վախցնէք
 զիս...: Ծղղիւ ո՞րքան:

— Երե՛ք միլիոն:

— Միայն երեք միլիոն, գոչեց տիկին
 Սքօթ. գղեակը, ազարակները, անտառը ամեն-
 քը երե՛ք միլիոն միայն:

— Այո՛, երեք միլիոն:

— Բան մը ըսել չէ, ըսաւ Պէթինս: Այն
 գրգանոյ՝ փոքրիկ վտակը, որ դարաստանին մէջ
 ման կուգայ, միայն կ'արժէ երեք միլիոն:

— Տէր երէց, հարցուց տիկին Սքոթ, քիչ մը առաջ կ'ըսէիք թէ շատեր կային որոնք առնել կ'ուզէին դղեակը ու հողերը:

— Այո՛, տիկին:

— Այդ անձերուն առջեւ իմ անունս արտասանուեցա՞ւ վաճառումէն յետոյ:

— Այո՛, տիկին:

— Եւ երբ իմ անունս արտասանուեցաւ, մէկը գտնուեցա՞ւ որ զիս ճանչնար և վրաս խօսէր...: Այո՛... այո՛...: Ձեր լուսթիւնը պատասխան է... իմ վրաս խօսեր են...: Լա՛ւ ուրեմն, տէր երէց, ա՛նա՛ լուրջ կը խօսիմ, շատ լուրջ...: Կ'աղաչեմ, շնորհ ըրէք կրկնել ինչ որ ըսին:

— Բայց, տիկին, պատասխանեց խեղճ երէցը, որ իբրեւ թէ հրաշէկ ածուխի վրայ նստած ըլլար այն միջոցին, ձեր մեծ հարստութեան վրայ խօսեցան...:

— Այո՛, անոր վրայ ալ խօսած պիտի ըլլան. անշուշտ, ըսին թէ շատ հարուստ եմ... և քիչ տեսնէ ի վեր... ետքէն տեսա՞մ... այնպէս չէ՞: Շատ լաւ. բայց ամէնը աս չէ, ուրիշ բան ալ ըսած ըլլալու են:

— Ո՛չ, բան մը չլսեցի...:

— Ո՛հ, տէր երէց, ձեր ըրածը ան է հիմա ինչ որ կը կոչէք բարեպաշտ սուտ մը... և ես պատճառ կ'ըլլամ ձեր դժբախտութեան. յայտնի է որ դուք անկեղծութիւնն իսկ էք: Ձեզ չար-

չարելուս պատճառը աս է որ մեծ շահ մը ունիմ իմանալու թէ ի՛նչ ըսուեր է, թէ ի՛նչ...:

— Օ՛ն, տիկին, ընդհատեց ժան, իրաւունք ունիք, ուրիշ բաներ ըսին, և կնքահայրս կը վարանի զանոնք ձեզի կրկնելու. բայց որովհետեւ կ'ուզէք անպատճառ իմանալ, ձեզի համար ըսին թէ դուք էք ամենէն վայելչագեղ, ամենէն փայլուն և ամենէն...:

— Եւ ամենէն գեղեցիկ կիներէն մէ՞կը Բարիզի: Կրնան ատ ալ ըսած ըլլալ, — քիչ մը ներողամտութեամբ կրնան ըսած ըլլալ — բայց դարձեալ ամէնը ատ չէ: Ուրիշ բան ալ կայ...:

— Իբրեւ ի՛նչ:

— Այո՛, ուրիշ բան ալ կայ, ու ես այս վայրկեանիս իսկ կ'ուզեմ որոշ և անկեղծ բացատրութիւն մը ունենալ ձեզի հետ: Չեմ գիտեր... բայց ինծի այնպէս կը թուի թէ բախտը յաջող է այսօր... ինծի այնպէս կը թուի, — թերեւս շատ կանուխ է այս բառը գործածել, — բայց ինծի այնպէս կը թուի թէ դուք երկուքնիդ ալ քիչ մը բարեկամ էք արդէն ինծի... և թէ օր մը բոլորովին բարեկամ պիտի ըլլաք: Ըսէք, եթէ իմ մասիս այլանդակ ու ստայոդ պատմութիւններ կը չըլին, իրաւունք չունիմ կարծելու թէ դուք պիտի օգնէք ինծի, անոնց սուտը երեւան հանելու:

— Այո՛, տիկին, պատասխանեց ժան ուժգնօրէն, իրաւունք ունիք այդպէս կարծելու:

— Լա՛ւ ուրեմն. ձեզի կ'ուղղեմ խօսքս, պարո՛ն: Դուք զինուոր էք... և ձեր արհեստն է արիութիւն ունենալ...: Խոստացէ՛ք որ քաջ ըլլաք...: Կը խոստանա՞ք:

— Ի՞նչ կը հասկնաք, տիկին, քաջ ըլլալը սելով:

— Խոստացէ՛ք, խոստացէ՛ք առանց բացատրութեան, առանց պայմանի:

— Լա՛ւ, կը խոստանամ:

— Ուրեմն անկեղծութեամբ, ա՛յոով և ոչով պիտի պատասխանէք ձեզի ընելիք հարցումներու...:

— Պիտի պատասխանեմ:

— Ըսի՛ն արդեօք ձեզի թէ Նիւ-Եօրքի փողոցներուն մէջ մուրացած եմ:

— Այո՛, տիկին, ըսին:

— Եւ թէ շրջուն կրկէսի մէջ ձի խաղցուցած եմ:

— Ըսին, տիկին:

— Լաւ... Ահա խօսիլը այսպէս կ'ըլլայ... Լա՛ւ, նախ զիտեցէք որ այս ամենուն մէջ բան մը չկայ, բնաւ բան մը չկայ որ մարդ չկարենայ խոստովանիլ...: Եթէ ճշմարիտ չէ, իրաւունք չունի՛մ արդեօք ըսելու թէ ճշմարիտ չէ: Ու ճշմարիտ է: Իմ պատմութիւնս... քանի մը բառով ընեմ ձեզի, առաջին օրէն, որպէս զի դուք ալ բարեհաճիք կրկնել ամէն առանց որոնք իմ վրաս պիտի խօսին ձեզի հետ...: Կեանքիս մէկ

մասը այս երկրին մէջ պիտի անցնեմ. ուստի կը փափաքիմ որ գիտնան թէ ո՛ւրկէ կուգամ և ի՛նչ եմ: Ուրեմն կը սկսիմ: Աղքատ, այո՛ շատ աղքատ եղայ: Ութը տարի կայ...: Հայրս նոր մեռած էր, մեր մօր մահուընէն քիչ ետքը: Ես աասնըութը տարեկան էի, և Պէթինան՝ ինը: Առանձին մնացինք աշխարհի մէջ՝ մեծագումար պարաքով և դատով մը: Հօրս վերջին խօսքը սա եղած էր. «Միւզի, երբեք իրաւախո՛ս չըլլաք դատին համար, երբե՛ք երբե՛ք: Միլիոններ, գաւակներս, միլիոններ պիտի ունենաք»: Երկուքս ալ, Պէթինան ու զիս, համբուրեց...: Հոգեվարքը հասաւ ու մեռաւ, կրկնելով. «Միլիոններ»): Հետեւեալ օրը գործակատար մը ներկայացաւ, որ առաջարկեց բոլոր պարտքերը հատուցանել, և ասկէ զատ, տասը հազար տօլար վճարել ինձի, եթէ մեր դատին վերաբերեալ իրաւունքներս իրեն թողում: Գօլօրատոյի մէջ լայնածաւալ հողային ստացումքին վրայ կը դառնար խնդիրը...: Մերժեցի: Այն միջոցին էր որ, քանի մը ամիս, շատ խեղճութեան մէջ մնացինք:

— Այն միջոցին էր որ, ըսաւ Պէթինա, սեղանը ես կը գնէի:

— Կեանքս Նիւ-Եօրքի դատ վարողներուն մօտ կ'անցնէի... բայց ոչ ոք կ'ուզէր իմ շահերուս պաշտպանութիւնը ստանձնել: Ամէն կողմէ միևնոյն պատասխանը կ'ընդունէի. «Ձեր դա-

տը շատ տարակուսելի է, ոսոխներ ունիք հա-
րուստ, և ահարկու դրամ պէտք է, շատ դրամ,
դատին մինչեւ վերջը դիմանալու համար... և
դուք այլ եւս ոչինչ ունիք...: Տասը հազար
տօլար կը նուիրեն ձեզի, պարտքերնիդ ալ վը-
ճարելով, ընդունեցէ՛ք զայն, ծախեցէք ձեր դա-
տը: Բայց հօրս վերջին խօսքերը ականջիս մէջ
էին միշտ, և չէի ուզեր...: Սակայն, չքաւո-
րութիւնը զիս պիտի հարկադրէր այդ բանին,
երբ օր մը, հօրս բարեկամներէն մէկուն, նիւ-
ծօրքցի ւեղանաւոր Պ. Ուիլեամ Սքօթի քով փորձ
մը ըրի: Սենեակին մէջ առանձին չէր ան, երի-
տասարդ մը կար, գրասեղանին առջեւ նստած:
«Կրնաք խօսիլ, ըսաւ, իմ որդիս է ան, Ռիչառ
Սքօթ:» Երիտասարդին նայեցայ, ան ալ ինծի,
և ձանչցանք զիրար...: «Սի՛ւզի: — Ռիչա՛ռ:»
Ձեռքը երկնցուց: Քսանըրեք տարեկան էր, և
եւ, ինչպէս օր ըսի, տասնըութ: Շատ անգամ,
ժամանակաւ, երբ երկուքս ալ աղայ էինք, մի-
ասին խաղացած էինք: Շատ բարեկամ էինք
այն ատեն: Յետոյ, եօթը-ութը տարի առաջ, ան
իր ուսումը աւարտելու գացած էր Ֆրանսա և
Անգլիա: Հայրը նստեցուց զիս և հարցուց թէ
ի՛նչ բանի համար դիմ եմ...: Խնդիրը պատ-
մեցի...: Մտիկ ըրաւ ու պատասխանեց. «Քսան
երեսուն հազար տօլարի կը կարօտիք: Ոչ ոք
փոխ կուտայ ձեզի այդքան գումար մը, կընձ-
ուալից դատի մը անստոյգ ելքին վստահելով:

Յիմարութիւն ըրած կ'ըլլայ: Իսկ եթէ թշուառ
էք, եթէ օգնութեան մը պէտք ունիք...:
— Ատ չէ, հայր իմ, ըսաւ Ռիչառ ուժգնօրէն,
ատ չէ օրիորդ Բէրսիվալին խնդիրը: — Գիտեմ
բայց իր խնդիրն անկարելի է...: Ոտքի ելաւ
դիս առաջնորդելու...: Այն ատեն տկարութիւն
մը եկաւ վրաս, հօրս մահուընէն ի վեր այս ա-
ռաջին անգամն էր. մինչեւ այն ատեն, բաւական
արիասիրտ եղած էի, բայց կը զգայի որ ուժս կը
սպառէր: Ջրային տագնապ քր ունեցայ և լացի:
Վերջապէս ինքզինքիս եկայ և տուն դարձայ:
Ժամ մը յետոյ՝ Ռիչար Սքօթ իմտունս էր. «Սիւ-
զի, ըսաւ, խոստացէք ընդունիլ ինչ որ
պիտի առաջարկեմ ձեզի. խոստացէ՛ք ինծի:»
Խոստացայ...: «Լա՛ւ ուրեմն, ըսաւ, սա միակ
պայմանով որ հայրս մը բան չիմանայ. ես ձեր
տրամադրութեան տակ կը գնեմ ձեզի պէտք
եղած գումարը: — Բայց պէտք է նախ ծանօ-
թանաք իմ դատիս, գիտնաք թէ ի՛նչ է, ի՛նչ
կ'արժէ: — Ես ոչ մէկ բառ գիտեմ ձեր դատին
վերաբերեալ... և չեմ ուզերո և է տեղեկութիւն
ուսնեմալ: Ի՞նչ արժանիք կ'ունենայի երախտա-
ւորել ձեզ՝ եթէ դրամս ետ առնելու վստահու-
թիւնն ունենայի: Դուք արդէն խոստացաք
ընդունիլ: Եղաւ լինցաւ: Ա՛լ պէտք չկայ անոր
վրայ խօսելու:» Այնքան պարզ կերպով, այն-
քան բաց սրտով նուէր մըն էր ըրածը որ ըն-
դունեցի: Երեք ամիս յետոյ դատը վաստկեցանք

այն հողերուն որ անվիճելիօրէն մկր երկուքիս ստացուածքը եղած էին, հինգ միլիոն վճարել ուզեցին: Գացի Ռիչարին խորհուրդ հարցուցի: «Մերօճեցէ՛ք և սպասեցէ՛ք, ըսաւ. եթէ այդքան մեծ գումար մը կ'առաջարկեն. ըսելէ թէ հողերը կրկնապատիկ կ'արժեն: — Սակայն հարկ է որ ձեր դրամը հատուցանեմ, շատ դրամ կը պարտիմ ձեզի, շա՛տ: — Ո՛հ, աճապարելու բան չկայ, աւելի ուշ կրնաք վճարել. ես հիմա շատ հանգիստ եմ: Առնելիքս ալ վտանգի մէջ չէ: — Իսկ ես կը փափաքիմ անմիջապէս վճարել ձեզի. պարտքէ՛ կը սոսկամ...: Առանց հողերը ծախելու, եղանակ մը կրնայ գտնուիլ թերեւս, որպէս զի պարտքէս ազատիմ: Ռիչա՛ր, կ'ուզէ՞ք ամուսինս ըլլալ:» Այո՛, տէր երէց, այո՛ պարոն, ըսաւ տիկին Սքոթ խնդալով, ե՛ս ինքս այսպէս ամուսնիս վրայ ինկայ: Ե՛ս խնդրեցի իր ձեռքը: Ասիկա կրնաք ամենուն ըսել, ու ճշմարիտը ըսած կ'ըլլաք: Արդէն իսկ, պարտաւորուած էի այս կերպ վարուիլ: Ո՛հ, վստահօրէն գիտեմ, ինչպէս որ կեանքս գիտեմ, ան երբեք բերանը պիտի չբանար...: Շատ հարուստ եղած էի ևս...: Զիս շատ սիրելուն համար, դրամս իրեն սոսկում կ'ազգէր: Ահա ամուսնութեանս պատմութիւնը: Իսկ մեր ճոխ հարստութեան պատմութիւնը մէկ քանի բառով կրնայ ըսուիլ: Արդարեւ միլիոններ կան եզեր այս Գօլօրատոյի հողերուն մէջ. առատաբուխ արծաթի հանքեր

գտան հոն, և այս հանքերը ամէն տարի հսկայական խոշոր գումարներ կը բերէին իբրեւ եկամուտ: Մէջերնիս համաձայն ենք, ամուսինս, քոյրս ու ես՝ որ այս եկամուտներէն առատ բաժին հանենք աղքատներուն: Պիտի տեսնէք, տէր երէց... որովհետեւ ճանչցանք անգութ թշուառութիւնը որովհետեւ մեր Նիւ-Եօրքի հինգերորդ փոքրիկ յարկին մէջ Պէթինա կը յիշէ որ ինք կը դէէր սեղանը. ասոր համար ահա մեզ միշտ ձեռնտու պիտի գտնէք ամէն անոնց որոնք կեանքի դժուարութեանց ու տառապանքին հետ դէմ առ դէմ կը գտնուին, ինչպէս մենք ատենք...: Եւ հիմա պարոն Ժան, կը հաճի՞ք ներել ինծի որ այս երկար ճառախօսութիւնս ըրի և ընծայել քիչ մը սա սերէն, որ խիստ ընտիր կ'երեւայ:

Սեր ըսածը, Բօլինին յիշած հակիթով կաթնապուրն էր... և մինչդեռ Ժան կը փութար տիկին Սքոթին հրամցնել զայն, տիկինը յարեց. — Դեռ ամէնը չըսի: Պէտք է գիտնալ թէ ի՛նչ բան ծնունդ տուաւ այդ այլանդակ պատմութեանց: Երբ եկանք Բարիզ հաստատուիլ, տարի մը առաջ հոն հասնելնուս պէս, մեզի պարտք համարեցինք գումար մը նուիրել աղքատներու համար: Ո՛վ խօսեցաւ ատոր վրայ: Անտարակոյս, մենք չէ, այլ օրաթերթ մը ելաւ պատմեց եղածը, նշանակելով նաեւ գումարին քանակը: Իսկոյն երկու երիտասարդ լրագրներ

փութացին Պ. Սքօթին մօտ, փոքրիկ հարցաքննութիւն մը ընելու համար իր անցեալին վրայ: Կ'ուզէին մեր վրայ գրել լրագիրներուն մէջ... Ինչպէս կ'ըսէք անոր — քրոնիկ: Պ. Սքօթ երբեմն քիչ մը բուռն է: Այնպէս եղաւ այդ օրն ալ, ու խստօրէն ճամբու դրաւ այդ պարոնները, առանց բան մը ըսելու: Ուստի, մեր ճշմարիտ պատմութիւնը չդիտնալով, չսփազանց երեւայութեան վրայ հլմնուած պատմութիւն մը հնարեցին: Առաջինը պատմեց թէ Նիւ-Եօրքի մէջ ձիւնին տակ մուրացեր էի... և հետեւեալ օրը, երկրորդը աւելի հեռաքրքրական յօդուած մը հրատարակած ըլլալու համար, ելաւ ըսաւ թէ Ֆիլատէլֆիա կրկէսի մը մէջ թուղթէ շրջանակներ կը պատռէի կ'անցնէի: Շատ շպիտկ օրաթերթեր ունիք Ֆրանսայի մէջ... Ինչպէս մենք ալ ունիք Ամերիկայի մէջ:

Սակայն, հինգ վայրկեանէ ի վեր, Բօլին յուսահատական նշաններ կ'ուզէր երէցին զոր չէր հասկնար երէցը. խեղճ աղջիկը վերջապէս բոլոր զօրութիւնը հաւաքելով ըսաւ.

- Տէր երէց, ժամը Էօթը քառորդ անցեր է:
- Եօթը քառորդ անցեր է: Ո՛հ, տիկիններ, կ'աղաչեմ ներեցէ՛ք ինձի, այս իրիկուն Մարեմայ ամուսն ժամերգութիւնը պիտի ընեմ:
- Մարեմայ ամիս... անմիջապէ՛ս պիտի ըլլայ ժամասացութիւնը:
- Այո՛, անմիջապէս:

— Մեր Բարիզի կառախումբը ճիշդ ո՛ր ժամուն կը մեկնի այս իրիկուն:

— Ժամը ինչու կէսին, պատասխամեց ժան, տասըհինգ քսան վայրկեանը կը բաւէ կառքով կայարան հասնելու:

— Ուրեմն, Սիւզի, կլրնանք եկեղեցի երթալ:

— Երթանք, պատասխանեց տիկին Սքօթ, բայց բաժնուելնէս առաջ, տէր երէց, շնորհ մը ունիմ ձեռն խնդրելիք: Առաջին անգամ որ ճաշեմ Լօնկվալի տունս, կ'ուզեմ որ անպատճառ ձեզ սեղանակից ունենամ, դուք ալ, պարոն... այսօրուան պէս չորսերնիս միայն: Ո՛հ, մի՛ մերժէ՛ք, սրտանց հրաւէր մըն է որ կ'ընեմ:

— Եւ նոյն սրտով կ'ընդունինք, տիկին, պատասխանեց ժան:

— Կը զրեմ ձեզի, օրը իմացնելու համար: Կարելի եղածին չափ շուտով պիտի գամ...: Դուք ասոր՝ ծխանին կլրնալարը կախել կ'ըսէք, այնպէս չէ՛: Լաւ ուրեմն, կլրնալարը պիտի կախենք չորսերնիս:

Այս միջոցին, Բօլին օրիորդ Բէրսիվալը սենեակին մէկ անկիւնը տարած, մեծ իրարանցումով կը խօսէր անոր հետ: Իրենց խօսակցութիւնը սա խօսքերով վերջացաւ.

- Հոն պիտի ըլլա՞ք, կ'ըսէր Պէթինա:
- Այո՛, պիտի ըլլամ:
- Ինձի պիտի ըսէ՞ք ատենը:
- Պիտի ըսեմ, բայց զգուշացէ՛ք... անա տէր երէցը կուգայ, պէտք չէ որ կասկածի...:

Երկու քոյրերը, երէցն ու Ժան, տունէն զուրս ելան: Հոնկէ եկեղեցի երթալու համար, գերեզմանոցէն անցնելու էր: Հեշտալի իրիկուն մըն էր: Յամր ու լռելեայն, մարը մտնող արեւուն ճառագայթներուն տակ, չորսը միասին կը քայլին ծառաստանի մը մէջ:

Իրենց ճաբուն վրայ տօքթէօն Ռէյնօի շիրիմը կար, խիստ պարզ, սակայն իր համեմատութիւններովը, ուրիշ դամբաններէ տարբեր կը հանդիսանար: Տիկին Սքօթ և Պէթինա կանգ առին, քարին վրայ քանդակուած սա տապանագրին վրայ զարմացած. Հոս կը հանգչի sofթօն Մառսէլ Ռէյնօ, վիբարուժապետ Սուվիմբիի Եարժուն գորագունդին, սպանեալ, 8 յունվար 1871, Վիլլեուսէսէի հակասամարտին մէջ: Աղօթեցէ հոգիին համար:

Երբ ընթերցումնին աւարտեցաւ, երէցը Ժանը ցուցնելով անոնց, սա պարզ բառերը ըսաւ.

— Հայրն էր:

Այն ատեն երկու կիներ գերեզմանին մօտեցան, և գլուխնին խոնարհած, հոն կեցան քանի մը վայրկեան, յուզուած և մտախոհ: Յետոյ, երկուքը միասին ետեւնին դառնալով միաժամանակ, երիտասարդ սպային ձեռք կարկառեցին ու նորէն սկսան յառաջանալ դէպի եկեղեցի: Այսպէս անա՛, Ժանին հօրը համար աղօթած եղան լօնկվալի մէջ:

Երէցը գնաց շապիկը և ուրարը հագնելու.

Ժան՝ երկու դարէ ի վեր լօնկվալի տանուէրներուն յատկացուած նստարանին վրայ տարաւ նստեցուց տիկին Սքօթը: Բօլին առաջ անցած էր: Օրիորդ Բէրսիվալին կը սպասէր ստուերին մէջ, եկեղեցիին սիւներէն մէկուն ետին պահուրտած: Նեղ և ցից սանդուխտ մը վերնատունը հանեց Պէթինան և երգեհոնին առջեւ նստեցուց:

Ծերունի երէցը, երկու ձայնաւոր տղաք առջին ձգած, սրբատունէն զուրս ելաւ, և այն միջոցին ուր ծունը կուգար խորանին պատուանգաններուն վրայ.

— Ատենն է, օրիորդ, ըսաւ Բօլին, որ անհամբերութենէն սիրտը կը ծեծէր: Խեղճ մարդ սիրեցեալ, ո՛րքան գո՛հ պիտի ըլլայ:

Երբ երգեհոնին ձայնը լսեց որ քաղցրօրէն կ'ելլէր իբրեւ մրմունջ և կը ծաւալէր փոքրիկ եկեղեցիին մէջ, արբայ Բօնսթանթէն այնպիսի յուզում մը, այնպիսի հրճուանք մը զգաց որ չկրցաւ արտասուքները բռնել: Չէր յիշեր թէ լացած ըլլար այն օրէն ի վեր, ուր Ժան իրեն ըսեր էր թէ ունեցածը կ'ուղէր բաժնել անոնց մօրը և քրոջը հետ, որոնք իր հօրը քով զարնուեր էին, գերմանական գնդակներու տակ:

Որպէս զի այս ծերունազարդ քահանային աչքերուն մէջ տակաւին արտասուք գտնուէր, հարկ եղած էր որ մանկամարդ Ամբրիկուսի մը, ծովեր անցնելով, գար Շօբէնի խոհերգ մը նուագէ լօնկվալի եկեղեցիին մէջ:

Դ.

Հետեւեալ օրը, ժամը հինգուկէսին, թամբահար փողը կը հնչէր զօրանոցին բակին մէջ: Ժան ձի կը հեծնէր և իր բաժնին հրամանատարութիւնը ձեռք կ'առնէր: Մայիս ամսուն վերջը, բանակին ըլլոր նորակոչ զինուորները մարզուած կ'ըլլան և կարող՝ ուղիմտկան ընդհանուր շրջափոխութեանց մասնակցելու: Գրեթէ ամէն օր, մարզադաշտին մէջ լծուած հրետանիներու փորձեր կ'ըլլան:

Ժան կը սիրէր իր արհեստը. սովորութիւն ունէր մեծ խնամքով քննելու երիվարները ու անոնց հանդերձանքը, իր մարդոց հաղուածքը ու ընթացքը. բայց այն առտուն քիչ ուշադրութիւն ընծայեց իր գործին մանրամասնութեանց:

Խնդիր մը կը յուզէր ու կը չարչարէր զինքը ու վարանուծի կը մատնէր. այս խնդիրն անոնցմէ էր որոնց լուծումը Բազմարուեստեան վարժարանին մէջ չի սորվուիր: Ժան չէր կրնար որոշ պատասխան գտնել այս հարցման.

— Երկուքէն ո՞րն է զեղեցկագոյնը:

— Դաշտին մէջ զինավարժութեան վերջին մասին ատան, իւրաքանչիւր հրետանի ինքնուրոյն կը գործէ, գնդապետին հրամաններուն ներքեւ. բայց շատ անգամ, գնդապետը իր գործը իր տեղակալներէն մէկուն կուտայ, որպէս զի

Թնդանօթները վարելու վարժուի: Ճիշդ այն օրն ալ, զինավարժութեան սկիզբէն ի վեր, հրամանատարութիւնը ժանին յանձնուեցաւ: Ի մեծ զարմացում գնդապետին, որ իր տեղակալը առաջին կարգի ուսեալ, խիստ կարող ու շատ ճարտար սպայի մը տեղ զրած էր, ամէն բան մոլար ընթացաւ: Ժան երկու երեք անգամ սխալ շարժումներ ցոյց տուաւ. ո՛չ կրցաւ պահել և ո՛չ ուղղել միջոցին բացութիւնները, քանի մը անգամ ձիերը իրարու հպեցան: Հարկ եղաւ որ գնդապետը միջամտէ ժանին, ուղղելով փոքրիկ կշտամբանք մը, որ սա խօսքերով վերջացաւ.

— Չեմ հասկնար: Ի՞նչ ունիք այս առաւօտ: Առաջին անգամն է որ այս բանը ձեզի կը պատահի:

Որովհետեւ առաջին անգամն էր նաև որ ժան Սովինեի մարզադաշտին մէջ ուրիշ բան կը մտածէր քան թնդանօթներ ու գումարտակներ, ուրիշ բան քան մարդիկը որ հրետանիին կը ծառայեն կամ կը վարեն զանոնք, երբ կրակ բանան: Կառքերու անխնայութիւն և ձիերու սրմբակներուն հանած փոշիի ալիքներուն մէջ, ժան կը տեսնէր, ո՛չ թէ Զրգ Թնդանօթաձիգ գունդին հեծեալներու երկրորդ հրետանին, այլ որոշ պատկերը երկու Ամերիկուհիներուն՝ սեւապտի ու սուկէներ: Եւ այն պահուն իսկ, ուր ակնածութեամբ կ'ընդունէր իր գնդապետին օրինաւոր յանդիմանութիւնը, ժան ինքնիրեն ըսելու վրայ էր.

— Գեղեցկագոյնը տիկին Սքօթն է :

Զինավարժութիւնը, ամէն առտու, երկու մասի բաժնուած է, տասը վայրկեանի դադարով մը: Բոլոր սպաները կը հաւաքուին ու կը խօսակցին: Ժան այդ առաւօտ մէկ կողմ կեցաւ, իր նախորդ օրուան յիշատակներով, միայնակ: Իր մտածումը Լօնկվալի երիցատունը կը տանէր զինքը: Այո՛, նազելին երկուքին մէջէն տիկին Սքօթն էր: Օրիորդ Բէրսիվալ մանուկ էր դեռ: Կը տեսնէր տիկին Սքօթը երէցին փոքրիկ սեղանը նստած: Կը լսէր անոր ըրած պատմութիւնը այնքան սրտաբաց և համարձակ: Քիչ մը արտառոց ներդաշնակութիւնը այդ ձայնին, խիտ մասնաւոր, շատ թափանցիկ, շեռ կը զմայլեցնէր իր ականջը: Ինքզինքը եկեղեցիին մէջ կը գտնէր: Հոն էր ան ալ, իր առջեւ ծնգարանին վրայ խոնարհած, իր սիրուն գլուխը երկու փոքրիկ ձեռքերուն մէջ զոցած: Ապա երգեհոնը կը սկսէր ձայնել, և հեռուն, ստուերին մէջ աղօտ կերպով կը տեսնէր Պէթինային վայելչագեղ ու նրբնի զիմաստուերը:

Մանճճկ. մանճճկ էր արդեօք միայն: Փոզերը հնչեցին: Զինավարժութիւնը սկսաւ նորէն: Բարեբախտաբար այս անգամ ոչ հրամանատարութիւն կար, ո՛չ պատասխանատուութիւն: Չորս հրետանիներ կը կատարէին համաշափ շրջափոխութիւնները: Կը տեսնուէր որ մարզոց, ձիերու և կառքերու այն վիթխարի

կոյտը կը շարժէր դարձարձիկ, երբեմն բացուելով ու վառուելով երկարաձիգ ճակատի մէկ գծին վրայ, երբեմն ալ խմբուելով, հանգրիճուելով, հոծ և կուռ ջոկատ մը կազմելով: Ամէն ինչ միագոյն, միակտուր կեանք կ'առնէր, ամբողջ դաշտին վրայ: Սպասուները ձիերնուն վար կը ցատկէին, թնդանօթին կը վազէին, կառաշարքին յառաջակողմէն կը յօղատէին, որ կը հեռանար սրընթաց, և զարմանալի արագութեամբ կը պարտադրէին զայն հուր արձակելու: Յետոյ ձիերը կը վերադառնային, սպասուներ նորէն կը յօղատէին, թնդանօթները թամբերուն վրայ կը նետուէին հապշտապ ու զօրագունդը մարզադաշտ կը սլանար սրարշաւ:

Պէթինան, անուշիկ ու մեղմիկ, ժանին մտքին մէջ, կը սկսէր գերազանցութիւն ստանալ տիկին Սքօթին վրայ: Ժանի այնպէս կը թուէր որ ան կը ժպտէր ու կը կարմրէր՝ իր ցրցքնած մազերուն արեւօլիկ ալիքներուն մէջ: Պարոն ժան... ան պարոն ժան կոչած էր զինքը... և երբեք իր անունը այքան ազուր չէր երեւցած իրեն: Հապա՛ վերջին անգամ ձեռք տալը գացած ատեննին, կառք նստելէ առաջ... Օրիորդ Բէրսիվալ տիկին Սքօթէն քիչ մը աւելի սրդ Բէրսիվալ տիկին Սքօթէն քիչ մը աւելի ուժով սեղմած էր ձեռքը... Ստուգիլ՝ քիչ մը աւելի ուժով սեղմած էր: Չեոնոցները հանաէր, երգեհոն զարնելու համար, և ժան կը զգատակաւին այն փոքրիկ մերկ ձեռքին ճնշումը

որ թարմ ու կակուղ, եկեր ամբեր էր, իր զին-
ւորի կոշտ ու խոշոր թաթին մէջ:

— Կը սխալէի պահ մը առաջ, կ'ըսէր ժան
ինքնիրեն, գեղեցկագոյնը օրիորդ Բէրսիվալն է:

Զինավարժութիւնը աւարտած էր: Հրետա-
նինքը իրարու ետեւ շարուեցան սեղմ անջըր-
պետներով, թնդանօթները մէկ գծի վրայ բարե-
կարգ կեցան, և ապա տողանցուժը սկսաւ, ուժգին
արշաւով՝ զարհուրելի թնդիւն ու փոշիի մբրիկ
հանելով: Երբոր ժան, սուր ի ձեռին, գնդապե-
տին առջևէն անցաւ, երկու քոյրերուն երկու
պատկերները այնքան իրարու կը խառնուէին ու
կը շաղպատէին իր յիշողութեանը մէջ, որ
մէկը միւսին մէջ կը մատնէին և աներեւոյթ
կ'ըլլային, մինեւնոյն անձը կը զառնային: Ամէն
համեմատութիւն անկարելի կ'ըլլար, ջրով հետեւ
բաղդատութեան երկու եզրերը եղականօրէն
չփոթուեր և իրարու խառնուեր էին:

Այսպէս, տիկին Սքօթ և օրիորդ Բէրսիվալ
իրարմէ անբաժանելի մնացին ժանին մտածու-
մին մէջ, մինչեւ այն օրը ուր նորէն պիտի
տեսնէր զանոնք: Այն անակնկալ հանդիպումին
տպաւորութիւնը չլնջուեցաւ, այլ տեւեց, քաղ-
ցըր ու խիստ ուժգին, այնպէս որ ժան յուզ-
ուած ու անհանգիստ կը զգար ինքզինքը:

— Արդեօք, կ'ըսէր ինքնիրեն, խելքիս եկա՞ւ
որ այսպէս սիրահարուիմ խենթի պէս, առաջին

տեսնելուս: Ո՛չ, մարդ միայն մէ'կ կնոջ կը սի-
րահարուի... և ո՛չ երկու կնոջ միաժամանակ:

Այս բանը կը վտասահացնէր զինքը: Շատ ե-
րիտասարդ էր այս քսանը չորսամեայ մեծ մա-
նուկը: Երբեք սէրը մուտ չէր գտած իր սրտին
մէջ՝ ամբողջապէս, համարձակապէս և յայտ-
նապէս: Սէրը, վիպասանութիւններու մէջ տե-
սած էր միայն, և խիստ քիչ կարգացած էր վի-
պասանութիւն: Հրեշտակ չէր սակայն: Ոչ ան-
չնորհք, ոչ ազեղ կը գտնէր Սուվինիի ցոփուհի-
ները, երբ ներէին որ ըսէ իրենց թէ սիրուն են,
յօժարակամ կ'ըսէր զայն. բայց երբէք չէր մը-
տաբերած սէր համարիլ այսպիսի քմահաճոյք մը
որ իր սրտին մէջ խիստ թեթեւ ու խիստ հարե-
ւանցի յուզումներ առաջ կը բերէր:

Իսկ Բօլ տը Լավառտանս հիացման և սրամը-
տութեան հրաշալի կարողութիւններ ունէր: Իր
սրտին մէջ կ'օթեւանէին միշտ երեք, չորս մեծ
տարփանքներ որոնք հոն կ'ապրէին իբրև եղ-
բայր, իրարու հետ հաշտ: Բօլ այս տասներհինգ
հազար հոգիէ բաղկացած փոքրիկ քաղաքին մէջ
տաղանդ ունեցած էր շատ մը գեղանի աղջիկներ
գտնելու, ամենքն ալ պաշտուելու համար ըս-
տեղծուած: Ան կը կարծէր Ամերիկան գտած
ըլլալ, երբ գտածը ուրիշներուն գտածն էր:

Ժան հազիւ կէս մը տեսած էր աշխարհ: Ու-
թը տասը անգամ Բօլին հետ երեկոյթներու,
պարահանդէսներու գացած էր շրջակայ գղեակ-

ները: Տեսակ մը ձանձրոյթ և տաղտուկ իմացեր էր անոնցմէ: Ատկէ հետեւութիւն հանած էր որ նմանօրինակ զուարճութիւններ իրեն համար չեն: Իր ճաշակները լուրջ և պարզ էին: Ինք կը սիրէր առանձնութիւնը, աշխատութիւնը, երկար պտոյտներ, լայն ու ընդարձակ տեղերը, ձիեր ու գիրքեր: Ինք քիչ մը վայրենի, քիչ մը գեղացի էր: Իր գիւղը կը պաշտէր և իր աղայութիւնը տեսնող բոլոր այն ծերունիները՝ որ հին ժամանակին վրայ կը խօսէին իրեն: Սրահի մը մէջ քատուիլ մը պարելը անյազթելի երկիւղ կ'ազդէր իրեն. ամէն տարի, Լօնկվալի պաշտօ պան սուրբի տօնին, յօժար սրտով կը պարէր գիւղին աղջիկներուն և ագարակի վարձակալուհիներուն հետ:

Եթէ տիկին Սքօթ ու օրիորդ Բէրսիվալը, Բարիզ, իրենց տանը մէջ տեսած ըլլար, իրենց շքեղ պերճանքով և շողշողուն վայելչութեամբ, սրով կը փայլէին, պիտի նայէր վրանին, հեռուէն, հետաքրքրութեամբ, իբրև գեղարուեստական առարկայ: Յետոյ տուն պիտի դառնար և տարակոյտ չկար որ հանդարտ ու անղբաղ քուն մը պիտի քաշէր:

Այո՛, բայց այսպէս չէր պատահած և անա այս պատճառով զարմացած մնացեր էր, անա այս պատճառով վիվուկը առած էր սիրտը: Այս երկու կիները, ամենամեծ դիպուածով մը, այնպիսի միջավայրի մը մէջ երեւցած էին որ իրեն

ընտանի էր այն միջավայրը. ուստի շատ նպաստաւոր եղած էր անոնց: Այսպէս անոնք առջի օրէն եղած էին պարզ, բարի, սրտաբաց: Ատկէ զատ, գրգալից գեղեցկութիւն մը ունէին ինչ որ չի մնասեր բանի մը: Ժամն անմիջապէս հմայուեր էր անոնցմով և դեռ հմայուած մնացել էր:

Այն միջոցին ուր ձիէն կ'իջնէր ժամը իննին, զօրանոցին բակին մէջ, աբբայ Քօնսթանթէն խնդագին դործի կը սկսէր: Ծեր քահանային գլուխը, նախորդ օրէն ի վեր, կրակի մէջ էր: Ժամն շատ չէր քնացած գիշերը, իսկ խեղճ երէցը բնաւ չէր քնացած:

Առաւօտուն կանուխ ելած, բոլոր դռները դրոյց, Բօլինին հետ առանձին, նախորդ օրուան առած դրամները համրեր ու համրեր էր, սեղանին վրայ տարածելով իր հարիւր սկիները, և կծծի մարդու մը պէս, հաճոյքով ձեռքին մէջ առած, շօշափեր էր: Իրենն էր այս ամենը, իրենն էր, այսինքն աղքատներունը:

— Շատ շուտ մի շարժիք, տէր երէց, կ'ըսէր Բօլին, ինչոյով եղէք: Կարծեմ թէ սյսօր հարիւր փրանք մը...

— Բաւական չէ, Բօլին, բաւական չէ՛, կեանքիս մէջ ասանկ օր մէկ անգամ միայն ունենամ, բայց պիտի ունենամ: Գիտէ՞ք ո՛րքան պիտի տամ Բօլին:

— Ո՞րքան, տէր երէց:

Աբբայ Քօսթանթէն

— Հազար ֆրանք :

— Հազար ֆրանք :

— Այո՛, մենք հիմա միլիոններու տէր ենք :

...երկայի բոլոր գանձերը մերն են, ու կ'ուզէք որ խնայողութիւն ընեմ : Մանաւանդ այսօր, ի՞նչ իրաւամբ :

Ժամը իննին, պատարազը ընելէն յետոյ, արբան ելաւ գնաց և ո՛ւր որ գնաց՝ ճամբուն վրայ ոսկիէ անձրեւ տեղաց : Ամենքն ալ իրենց բաժինն ունեցան, թէ՛ իրենց չքաւորութիւնը խոստովանող աղքատները և թէ՛ անոնք որոնք կը ծածկէին : Իւրաքանչիւրին ողորմութիւն տուած պահուն սա փոքրիկ ճառն ալ մէկտեղ կ'ըսէր .

— Ասիկա Լօնկվալի նոր տանուտէրերուն կողմէն է, երկու Ամերիկուհիներ... : Տիկին Սքոթ և Օր. Բէրսիվալ : Աղէկ միտքերնիդ պահեցէք այս անունները, և աղօթեցէ՛ք անոնց համար այս իրիկուն :

Յետոյ կը ձգէր կը փախչէր, առանց շնորհակալութեան սպասելու. դաշտերու, անտառներու մէջէն գիւղէ գիւղ, խրճիթէ խրճիթ կ'երթար շարունակ... : Զգլխած էր կարծես : Բոլոր իր անցած ճամբուն վրայ ցնծութեան ու զարմանքի աղաղակներ կը լսուէին : Բոլոր այդ ոսկիները սրծես հրաշքով կ'իյնային այն խեղճ ձեռքեւուն մէջ, որոնք միայն ճերմակ փոքր փշիտներ յղունելու վարժուած էին : Երէցը խենթու-

թիւններ ալ ըրաւ, իրաւցնէ խենթութիւններ. մէյ մը նետուեր էր, ա՛լ անձին ճանաչուածը կորսընցուցեր էր, ինքզինքին տէրը չէր : Անոնց անգամ դրամ կուտար, որոնք չէին խնդրեր :

Քլօտ Ռիկալի պատահեցաւ, վաղեմի յիսնապետ մը որ թեւին մէկը Սէվաստօրօլ թողած էր, արդէն համակ աղբերէկ, այե՛նաղիկ մազերով, որովհետև ժամանակը կ'անցնի և Խրիմի գինուորները շուտով կ'ըլլան ծեր ալեւորներ :

— Առէ՛ք, ըսաւ երէցը, ահա քսան ֆրանք :

— Քսա՛ն ֆրանք, բայց ես բան մը չեմ խնդրեր ձեռնէ, բանի մը պէտք չունիմ : Ես իմ թոշակս ունիմ :

Իր թոշակը... Ե՛թէ հարիւր ֆրանք :

— Լա՛ւ ուրեմն, պատասխանեց երէցը, գլխիկ գնեցէք ասով, բայց լա՛ւ մտիկ ըրէք, ասի Ամերիկայէն է... :

Ու նորէն կը սկսէր իր փոքրիկ ճառատանքը Լօնկվալի նոր տանուտէրերուն վրայ :

Խաթունիկ կնոջ մը տուն մտաւ, որուն որդին նախորդ ամիս Թռնուզ գացեր էր :

— Է՛ նայինք, գաւազնիդ ի՞նչպէս է :

— Գէշ չէ, տէր երէց, երէկ նամակ մը ըստացայ. աղէկ է եղեր, գանգատ մը չունի. միայն կ'ըսէ թէ Քրուսիթներ չկան եղեր... : Խեղճ տղայ : Ամիսէ մը ի վեր խնայողութեամբ քիչ մը դրամ հաւաքեցի, և կը յուսամ որ մօտերս պիտի կարենամ տասը ֆրանք զրկել անոր :

— Տասնի տեղ երեսուն ղրկեցէ՛ք... Առէ՛ք :

— Քսա՛ն ֆրանք, տէր երէց, քսա՛ն ֆրանք կուտար :

— Այո՛, քսան ֆրանք կուտամ... :

— Չաւկի՛ս համար :

— Ձեր զաւկին համար... : Միայն թէ աղէկ մտիկ ըրէք. պէտք է գիտնաք թէ ո՛ւրկէ է. չմոռնաք ձեր զաւկին ալ ըսելու, երբ իրեն գրէք :

Երէջը քսաներորդ անգամն ըլլալով կրկնեց իր փոքր գովասանքը տիկին Սքոթին և Օր. Բէրսիվալի մասին : Ժամը վեցին տուն մտաւ յոգնած հարհրած, բայց սիրտը ուրախութեամբ լցուած :

— Ամենքն ալ տուի, գոչեց. Բօլինը տեսնելուն պէս, ամենքն ալ տուի, ամենքն ալ :

Իրիկունը ձաշը ըրաւ և գնաց Մարեմայ ամառուն ժամերգութիւնը ընելու. բայց երբ սեղանին վրայ ելաւ, երգեհոնը լուռ կեցաւ : Օրիորդ Բէրսիվալ հոն չէր այլ եւս :

Նախորդ օրուան փոքրիկ դաշնակահարուհին այս պահուն մեծ վարանման մէջ էր : Իր զարգախուցին երկու բաղմոցներուն վրայ երկու շրջազգեստներ կը տարածուէին վէտ ի վէտ, ձերմակ շրջազգեստ մը և կապոյտ շրջազգեստ մը : Պէթինա կը հարցնէր իւրովի թէ այս երկու շրջազգեստներէն ո՛րը հագնի իրիկունը, Օրերա երթալու համար : Երկուքն ալ սիրուն և հիանալի կը գտնէր, բայց պէտք էր անոնցմէ մէկը ընտ-

րել. մէկը միայն կրնար հագնիլ : Երկար վարանքէ մը յետոյ որոշեց որ ձերմակ շրջազգեստը հագնի :

— Ժամը իննուկէսին, երկու քոյրերը Օրերայի մեծ սանդուխէն վեր կ'ելլէին : Երբ իրենց օթեակը մտան, վարազոյրը վեր կ'ելէր Այսաի երկրորդ արարուածին երկրորդ տեսարանին վրայ, պարի և մառչի արարուածին :

Երկու երիտասարդներ՝ Ռոմէ տը Բիւմարթէն և Լուի տը Մարթիլէ գետնայարկի օթեակի մը առաջին կարգին վրայ նստած էին : Պարող օրիորդները տակաւին բեմին վրայ չէին, և այդ պարոնները, ուրիշ զբաղում չունենալնուն սրահը դիտելով կը զրօսնէին : Օրիորդ Բէրսիվալին երեւոյթը երկուքին վրայ ալ խոր տպաւորութիւն մը ըրաւ :

— Ա՛հ, ա՛հ, ըսաւ Բիւմարթէն, ահա՛ ոսկի ձուլիկը :

Երկուքն ալ իրենց դիտակները Պէթինային վրայ ուղղեցին :

— Այս իրիկուն շատ շոշոզուն է ոսկի ձուլիկը, յարեց Մարթիլէ : Նայէ՛ մէյ մը... վզին գիծը... Թեւերը ի՛նչպէս ընդելուզուած են... : Դեռ թարմատի աղջիկ և արդէն իսկ կին :

— Այո՛, հիասքանչ... և այս ամէնուն վրայ՝ անխռով :

— Տասնըհինգ միլիոն, կ'երեւայ թէ տասնըհինգ միլիոն ունի միայն ինքն իրեն համար, և արծաթի հանքն ալ կը բանի անդադար :

— Տասնի տեղ երեսուն զրկեցէ՛ք... Առէ՛ք :

— Քսա՛ն ֆրանք, տէր երէց, քսա՛ն ֆրանք

կուտաք :

— Այո՛, քսան ֆրանք կուտամ... :

— Չաւկի՛ս համար :

— Ձեր զաւկին համար... : Միայն թէ աղէկ մտիկ ըրէք, պէտք է գիտնաք թէ ո՛ւրկէ է չմոռնաք ձեր զաւկին ալ ըսելու, երբ իրեն գրէք :

Երէցը քսաներորդ անգամն ըլլալով կրկնեց իր փոքր գովասանքը տիկին Սքօթին և Օր. Բէրսիվալի մասին : Ժամը վեցին տուն մտաւ յոգնած հարհրած, բայց սիրտը ուրախութեամբ լցուած :

— Ամենքն ալ տուի, գոչեց, Բօլինը տեսնելուն պէս, ամենքն ալ տուի, ամենքն ալ :

Իրիկունը ճաշը ըրաւ և գնաց Մարեմայ ամսուն ժամերգութիւնը ընելու, բայց երբ սեղանին վրայ ելաւ, երգեհոնը լուռ կեցաւ : Օրիորդ Բէրսիվալ հոն չէր այլ եւս :

Նախօրդ օրուան փոքրիկ դաշնակահարուհին այս պահուն մեծ վարանման մէջ էր : Իր զարգախուցին երկու բազմոցներուն վրայ երկու շրջազգեստներ կը տարածուէին վէտ ի վէտ, ճերմակ շրջազգեստ մը և կապոյտ շրջազգեստ մը : Պէթինա կը հարցնէր իւրովի թէ այս երկու շրջազգեստներէն ո՛րը հագնի իրիկունը, Օրերա երթալու համար : Երկուքն ալ սիրուն և հիանալի կը գտնէր, բայց պէտք էր անոնցմէ մէկը ընտ-

րել : մէկը միայն կրնար հագնիլ : Երկար վարանքէ մը յետոյ որոշեց որ ճերմակ շրջազգեստը հագնի :

— Ժամը իննուկէսին, երկու քոյրերը Օրերայի մեծ սանդուխէն վեր կ'ելլէին : Երբ իրենց օթեակը մտան, վարադոյրը վեր կ'ելէր Այսաի երկրորդ արարուածին երկրորդ տեսարանին վրայ, պարի և մառչի արարուածին :

Երկու երիտասարդներ՝ Ռօթէ տը Բիւմարթէն և Լուի տը Մարթիլլէ գետնայարկի օթեակի մը առաջին կարգին վրայ նստած էին : Պարող օրիորդները տակաւին բեմին վրայ չէին, և այդ պարոնները, ուրիշ զբաղում չունենալուն սրահը դիտելով կը զբօսնէին : Օրիորդ Բէրսիվալին երեսօթը երկուքին վրայ ալ խոր տպաւորութիւն մը ըրաւ :

— Ա՛հ, ա՛հ, ըսաւ Բիւմարթէն, ահա՛ ոսկի ձուլիկը :

Երկուքն ալ իրենց դիտակները Պէթինային վրայ ուղղեցին :

— Այս իրիկուն շատ շոշոզուն է ոսկի ձուլիկը, յարեց Մարթիլլէ : Նայէ՛ մէյ մը... վզին գիծը... թեւերը ի՛նչպէս ընդելուզուած են... : Դեռ թարմատի ազդիկ և արդէն իսկ կին :

— Այո՛, հիասքանչ... և այս ամէնուն վրայ՝ անխոռվ :

— Տասնըհինգ միլիոն, կ'երեւայ թէ տասնըհինգ միլիոն ունի միայն ինքն իրեն համար, և արծաթի հանքն ալ կը բանի անդադար :

— Պէտիւլ քսանըհինգ միլիոն ըսաւ ինծի...
և Պէտիւլ Ամերիկայի գործերուն քաջ տեղեակ է:

— Քսանըհինգ միլիոն: Ահա՛ Ռոմանէլլիին համար աղուոր պանքո՛ մը:

— Ի՛նչպէս, Ռոմանէ՛լլի:

— Ձրոյց կայ թէ անոր հետ պիտի կարգուի, և թէ ամուսնութիւնը որոշուած է:

— Ամուսնութիւնը որոշուած է, այո՛, բայց Մօնթէսանին հետ, ո՛չ թէ Ռոմանէլլիին...: Ա՛հ, վերջապէս պարը սկսա՛ւ:

Սոսակցութիւնը դադրեցուցին: Այսաի պարը միայն հինգ վայրկեան կը տեւէ և երկուքն ալ այդ հինգ վայրկեանին համար է որ եկած էին: Պէտք էր որ պատկառանքով և երիւղածութեամբ վայելէին զայն. ասիկա յատուկ է Օրբերա յաճախող մաս մը անձերու որոնք անձեզի պէս կը ճըռճաան, երբ պէտք է լռել, մտիկ ընելու համար, և ընդհակառակը զարմանալի լռութիւն մը կը պահեն, երբ ներքի կրնայ ըլլալ խօսիլը, զիտելով հանդերձ:

Այսայի դիւցազնական փողերը իրենց վերջին խաղերը արձակած էին ի պատիւ Ռատամէսի: Մեծ սփինքսներուն առջեւ, արմաւենիներու կանաչ տերեւներուն տակ, պարուհիներ կը յառաջանային շողոզուն ու բեմը կը զբաւէին:

Տիկին Սքօթ ուշով ու հաճոյքով կը դիտէր պարին շրջափոխութիւնները. իսկ Պէթինա յանկարծ մտախոհ դարձած էր, սրահին անդիւի

կողմը օթեակի մը մէջ տեսնելով բարձրահասակ երիտասարդ մը թխաթոյր դէմքով: Օրբորդ Բէրսիվալ ինքնիրեն կը խօսէր ու կ'ըսէր.

— Ի՛նչ ընեմ, ի՛նչ որոշեմ: Ամուսնանա՞ գեղեցկահասակ երիտասարդին հետ որ հո՛ւն դէմս է կեցեր ու դիտակովը ինծի կը նայի... ահա ինծի կը նայի...: Քիչ մը յետոյ, երբ արարուածը լիննայ, հոս կուգայ, և երբ ներս մտնէ, բաւ է որ ըսեմ. «Եղաւ լինցա՛ւ, ահա ձեռքս...»: Ձեր կիներ պիտի ըլլամ»: Արդարեւ կը լիննայ. իշխանուհի, իշխանուհի կ'ըլլամ, Ռոմանէլլի՛ իշխանուհի, Պէթինա իշխանուհի, Պէթինա Ռօմանէլլի՛: Աղէ՛կ կը յարմարի, անուշ կը հնչէ ականջի. «Տիկին իշխանուհիին սեղանը պատրաստ է...»: — Տիկին իշխանուհիին վաղը առաւօտ ձի պիտի նստի՞»...: Արդեօք ինծի հաճոյ պիտի՞ թուի իշխանուհի ըլլալը...: Այո՛ և ո՛չ...: Բոլոր այս երիտասարդներուն մէջ որոնք Բարիզի մէջ տարիէ մը ի վեր զրամիս ետեւէն կը վագեն, օտ Ռոմանէլլի իշխանը լաւագոյնն է զարձեալ...: Հարկ պիտի ըլլայ որ ամուսնանալու որոշում տամ այս օրերս...: Կարծեմ կը սիրէ զիս... այո՛, իսկ ե՛ս միթէ կը սիրե՞մ զայն: Չէ՛, չեմ կարծեր... և ո՞րքան կ'ուզէի սիրել...: Ա՛հ, այո՛, որքան կ'ուզէի...:

Ճիշդ նոյն ժամուն, ուր Պէթինային աղուոր գլուխը այս խորհրդածութիւնները կ'ունենար, ժան իր աշխատութեան խուցին մէջ միայնակ

գրասեղանին առջեւ նստած, կանթեղին լուսամ-
փոփին տակ խոշոր գիրք մը, Թիւռէնի պա-
տերազմներու պատմութիւնը քաղուածք կ'ընէր,
ծանօթագրելով: Զօրագունդին փոխսպաներուն
գասախօսութիւն մը պիտի ընէր. ուստի խոհե-
մաբար, հետեւեալ օրուան գասը կը պատրաստ-
ր:

Եւ ահա՛, յանկարծ, իր ծանօթութեանց մէջ
արտիկներն, 1645. Տիւնի պատերազմը, 1658.
| Իւլիսուզէն և Թիւրքհայմ, 1674-1675. ասոնք
գրած ատեն՝ աչքին դպաւ ուրուագիծ մը...:
Ժան բուական աղէկ կը գծագրէր: Կնոջ պատ-
կեր մը եկեր ինքնիրեն՝ գրչին տակ կեցեր էր:
Ի՞նչ բնելու եկած էր հոն այս բարեքիկ փոքրիկ
կինը՝ Թիւրքնի յաղթութեանց մէջտեղ. ո՞րն էր
արդեօք...: Ի՞նչպէս գիտնար...: Այնքան կը
նմանէին իրարու...: Ու ժան, տըլով, տըք-
նելով, Թիւռէնի պատերազմներու պատմութեանը
կը վերագտնար:

Նոյն վայրկեանին, աբրայ Քօնսթանթէն իր
ընկուզենիկ փոքրիկ անկողնին առջեւ ծունր
գրած գարձեայ, հոգիին բոլոր զօրութեամբը՝
երկինքի շնորհը կը հայցէր այն երկու կիներուն
համար, որոնք այնքան քաղցր ու երջանիկ օր
մը անցնել տուեր էին իրեն: Կ'աղօթէր Աստու-
ծոյ որ օրհնէ տիկին Սքօթը իր զաւակներով և
Օրիորդ Բէրսիվալին ալ ամուսին մը տայ սրտին
համեմատ:

Ե.

Ատենօք, Բարիզը Բարիզցիներունն էր, և
այս թուականը շատ հեռու չէ մենէ. հազիւ
երեսուն կամ քառասուն տարի կայ: Ֆրանսացի-
ները այն ատեն Բարիզի տէրն էին, ինչպէս
Անգլիացիք Լոնտոնի տէրն են, Սպանիացիները՝
Մատրիտի և Ռուսերը՝ Ս. Բեթերսպուրկի: Այն
ժամանակները ոչ եւս են: Ուրիշ երկիրներու
համար տակաւին սահմանազուխներ կան, Ֆրան-
սայի համար ա՛լ չկայ սահմանազուխ: Բարիզ
Բարելունեան անհուն աշտարակ մը դարձած է,
համազգային և տիեզերական քաղաք մը: Օտա-
րականները միայն այցելելու համար չեն գար
Բարիզ, այլ հոն ապրելու կուզան:

Բարիզի մէջ այժմ ունինք մէկ ուսու գա-
ղութ, մէկ սպանիական գաղութ, մէկ արե-
ւելեան գաղութ, մէկ ամերիկեան գա-
ղութ. բոլոր ասոնք ունին իրենց եկեղեցիները,
իրենց սեղանաւորները, իրենց բժիշկները, ի-
րենց օրաթերթերը, իրենց հովիւները, իրենց
բօբերը և իրենց ատամնաբոյժները: Օտարական-
ները արդէն մեր ձեռքէն առած են Շան-զ'Էլիզէի
և Պուլվար Մալէրպի ամենամեծ մասը. անոնք կը
յառաջանան, կ'ընդարձակին, մենք կ'ընկրկինք՝
անոնց արչաւանքէն մղուած. հարկադրուած ենք

հայրենիքնիս թողուլ: Մենք ալ Բարիզցիներու գաղութ պիտի հաստատենք Բասսիի հրապարակին, Մօնսօի հրապարակին վրայ, և այն թաղերը, որոնք ժամանակաւ բնաւ Բարիզ չէին համարուիր և որ այսօր ալ բոլորովին չեն համարուիր:

Այս օտար գաղութներուն մէջ ամենէն բազմաթիւը, ամենէն հորուստը, ամենէն փայլունը Ամերիկեան գաղութն է: Ատեն կուգայ որ Ամերիկացի մը ինքզինքը բաւական հարուստ կը գտնէ. իսկ Ֆրանսացի մը՝ երբեք: Ամերիկացին կը զաղրի այն ատեն, չունչ կ'առնէ քիչ մը. ու գրամագլուխին չդպչելով՝ եկամտներուն համար ա'լ հաշիւ չի բռներ, ծախք ընելը գիտէ. Ֆրանսացին խնայել միայն գիտէ:

Ֆրանսացիին ճշմարիտ պերճանքը իր յեղափոխութիւններն են միայն: Խոհեմութեամբ և զգուշութեամբ կը պահէ իր ինչքը յեղափոխութեանց հօտար, գիտնալով թէ շատ սուղի պիտի նստին անոնք Ֆրանսայի, ու միանգամայն՝ դրամի խիստ շահեկան գործածութեանց ատիթ պիտի ըլլան: Մեր երկրին հաշուեկշիռը երկարածիզ փոխառութիւն մըն է, մշանջենապէս բաց թողուած: Ֆրանսացին կ'ըսէ ինքնիրեն.

— Գանձե՛նք, գանձե՛նք, գանձե՛նք: Այս օրերս յեղափոխութիւն մը կը ծագի և հարիւրին հինգ թուղթերը յիսուն կամ վաթսուն ֆրանքի կ'իջնեն: Այն ատեն կը գնեմ: Բանի որ յեղա-

փոխութիւնները անխուսափելի են, ջանանք գոնէ անոնցմէ օգտուիլ:

Միշտ կը խօսուի յեղափոխութեան երեսէն անանկացած մարդոց վրայ. թերեւս աւելի մեծ է յեղափոխութեան երեսէն հարստացած մարդոց թիւը:

Ամերիկացիները Բարիզի հրապուրանքերուն չեն դիմանար: Չկայ աշխարհիս մէջ քաղաք մը, ուր աւելի ախարժելի, աւելի զիւրին ըլլայ շատ դրամ վատնել: Տիկին Սքօթին ցեղն ու ծագումը մասնաւոր պատճառներ էին որոնց համար այս հրապուրանքը աւելի սաստիկ ներգործէր իրենց վրայ:

Մեր գաղթականութեանց մէջ ամենէն աւելի ազգային գոյն ունեցողը Գանատան է, որ այլևս մերը չէ: Առաջին հայրենիքին յիշատակը դեռ հզօր ու քաղցր է Քէպէլի ու Մօնոէայի գաղթականներու սրտին մէջ: Սիւզի Բէրսիվալ իր մօրմէն զուտ ֆրանսական կրթութիւն մը առած էր, և ինք ալ քոյրը կրթած էր, անոր սէրը ներշնչելով մեր երկրին հանդէպ: Երկու քոյրերը ինքզինքնին Ֆրանսացի կը զգային, և անկէ աւելի լաւ բան, մը Բարիզցի:

Հագիւ միլիոններ ձիւնակոյտի մը պէս թափեցան իրենց վրայ, երկուքն ալ միեւնոյն փափաքը ունեցան. գալ բնակիլ Բարիզ: Ֆրանսան տեսնել ու զեցին, ինչպէս կ'ուզէ մարդ իր հայրենիքը տեսնել: Գ. Սքօթ քիչ մը զէմ կեցաւ:

— Երբ ես ա՛լ հոս չըլլամ, կ'ըսէր, երբ տա-
րին երկու կամ երեք ամիս միայն դամ Ամերի-
կա անցնեմ, ձեր շահերուն վրայ հսկելու համար,
ձեր երկուքին ալ եկամուտները կը նուազի՞ :

— Ի՛նչ փոյթ, կը պատասխանէր Սիւզի,
հարուստ ենք, չափազանց հարուստ...: Եր-
թանք, կ'աղաչեմ...: Ա՛յնքան գոհ պիտի ըլ-
լանք, ա՛յնքան երջանիկ :

Պ. Սքոթ զիջաւ. Սիւզի 1880 յունվարի ա-
ռաջին օրերը՝ հետեւեալ նամակը կրցաւ գրել
իր բարեկամուհիին Բաթի Նոթթօնի, որ քանի
տարիէ ի վեր Բարիդ կը բնակէր.

«Յա՛ղթուիլիւն, որոշուեցա՛ւ. Ռիչար հաճե-
ցաւ. Ապրիլ ամսուն կը հասնիմ Բարիդ ու կ'ըլ-
լամ նորէն Փրանսագի: Մեր Բարիդ հաստատման
համար պէտք եղած բոլոր պատրաստութիւնները
ստանձնել առաջարկեցիք ինձի. որովհետեւ շատ
անպատկառ ու անզգուշ եմ... ուստի կ'ընդու-
նիմ ձեր առաջարկութիւնը :

«Կը բաղձամ որ ոտքս Բարիդ դրածիս պէս՝
կարենամ վայելել Բարիդը, առաջին ամիսը չիճա-
ցընել օթոցարարներու, կառագործներու, ձիա-
վաճառներու խանութները երթալ գարով: Կ'ու-
զեմ որ՝ կառախուժէն իջնելուս պէս՝ կայարանին
բակին մէջ գտնեմ իմ կառքս, իմ կառապանս,
իմ ձիերս: Նաեւ կը փափաքիմ այն օրը ձեզ
ինձի սեղանակից ունենալ իմ քանս մէջ: Վար-
չե՛մ՝ կամ գնեցէ՛ք ապարանք մը. ծառանք

բռնեցէք և կառքերը, ձիերը, սպասահանդերձնե-
րը ընտրեցէք: Բոլորովին ձեր ճաշակին կը յանձ-
նեմ: Միայն թէ սպասահանդերձները կապոյտ
ըլլան. ա՛յսքան: Այս տողը Պէթինային խնդ-
րանքովը աւելցուցի. որ ուսիս վրայէն կը նայի
թէ ի՛նչ կը գրեմ ձեզի :

«Միայն եօթը հոգի Փրանսա կը բերենք հե-
տերնիս. Ռիչարը, իր սենեկապանը, Պէթինան ու
ես, մեր սպասուհիները, տղոց երկու մանկածու-
ները, և երկու ձիամարզիկներ՝ Թօպի և Պօպի,
որոնք ձիով ետեւնուս կուզան. քիչեր կան որոնք
անոնց պէս քաջ հեծնեն ձի...: Իրաւցնէ երկու
սիրոյ ժպիտներ. մէկ հասուկ, մէկ ձեւ, և գրե-
թէ մէկ գէժք. Բարիդի մէջ երբեք չէինք կըր-
նար գտնել այսպիսի երկու ամոլ ճորտեր :

«Մնացեալ ամէն բան, իր և այլ, կը թօ-
ղուք Նիւ-Եօքս...: Չէ, ո՛չ մնացեալ ամէնը,
չորս փոքրիկ ձիերը կը մօտնայի, քանեակ գոհա-
րիկներ, մելանի պէս սեւ, չորսն ալ չորս սը-
րունքներնուն վրայ սպիտակ նիշերով. սիրտեր-
նիս չի տանիր որ զատուինք անոնցմէ: Տիւրի
մը կը լծենք զանոնք, սիրուն կ'ըլլայ: Պէթի-
նան ու ես խիստ աղէկ կը վարենք քառաձի
կառք մը: Կիները կրնան, այնպէս չէ՞, քառա-
ձի վարել, առանց մեծ գայթակղութեան տեղի
աւուր, Պալօնիսի պուրակին մէջ, առաւօտուն
կանուխ: Հօս՝ կ'ըլլայ :

«Մանուանդ սիրեցեալդ իմ Բաթի, հաչո՛վ

մի՛ գործածէք...: Խենթ ու խելառ բաներ ըրէք. այս բանը միայն կը խնդրեմ ձեռնէ:»

Այն օրը ուր տիկին Նօթթօն այս նամակը կը ստանար, Կառնըվիլ անուռ մարդու մը սնանկութեան լուրը կը տարածուէր Բարիզի մէջ, որ խոչոր խաղացող մըն էր և որուն քթը հոտ չէր առներ. այսինքն՝ դեպի վառ խաղացած եր երբ հարկ էր որ դեպի վերի խաղաբ: Կառնըվիլ վեց շաբաթ առաջ, նոր ապարանք մը գացեր հաստատուեր էր, որ ուրիշ պակասութիւն մը չունէր, բայց եթէ չափազանց չքեղութիւն մը:

Տիկին Նօթթօն վարձու մուրհակ մը ստորագրեց — տարեկան հարիւր հազար ֆրանք, — այն արտօնութեամբ որ առաջին տարուան շըրջանին մէջ կարենայ երկու միլիոնի ծախու առնել, ճարտար օթոցարար մը յանձն առաւ բարեքել, մեղմացնել պոռոտ ու չառաչոտ կահերու քարապայման պաճուճանքը:

Յետոյ տիկին Սքօթի բարեկամուհին բարեբախտութիւնը ունեցաւ առաջին առթիւ ձեռք ձգելու երկու ջոջ արուեստագէտներ, առանց որոնց անկարելի է մեծ տուն մը հիմնել և վարել:

Նախ ձեռք ձգած էր առաջին կարգի խոհարար վարպետ մը որ ձգեր ելեր էր Սէն-ժէոմէնի արուարձանին մէջ հինաուրց ապարանքէ մը, սրտի մեծ ցաւ մը զգալով իսկապէս, ազնուապետական զգացումներ ունենալուն համար: Քիչ մը ծանր կուգար իրեն երթալ քաղ-

քենիներու, օտարականներու տուն ծառայել:

— Երբեք, ըսաւ տիկին Նօթթօնին, չէի թողուր պառոնուհի տիկնոջ ծառայութիւնը, եթէ իր տանը ընթացքը շարունակած ըլլար... բայց պառոնուհի տիկինը չորս գաւակ ունի... երկու մանչ որոնք յիմարութիւններ ըրին... և երկու աղջիկ սրոնք քիչ տեղնէն ամուսնանալու տարիքը պիտի թեւակոխեն: Հարկ պիտի ըլլար օժիտ տալ անոնց համար: Վերջապէս պառոնուհի տիկինը հարկադրուած է քիչ մը կրճատել ծախքերը, հետեւաբար այն տունը բաւական կարելուր չէ ինծի համար:

Այս նշանաւոր վարպետը դրաւ իր պայմանները. թէ և չափազանց, չսարսափեցուցին տիկին Նօթթօնը, որ գիտէր թէ իր առջև գտնուող մարդը ամենամեծ արժանիքի տէր մարդ մըն է. իսկ ան որչափ տալէ առաջ, խնդրեց որ թոյլ տրուի իրեն Նիւ-Յօրք հեռագիր քաշելու: Կ'ուզէր տեղեկանալ թէ ի'նչ տեսակ մարդիկ էին այդ Սքօթները: Նպաստաւոր պատասխան առաւ. ուստի ընդունեց տիկին Նօթթօնի առաջարկը:

Երկրորդ ջոջ արուեստագէտը շատ հազուադիւտ ու շատ մեծ կարողութեան տէր ձիւմարդիկ մըն էր, որ հարստութիւնը շինելէն ետքը՝ գործէ քաշուած էր: Բայց հաճեցաւ տիկին Սքօթի ախոռները կազմակերպել: Այնպէս որոշուեցաւ թէ ազատ պիտի ըլլայ իր հաւնած ձիերը գընելու, թէ սպասահանդերձ չպիտի հագնի, թէ ինք

պիտի ընտրէ կառավարները, ճորտերը և ձիւ-
 ապանները, թէ երբեք տասնըփնգ ձիւն պակաս
 չպիտի գտնուի ախոռին մէջ, թէ բնաւ առու-
 տուր չպիտի ըլլայ կառագործին և թամբագործին
 հետ, առանց իր միջնորդութեան և թէ միայն
 առաւօտները պիտի նստի կառքին դահակը,
 քաղիի հագուստով, տիկիններուն և տղոց երասա-
 նակ վարել դաս տալու համար, եթէ հարկ ըլ-
 ար:

Խոհարարացեալը կրակարաններուն գլուխը
 անցաւ, ախոռացեալն ալ ախոռներուն, Մնա-
 ցածը դրամի խնդիր էր, և տիկին Նոթթօն այս
 մասին իր լիազօր իշխանութիւնը կատարելագէտ
 ի գործ դրաւ: Իր առած հրահանգներուն համե-
 մատ վարուեցաւ: Այս երկու ամսուան կարճ մի-
 ջոցին՝ ճշմարիտ հրաշալիք գործեց, որպէս զի
 տիկին Սքոթի բնակարանը բացարձակ կերպով
 անթերի և անստգիւտ ըլլայ:

Եւ անա ինչպէս, երբ 1880 ապրիլ 15ին Պ.
 Սքոթ, Սիւզի և Պէթինա Հավրէն գալով ձե-
 պընթացէն իջան ժամը չորսուկէսին Սէն-Լազարի
 կայարանը, տիկին Նոթթօնը գտան հոն, որ
 ըսաւ իրենց.

— Քայլէնիդ հոն բակն է: Քայլէնին ետին
 լանտօ մը կայ տղոց համար, և լանտօին ետին
 հանրակառք մը՝ ծառաներուն համար: Երեք
 կառքերն ալ ունին ձեր սկզբնատառերը, ձեր
 կառավարները, և ձեր ձիերը: Միւսիլլօ փողոցը

24 թիւն է ձեր բնակարանը. աւասիկ ձեր այս
 իրիկուան կերակուրին ցուցակը: Երկու ամիս
 առաջ զիս հրաւիրեցիք, կ'ընդունիմ ձեր հրաւէրը
 և կը համարձակիմ տասը-տասնըփնգ հոգի ալ
 հետս բերել ձեզի: Ամէն բան ես կը մատակա-
 րադեմ, նոյն իսկ հրաւիրեալներն ալ...: Մի
 վրդովիք, ամենքն ալ կը ճանչնաք, ամենքն ալ
 կը ճանչնաք, ամենքն ալ ձեր և իմ բարեկամ-
 ներն են... և այս իրիկուընէ պիտի կարենանք
 դատել ձեր խոհարարին արժանիքը:

Տիկին Նոթթօն՝ տիկին Սքոթի տուտ ազուոր
 պզտիկ քառթ մը ոսկի գէնով մը շրջապատուած,
 որու վրայ սա բառերը գրուած էին. Ճաւացու-
 ցակ 15 ապրիլի 1880, և տակն ալ արգանակ
 բարիգեան, կարմեախայս ուուսական, ևն.:

Առաջին Բարիզցին, որ պատիւ ու հաճոյքն
 ունեցաւ տիկին Սքոթի և օրիորդ Բէրսիվալի
 գեղեցկութեանը մեծարանք մատուցանելու,
 տասնըփնգամեայ փոքր խոհարար մը եղաւ, որ
 հոն կը գտնուէր, ճերմակներ հագած, գլխուն
 վրայ ուսիէ կողով մը գրած, այն միջոցին ուր
 տիկին Սքոթին կառավարը կառքերու խոնուէն
 նեղուած, գոռարաւ գուրօ կ'ելլէր կայարանին
 բակէն: Պզտիկ խոհարարը մէկէն ի մէկ կանգ
 առաւ քարայատակին վրայ, աչքերը խոշոր մը
 բացաւ, երկու քոյրերուն նայեցաւ ապշահար և
 երեսնուն ի վեր սա պարզ բառերը ըսաւ յան-
 դգնօրէն.

— վայ անպիտան:

Տիկին Ռէքամիէ, (*) երբ երեսը սկսաւ խորշոմիլ ու մազերը ճերմկիլ, իր բարեկամուհիներէն մէկուն կ'ըսէր.

— Ո՛հ, սիրելիդ իմ, ա՛լ պատրանք չի վերցնէր: Այն օրէն ի վեր որ տեսայ թէ փոքրիկ ծխանայարդարները ա՛լ նտեւնին չեն դառնար ու ինծի նայիր, հասկցայ թէ ամէն բան լմնցած է:

Ասանկ պարագայի մէջ փոքր խոհարարներու կարծիքը՝ ծխանայարդարներու կարծիքը կ'արժէ...: Ամէն բան լմնցած չէր Սիւզիին և Պէթինային համար. ընդհակառակը՝ ամէն բան նոր կը սկսէր:

Հինգ վայրկեան յետոյ, տիկին Սքոթին կառքը պուլվառ Հասմանէն վեր կ'ելլէք երկու ձիերու յամր ու ներդաշնակ դնաքքով. Բարիզի մէջ երկու Բարիզուհի աւելցած էր:

Անմիջապէս ու վճռապէս, շանթի պէս արագ, յաջողեցան տիկին Սքոթ և օրիորդ Բէրսիվայ: Բարիզի գեղեցկութիւնները դասակարգուած ու ցուցադրուած չեն Լոնտոնի գեղեցկութիւններուն պէս: Բարիզի գեղեցիկ կիները իրենց

(*) Բարիզի բերեւ սմեմն գեղեցիկ կիներ, որ այս դարու առաջին մասին մէջ փայլեցաւ. շատ երկրպագուներ ունեցաւ, ամեմն ալ մեծ հանճարի ու սնունդի սէր: Անոնց մէջ առաջինն ու գլխաւորն էր Շաքուրխան, որ ամուսնութեան խնդրեց զայն երբ ինք ուրսուցն սարու էր ու սիկին Ռէքամիէ եօթանասուն, Ե. Թ.

կենդանագիրները հրատարակել չեն տար պատկերազարդ լրագիրներուն մէջ և չեն թողուր որ իրենց լուսանկարները թղթավաճառներուն խա՛նութները ծախուին... սակայն միշտ կայ փոքրիկ հոյլ մը քսանի չափ կիներու, որոնք բարիգեան շնորհը, դիզն ու վայելչութիւնը կը ներկայացնեն. այս կիները տասը-տասներկու տարի ծառայութենէ յետոյ պահեստի շրջանին մէջ կ'անցնին, իրենց նման ծերացած կիներու պէս:

Սիւզի և Պէթինա անմիջապէս անդամ եղան այս փոքրիկ խումբին: Քսանըչօրս ժամու մէջ եզաւ լմնցաւ, և ոչ իսկ քսանըչօրս ժամ, հետեւալ օրն իսկ, ուր Բարիզ հասան, առաւօտեան ժամը ութէն մինչև կէս գիշեր կատարուեցաւ ամէն բան:

Երեւակայեցէ՛ք տեսակ մը դիւթական փոքրիկ խաղ երեք արարուածով և որուն յաջողութիւնը տեսիլէ տեսիլ՝ կը մեծնայ:

Ա. Պտոյտ մը ձիով, առաւօտուն ժամը տասնին, Պուլօնի անտառը, Ամերիկայէն բերուած երկու սխրալի ճորտիկներով:

Բ. Պտոյտ մը ոտքով, ժամը վեցին, աքստիներու ծառուղիին մէջ:

Գ. Գիշերները ժամը տասնին, Օքերա թատրոնը, տիկին Նոթօնի օթեակին մէջ:

Երկու նորատի կիները անմիջապէս ուշադրութիւն գրաւեցին ու գնահատուեցան արժանաւոր

չահերը, Ծրանսայի մէջ ալ մեծամեծ գործերու ձեռնարկեց, և յաջողեցաւ Բարիդի մէջ, ինչպէս յաջողած էր Նիւ-Յորք: Դրամ չահելու պէտք չունեցողն է որ ամենէն աւելի կը յաջողի:

Շատ մեծարանք մատուցին տիկին Սքոթի... ամէն լեզուով քծնեցան. ֆրանսերէն, անգլի-երէն, իտալերէն, սպաներէն... այս չորս լեզուներն ալ գիտէր ան... և ահա առաւելութիւն մըն ալ զոր ունին օտարուհիները խեղճ Բարիզուհիներուն վրայ. ասոնք բնոյճանրապէս միայն իրենց մայրենի լեզուն գիտեն և միջազգային տարփանքներու վայելքը չունին:

Տիկին Սքոթ փայտ չտաւ, ձեռքը դուրս վա-նելու համար զանոնք: Տասը, քսան, երեսուն երկրպագու ունեցաւ միաժամանակ: Ոչ ոք ուրիշներէ գերադաս ըլլալու պարծանքը կրցաւ ունենալ. ամենուն ալ միեւնոյն ընդդիմութիւնը ըրաւ, սիրուն, խայտախորդ. ծիծաղադէմ...: Յայտնի եղաւ թէ կը զբօսնէր այս խաղով և վայրկեան մը իսկ լուրջ բանի տեղ չէր դրած զայն: Կը խաղար, զուարճանալու համար, ի պատիւ և ի սէր արուեստին: Պ. Սքոթ չվրդ-վեցաւ երբեք. կատարելապէս իրաւունք ունէր հանգիստ ըլլալու...: Լաւ ևս, կը հրճուէր ան, իր կնոջ յաջողութիւնները տեսնելով. երջանիկ էր, զայն երջանիկ տեսնելով: Չափազանց կը սիրէր զայն... քիչ մը աւելի որքան կը սիրէր կինը: Պ. Սքոթ շատ կը սիրէր կինը և ահա այս-

քան միայն: Մեծ անջրպետ կայ ռասին և շա-փազանցին միջև, երբ այս երկու մակբայները սիրեմ բային հետ գործածուին:

Իսկ Պէթինային չորս կողմը ուրիշ բան չի կար, այլ խօլ շրջագարձ մը. դիւային պտոյտ մը: Այն ի՛նչ հարստութիւն, այն ի՛նչ գեղեցկուե-թիւն: Օրիորդ Բէ սիվալ ապրիլ 15ին Բարիզ թիւն: Թասնրհինգ օր չանցած, զինքը ամուս-եկած էր. տասնրհինգ օր չանցած, զինքը ամուս-նութեան ուզողները սկսած էին տեղալ: Այս առաջին տարուան շրջանին մէջ, — Պէթինա այս փոքրիկ հայիւր շատ ճշգուծեամբ բռնելով զուարճացած էր. — այս առաջին տարուան շրջ-ջանին մէջ, պիտի կրնար, եթէ ուզէր, երեսունը չորս անդամ ամուսնանալ... և ի՛նչ պէսպի-սութիւն թեկնածուներու:

Իր ձեռքը խնդրեցին երիտասարդ աքօորեալի մը համար, որ ինչ ինչ պատահականութեանց մէջ կրնար գահ բարձրանալ, թէ և խիստ փոքրիկ ար-դարև. այլ գահ մը սակայն:

Իր ձեռքը խնդրեցին մէջ մէջ մեծ մարդ պի-համար, որ արքունիքին մէջ մէջ մեծ մարդ պի-տի ըլլար, երբ Գրանսոն, — և ասիկա անխու-սափելի էր. — ճանչնար իր սխալանքը և գլուխ ծռէր իր օրինաւոր տէրերուն առջև:

Իր ձեռքը խնդրեցին երիտասարդ իշխանի մը համար, որ գահու պատուանդաններուն վրայ իր սահմանուած տեղն ունէր, երբ Գրանսոն, — և ասիկա անխուսափելի էր, — Նաբօլէօնեան աւանդութեանց չլիթան կոէր նորէն:

Իր ձեռքը խնդրեցին երիտասարդ հանրապետական երեսփոխանի մը համար, որուն սկզբընաւորութիւնը շատ փայլուն եղած էր Սորհրդարանին մէջ, և որուն վերապահուած էր ազագային՝ շքեղ ճակատագիր մը, քանի որ Հանրապետութիւնը անքակտելի հիմերու վրայ դրուած էր հիմա Յրանսայի մէջ:

Իր ձեռքը խնդրեցին երիտասարդ բարձրաստիճան Սպանիացիի մը համար, և իմացուցին որ ամուսնական պայմանագրութեան երեկոյթի հանգէսը տեղի պիտի ունենար թագուհիի մը պալատին մէջ որ Յաղթութեան կամարէն շատ հետու չի բնակիր... Ուզողը անոր հասցէն Պոթէնի տարեցոյցին մէջ ալ կը գտնէ... Թագուհիներ կ'սն այսօր որոնց հասցէն կը տեսնես Պոթէնի մէջ, նոտարի մը և իտտեղէն ծախողի հասցէին մէջտեղ: Միայն Յրանսայի թագաւորներն են որ ա'լ Յրանսայի մէջ չեն բնակիր:

Իր ձեռքը խնդրեցին Անգլիացի լորտի մը զաւկին և վիէննայի աւագածոցովին անդամի մը զաւկին համար. զարձեալ Բարիզի սեղանաւորի մը որդիին և Ռուս դեսպանի մը որդիին համար. նոյնպէս Հունգարացի կոմսի մը և Իտալացի իշխանի մը համար... և նոյն իսկ աննշան երիտասարդ ու բարեքիչ անձերու համար որոնք ոչինչ էին, ոչինչ ունէին, ո՛չ անուն, ո՛չ հարստութիւն. բայց Պէթինա հաճած էր անոնց հետ վախ մը դառնալ, և անոնք ալ անդիմա-

և դրելի կարծելով ինքզինքնին, կը յուսային թէ Պէթինայի փոքրիկ սիրտը բտբախած էր իրենց համար:

Մինչեւ այն ատեն ոչ մէկուն համար բարախած էր անոր փոքրիկ սիրտը, և պատասխանը ամենուն համար միեւնոյնը եղած էր:

— Ո՛չ... ո՛չ...: Դարձեալ ո՛չ...: Եւ միշտ ո՛չ:

Այսաի վերոյիշեալ ներկայացումէն քանի մը օր ետքը, երկու քոյերը բաւական երկար խօսակցութիւն մը ունեցած էին ամուսնութեան այս մեծ, այս յաւիտենական խնդրին վրայ: Անուն մը արտասանած էր տիկին Սքօթ, զոր օրիորդ Բէրսիվալ մերժած էր հատու և ազդու կերպով:

Եւ Սիւզի խնդարով ըսած էր իր քրոջ.

— Սակայն, Պէթինա, վերջապէս պիտի հարկադրուիք ամուսնանալ...:

— Այո՛, անտարակո՛յս...: Բայց ս՛րհչափ ցաւ պիտի զգամ. Սիւզի, եթէ առանց սիրոյ ամուսնանամ...: Ինծի այնպէս կը թուի թէ այդպիսի բանի մը հաւանելու համար, պէտք է որ պատուած աղջիկ մեռնելու վտանգին մէջ տեսնեմ ինքզինքս... ես այն տեղուանքը չեմ:

— Չէ՛, չէք տակաւին:

— Սպասենք ուրեմն, սպասենք:

— Սպասենք...: Բայց բոլոր այս սիրահարներուն մէջ՝ որոնք տարիէ մը ի վեր ետեւնուդ

կը քաշէք, շատ չնորհօքով և շատ սիրուն անձեր ալ կային, և ստուգիւ քիչ մը տարօրինակ բան է որ անոնց մէջէն ոչ ոք...

— Ո՛չ ոք... Սիւզիդ իմ, ո՛չ ոք, բացարձակապէս ոչ: Ինչո՞ւ ձեզի չըսեմ ճշմարտութեան: Յանցանքը իրե՞նցն է արդեօք: Չախո՞ղ վարուեցան: Աւելի աղէկ վարուելով՝ կրնայի՞ն սրտիս ճամբան գտնել: Կամ թէ ի՞մս է յանցանքը: Չըլլա՞յ որ այս սրտիս ճամբան ըլլայ անշահ ճամբայ մը, ըլլայ խորտուրտ, ժեռուտ, անմատոյց, ուրկէ ոչ ոք պիտի անցնի երբեք: Մի գուցէ չարածձի, չոր սրտով ու պաղարիւն պզտիկ արարած մը ըլլամ, երբեք չսիրուելու դատապարտուած:

— Չեմ կարծեր...

— Եւ ոչ ալ ես... մինչեւ հիմա ա՛ս է իմ պատմութիւնս: Չէ՛, բան մը չզգացի որ նմանէր սիրոյ...: Կը ծիծաղիք... և կը գուշակեմ թէ ինչո՞ւ կը ծիծաղիք...: Դուք ինքնին կ'ըսէք. «Տեսէ՛ք սս պզտիկ աղջիկը, որ սիրոյ ի՛նչ ըլլալը գիտնալու յատկութիւնն ունի: Իրաւունք ունիք, չեմ գիտեր... այլ կը մակարեւրեմ քիչ մը: Սիւզիս սիրելը չի նշանակե՞ր անձ մը գերադասել ամենէն:

— Այո՛, այդ իսկ է:

— Սիրելը ան չէ՞ որ մարդ չի ձանձրանար, այդ անձը տեսնելով և լսելով: Սիրելը ան չէ որ մարդ անկենդան կը դառնայ, երբ ան ներկայ չէ

և իսկոյն կը վերակենդանայ, երբ նորէն երեււան դայ ան. աս չէ՞ սէրը:

— Ո՛հ, ո՛հ, ատի մեծ սէր է:

— Լա՛ւ ուրեմն. անա սէրն որ ես կ'երագեմ...

— Եւ անա այս սէրն է՞ որ չի գար:

— Ամենեւին... մինչեւ հիմա: Սակայն կայ և է այն անձը որ գերադասած եմ ամենէն...: Գիտէ՞ք ո՛վ է:

— Չէ՛, չեմ գիտեր... այլ կը մտաբերեմ քիչ մը...

— Այո՛, դուք էք սիրեցեալդ իմ, թերեւս դո՛ւք էք: չար քուրիկ, որ այս կէտին մէջ անզգայ և անգութ կը դարձնէք զիս: Խիտտ շատ կը սիրեմ ձեզ: Լի պատարօ՛ւն, սիրտն իմ: Դուք ամբողջովին գրաւեցիք զայն. ա՛լ ուրիշի տեղ չկայ: Ուրիշ մէկը աւելի սիրելի: Ուրիշ մը գերադասել... երբեք պիտի չկրնամ ընել այդ բանը...

— Օ՛ն, թէ այո՛:

— Օ՛ն թէ ոչ...: Ուրիշ կերպ սիրելի... թերեւս... այլ աւելի. ո՛չ: Թող այդ բանը չսկսկայէ այն պարօնը, որուն կը սպասեմ և որ չի գար:

— Մի՛ վախնաք, ո՛վ իմ Պէթիկս: Ձեր սրտին մէջ տեղ պիտի գտնուի ամենուն համար զոր պէտք է որ սիրէք, ձեր ամուսինին, ձեր զաւակներուն, որպէս զի ես ալ բան մը չկորսնցնեմ, ես, ձեր ձեր քուրիկը...: Շատ փոքր է սիրտը, և շատ մեծ:

Պէթինա գորովանքով գրկախառնուեցաւ քրոջը. յետոյ՝ միշտ փաղաքշտտ, գլուխը Սիւզիին ուսին վրայ, ըսաւ.

— Սակայն, եթէ ձանձրոյթ կը զգաք, զիս հոտ ձեր քով պահելով, եթէ կը փութաք ինչ ազատիլ, զիտէ՞ք ի՛նչ կ'ընեմ: Այս պարոննեբուն մէջէն երկուքին անունները կողովի մը մէջ կը դնեմ և բախտիս կը քաշեմ...: Անոնց մէջէն երկուքը բացարձակապէս անախորժ չեն ըլլար ինձի, եթէ նեղը մնամ:

- Ո՛ր երկուքը:
 - Փնտռեցէ՛ք...:
 - Ռոմանէլի իշխանը...:
 - Այդ մէ՛կ...: Իսկ մի՛ւսը...:
 - Պ. տը Մօնթէսան...:
- Եղաւ երկուսէն: Այս իսկ է. այո՛, այս երկուքը ընդունելի կրնան ըլլալ. բայց միայն ընդունելի... ինչ որ բաւ չէ:

Ահա ասոր համար Պէթինա մեծ անհամբերութեամբ կը սպասէր այն օրին, ուր Լօնկվալ պիտի երթային ու տեղաւորուէին...: Ինքզինքը քիչ մը յափրացած կը զգար այնքան զուարճութիւններէ, այնքան յաջողութիւններէ և այնքան ամուսնական առաջարկութիւններէ յետոյ: Հասած օրէն՝ Բարիզի յորձանքին մէջ բռնուած, ա՛լ չէր կրցած ճողոպրիլ: Ժամ մը դադար չունէր...: Պէտք կը զգար, որ ինքն իրեն մնայ, մի միայն ինքն իրեն, գոնէ քանի

մը օր, որպէս զի անձը անձին ողջընձեւ ընէ ու խոճոճէ պարագով, գիւղական կենցաղին կատարեալ առանձնութեանը մէջ, որպէս զի ինքնն իրեն ըլլայ վերջապէս...:

Ուստի Պէթինա ուրախ զուարթ էր, յունիս 14, կէս օրին, կառախումբը մտած առնն, որ Լօնկվալ պիտի տանէր զինքը: Երբ ինքզինքը առանձին տեսաւ քրոջը հետ, կառքի մը մէջ.

- Ա՛հ, գոչեց, ո՛րքան գո՛հ եմ: Շուռն առնեմք քիչ մը: Չեղի հետ տա՛սը օր գլուխ գլխի պիտի տանք. Նոթածներն ու թիւռներն երբ մտուն 25ին միայն պիտի գան, այնպէս չէ՞:
- Այո՛, 25ին միայն:

— Կեանքերնիս պիտի անցնենք ձիու վրայ, կառքի մէջ, անտառներու մէջ, դաշտերու մէջ: Տասը օր ազատութիւն: Եւ այս տասը օրուան մէջ, չի՛ք թեկնածու, չի՛ք թեկնածու. Եւ այս բոլոր թիկնածուները, տէ՛ր Աստուած, ի՛նչիս սիրահար են: Ա՛նձիս թէ դրամիս: Ահա՛՛ գաղաւթիքը, անթափանցելի՛ գաղտնիքը:

Մեքենան սուլեց, կառախումբը դղրդեցաւ յամբօրէն: Խօլ գաղափար մը անցաւ Պէթինային գլխէն, կառքին դռնէն վար ծոցեալ և գոչեց, ձեռքով փոքրիկ բարեւ մըն ալ աւելցնելով խօսքերուն.

— Մնա՛ք բարով թեկնածուներս, մնա՛ք բարով:

Ետոյ փութով նետուեցաւ կառքին մէկ անկիւնը, խենթի պէս խնդալով:

— Ո՛հ, Սիւզի, Սիւզի:

— Ի՞նչ կայ որ:

— Ձեռքը կարմիր դրօշակ բռնած մարդ մը...: Ձիս տեսա՛ւ: Լսե՛ց ձայնս...: Եւ անանկ շարմացական ձեւ մը առաւ որ...:

— Ի՞նչ անմիտ էք:

— Այո՛, իրաւ է, ասանկ կառքին դռնէն դուրս կը պօռամ...բայց ո՛չ, երջանիկ եմ, մտածելով թէ միայնակ պիտի ապրինք, երկուքս միասին, մինաւորակ ամուրիներ:

— Մինաւորի՛կ... մինաւորի՛կ...: Ո՛չ այնքան մինաւորիկ: Այսօրուընէ սկսեալ երկու հոգի պիտի ունենանք իրիկուան ճաշին:

— Ա՛հ, իրաւ... այդ երկու անձերը՝ նորէն տեսնելու՝ չպիտի նեղանամ...: Այո՛, շատ դո՛ւ պիտի ըլլամ, ծերունի երէցը նորէն տեսնելով, և մանաւանդ երիտասարդ սպան...:

— Ի՛նչպէս, մանաւա՞նդ:

— Անտարակոյս... որովհետեւ այնքան սըրտաշարժ էր ինչ որ պատմեց մեզի անցեալ օր Սուվինետի նօտարը, այնքան լաւ ինչ որ այդ մեծ թնդանօթածիզը ըրեր է երբ պզտիկ է եղեր, այնքան լաւ որ այս իրիկուն մէկ առիթը պիտի փնտռեմ, այդ մասին իմ զգացումս ըսելու համար անոր... և այդ առիթը պիտի գտնե՛մ:

Յետոյ Պէթինա յանկարծ խօսքին ընթացքը փոխելով.

— Երէկ էտվարսին հեռագիր քաշուեցա՞ւ ձիերուն համար:

— Այո՛, երէկ, ճաշէն առաջ...:

— Ո՛հ, թողէք որ ես վարեմ ձիերը մինչեւ զղեակ, ո՛րքան պիտի զուարճանամ. եթէ ասանկ անցնիմ քաղաքին մէջէն ու բոլորածեւ շրջան մը ընելով տան բակը մտնեմ փառաւորապէս, առանց կառքին ընթացքը դանդաղեցնելու մինչեւ սանդուխին առջեւ...: Ըսէ՛ք... կը հաճիք, այնպէս չէ՞:

— Այո՛, այո՛, շատ լաւ, դուք վարեցէք ձիերը:

— Ա՛խ, ի՛նչ անուշիկ էք, Սիւզիդ իմ:

էտվարս ախոռապետն էր: Երեք օրէ ի վեր եկած էր զղեակ, կառքերը զետեղելու և ախոռներուն սպասը կազմակերպելու համար, Բարեհաճեցաւ անձամբ տիկին Սթօթը և օրիորդ Բէրսիվալը դիմաւորելու: Չորս ձիերը բերաւ, Տիւբ կառքին լծուած: Կայարանին բակին մէջ կը սպասէր խուռն բազմութեան հետ մէկտեղ: Կրքնար ըսուիլ թէ ամբողջ Սուվինետի հոն էր: Ձիերուն անցքը քաղաքին մեծ փողոցին մէջէն՝ մեծ իրարանցում առաջ բերած էր: Բնակիչները տուններուն դուրս խուժած էին, և անյազօրէն իրարու կը հարցնէին.

— Ի՛նչ է աս, ի՛նչ է:

Քանի մը անձեր սա կարծիքը յայտնած էին.

— Շարժուն կրկէս մըն է զուցէ...:

Ամէն կողմէ ազազակներ բարձրացած էին:

— Չտեսա՞ք ուրեմն ի՞նչ մաքուր ու փայլուն էր... կառքն ալ... ասպազէներն ալ ոսկիի պէս կը շողային... և այն փոքրիկ ձիերը իրենց ճերմակ վարդերովը՝ գլուխներնուն իւրաքանչիւր կողմը:

Բազմութիւնը իրարու վրայ խոնուած էր կայարանին թակին մէջ, և հետաքրքիրները այն ատեն հասկցած էին թէ պատիւ պիտի ունենային ներկայ գտնուելու Լօնկվալի դղեկատիրուհիներու գալստեան:

Բայց պաղեցան քիչ մը, երբ երկու քոյրերը երեւցան, շատ ազուտր այլ շատ պարզ իրենց ծամբորդութեան զգեստներով: Այս կտորիճները կը յուսային տեսնել երկու դիւթական իշխանուհիներ՝ մեծաքս ու դիպակ հագած, յակինթներով ու աղամանղներով շողշողուն: Բայց այս քերնին խոշոր բացին, երբ տեսան Պէթինան որ յամբաքայլ կը դառնար չորս ձիերուն շուրջը, մէկիկ մէկիկ կը շոյէր թեթեւ ձեռքով, և հասկցողի պէս կը քննէր վարաւանդին մանր մուկը բաները: Պէթինային անհաճոյ չէր, — շիտակը ըսելով, — բոլոր ապշահար քաղքենիներուն վրայ տպաւորութիւն գործել:

Երբ իր փոքրիկ քննութիւնը լմնցուց, Պէթինա կամաց կամաց հանեց իր մուկի մորթէ երկայն ձեռնոցները և անոնց տեղ այծեամի հաստ կաշիէ ձեռնոցները դրաւ, զոր կառքին

խորշին մէջէն առաւ: Յետոյ՝ գրեթէ սահեցաւ դէպի կառապանին նստարանը, հովարսին տեղը, ճարտարօրէն ձեռք առաւ երասանակներն ու խարազանը, այնպէս որ ձիերը շատ փրփրած՝ ատեն չունեցան ձեռքի փոփոխութիւնը տեսնելու: Տիկին Սքոթ քրոջը քով նստաւ: Ձիերը կը կայտոէին, կը դսփրտէին, կը ծառանային և կը սպառնային:

— Օրիորդը զգուշութիւն պէտք է բնէ, ըսաւ հովարս. ձիերը շատ կայտառ են այսօր:

— Մի՛ վախնաք, պատասխանեց Պիթինա, ես կը ճանչնամ գանոնքը:

Օրիորդ Բէրսիվալի ձեռքը շատ ամուր, շատ թեթեւ ու շատ ուղղակիւն էր: Նսխ և առաջ ձիերը զսպեց ու իրենց տեղը կեցուց կարգաւ. յետոյ առջեւի երկու ձիերը՝ ձեռքի խարազանին կրկին ու երկայն ծածանքովը պարուրեց, մէկ հարուածով ու անման արուեստով թոցուց իր փոքրիկ երիվսրը և վարպետօրէն դուրս ելաւ կայարանին բակէն, երկարատեւ մրհունջի մը մէջէն անցնելով, զարմանքի ու հիացման առարկայ դարձած:

Չորս ձիերը ընդոստ կը յառաջանային, քառամբակ կը շառայէին Սուվինի սրածայր սալարկներուն վրայ: Պէթինա մինչեւ որ քաղքէն դուրս ելաւ, ձիերուն ընթացքը քիչ մը մեղմացուց, իսկ երբ իր առջեւ տեսաւ երկու քիլօմեթր մեծ ուղի մը, առանց ելեւէջի, թողուց

ձիերը որ յառաջ խաղալով իրենց վազքը առնեն... և վազքն էր ստակալի ու դժոխային:

— Ո՛հ, ի՛նչ երջանիկ եմ, Սիւզի, գոչեց...: Երթանք քիչ մը միայնակ, վազենք ու վարդենք միայնակ, սա ուղիներուն վրայ...: Սիւզի, կ'ուզէ՞ք ձիերը վարել: Որքան հաճոյալի է, երբ կարենաս թողուլ որ երթան: Շատ արագոտն ու շատ ալ խելօք են: Ահա առէ՛ք երասանակները:

— Չէ, պահեցէ՛ք. ես շատ կը զուարճանամ: Ա՛յնքան կը սիրեմ... քառաձի վարել ու վազելու բաց տեղ ունենալ իմ առջեւ...: Բարիդ, առաւօտուն անգամ, չէի համարձակեր...: Իսկ հոս... ո՛չ ոք... ո՛չ ոք... ո՛չ ոք:

Այն միջոցին, ուր Պէթինա, բաց օդով ու ազատութեամբ զզլխած արդէն, յաղթականօրէն կ'արձակէր սա երեք «Ո՛չ ոք, ո՛չ ոք ոչ ոք»ը, ձիաւոր մը կ'երեւար, ու քայլ առ քայլ կը դիմաւորէր կառքը:

Բօլ տը Լավառտանսն էր...: Մէկ ժամէ ի վեր դարանակալ կը սպասէր հոն, որպէս զի Ամերիկուհիներուն անցնիլը տեսնելու հաճոյքն ունենայ:

— Կը սխալիք, ըսաւ Սիւզի Պէթինային, ահա՛ մէկը:

— Գիւղացի մը...: Գիւղացիները չեմ սեպեր. անոնք ամուսնութեան չեն խնդրեր զիս:

— Գիւղացի չէ բնաւ: Նայեցէ՛ք:
Բօլ տը Լավառտանս կառքին քովէն անցնե-

լով, երկու քոյրերը բարեւեց ամենամեծ կանոնաւորութեամբ, բարեւ մը որ Բարիզցի կը հոտէր բոլորովին:

Ձիերը այնքան սրարշաւ կ'երթային որ հանգիպումը կայծակի մը արագութիւնն ունեցաւ: Պէթինա գոչեց.

— Ո՛վ է այս պարոնը որ մեզ բարեւեց:

— Հազիւ թէ ժամանակ ունեցայ զինքը տեսնելու, բայց կարծեմ կը ճանչնամ:

— Կը ճանչնա՞ք:

— Այո՛, և գրաւ կը դնեմ թէ այս ձեռն իմ տանս մէջ տեսայ զայն:

— Տէ՛ր Աստուած, արդեօք երեսունըչորսերէն մէ՛կն է: Նորէ՛ն պիտի սկսինք:

9.

Նոյն օրը, ժամը եօթուկէսին, ժան երիցատունը կուգար երէցը առնելու, և երկուքը միասին ղղեակին ճամբան կը բռնէին:

Ամիսէ մը ի վեր, բանւորներու ճշմարիտ բանակ մը Լօնկվալը գրաւած էր. զիւղին պանգոկները ու գինետունները հարստութիւն կը դիզէին: Կարասի փոխադրող անագին կառքեր կարասիներու և օթոցներու բեռներ կը բերէին Բարիզէն: Տիկին Աթթին ժամանումէն քառասունըութը ժամ առաջ, օրիորդ Մապօ՛

նամակատան անօրէնուհին, և տիկին Լօուիէ, քաղաքապետուհին, զղեակին մէջ սպարաճ էին. անոնց ըրած պատմութիւնները ամենուն գլուխը կը դարձնէին: Հին կարասիները աներեւութացած և առատաղին մէջ պահած էին զտնոնք. հոն մարդ հրաշալի բաներու ճշմարիտ շեղջակոյտերու մէջ կը պտտէր: Հապա ասպաստանները. հապա՛ կառատունները: Երկաթուղիի մասնաւոր կառախումբ մը, Էտվարսին լարձը հրակողութեան տակ, Բարիզէն տասնի չափ կառքեր բերած էր, և ի՛նչ կառքեր. քսանի չափ ձիեր և ի՛նչ ձիեր:

Աբրայ Բօնօթանթէն կը կարծէր թէ գիտէ պերճանքին ի՛նչ ըլլալը: Տարին անգամ մը կը ճաչէր իր եպիսկոպոսին, գերապայծառ Փուպէոսի տունը, սիրուն ու հարուստ եկեղեցական մը որուն զարպաստն էր առատ: Երէցը մինչեւ այն ատեն կը կարծէր թէ անկարելի էր որ աշխարհի մէջ աւելի շքեղ բան մը գտնուէր քան Սուվինեիի եպիսկոպոսական պալատը. Լավառտանսի ու Լօնկվալի զղեակները...: Լօնկվալի նորանոր շքեղութիւնները լսելէ յետոյ կը սկսէր հասկնալ թէ այսօրուան մեծ տուներուն պերճանքը առջի ժամանակներու հին տուներուն լուրջ ու խիստ պերճանքէն աւելի գերազանց ըլլալու էր զարմանալիօրէն:

Հազիւ թէ երէցը ու ժան քանի մը քայլ առած էին դարաստանին ծառերուն մէջ, որ զէպի զղեակ կ'առաջնորդէր.

— Նայէ՛, ժան, ըսաւ երէցը, ի՛նչ փոփօխութիւն: Դարաստանին բոլոր այս մասը երեսի վրայ թողուած էր... և հնա աւաղ ցանուած, քեղրթած...: Ասկէ ետքը, ինքզինքս իմ տանս մէջ չպիտի զգամ հոս, ինչպէս առաջ...: Շատ փառաւոր պիտի ըլլայ աս: Ա՛լ չպիտի գտնեմ իմ շաղանակագոյն թաւիչէ հինկեկ թիկնաթոս, ուր շատ անգամ կը քնանայի ճաչէն յետոյ: Իսկ եթէ այս գիշեր ալ քնանամ, ի՛նչ գէշ բան կ'ըլլայ: Դուն ուշադրութիւն ըրէ, ժան...: Եթէ տեսնես որ կը սկսիմ մրափել, մօտեցիր ու թեւս քիչ մը կամթաէ ետեւէս: Խօսք կուտա՞ս:

— Այո՛, կնքահայր, կը խոստանամ:

Ժան չափով մը ուշադրութիւն ընծայեց երէցին խօսքերուն: Վերջին ծայր անհամբերութիւն կը զգար տիկին Սքօթը ու օրիորդ Բէրեիվալը տեսնելու. այս անհամբերութեան խառնուած էր սաստիկ մտատանջութիւն մը: Արդեօք զանոնք պիտի գտնէ՞ր Լօնկվալի մեծ օրահին մէջ, ինչպէս գտեր էր երիցատան փոքր սեղանատան մէջ: Թերեւս, այն երկու կիներուն տեղ՝ պարզ ու բարեհամբոյր, որոնք այն անպատրաստից ճաշիկով զուարճացեր էին և որ առաջին օրէն իսկ զինքը այնքան նազելի կերպով ու ընտանեբար ընդունած էին, թերեւս անոնց տեղ պիտի գտնէր հիմա ընկերական աշխարհի երկու սիրուն պաճուճապատանքներ, որոնք վայելչութեամբ և անստղիւտ ուղղութեամբ կը փայլէին,

առանց ջերմութեան: Իր առաջին տպաւորութիւնը պիտի ջնջուէ՞ր արդեօք... պիտի անհետանա՞ր: Թէ, ընդհակառակը, աւելի քաղցր ու աւելի խոր պիտի ազդէր սրտին վրայ:

Դուրսի սանդուղին վեց աստիճաններէն վեր ելան ու ներքնագաւթին մէջ երկու բարձրահասակ սպասաւորներէն ընդունուեցան, որոնք խիստ արժանաւոր ու խիստ պատկառելի կերպարանք ունէին: Այս ներքնագաւթը առեւտրային ընդարձակ սենեակ մըն էր՝ ջուր ու մերկ իր քարէ պատերուն մէջ. այս պատերը հիմա սքանչելի օթոցներով ծածկուած, էին ու դիցարանական նիւթեր կը ներկայացնէին: Երէցը հազիւ թէ նայեցաւ այս օթոցներուն, և ահա մէկ ակնարկով տեսաւ թէ այն դիցունհիները որոնք կը ձեռնէին կանաչներուն մէջ, նախնական պարզութեամբ հագուստներ կը կրէին:

Սպասաւորներէն մէկը մեծ սրածին երկու դուռները բացաւ: Հոն էր որ կը կենար սովորաբար պառաւ մարքիդուհին, բարձր վառարանին աջ կողմը նստած, և ձախ կողմն ալ դրուած էր շաքանակագոյն թիկնաթուղ: Կայսրութեան առեւտրէն մնացած այս հին կարասին սրահին կարգաւորութեան հիմն եղած էր, ու անոր տեղը անցած էր սքանչելի ասեղնեզարթուած կարասի մը՝ 18րդ դարուն վերջին յատուկ ոճովը: Յետոյ շատ մը պղտիկ թիկնաթուղներ ու պղտիկ փքաթուղներ ամէն գոյնով և ամէն ձևով, հոս հոն

նետուած էին այնպիսի անկարգ ու խառնափրն-թոր երեւոյթով մը որ չրումն էր արուեստին:

Տիկին Սքոթ, երէցին ու ժանին ներս մտնելը տեսնելով, ոտքի ելաւ, և զանոնք դիմաւորելով.

— Ի՞նչ ազնիւ էք որ եկաք տէր երէց, բաւ... դուք ալ, պարոն... և ո՞րքան գոհ եմ ձեզ նորէն տեսնելուս, իմ առաջին, իմ միակ բարեկամներս այս երկրին մէջ:

Ժան օգեւորուեցաւ, նայն կինն էր միշտ:

— Կր ներէ՞ք, յարեց տիկին Սքոթ, որ ձեզի ներկայացնեմ իմ զուակներս...: Հա՛րրի և Պէլլա... եկէ՛ք:

Հարրի պղտիկ մանչ մըն էր, սիրունիկ, վեց տարեկան, և Պէլլա փոքրիկ աղջիկ մը, շատ ազւորիկ, հինգ տարեկան. իրենց մօրը պէս խոշոր սեւ աչքեր ունէին և անոր պէս, սակեզօծ մազեր:

Երէցը համբուրելէն ետքը ելկու աղաքը, Հարրի, որ սքանչանալով ժանին համազգեստը կը դիտէր, բաւ իր մօրը.

— Հապս զինորակա՛նը, մայրիկ, զինորականն ալ պիտի համարուե՞մ:

— Եթէ կ'ուզէք պատասխանեց տիկին Սքոթ, և եթէ ինքը կը հաճի:

Վայրկեան մը շանցած, երկու տղաքն ալ ժանին ծունկերուն վրայ տեղաւորուած էին և հարցումներ կը տեղացնէին:

— Սպա՛յ էք:

— Այո՛, սպայ եմ:

— Ի՞նչի մէջ:

— Հրետաձիգներուն մէջ:

— Հրետաձիգ... Թնդանօթ նետողներն են... Ա՛հ, ո՛րքան կը զուարճանամ, եթէ թընդանօթին նետուիլը լսեմ և մօտը դանուիմ:

— Կը տանի՞ք մեզ, օր մը, երբ թնդանօթը նետեն. բսէ՛ք, կ'ուզէ՞ք տանիլ:

Այս միջոցին տիկին Սքօթ կը խօսէր երէցին հետ, և ժան, ազոց հարցումներուն պատասխանելով հանդերձ, տիկին Սքօթը կը դիտէր: Բեհեզէ ճերմակ չրջազգեստ մը հագած էր, բայց բեհեզը կ'աներեւութանար ժանեակներով ծալ ծալ ծոպերու ձիւնակոյտի մը ներքեւ: Շրջազգեստը կործքին վրայ քառակուսի ձեւով բաց էր լայնքին: Թեւերը մինչև արմուկը մերկ, կարմիր վարդերու մեծկակ փունջ մը բաձկոնակին բացուած տեղը, կարմիր վարդ մըն ալ մազերուն մէջ՝ աշամանդէ ճարմանդով մը ընդելու գուած, ուրիշ ոչինչ:

Տիկին Սքօթ յանկարծ նկատեց օր ժան զինուորականութեամբ զբաղած էր իր երկու ազոց հետ:

— Ո՛հ, ո՛րքան ներում կը խնդրեմ ձեռնէ, պարոն, Հարրի՛, Պէլլա՛:

— Կ'ազաչեմ, տիկին, ինձի թողէ՛ք զանոնք:

— Եւ ո՛րքան կը ցաւիմ ձեզի՛, այսքան ուշ

ճաշ տալու: Գոյրս չէջաւ տակաւին: Աւասիկ եկաւ:

Պէթինա ներս մտաւ: Բեհեզէ նոյն ճերմակ չրջազգեստը, նոյն ժանեակներու խառնակոյտը, նոյն կարմիր վարդերը, նոյն վայելչութիւնը, նոյն զեղեցկութիւնը և նոյն ընդունելութիւնը խնդում երեսով, աղու երևոյթով ու բաց սրտով:

— Ձեր աղախինն եմ, տէր երէց: Արդեօք ինձի ներքեցի՞ք անցեալ օրուան անհարկի անպատշաճութիւնս:

Յետոյ, ժանին դառնալով ու անոր տալով ձեռքը.

— Բարե՛ւ, պարոն... պարոն... Լա՛ւ, բայց չեմ յիշեր ձեր անունը... և սակայն ինձի այնպէս կը թուի թէ արդէն վաղեմի բարեկամներ ենք... պարո՛ն...:

— Ժան Ռէյնօ:

— Ժան Ռէյնօ... այո՛, այո՛: Բարե՛ւ, պարոն Ռէյնօ... կանխաւ անկեղծօրէն ձեզի կ'իմացնեմ որ երբ բոլորովին հին բարեկամներ ըլլանք ութը օրէն, այն ատեն պարոն ժան պիտի կոչեմ ձեզ... Շատ ազաւոր անուն է ժան:

Ճաշի հրամցուցին: Մանկածուները եկան աղաքը առնելու: Տիկին Սքօթ երէցին թեւը մտաւ, Պէթինա՝ ժանին թեւը... Մինչև Պէթինայի երեւումը՝ ժան ըսած էր ինքներեն. «Գեղեցկազոյնը տիկին Սքօթն է» Երբ Պէթի-

նային փոքրիկ ձեռքը տեսաւ որ իր թեւին տակ կը սահէր և երբ Պէթինա դէպի իրեն դարձուց զրդանոյշ դէմքը, այն ատեն ըսաւ իւրովի. «Գեղեցկագոյնը՝ օրիորդ Բէրսիվալն է։» Բայց վարանումի մատնուեցաւ. երբ երկու քոյրերուն միջեւ նստաւ։ Եթէ աջին նայէր, այն կողմէն կը զգար սպանալիք սիրահարելու... իսկ եթէ ձախին նայէր, վառնգր յանկարծ տեղէն կ'ելլէր և ձախ կողմը կ'անցնէր։

Ոտակցութիւնը սկսաւ գիւրին, վառվառուն անկասկած... Երկու քոյրերը ցնծուած թեան մէջ էին։ Արդէն հետիտոն պտոյտ մը ըրած էին դարաստանին մէջ։ Մտադիր էին հետեւեալ օրը ձիով երկար պտոյտ մը ընել անտառին մէջ։ Չի հեծնելի իրենց կիրքն էր. խենթ կ'ըլլային ատոր համար։ Փան այ այդ կիրքը ունէր. ու քառօրդ մը յետոյ իրմէն կը խնդրէին որ հետեւեալ օրուան պտոյտին մասնակցի ինքն ալ։ Արախութեամբ ընդունուեցաւ։ Ո՛չ ոք իր մէջ ազդկ կը ճանչնար շրջակայքը. իր երկիրն էր ան։ Որքան երջանիկ պիտի ըլլար որ դանոնք պատուասիրէր իր երկրին մէջ ու շատ մը տեղեր ցոյց տար, փոքրիկ ու գոլորիկ։ Ղոր չէին կրնար երեւան հանել առանց իրեն։

— Ա, մէն օր ձի կը հեծնէ՞ք, հարցուց Պէթինա։

— Ա, մէն օր և ընդհանրապէս օրը երկու անգամ, Առաւօտուն սպասարկութեան համար, իրիկունն ալ զրոտանքիս համար։

- Առաւօտուն կանո՞ւի։
- Ժամը հինգուկէսին...։
- Ժամը հինգուկէսին, ամէ՞ն առաւօտ։
- Այո՛, բացի կիրակիէն։
- Ուրեմն, քանի՞ն կ'ելլէք...։
- Չարուկէսին։
- Լուսցած է այն ատեն։
- Աւա՛ղ այն միջոցին, լաւ լուսցած է։
- Հիանալի բան է, այսպէս ժամը չորսուկէսին ելլել...։ Մենք օրերն իս շատ անգամ կը վերջացնենք այն ժամուն, ուր դուք կը սկսիք։
- Եւ քանի՞ քառք քան արեւոտ ար։
- Եւ քան, օրիորդ։ Ի՛նչ լաւ բան է որ, մարդ իր գոյութիւնը իր առջև ունենայ շիտակ որոշ և մեկին պարտականութիւններով։
- Սակայն, բաւ տիկին Սքոթ, այսպէս ինքն իր տէրը չըլլար, և միշտ հնազանդելու պարտաւոր ըլլալ...։
- Թերեւս այդ բանն է որ ամենէն տեղի հաճոյ կը թուի ինծի։ Ոչինչ աւելի հեշտ է քան հնազանդիւր... և յետոյ հնազանդիլ սովորել միակ կերպն է հրամայել սորվելուն։
- Ա՛հ, ո՛րքան ճշմարիտ ըլլալու է ձեր ըսածը։
- Այո՛, անտարակոյս, շարունակեց երէցը, բայց ինչ որ ձեզի չըսեր, այն է որ իր զօրագունդին ամենէն նշանաւոր սպան է, որ...։
- Կնքահայր, կ'ազաչեմ...։

Երէցը, հակառակ ժանին ընդիմութեան, իր սանին դրուատիքը պիտի ընէր, երբ Պէթինա միջամտելով.

— Անօգուտ է, տէր երէց, մի՛ ըսէք... Զեր բոլոր ըսելիքները մենք գիտենք: Պարոնին վրայ տեղեկութիւններ առնելու անպատկառութիւնը ըրինք... Ո՛հ, քիչ մնաց, պարոն ժան պիտի ըսէի... պարոն Ռէյնօսի վրայ... սքանչելի են առած տեղեկութիւններնիս:

— Հեռաքրքիր եմ իմանալու, ըսաւ ժան:

— Ո՛չինչ... ո՛չինչ, պիտի իմանաք: Զեմ ուզեր ձեզ կարմրցնել, և եթէ զուրցեմ, հարկաւ պիտի կարմրիք:

Ապա երէցին դառնալով.

— Բայց, տէր երէց, ձեր վրայ ալ տեղեկութիւններ առինք: Կ'երեւայ թէ սուրբ մըն էք...:

— Ո՛հ, շատ ճշմարիտ է, պոչեց ժան:

Այս անգամ ալ երէցը կարճ կ'ապեց ժանին ճարտասանութիւնը: Չաչր ու արտելու վրայ էր: Այս ճաչը քիչ յուզում էր պատճառած ձերու նազարդ քսնանային՝ մինչև անտարիլը: Բանիցս հանձարեղ ու բազմակնձէլ յերոտած ուսելիքներ ներկայացուցեր էին ինչ որ արդարով համարձակած էր ձեռք ետնելու: Երբ որ յերկայ թաւալազլոր բերէ ամէն ժան, բանդակի դնող զղեակները, զեռնառունկէ բարդերը, սերէ ամբողջները, խմորեղենէ մայրպոցները, սառնոյչէ ժայռերը: Սակայն արքայ Բոնաթանթէն

ճաչեց մեծ ախորժակով, և չքաշուեցաւ երկու երեք գաւաթ Շանրայեայի գինի մխելէ: Չէր արհամարհեր կերուխուժը: Կատարելութիւնը այս աշխարհի համար չէ, և եթէ որկրամոլութիւնը մահացու մեղք մը ըլլար, ինչպէս կ'ըսեն, ո՛րչափ բարի երէցներ զժոխք պիտի երթային:

Սուրճը դարտափին վրայ բերած էին, զղեակին առջեւ. քիչ մը հեռուն՝ գիւղին հինուոկ ժամացոյցին ճաթած ձայնը կը լսուէր, որ ինը կը զարնէր: Մարգ ու պուրակ կը քնանային: Դարաստանին մէջ անորոշ ու ծածանուտ երկայն գիծեր միայն կը տեսնուէին: Լուսինին ցոլքը բարձրաբերձ ձառերուն ծայրերուն կը զարնուէր յամբարար:

Պէթինա սիկառէթներու տուփ մը առնելով սեղանին վրայէն:

— Կը ծխէ՞ք, ըսաւ ժանին:

— Այո՛, օրիորդ:

— Առէ՛ք ուրեմն, պարոն ժան...: Ի՛նչ հոգս, ըսի գնաց...: Առէ՛ք...: Բայց ո՛չ...: Նախ մտիկ ըրէ՛ք:

Մեղմաձայն, մէկ կողմէն ալ սիկառէթներու տուփը անոր ներկայացնելով.

— Մութ է հիմա, կրնաք կարմրիլ որչափ որ ուզէք: Արդ, հիմա ձեզի պիտի ըսեմ ինչ որ պահ մը առաջ չըսի սեղանին վրայ: Սուսիների ձերուկ նօտար մը, որ ձեր խնամակալն եղած է, եկաւ քոյրս տեսաւ Բարիզ, զղեակին դնին վը-

ձերմանը համար: Ան պատմեց ինչ որ էք եղեր, ինչ որ ըրեր էք այն հէք մօրը ու այն հէք աղջկան համար: Քոյրս ու ես շատ խանդաղապեցանք այդ բանին վրայ:

— Այո՛, պարոն, շարունակեց տիկին Սքօթ, և ասոր համար է որ ձեզ այսպէս բերկրապատար ընդունեցանք այսօր: Ա՛հէն եկողի ասանկ ընդունելութիւն պիտի չընէինք համոզուած եղէք: Հիմա առէ՛ք սիկարէթնիդ. քոյրս կը սպասէ որ տայ:

Ժան բառ մը իսկ չգտաւ պատասխանելու: Պէթինա հոն էր, իր առջեւը ցցուած, սիկարէթներու տուփը երկու ձեռքին մէջ, աչքերը անկեղծօրէն ժանին երեսն ի վեր յատած: Պէթինա սաստիկ հաճոյք մը կը զգար, որ սապէս կրնայ թարգմանուիլ.

— Կարծեմ կտրի՞ճ մարդու մըն է որ կը նայիմ:

— Իսկ հիմա, ըսաւ տիկին Սքօթ, նստինք հոսա՛, սա քնքոյ գիշերին գիմաց...: Սուրձերնիդ առէ՛ք...: Ծխեցէ՛ք...:

— Ու չխօսինք, Սիւզի, չխօսինք, Գիւզին այս խոր լուսթիւնը Բարիզի աղմկալից ժխորէն ետքը՝ համբուրելի բան է: Նստինք հոս, առանց բան մը ըսելու: Դիտե՛նք երկինքը, լուսինը և աստղերը:

Չորսը միասին, մեծ հաճոյքով գործադրեցին

այս փոքրիկ յայտագիրը: Սիւզի և Պէթինա, հանդարտ, հանդչած, երէկի կեանքէն բացարձակապէս անջատուած, արդէն իսկ խանդակաթօրէն կը սիրէին այն երկիրը, ուր եկած էին և ուր պիտի մնային:

Ժան նուազ հանդարտ էր. օրիորդ Բէրսիււլին խօսքերը խոր յուզում պատճառած էին իրեն. սիրտը դեռ իր կանոնաւոր ընթացքը չէր գտած բոլորովին:

Բայց ամենէն երջանիկը՝ արբայ Քօնսթանթինն էր: Հոգեզուարճ բերկրանքով վայելած էր այս փոքրիկ միջադէպը, որ ժանին համեստութիւնը այնքան ծանր ու քաղցր փորձանքի մը ենթարկած էր: Արբան ո՛րքան կաթոգին կը սիրէր իր օանը: Երբեք հայր մը, ամենէն աւելի գորովազուծ հայրը աւելի լաւ սրտով չէ սիրած իր սիրելագոյն զաւակը: Երբ ձերունի երէցը երիտասարդ սպային կը նայէր, յաճախ կ'ըսէր ինքնիրեն.

— Երկինք լցօ՛ւց զիս բարութեամբ քահանայ եմ ու զաւկի տէր (*):

Արբան ուշակօրոյս եղաւ բերկրալի անուրջի մը մէջ. նորէն իր առջի տունն էր ահա, այնպէս կը զգար, և շատլաւ կը զգար գաղափարները շփոթեցան ու խառնակեցան: Անուրջը թմրութեան փոխուեցաւ, թմրութիւնը՝ քնէութեան.

(*) Հռոմէական հսկանակներ չեն ամուսնանաւ: Ծ. Թ

աղէտն եղաւ ընդհուպ կատարեալ և անդարմանելի: Երէցը քնացաւ և խորունկ քնացաւ: Այն զարմանազան ճաշը և այն երկու երեք գաւաթ Շանբանեայի գինիները ոչ նուազ պատճառ եղան այս չարաշուք արկածին:

Ժան բան մը չէր նշմարած: Մոռցած էր իր կնքահօր ըրած խոստումը: Ինչո՞ւ մոռցած էր: Որովհետեւ տիկին Սքօթին և օրիորդ Բէրսիվալին խելքին փշած էր որ ոտքերնին պարտէզին կռուաններուն վրայ դնեն, որոնք իրենց նստած ու բարձերով խծկուած ուռիէ մեծ թիկնաթոռներուն դէմ զետեղուած էին: Յետոյ յալաբար ընկողմանած էին թիկնաթոռներուն մէջ, և իրենց բեհեղէ կիսազգեստները քիչ մը վեր ելած էին, խիստ քիչ, բայց շատ խսկ էր որ դուրս պրծէին չորս մանր տոտիկներ, որոնց գիծերը խիստ որոշ ու խիստ յստակ կ'երեւային լուսնի լոյսովը լուսաւորուած ճերմակ ժանեակներու աղուորիկ երկու ալիքներուն ներքեւէն: Ժան կը նայէր այս մանր ոտքերուն, և ինքն իրեն սա հարցումը կ'ընէր.

— Որո՞նք են փոքրագոյնը:

Երբ այս խնդրը լուծել կը ջանար ան, Պէթինա յանկարծ ցած ձայնով մը ըսաւ իրեն.

— Պարոն ժա՛ն, պարոն ժա՛ն:

— Օրիո՞րդ:

— Տէր երէցին նայեցէ՛ք, կը քնանայ:

— Ո՛հ, տէ՛ր Աստուած. յանցանքն իմս է:

— Ի՛նչպէս, ձե՛րն է յանցանքը, հարցուց տիկին Սքօթ, նոյնպէս ցած ձայնով:

— Այո՛...: Կնքահայրս առտուն կանուխ կ'արթննայ և իրիկունը կանուխ կը պառկի. ինծի պատուիրած էր թող չտայ որ քնանայ: Շատ անգամ, տիկին տը Լօնկվալին տունը, ճաշէն յետոյ քունը կը տանէր: Դուք զինքը այնքան բարութեամբ ընդունեցիք որ իր առջի սովորութիւնները նորէն ձեռք առաւ:

— Ու որքան մեծ իրաւամբ, ըսաւ Պէթինա: Չայն չճանենք որ չարթննայ:

— Շատ աշխու էք, օրիորդ, բայց գիշերը կը զովանայ քիչ մը:

— Այո՛, իրաւ է...: Կրնայ հարսուխ ըլլալ: Կեցէ՛ք, երթամ ի՛մ կրկնօցներէս մէկը բերեմ:

— Կարծեմ թէ, օրիորդ, լաւագոյն կ'ըլլայ զինքը ճարտարութեամբ արթնցնել, որպէս զի չկասկածի թէ դուք իր քնանալը տեսաք:

— Թողէ՛ք ինծի, ըսաւ Պէթինա: Սիւզի, երգե՛նք միատեղ, նստ շատ ցած, յետոյ կամայ կամայ ձայններնիս կը բարձրացնենք...: Երգե՛նք:

— Սիրով... այլ ի՛նչ երգելու է:

— Երգենք մանկական բաներ...: Խօսքերը պարագային յարմար են:

Սիւզի և Պէթինա սկսան երգել:

Իցի՛ւ թեւեր ունենայի ես երկու
Փետրաւորուած փոքրիկ թռչուն օդաչու, ևն.
Աբբայ Քօնսթանդին

Իրենց քաղցր ու թափանցիկ ձայնը փափուկ բախիւններով կը հնչէր այդ խորին լուսթեան մէջ: Աբբան բան մը չէր լսեր, չէր երեբար:

Ժան զմայլած մնացեր ի լուր այս փոքրիկ ներդաշնակութեան, ու կ'ըսէր ինքնիրեն.

— Մի'այն թէ կնքահայրս շուտով չարթննար: Բայց ահա ձայները երթալով աւելի պայծառ ու աւելի բարձր կ'ելլէին:

Սակայն քունիս մէջ կը թռչիմ ես առ քեզ կը քնանամ՝ այլ միշտ քեզի՝ հետ եմ լսեն.:

Եւ արբան տակաւին չէր խլրտեր:

— Ինչ անուշ կը քնանայ ըսաւ, Սիւզի... ոճիր գործել է արթնցնելը:

— Սակայն պէ՛տք է...: Աւե՛լի բարձր, Սիւզի, աւե՛լի բարձր:

Սիւզի և Պէթինա ձգեցին որ ձայներնին ազատ ելլէ ոգեւորիչ խաղերով:

Չի կասիր քուն, թէեւ արքան տայ հրաման, Ու ես կ'ուզեմ որ արթննամ այդօրին: Են.:

Երէջը քունէն արթնցաւ ընդոտ: Պահ մը երկիւղէն անհանգիստ եղաւ. յետոյ ոգի առաւ...: Յայտնի էր որ չէին տեսած քնացած ըլլալը: Կանգնեցաւ, աչքերը չփեց զգուշաւոր խոնկութեամբ, կամացուկ...: Ազատած էր:

Քստորդ մը ետքը, երկու քոյրերը, երէցն ու ժանը կ'իջնէին մինչեւ դարաստանին պզտիկ

գուռը, որ գիւղին վրայ կը բացուէր. երիցատունէն հարիւր քայլ անդին: Դրան մօտ կը գտնուէին, երբ յանկարծ Պէթինա ըսաւ ժանին.

— Ա՛հ, պարոն, երեք ժամէ ի վեր ձեզի ընելիք հարցում մը ունիմ: Այս առաւօտ եկած ատեննիս, ճամբուն վրայ հանգիպեցանք դեղին պեխերով նրբահասակ երիտասարդի մը, սեւ ձի մը նստած. անցած ատենը բարեւեց մեզ:

— Բօլ ար լավառտանսն է, իմ բարեկամներէս մէկը: Արդէն պատիւ ունեցած է ձեզի ներկայանալու... բայց քիչ մը հարեւանցի: Ուստի կը բաղձայ կրկին անգամ ներկայանալ:

— Լա՛ւ ուրեմն. այս օրերս օր մը բերէք մեզի, ըսաւ տիկին Սքօթ:

— Ամսուն 25էն ետքը, գոչեց Պէթինա...: Ոչ անկէ առաջ, ոչ անկէ առաջ: Ո՛չ ոք կ'ուզենք տեսնել մինչեւ այն օրը, ո՛չ ոք բացի ձեռնէ, պարոն ժան... շատ արտակարգ բան է աս, և չգիտեմ ալ թէ ի՛նչպէս ասանկ եղաւ. դուք արդէն մեզի հախար մարդուն մէկը չէք այլ այլևս: Թերեւս այս մեծարանքը շատ կոկիկ չեղաւ. բայց իրաւցնէ մեծարանք է...: Այս կերպ խօսելով միտքս վերջին աստիճան քաղցր և հաճոյ ըլլալ է ձեզի:

— Եւ է՛ք իսկ, օրիորդ:

— Լաւ է որ բարեբախտութիւն ունեցայ միտքս լաւ հասկցնելու...: Ցտեսութիւն, պարոն ժան, վաղը կը տեսնուինք:

Տիկին Աքօթ և օրիորդ Բէրսիվալ կամաց կամաց դղեակին ճամբան բռնեցին:

— Սիւզի, ըսաւ Պէթինա, հիմա խոտիւ-
յանդիմաննցէք զիս...: Կը սպասեմ...: Արժա-
նի եմ յանդիմանութեան:

— Զեզ յանդիմանե՛մ: Ինչո՞ւ:

— Ապահով եմ որ հիմա պիտի ըսէք թէ չատ-
ընաանեբար վարուեցայ այս երիտասարդին հետ:

— Զէ՛, չպիտի ըսեմ...: Առաջին օրէն այդ
երիտասարդը չատ լաւ տպաւորութիւն ըրաւ
վրաս: Կատարեալ վտանգութիւն կ'աղղէ ինծի:

— Ինծի ալ:

— Համոզուած եմ թէ լաւ պիտի ըլլայ որ
ջանանք երկուքս ալ մեզի բարեկամ ընելու
զայն:

— Եթէ ինծի մնայ՝ բոլոր սրտովս...: Մա-
նաւանդ թէ, Սիւզի, չատ երիտասարդներ տե-
սայու ճանչցայ, Ֆրանսայի մէջ բնակելունէս ի վեր-
ո՛հ, այո՛, շատ տեսայ... լաւ, ասի առաջինն
է, իրաւցնէ առաջինը, որուն աչքերուն մէջ
չկարդացի ականյայտնի օտ խօսքը. «Աստուած
իմ, ո՞րքան գոհ պիտի ըլլամ, եթէ սա պզտիկ
աղջկան միջիտններուն հետ ամուսնանամ»: Այս
խօսքերը որոշակի գրուած էին բոլոր ուրիշնե-
րու աչքերուն մէջ... Իսկ իր աչքերուն մէջ
ո՛չ...: Տուն մտանք ահա...: Բարի գիշեր,
Սիւզի, վաղը կը տեսնուինք:

Տիկին Աքօթ ցնաց իր տղաքը տեսնել և
համբուրել քուներնուն մէջ:

Պէթինա պատշգամին վանդակին կրթնած
արձուկով՝ երկար ատեն կեցաւ:

— Կարծեմ թէ կ'ըսէր, ինքնիրեն, ես այս
երկիրը պիտի սիրեմ:

է.

Հետեւեալ առաւօտ, զինավարժութենէ դար-
ձին, Բօլ տը Լավառաանօ զօրանոցին քակին մէջ
Ժանի կը սպասէր: Հազիւ ժամանակ տուաւ որ
ձիէն վար իջնէր... և առանձին մնալնուն պէս.

— Պատմէ՛, ըսաւ, շուտով պատմէ՛ երէկ-
ուան ճաշը: Ես առտուն տեսեր էի զանոնք:
Պզտիկը չորս սեւ ձիեր կը վարէր... և ի՛նչպէս
ճարտարօրէն...: Բարեւեցի զանոնք...: Ոսե-
ցա՞ր իմ վրաս: Զիս ճանչցե՞ր ե՛ն: Ե՛րբ Լօնկ-
վալ կը տանիս զիս: Բայց պատասխանէ՛, պա-
տասխանէ՛, նայինք:

— Պատասխանե՛մ, պատասխանե՛մ...: Նախ
ո՞ր հարցումիդ:

— Վերջինին:

— Թէ ե՞րբ պիտի տանիմ քեզ Լօնկվալ:

— Լա՛ւ, տասը օրէն: Այս միջոցին ոչ ոք
տեսնել կ'ուզեն:

— Ուրեմն տասը օրէն յետո՞յ Լօնկվալ պիտի
երթաս:

— Ո՛հ, ես այսօր պիտի երթամ, ժամը չոր-
սին: Բայց ես, չկամ հաշուին մէջ: Ժան Ռէյնօ՛

երէցին սա՛նը... Ահա՛ ինչու այնքան դիւրու-
թեամբ գրաւեցի այս երկու սիրուն կիներու
վստահութիւնը: Եկեղեցիին հովանաւորու-
թեան ներքեւ և անոր երաշխաւորութեամբ
ներկայացայ... Յետոյ հասկցան թէ կրնամ
մանր մունր ծառայութիւններ մատուցանել.
երկիրը խիստ լաւ կը ճանչնամ. իբր առաջնորդ
պիտի գործածեն զիս...: Վերջապէս, ես մէկը
չեմ, մինչդեռ դուն, կոմս Բօլ տը Լավառաթանս,
դուն մէկն ես: Ուստի, մի՛ վախնար, քու կար-
գըդ ալ պիտի գայ, երբ սկսին տօներն ու պա-
րահանդէսները, երբ պէտք ըլլայ փայլիլ, երբ
պէտք ըլլայ պարել: Դուն այն ատեն պիտի
ճառագայթես բոցավառ և ես նորէն խոնարհա-
բար պիտի մանեմ իմ նսեմութեանս մէջ:

— Ծղրէ՛ զիս որքան կ'ուզես...: Ճշմա-
րիտը սա է որ, այս տասը օրուան միջոցին,
դուն ճամբայ պիտի առնես... ճամբայ՝ պիտի
առնես...:

— Ի՛նչպէս, ճամբայ՝ պիտի առնեմ...:

— Նայէ՛, Ժան, իս հաւատացնելու ե՞ս ելեր
թէ արդէն սիրահարած չես այդ երկու կիներէն
մէկին: Կարելի՞ բան է: Ա՛յնքան գեղեցկու-
թիւն, այնքան պերճանք: Ո՛հ... աւելի պեր-
ճանք քան գեղեցկութիւն: Ա՛յնքան պերճանք
զիս կը գլորէ, զիս վեր ի վայր կ'ընէ: Այն չորս
ձիերը իրենց ճերմակ վարդէ փողոջուկներով,
գիշերը երազս եկան...: Իսկ այն պզտիկը...:
Պէթինա... անանկ չէ՞:

— Այո՛, Պէթինա՛:

— Պէթինա՛... կոմսուհի Պէթինա՛ տը Լա-
վառաթանս: Ի՛նչ սիրուն կ'ըլլայ, եւ ի՛նչ կատա-
րեալ պզտիկ էրիկ մը կ'ըլլամ ես անոր: Խելքէ
դուրս հարուստ կնոջ մը ամուսինն ըլլալ, ան-
իմ ճակատագիրս, կարծուածին չափ դիւրին բան
չէ: Պէտք է հարուստ ըլլալը գիտնալ, և ես
պիտի ունենամ այս տաղանդը: Փորձով ցոյց
տուի արդէն. դրամ փոխեցի... և եթէ մայրս
չկեցնէ՛ր... Սակայն պատրաստ եմ նորէն
սկսելու...: Ա՛հ, որքան երջանիկ պիտի ըլլայ
ան ինձի հետ: Դիւթական իշխանուհիի մը
կեանքը վարել կուտամ անոր...: Ի՛ր պերճան-
քին մէջ իր ամուսինն ճաշակը, արուեստը,
գիտութիւնը պիտի զգայ...: Կեանքս պիտի
անցնեմ զայն պաճուճելու, փողփողելու, պճնելու
յաղթական պտտցնելու համար աշխարհի մէջ:
Պիտի ուսումնասիրեմ իր գեղեցկութիւնը, որպէս-
զի իրեն վայելուչ չըջանակի մէջ ընդելուզեմ զայն
ու ինքն իրեն ըսէ...: «Եթէ չըլլար ան, ես
նուազ գեղանի կ'ըլլայի...» (Իրայն պիտի չսի-
րեմ զինքը, այլ նաեւ պիտի զուարճացնեմ...):
Դրամին փոխարէն պիտի ունենայ թէ՛ սէր և
թէ՛ հաճո՛յք...: Օ՛ն, Ժան, բարի աշխոյժ մը
ունեցիր և այսօր զիս տար աիկին Սքօթին:

— Չեզ կը վստահեցնեմ որ չեմ կրնար:

— Լաւ, տասը յօրէն միայն, բայց կանխաւ
կ'իմացնեմ քեզի, այն ատեն Լօնկվալի մէջ կը

տեղաւորուիմ ու ա՛լ տեղէս չեմ շարժիր: Նախ, մօրս հաճելի պիտի ըլլայ այս բանը: Դեռ քիչ մը զայրացած է Ամերիկուէիներուն դէմ. կ'ըսէ թէ այնպէս կարգի պիտի դնէ որ չտեսնուի հետերնին, սակայն ես կը ճանչնամ մայրս: Այն օրը որ իրիկուն մը ներս մտնելուս ըսեմ իրեն. «Մայրիկ, փոքրիկ սիրազեղ աղջկան մը սիրտը շահեցայ, որ քսան միլիոնի դրամագլխով և երկու կամ երեք միլիոնի եկամուտով կը տառապի...» կը չափազանցեն, երբ հարիւրաւոր միլիոններու կը հանեն. ճիշդ գումարը ըսածս է, և ասիկա կը բաւէ ինծի...: Աս ըսած իրիկունս՝ մայրս պիտի հրճուի... Իրօք, ի՞նչ կը ցանկայ ինծի համար. ի՞նչ որ ամէն բարի մայր կը ցանկայ զաւակներուն համար, մանաւանդ երբ այդ զաւակները յիմարութիւններ ըրած են... հարուստ ամուսնութիւն մը կամ զգոյշ ու պաշտօն կապակցութիւն մը ամուսնացեալ տիկինի մը հետ: Երկու կերպերն ալ կը գտնեմ Լօնկվալի մէջ, և ես մտադրւիմ կը յարմարիմ մէկին կամ միւսին: Միայն թէ, տասը օրէն, ինծի զեկուցանելու բարեհաճութիւնը ունենաս...: Պէտք է իմացնես ինծի թէ երկուքէն ո՛րը ինծի կը թողուս. տիկին Աքօթը թէ օրիորդ Բէրսիվալը...:

— Ինչի՞ս ես: Չե՛մ մտածեր և չպիտի մտածեմ այդ մասին...:

— Մտիկ ըրէ՛, Ժան, դու իմաստութիւնն ու բանաւորութիւնն իսկ ես, կ'ընդունիմ, ի՛նչ որ

ալ ըսես և ընես...: Մտիկ ըրէ՛, և լաւ յիշէ՛ ըսածս. Ժան դուն պիտի սիրահարուիս այդ տանը մէջ:

— Չեմ կարծեր, պատասխանեց Ժան, խընդալով:

— Իսկ ես, ապահով եմ...: Յոսուութիւն. կը թողում որ գործերովդ զբաղիս:

Ժան այն առտու քնորովին անկեղծ էր: Առաջին գիշերը խիստ լաւ քնացած էր: Իր երկօրոց տեսակցութիւնը երկու քոյրերուն հետ՝ կարծես հմայքով մը փարատած էր այն թեթեւ վրդովումը, որ իր սիրտը յուզած էր իր առաջին տեսակցութենէն յետոյ: Կը պատրաստուէր զանոնք վերստին տեսնելու մեծ հաճոյքով ու մեծ հանդարտութեամբ: Այդ տան մէջ խիստ շատ դրամ կար, որպէս զի իրեն նման ողորմելիի մը սէրը կարենար հօն իրեն տեղ գտնել պարկեշտօրէն:

Բարեկամութիւնը ուրիշ բան էր: Բոլոր սըրտովը կը մաղթէր և բոլոր գօրութեամբը պիտի փորձէր իտաղազ հաստատուիլ այդ երկու կիներու յարգանքին ու աղապատանքին մէջ: Պիտի ջանար որ Սիւզիին և Պէթինային գեղեցկութիւնը շատ աչքի չզարնէ, պիտի ջանար որ իր խելքը չկորսնցնէ, ինչպէս եղած էր նախօրոք օրը, ակնկառոյց այն չորս փոքրիկ ստքերուն՝ որոնք պարտէզին կուսաններուն վրայ հանգչած էին: Երկու քոյրերը օրը

տաբաց ու սրտագին, ըսեր էին իրեն. «Մեր բարեկամը պիտի ըլլաք» Ահա՛ միայն ինչ որ կը փափաքէր. անոնց բարեկամ ըլլալ, եւ պիտի ըլլար:

Հետեւեալ տասը օրուան միջոցին, ամէն բան միաբանեցաւ այդ ձեռնարկին յաջողութեան համար: Սիւզի, Պէթինա, արքան և ժան միեւնոյն կեանքով ապրեցան, սերտ ու անկասկած մտերմութեան մէջ: Երկու քոյրերը երէցին հետ առաւօտուն երկար պտոյտներ կ'ընէին կառքով, ու կէս օրէն ետքը, ժանին հետ, երկար պտոյտներ՝ ձիով:

Ժան ա՛լ չէր ջանար իր զգացումները վերլուծելու. ա՛լ չէր հարցնէր ինքնիրեն թէ անքան պիտի հակէր թէ ձախին: Այս երկու կիներուն հանդէպ հաւասար անձնուիրութիւն մը, հաւասար ազգայատանք մը կը զգար իր մէջ: Կատարելագէտ երջանիկ, կատարելագէտ անդորր էր: Որքան սիրահարուած չէր, որովհետեւ սէրն ու անդորրութիւնը քիչ անգամ իրարու հետ կը գտնուին միեւնոյն սրտին մէջ:

Սակայն ժան քիչ մը մտահոգութեամբ և տխրութեամբ կը տեսնէր որ կը մտեանայ այն օրը, երբ թիւաներները, Նօսթօնները և բոլոր ամերիկեան գաղութին ծիփանքը պիտի բերէր Լօնկվալ նեաէր: Ծառ շուտ եկաւ հասաւ:

Յունիս 24 ուրբաթ օրը ժամը չորսին, ժան գրեական դնաց: Պէթինա շատ ցաւազին զէմքով ընդունեց զայն:

— Ինչ գէշ հանդիպեցաւ, քոյրս հիւանդ է: Բան մը չէ, փոքրիկ անգար մը, վաղը բան մը չի մնար: Բայց խնդիրը սա է որ չեմ համարձակիր ձեզի հետ մինակ երթալ պտտիլ: Հո՛ն Ամերիկայի մէջ, կը համարձակէի. իսկ հոս, ո՛չ անանկ չէ՛:

— Անշուշտ ո՛չ, պատասխանեց ժան:

— Պարտաւորուած եմ ետ դարձնել ձեզ, ու ասիկա շատ ցաւ կը պատճառէ ինձի:

— Ինձի ալ մեծ ցաւ կը պատճառէ, ձգել երթալ և կորսնցնել այս վերջին օրը զոր կը յուսայի ձեզի հետ անձնուիրութիւն: Սակայն, որովհետեւ հարկ է...: Էլ ար յուզում ձեր քրոջը վրայ տեղեկութիւն անուրու:

— Ինքը անձամբ յուր կուտայ ձեզի: Կը կրկնեմ, շատ ոչինչ բան է: Բայց այսպէս չուտով մի՛ փախչիք, կ'ազատեմ: Կը հաճի՞ք ինձի շնորհել փոքրիկ քառորդի մը տեսակցութիւն: Սօսերիք ունիմ ձեզի: Հոս նստեցէք... և յետոյ զիս լաւ մտիկ ըրէք: Քոյրս ու ես դիտաւորութիւն ունէինք ձեզ պայտարելու, այս իրիկուն, ճաշէն ետքը. սրահին մէկ փոքր անկիւնը, և այն ատեն քոյրս ձեզի խօսք պիտի բանար. ա՛ն պիտի ըսէր ձեզի ի՛նչ որ ես պիտի փորձեմ ըսել հիմա, մեր երկուքնուս կողմէն: Բայց քիչ մը յուշուած եմ...: Մի՛ ծիծաղիք. շատ լուրջ բան է: Երկուքնիս ալ կ'ուզենք շնորհակալ ըլլալ ձեզի, մեր հոս գալէն ի վեր՝ այսքան հաճելի, այսքան

բարի, այսքան անձնուէր ըլլալնուդ համար...:

— Ո՛հ, օրիորդ, կ'աղաչեմ, ինծի անկ է...:

— Ո՛հ, մի ընդհատէք խօսքս... պիտի շփոթեցնէք զիս... Չեմ կրնար մէջէն ելլել...: Սակայն կը պնդեմ որ, մեզի անկ է շնորհակալ ըլլալ, և ո՛չ ձեզի Մենք հոս եկանք իբր երկու օտարուհիներ: Ամիջապէս բարեկամներ գտնելու հրճուանքն ունեցանք... այո՛, բարեկամներ: Գուք մեր ձեռքէն քանցիք... մեր վարձակալներուն, մեր պահապաններուն տարիք, մինչդեռ ձեր կնքածայրը մեզ իր ազգատներուն կը տանէր... ամէն տեղ այնքան կը սիրէին ձեզ որ իսկոյն, ձեր յանձնարարութեան վստահելով, սկսան մեզ ալ սիրել քիչ մը...: Գիտէ՞ք, այս երկրին մէջ կը պաշտեն ձեզ:

— Այս երկրին մէջ ծնած եմ...: Բոլոր այս բարի մարդիկը կը ճանչնան զիս՝ տղայութենէս ի վեր, և երախտագէտ են ինծի, պապուս և հօրս՝ իրենց ըրածներուն համար: Եւ յետոյ... ես ալ իրենց զարմէն եմ, զի զաջիներուն զարմէն: Իմ մեծ պապս հողագործ էր Պառժըբուռի մէջ, ասկէ երկու փարսախս անդին գիւղ մը:

— Ահո՞ս, շատ հպարտ կ'երևաք այդ բանին համար:

— Ո՛չ հպարտ, ո՛չ նուստ:

— Ներում կը խնդրեմ... հպարտութեան փոքրիկ շարժում մը ունեցաք: Աւա՛ղ, ես ալ

ձեզի կը պատասխանեմ որ մօրս կողմէն իմ մեծ պապս ալ ազարակի վարձակալ էր Պոքթանեի մէջ: Անցած դարուն վերջերը Գանատա ելաւ գնաց, երբ տակաւին Ֆրանսական էր Գանատա...: Ե՛տ կը սիրէք ձեր ծննդավայր երկրը:

— Ե՛տ: Թերեւս քիչ ատենէն ձգելու պիտի հարկադրուիմ:

— Ինչո՞ւ:

— Երբ պաշտօնիս մէջ առաջ երթամ, զիս ուրիշ գունդի մէջ կը զրկեն, և այսպէս տեղէ տեղ պիտի պտտիմ...: Բայց սա ստոյգ է որ երբ ձեր հազարապետ մը բլլամ կամ ձեր գնդապետ մը պաշտօնէ քաշուած, այն ատեն պիտի գամ ապրիլ և մեռնիլ հոս, հօրս փոքրիկ տանը մէջ:

— Միշտ առանձին:

— Ինչո՞ւ առանձին...: Կը յուսամ թէ ոչ...:

— Ամուսնանալու դիտաւորութիւն ունիք:

— Այո՛, անտարակոյս:

— Ամուսնանալու հետամուտ էք...:

— Ո՛չ...: Մարդ կրնայ ամուսնանալու դիտաւորութիւն ունենալ, բայց պէտք չէ որ ամուսնանալու հետամուտ ըլլայ:

— Կան սակայն մարդիկ, որոնք ամուսնանալու հետամուտ կ'ըլլան...: Օ՛ն, կ'երաշխաւորեմ որ այնպէս է... և նոյն իսկ դուք, անա՛ ձեզ ամուսնացնել ուզեցին:

- Ի՛նչէն գիտէք:
- Ա՛հ, ես խի՛ստ լաւ գիտեմ ձեր բոլոր մանր գործերը...: Դուք, ինչպէս կ'ըսեն, աղէկ կտոր մըն էք... ու կը կրկնեմ, ձեզ ամուսնացնել ուզեցին:
- Ո՛վ ըսաւ ձեզի:
- Տէր երէցը:
- Կնքահայրս յանցաւոր է, ըսաւ ժան ուժ-գնօրէն:
- Ո՛չ, ո՛չ, յանցաւոր չէ: Եթէ յանցաւոր մը կայ՝ ես եմ, յանցաւոր՝ բարեմտութեամբ, և ոչ հետաքրքրութեամբ. կ'երդնում ձեզի: Հասկցայ որ ձեր կնքահայրը ոչ մէկ ատեն այնքան երջանիկ է որքան ձեր վրայ խօսած ատեն. ուստի ես ալ առաւօտուն երբ մինակ կը մնամ անոր հետ, մեր շրջադայութեանց ատեն, իրեն հաճոյք պատճառելու համար՝ ձեր վրայ կը խօսիմ, ու ինքն ալ ձեր պատմութիւնը կ'ընէ ինծի: Շատ լաւ վիճակ ունիք եղեր, շատ հանգիստ կ'ապրիք...: Ամիսը երկու հարիւր տասներեք ֆրանք կ'առնէք քառավարութենէն... և սաչափ ալ սանթիմ: Ճշդիւ այսպէ՛ս է:
- Այո՛, ըսաւ ժան, որոշելով ա՛յլ ևս մտազիւր լսել երէցին թուրքերանութիւնները:
- Ութը հազար ֆրանք եկամուտ ունիք:
- Գրեթէ, ո՛չ բոլորովին:
- Աւելցուցէք ասոր վրայ ձեր տունը, որ գրետուն հազար ֆրանք մը կ'արժէ: Վերջապէս,

- շատ աղէկ վիճակի մէջ էք, և արդէն ձեր ձեռքը խնդրեցին:
- Ձեռքս խնդրեցին...: Ո՛չ, ո՛չ:
- Իրա՛ւ, իրա՛ւ: Երկու անգամ... և դուք մերժեցիք երկու փառաւոր ամուսնութիւն, կամ եթէ կը նախընտրէք ըսել, երկու փառաւոր օտիտ: Ո՛րչափ մարդիկ կան որոնց համար այս երկուքը միեւնոյն բանն է: Երկու հազար ֆրանք մէկ կողմէն, երեք հարիւր հազար միւս կողմէն: Կ'երեւայ թէ մեծ գումար է այս երկրին համար. արդ՛ դուք մերժեցիք: Ըսէք ինչո՞ւ մերժեցիք: Եթէ գիտնայիք ո՛րքան հետաքրքիր եմ իմանալու...:
- Յա՛յտնի է. միշտ այսպէս կ'ըսուի:
- Իայց հազիւ կը ճանչնայի: Ստիպեցին զիս երկուք կամ երեք երեկոյթ անցնելու անոնց հետ, անցեալ ձմեռ:
- Յետո՛յ:
- Յետոյ չեմ գիտեր, ինչպէս բացատրեմ ձեզի, չփոթութիւն, սրտի թունդ, մտատանջութիւն, վրդովում...:
- Մէկ խօսքով, սիրոյ թեթեւ կասկած մը չունեցա՞ք, ըսաւ Պէթինա անվրդով:
- Չէ՛, և ո՛չ մէկ... և խելացութիւն ըրի որ իմ ամուրիի պզտիկ խորիւ մէջ մտայ դարձեալ, որովհետեւ կը մտածեմ որ աւելի լաւ է չամուսնանալ քան թէ ամուսնանալ առանց սիրոյ: Ահա՛ իմ կարծիքս:

— Իմ կարծիքս ալ առ է :

Պէթինա կը նայէր ժանին, ու այս վերջինն ալ Պէթինային: Եւ ահա՛ յանկարծ, զարմացած մնացին երկուքն ալ, բան մը չգտան որ իրարու ըսէին, բնաւ բան մը չգտան:

Բարեբախտաբար, այս միջոցին, Հարրի և Պէլլա սրահէն ներս խուժեցին ու բախութեան բարձր աղաղակներով:

— Պարո՛ն ժան, պարո՛ն ժան, հոտ էք պարո՛ն ժան: Եկէ՛ք տեսէ՛ք մեր ձիերը:

— Ա՛հ, ըսաւ Պէթինա, քիչ մը անորոշ ձայնով, ինվարտը պահ մը առաջ եկաւ Բարիզէն և տղոց համար մանրազիտական ձիեր բերաւ: Երթանք տեսնենք, կը հաճի՞ք:

Գացին ձիերը տեսնելու որոնք ստուգիւ վեց-մատիկներու թագաւորին ախոռներուն մէջ զըր-ուելու արժանի էին:

Ը.

Երեք շաբաթներ անցան: Ժան հետեւեալ օրը իր զօրագունդին հետ պիտի երթար հրավարժութեան մարզարանները. իր զինուորի կեանքով պիտի ապրէր, տասը օր ճամբաներուն վրայ յառաջանալ ու դառնալ տասը իջեւան, տասն օր ալ վրանին տակ, Սէռքօթի բանակը, Օրլէանի անտառին մէջ: Օգոստոս 10ին, զօրագունդը նորէն Սուվինի պիտի դառնար:

Ժան այլեւս հանդարտ չէ: Ժան այլեւս երջանիկ չէ: Անհամբերութեամբ և միանգամայն վախով ու դողով կը տեսնէ որ կը մօտենայ մեկնելու վայրկեանը...: Անհամբերութեամբ, քանի որ իբրեւ մարտիրոս կը չարչարուի. ան կը փութայ ազատիլ այս չարչարանքներէն...: Վախով դողով, քանի որ այս քսան օրուան մէջ առանց զայն տեսնելու, առանց անոր հետ խօսելու, վերջապէս առանց անոր, ի՛նչպէս պիտի ըլլար ինք: Այդ անձը Պէթինա՛ն էր. կը պաշտէր զայն:

Երբէ՞ն ի վեր: Առաջին օրէն ի վեր, այն հանդիպումէ՛ն ի վեր, մայիս ամսուն, երէցին պարտէզին մէջ: Ահա՛ ճշմարտութիւնը: Բայց ժան կը մարտնչի ու կը մաքաւի այս ճշմարտութեան դէմ: Կը կարծէ թէ Պէթինան անցն օրէն ի վեր միայն կը սիրէ, ուր երկուքնին զուարթօրէն, բարեկամաբար խօսակցեր էին փոքր սրահին մէջ: Կապոյտ բազմոցին վրայ նստած էր ան, պատուհանին մօտ, ու խօսելով ճլրւելալով, մէկ կողմէն ալ, Պէլլային պէպէքին՝ ճաթոնցի իշխանուհիին քրքրած արդուզարդը շտկելով կը զրօսնուր, որ թիկնաթոռի մը վրայ ձգուած էր, և զոր Պիթինա մեքենաբար վեր առած էր:

Ինչո՞ւ օրիորդ Բէրսիվալին խելքին փչեց խօսիլ իրե նհետ այն երկու աղջիկներուն վրայ, որոնց հետ պիտի կարենար ամուսնանալ: Իրաւ

է որ, այս հարցումը զինքը չէր կապկպեր: Պատասխանած էր որ ամուսնութեան համար բնաւ տրամադրութիւն չէր ունեցած այն ատեն, վասն զի այդ երկու աղջիկները բնաւ վերդովում, բնաւ յուզում չէին պատճառած իրեն: Այսպէս բռնով կը ժպտէր. բայց քանի մը վայրկեան յետոյ ա՛լ չէր ժպտեր: Այդ սրտի վրդովունեքը, այդ յուզումները յանկարծ կը սկսէր իմանալ: Ժան խաբեց ինքզինքը. վերջին խորութիւնը չափեց. սրտին մէջտեղէն զարնուած էր:

Սակայն Ժան ինքզինքը չձգեց: Այն օրէն իսկ, գացած ատենը կ'ըսէր ինքնիրեն. «Այո՛, ծանր է վիճակս, շատ ծանր է, սակայն պիտի ազատիմ:» Ըրած խենթութեանը բարուրանք կը փնտռէր. պարագաներուն յանցանք կը զրտնէր: Այդ գրգանոյչ աղջիկը, տասն օրէ ի վեր, շատ իսկ եղած էր իրեն, շատ իսկ իրեն միայն: Ինչպէս դիմանար այդ փորձութեան: Արեւցած էր անոր զմայլելի, անոր շնորհալի գեղեցկութեամբը: Բայց հետեւեալ օրը, քսան անձեր պիտի գային դղեակ, և վախճանը պիտի ըլլար այս վտանգաւոր մտերմութեան: Քաջութիւն պիտի ունենար, մէկ կողմ պիտի քաշուէր, ու բազմութեան մէջ պիտի տեսնէր Պէթինան... Չէր կրնար մտքէն անցնել որ քնա՛ւ չտեսնէ: Կ'ուզէր Պէթինային բարեկամը մնալ, որովհետեւ բարեկամը միայն կրնար ըլլալ: Կար ուրիշ մը տածում մըն ալ որ և ոչ իսկ մուտ գտեր էր

Ժանին մտքին մէջ. այս մտածումը ոչ թէ այս լանդակ կ'երեւար իրեն, այլ անհեթեթ: Աշխարհի մէջ Ժանէն աւելի պարկեշտ մարդ չի կար, և Պէթինայի հարստութիւնը սոսկում կ'ազդէր անոր, իրաւցնէ սուկում:

Ստուգիւ, բազմութիւնը, յունիս 25էն ի վեր, Լօնկվալը դրաւեր էր: Տիկին Նօթօն իր զաւկին Տանիէլ Նօթօնի հետ եկեր էր, և տիկին Թիւռնէր իր զաւկին Ֆիլիբ Թիւռնէրի հետ. այս երկու երիտասարդները, Տանիէլ և Ֆիլիբ, երեսունըչորսերու համբաւաւոր ընկերութեանէն էին: Վաղեմի բարեկամներ էին. Պէթինա իբր այնպիսիներու վարուեր էր անոնց հետ, և կատարեալ անկեղծութեամբ յայտնած էր անոնց որ պարապ տեղը ժամանակին կը կորսնցնէին. սակայն անոնք չէին վհատեր, և Պէթինային շուրջը բազմափոյթ ու բազմաջան փոքր դարպասի մը կեդրոնը եղած էին:

Բօլ տը Լավառտանս մուտ գործելով ընկերութեան մէջ, շուտով ամենուն բարեկամը եղած էր: Զուարճութեան հետամուտ երիտասարդի մը փայլուն և խառնափնթոր դաստիարակութիւնն առած էր. երբ զօսանքի վրայ դառնար խնդիրը, ձի, քրիքէթ, լօն-թէնիս, բօլօ, պար, բառեզմուած և կատակերգութիւն, ամենուն պատրաստ էր, ամենուն մէջ ալ կը յաջողէր: Իր գերազանցութիւնը ակներեւ փայլեցաւ, ամենուն կողմէ ընդունելութիւն գը-

տաւ: Ընդհանուրին հաւանութեամբ, Լօնկվալի հանդէսներուն անօրէնն ու կարգադրիչն եղաւ Բօլ:

Պէթինա վայրկեան մը չվարանեցաւ. Ժան տակաւին իրեն նոր ներկայացուցած էր Բօլ տը Լավառտանսը, և սա ալ հաղիւ աւարտած էր պարտուպատշաճ մեծարանքը, երբ Պէթինա, Միւզիին վրայ ծոկելով՝ ականջն ի վար կ'ըսէր.

— Երեսունհինգերորդը:

Սակայն լաւ ընդունելութիւն ըրաւ Բօլին, և այնքան լաւ ընդունելութիւն, որ ան քանի մը օր խաբուած մնաց: Կարծեց թէ իր անձնական հրապոյրներուն համար էր այս սիրալիբ ու խիստ մտերմական ընդունելութիւնը: Մեծապէս կը սխալէր: Ժան ներկայացուցեր էր զայն. Ժանին բարեկամն էր. Պէթինային աչքին ա՛ս էր իր բոլոր արժանիքը:

Տիկին Սքօթին զղեակը բաց քաղաք էր. մէկ իրիկուան համար հրաւիրուած չէին այդ անձերը, այլ ամէն իրիկուան համար. ու Բօլ, լի եռանդով, ամէն իրիկուն հոն կ'երթար: Իր երազն իրականացած էր: Բարի՛քը կը գտնէր Լօնկվալի մէջ:

Միայն թէ Բօլ ո՛չ անմիտ էր, ո՛չ ծանծաղամիտ: Անտարակոյս, մասնաւոր ուշադրութեան ու հոգածութեան առարկայ եղած էր օրիորդ Բէրսիվալի կողմէն. կ'ախորժէր խօսակցիլ երկարօրէն, խիստ երկարօրէն, իրեն հետ... բայց

ինչ էր այս խօսակցութեանց յաւիտենական, անսպասելի նիւթը. Ժանը, դարձեալ Ժանը, մի՛շտ Ժանը:

Բօլ թեթեւօլիկ էր, զբօսասէր, նանրասէր, բայց շուտով կը խելօքնար, երբ Ժանին վրայ խօսք ըլլար. գիտէր զայն արժեւորել, գիտէր զայն սիրել: Ոչինչ աւելի քաղցր էր, ոչինչ աւելի դիւրին իրեն համար քան իր տղայութեան բարեկամին վրայ ըսել խորհած բոլոր լաւ բաները: Եւ որովհետեւ կը տեսնէր որ Պէթինա մեծ հաճոյք կը զգար զինքը մօտիկ ընելով, Բօլ ամբողջ պերճախօսութիւնը դուրս կը թափէր:

Միայն թէ Բօլ, — և ասիկա իր իրաւունքն էր, — իրիկուն մը ուզեց իր այս վեհանձնութացքին տրիտուրն ունենալ: Քառօրդէ մը ի վեր Պէթինային հետ խօսակցած էր: Խօսակցութիւնն աւարտելէն ետքը, գացած էր Ժանը գտնել, սրահին միւս ծայրը ու ըսած էր անոր.

— Ասպարէզն ինձի թողուցիր... ես ալ անվեհեր, օրիորդ Բէրսիվալին վրայ խոյացայ:

— Ու դժգոհ ըլլալու չես ձեռնարկիդ արդիւնքէն: Ահա՛ աշխարհիս լաւագոյն բարեկամները եղաք:

— Այո՛, անշուշտ... կ'երթայ... կ'երթայ... բայց չերթար: Օրիորդ Բէրսիվալէն աւելի զողարիկ ու աւելի սիրասուն էակ չկայ. բայց իմ աղէկութիւնս է աս ու չեմ ուրանար ես զայն, նայէ՛, խօսքը մէջերնիս, ծիծաղելի ու

անշահ դեր մը խաղցնել կուտայ ինծի, դեր մը որ տարիքիս չի յարմարիր: Ես թեկնածուներու տարիքն ունիմ, ես ուրիշի սիրոյն խորհրդակիցն ըլլալու տարիքը չունիմ:

— Խորհրդակից:

— Այո՛, սիրելիս, խորհրդակից: Ահա՛ իմ պաշտօնս այս տանը մէջ: Պահ մը առաջ մեզի կը նայէիր...: Ո՛հ, աչքերս սրատես են...: Մեզի կը նայէիր...: Է՛՛ գիտե՞ս թէ ինչ բանի վրայ կը խօսէինք: Քու վրադ, սիրելիս, քու վրադ, միայն քու վրադ: Եւ ամէն իրիկուն միեւնոյն բանն է: Հարցումներ որոնց վերջը չի գար. «Մէկտե՞ղ մեծցած էք: Երկուքդ ալ արբայ ֆօնսթանթէնէն՞ դաս առած էք: Քիչ ատենէն հարիւրապետ պիտի ըլլայ: Ե՞տքը: — Հազարապետ: — Յետո՞յ: — Գնդապետ, ևն, ևն...» Ա՛հ, Ժան, բարեկամդ իմ Ժան, եթէ ուզէի՛ր ազուր երազ մը տեսնել...:

Ժան բարկացաւ, զայրացաւ գրեթէ: Բօլ շատ զարմացաւ այս յանկարծական գրգռման վրայ:

— Ի՞նչ ունիս: Կարծեմ թէ բան մը չըսի...:

— Ներում կը խնդրեմ: Յանցաւոր եմ. բայց ինչո՞ւ այդպիսի արտառոց գաղափար մը կ'անցնի մտքէդ...:

— Արտառոց...: Չեմ կարծեր...: Այդ արտառոց գաղափարը ինծի համար ալ ունեցայ:

— Ո՛հ, դուն...:

— Ի՛նչպէս, ա՛հ, ե՞ս...: Եթէ ես ունեցայ,

դուն ալ կրնաս ունենալ...: Դուն ինչ աւելի կ'արժես...:

— Բօլ, կը պաղատի՛մ...:

Ժանին տազնապը ակներեւ էր:

— Ա՛լ չխօսինք ատոր վրայ... ա՛լ չխօսինք...: Վերջապէս՝ սա ըսել կ'ուզէի թէ՛ օրինորդ Բէրսիվալ զիս շատ սիրուն կը գտնէ, շատ սիրուն. այլ եթէ ըսեմ որ լրջօրէն կը դիտէ զիս, երբեք լրջօրէն չպիտի դիտէ այդ պղտիկ մանկունին: Ես ալ տիկին Սքօթին վրայ պիտի իյնամ, առանց մեծ վստահութեան...: Կը տեսնես, Ժան, պիտի զբօսնում այս տանը մէջ, բայց բուն նպատակիս չպիտի հասնիմ:

Բօլ՝ տիկին Սքօթին կողմը դարձաւ. բայց հետեւեալ օրն իսկ, հոն ալ Ժանին բախեցաւ ու զարմացաւ. արդարեւ, Ժան սկսաւ խիստ կանոնաւորապէս տեղ բռնել տիկին Սքօթի մասնաւոր շրջանակին մէջ. ան ալ ճիշդ Պէթինայի նման փոքր դարպասն ունէր: Ժան հոն կը փընտոէր պաշտպանութիւն մը, ապաստան մը, ապաւէն մը:

Այն զարհուրելի խօսակցութեան օրը երբ առանց սիրոյ կնքուած ամուսնութեանց վրայ խօսեցան, Պէթինա ինքն ալ, առաջին անգամ, յանկարծ ինքն իրեն մէջ զգացած էր այն սիրոյ պէտքը որ կը քնանայ, այլ ոչ շատ խորունկ, ամէն նորատի աղջկանց սրտին մէջ: Զգացողութեան ազդումը միեւնոյնը եղած էր

միեւնոյն վայրկեանին, թէ՛ ժանին սրտին և թէ Պէթինային սրտին մէջ: Ընդհակառակը, Պէթինա, իր կատարեալ ամեղուժեամբն ու միամտութեամբ, անձնատուր եղած էր սրտին յուզման ու խանդադատանքին:

Սիրոյ կը սպասէր... միակ սէրն էր ան: Այն մարդը, որ իր մտածումը, իր կեանքը, իր հոգին պիտի ըլլար, ժա՛նն էր միթէ: Ինչո՞ւ չէ: Աւելի լաւ կը ձմնջնար զայն քան բոլոր այն անձերը, որոնք տարիէ մը ի վեր, իր հարստութեան շուրջը դարձեր ու դարձեր էին, և ինչ որ գիտէր անոր նկատմամբ, պարկեշտ աղջկան մը վստահութիւնն ու սէրը չպիտի խաբէր:

Վերջապէս, երկուքն ալ լաւ կ'ընէին, երկուքն ալ պարտականութեան ու ճշմարտութեան ճախրէն կ'ընթանային. Պէթինա անձնատուր ըլլալով, ժան ընդդիմանալով. մանկամարդ աղջիկը վայրկեան մը միտքը չէր բերեր ժանին անշուքութիւնը և չքաւորութիւնը, իսկ ժան կ'ընկրկէր միլիոններու լերան առջեւ, ինչպէս պիտի ընկրկէր ոճիրի մը առջեւ. ան կը խորհէր թէ իրաւունք չունէր սիրոյ հետ վիճելու, իսկ ժան կը մտածէր թէ իրաւունք չունէր պատուոյ հետ վիճելու:

Ահա՛ ասոր համար, Պէթինա կ'անուշնար ու սիրոյ առաջին հրաւէրը լսելով՝ համարձակօրէն կը նուիրուէր. ահա՛ ասոր համար՝ ժան օրէ օր աւելի մեղամաղձոտ ու ալեկոծ կը դառնար:

Միայն սիրելէ չէր վախնար. սիրուելէ ալ կը վախնար:

Պէտք էր որ տունը նստէր, չերթար հոն...: Փորձած էր այդ բանը, բայց չէր յաջողած...: Հրապոյրը շատ զօրաւոր էր ու յաղթող: Ուստի կ'երթար...: Պէթինա զինքը կը դիմաւորէր, ձեռքերը երկնցուցած, ժպիտը շրթունքին վրայ, սիրտն ալ աչքերուն մէջ: Իր բոլոր էութեամբը ըսել կ'ուզէր. «Փորձե՛նք սիրել զիրար, ու եթէ կարենանք. սիրե՛նք»:

Ժան կը վախնար: Պէթինայի երկու ձեռքերը ընդ առաջ կուգային, ժանի երկու ձեռքերուն ճնշումն ընդունելու, բայց երիտասարդը հազիւ թէ կը համարձակէր անոնց դպչելու: Կը ջանար խոյս տալ այն նայուածքէն, որ գողտրիկ ու ժպտուն, անհանգիստ ու հետաքրքիր, իր նայուածքը կը փնտռէր: Կը դողար Պէթինային հետ խօսելու հարկէն, զայն լսելու հարկէն: Այն ատեն ահա՛, ժան կ'ապաստանէր տիկին Սքոթի քով, և այն ատեն ահա տիկին Սքոթ, անորոշ, յուզուած, վրդոված խօսքեր կը լսէր ժանին բերնէն, որոնք իրեն չէին ուղղուած և զոր իր վրայ կ'առնէր:

Սուգի չէր կրնար չսխալիլ: Պէթինա դեռ անոր չէր յայտնած այն տարտամ ու չփոթ զգացումները՝ որոնք շինքը կ'ալեկոծէին: Կը պահէր...: Եր նորածին սիրոյն գաղանիքը, ազահ մը կը պահէ ու կը փայփայէ իր

գանձին առաջին ոսկիները...: Այն օրը ուր իր սիրտը պայծառօրէն տեսնէր, ա՛խ ի՛նչպէս պիտի խօսէր այն օրը, և ո՛րքան երջանիկ պիտի ըլլար, ամէն բան Սիւզիին ըսելով...:

Ի վերջոյ, տիկին Սքօթ իր անձին վերընծայած էր ժանիւն այս մեղամաղձութեան պատճառը, որ օրէ օր աւելի յայտնի կերպարանք մը կ'առնէր: Այս բանը կը փաղաքէր զինքը, — երբեք կնոջ մը անհաճոյ չէ ինքզինքը սիրուած կարծել, — բայց հակառակ փաղաքշուած ըլլալուն՝ ցաւ կը զգար: Մեծ յարգանք, մեծ աղապատանք ունէր ժանիւն հանդէպ, ու կը վըշտանար, մտածելով որ ան տխուր ու թշուառ էր իր պատճառով:

Սիւզի առ ալ գիտէր թէ անմեղ էր ինք: Ուրիշներու հետ երբեմն պչրած էր, շատ պչրած էր: Բան գործ չունէին անոնք, բանի մը օգտակար չէին. իր պչրանքն անոնց համար զբաղում մը կ'ըլլար ու միւսնոյն ատեն ինք ալ կը զուարճանար. այսպէս՝ անոնք ալ ժամանակ կ'անցնէին, ինք ալ...: Բայց երբեք պչրուհի երևոյթ չէր առած ժանիւն հետ: Գիտէր ժանիւն արժանիքն ու գերազանցութիւնը. միւսներէն աւելի կ'արժէր ան. այնպիսի մարդ մըն էր որ իրաւցնէ կը շարչարուէր իր սիրովը, և անա այդ բանն էր որ չէր ուզեր փոխին Սքօթ: Ուստի, երկու երեք անգամ, քիչ մնացած էր որ խօսէր և զգուշացնէր քաղցրութեամբ, աղապատանքով,

բայց սա խորհրդածութիւնը բրած էր...: Ժան պիտի մեկնէր քսան օրուան համար. իր դարձին, եթէ դարձեալ պէտք ըլլար, այն ատեն քիչ մը բարոյական կը քարոզէր անոր և այնպէս կը վարուէր հետը որ սէրը չգայ խենթ խելօք իրենց բարեկամութեան մէջ մասնայ:

Արդ, ժան հետեւեալ օրը մեկնեցաւ...: Պէթինա ամբողջ ուժովը պնդած էր որ այս վերջին օրը գայ Լօնկվալ անցնէ, և իրիկունն ալ դղեակը ճաշէ: Ժան մերժած էր, առարկելով թէ զբաղումներ կ'ունենայ երթալուն առջի օրը: Գիշերը ժամը տասնուկէսին մօտ հասաւ դղեակ. ոտքով եկած էր. քանի քանի անգամներ, ճամբուն վրայ, ետ դառնալու եղած էր:

— Եթէ քաջութիւն ունենայի, կ'ըսէր ինքնիրեն, նորէն չէի տեսներ զայն: Վաղը կ'երթամ ու ա՛լ չեմ դառնար Սուվինի, որքան ատեն որ ան հոն գտնուի...: Այսպէս որոշած եմ ու հաստատապէս որոշած:

Սակայն շարունակեց իր ճամբան. կ'ուզէր նորէն տեսնել զայն... վերջին անգամ ըլլալով:

Սրահէն ներս մտնելուն պէս, Պէթինա դէմը վազեց:

- Եկա՛ք, վերջապէս...: Ո՛րքան ուշ:
- Շատ զբաղած էի:
- Վաղը կ'երթա՛ք:
- Այո՛, վաղը:
- Կանո՛ւիս:

— Առաւօտեան ժամը հինգին :

— Այն ճամբէն պիտի երթա՞ք, որ դարաս-
տանին պատն ի վեր կ'երկարի ու յետոյ գիւղին
մէջէն կ'անցնի :

— Այո՛, ճիշդ այն ճամբէն պիտի երթանք :

— Ինչո՞ւ այդքան կանուխ կ'երթաք : Եթէ
քիչ մը ուշ ըլլար, դարատափին վրայէն կուզայի
ձեզ տեսնել ու երթաք բարով ըսել :

Պէթինա իր ձեռքին մէջ բռնած ու պահած
էր ժանին ձեռքը որ կ'այրէր : Ժան ճիգ մը
ըրաւ ու խըշխշալով ազատեց ձեռքը :

— Պէտք է որ երթամ ձեր քոյրը բարեւեմ,
ըսաւ :

— Մէ՛կ վայրկեանէն... չտեսաւ ձեզ... տա-
սը հոգի կայ շուրջը... : Եկէ՛ք նստեցէ՛ք քիչ
մը, հոս, իմ քովս :

Պարտաւորուեցաւ քովը նստիլ :

— Մենք ալ, ըսաւ Պէթինա, մենք ալ պի-
տի երթանք :

— Դո՞ւք :

— Այո՛, ժամ մը կայ, քեռայրէս հեռագիր մը
ստացանք որ մեզի շատ ուրախութիւն պատճա-
ռեց : Ամիսէ մը պիտի դար, տասներկու օրէն կու-
զայ. վաղը չէ միւս առաւօտ նիւ-Յօրքէն կը նստի
Լապուսօր նաւը... : Հավր պիտի երթանք իրեն
սպասելու... : Վաղը չէ միւս օր պիտի երթանք :
Տղաքն ալ միասին կը տանինք : Անոնց օգտա-
կար պիտի ըլլայ տասն օրի չափ ծովուն եզերքը

անցընել... : Ո՛րքան գոհ պիտի ըլլայ քեռայրս,
երբ ձեզ ճանչնայ : Երբ ձեզ ճանչնա՛յ... : Կը
ճանչնա՛յ արդէն : Մեր բոլոր նամակներուն մէջ
ձեր վրայ խօսեցանք : Ապահով եմ որ շատ լաւ
պիտի յարմարիք իրարու : Պատուական անձ մըն
է... : Ո՛րքան ատեն պիտի մնաք հոն :

— Քսան օր :

— Քսան օր... բանակի՞ մը մէջ :

— Այո՛, օրիորդ, Մէռքօթի բանակը :

— Օռլէանի անտառին մէջտեղը : Ձեր կըն-
քահօր բացատրել տուի այս առաւօտ : Մտուգիւ
երջանիկ եմ քեռայրս դիմաւորելու երթալուս
համար, բայց միւսնոյն ատեն կը ցաւիմ մեկնե-
լուս. ապա թէ ոչ, ամէն առաւօտ փոքրիկ այ-
ցելութիւն մը կուտայի ձեր կնքահօրը... : Ձեր
վրայ լուր կ'առնէի իրմէ : Կուզէ՞ք տասը օրէն
քրոջս փոքրիկ նամակ մը գրել չորս տողով,
— շատ ժամանակի կորուստ մը չըլլար ձեզի, —
իմացնելու համար թէ ի՛նչպէս էք և թէ մեզ չէք
մոռնար :

— Ո՛հ, ձեզ մոռնալ... ձեր խնամքներուն,
ձեր բարութեան յիշատակը կորսնցնել... եր-
բե՛ք, օրիորդ, երբե՛ք :

Ձայնը կը դողդոջէր : Վախցաւ իր յուզումէն :
Ոտքի ելաւ... :

— Օրիորդ, հարկ է որ երթամ ձեր քոյրը
բարեւեմ... : Ինծի կը նայի... : Ձարմացած ըլ-
լալու է... :

Սրահին մէկ կողմէն միւսը անցաւ: Պէթինա ետեւէն կը նայէր: Տիկին Նոթթօն դաշնակին առջև տեղաւորուեցաւ, քիչ մը պարել տալու համար երիտասարդները: Բօլ տը Լավառտանս մօտեցաւ օրիորդ Բէրսիվալին ու ըսաւ.

— Կ'ուզէ՞ք զիս պատուել, օրիորդ...:

— Տէր Աստուած, պատասխանեց, կարծեմ թէ հիմա պարոն ժանին խոստացայ:

— Վերջապէս, եթէ ան չըլլայ... ես կ'ըլլամ:

— Շատ լաւ:

Պէթինա դէպի ժանը ուղղուեցաւ, որ փոկին Սքօթին քով եկած նստած էր:

— Մեծկակ սուտ մը չինեցի, ըսաւ, Պ. տը Լավառտանս պարի հրաւիրեց զիս, ես ալ պատասխանեցի թէ ձեզի խոստացեր էի այս վաւսը...: Այո՛, կը հաճիք այնպէս չէ՛:

Իր բազուկներուն մէջ բռնել, անոր մազերուն բո՛յրը շնչել, ...: Ժան ու ժաթափ կը զգարին քզիները...: Չհամարձակեցաւ ընդունիլ:

— Կը ցաւիմ, օրիորդ: Չեմ կրնար... անս հանդիսս եմ այս իրիկունս: Հոս եկայ, որպէս զի չմեկնիմ առանց հրամեշտի ողջոյնս տալու ձեզի, բայց չեմ կրնար պարել:

Տիկին Նոթթօն վախին գեղօնը կը սկսէր զարնել:

— Է՛յ, լաւ, ըսաւ Բօլ մօտենալով զուարթադէմ, ի՛նքն է, օրիորդ, թէ ես:

— Դո՛ւք, ըսաւ տխրութեամբ, առանց աչքերը ժանին երեսէն վար առնելու:

Պէթինա շատ վրդոված էր և պատասխան տուաւ, առանց լաւ գիտնալու թէ ի՛նչ կ'ըսէր: Անմիջապէս զղջաց ընդունած ըլլալուն համար: Կ'ուզէր հոն նստիլ, անոր մօտ...: Բայց շատ ուշ էր: Բօլ ձեռքէն բռնեց և քաշելով տարաւ: Ժան ոտքի ելած էր: Երկուքին կը նայէր: Ամպ մը անցաւ աչքերուն առջևէն: Անողորձաբար կը չարչարուէր:

— Բան մը միայն ունիմ ընելիք, կ'ըսէր ինքնիրեն, այս վախէն օգուտ քաղել ու մեկնիլ...: Վազն առաւօտ, քանի մը տող կը գրեմ տիկին Սքօթին, ներում խնդրելու համար:

Սրահին դուռը հասաւ...: Ա՛լ չէր նայեր Պէթինային...: Եթէ նայած ըլլար, կը մնար:

Սակայն Պէթինա կը նայէր իրեն, և յանկարծ ըսաւ Բօլին.

— Շատ շնորհակալ եմ, պարոն, բայց քիչ մը յոգնած եմ...: Կանգ առնենք, կ'աղաչեմ...: Կը ներէք ինձի այնպէս չէ՞:

Բօլ թեւը երկնցուց:

— Ո՛չ, շնորհակալ եմ, ըսաւ:

Դուռը այդ միջոցին գոցուեցաւ: Ժան ա՛լ հոն չէր: Պէթինա վազելով սրահէն անցաւ գնաց: Բօլ մնաց առանձին, խիստ զարմացած, չհասկնալով ըսաւ թէ ի՛նչ կը դառնար:

Ժան արդէն սանդուխին գլուխն էր, երբ լսեց թէ զինքը կը կանչեն:

— Պարոն ժա՛ն, պարոն ժա՛ն:
 Կանգ առաւ ու ետին դարձաւ: Պէթինան
 քովն էր:
 — Կը մեկնի՞ք... առանց ինծի մնաս բարով
 մը ըսելո՛ւ:
 — Ներում կը խնդրեմ, շատ յոգնած եմ:
 — Եթէ յոգնած էք, այսպէս ոտքով մի՛ եր-
 թաք: Օդը սպառնալից է:
 Ձեռքը դուրս երկնցուց:
 — Տեսէ՛ք, կ'անձրեւէ արդէն:
 — Ո՛հ, հազիւ:
 — Եկէ՛ք գաւաթ մը թէյ առէք փոքր սրա-
 հին մէջ, միայնակ ինծի հետ, ու յետոյ կառքով
 կը զրկեմ ձեզ:
 Ու, ծառաներէն մէկուն դառնալով.
 — Ըսէ՛ք որ քուբէ մը լծեն շուտով:
 — Ոչ, օրիորդ, կ'աղաչեմ: Օդ առնելը աղէկ
 պիտի գայ ինծի... քալելու պէտք ունիմ...:
 Թողէ՛ք որ երթամ:
 — Գացէ՛ք ուրեմն...: Բայց կրկնոց չու-
 նիք...: Յիսի մը առէք, պատսպարուելու հա-
 մար:
 — Ես չեմ մսիր... մինչդեռ դուք... այդ
 բաց չըջազգեստով...: Ես երթամ, որպէս զի
 դուք ալ ներս մտնէք:
 Առանց իսկ ձեռքը երկնցնելու, խոյս տուաւ և
 սանդուխին աստիճաններէն վար իջաւ արագօրէն:
 — Եթէ ձեռքին դաչիմ, կ'ըսէր ինքն իրեն,

բանս բուրդ է, գաղտնիքս երեւան կ'ելլէ:
 Գաղտնի՛քը: Չեր գիտեր թէ Պէթինա իր
 սրտին մէջ կը կարդար որպէս բաց գրքի մը
 մէջ:
 Երբ ժոն սանդուխին ստորոտը հասաւ,
 վայրկեան մը վարանեցաւ:
 Սա խօսքն իր շրթունքին վրայ էր.
 «Կը սիրե՛մ ձեզ, կը պաշտեմ ձե՛զ: Ահա ա՛սոր
 համար է սր ա՛լ ձեզ տեսնել չե՛մ ուզեր:»
 Բայց, այս խօսքը չարտասանեց ու հեռացաւ,
 ընդհուպ գիշերուան մութին մէջ անյայտանա-
 լով...: Պէթինա հոն մնաց, սանդուխին գլու-
 խը, դրան լուսափայլ շրջանակին մէջ: Անձրեւի
 խոշոր կաթիլներ՝ հովէն՝ մղուած՝ կուգային
 գարնել իր մերկ ուսերուն ու կը դողացնէն
 զայն. բանի տեղ չէր գներ. իր սրտին տրոփու-
 նը կը լսէր որոշ կերպով:
 — Գիտէի որ ան կը սիրէր զիս, կ'ըսէ, իւ-
 րովի, իսկ հիմա ստուգիւ գիտեմ որ ես ալ...
 ո՛հ, այո՛... ես ալ...:
 Յանկարծ դրան խոշոր հայելիներէն մէ-
 կուն մէջ, երկու ծառաներուն ցոլքը կը տեսնէ,
 որով անշարժ, ոտքի վրայ կը կենան, ներքնա-
 բակին կաղնիէ սեղանին քով: Պէթինա քանի
 մը քայլ կ'առնէ դէպի սրահը...: Խնդալու ձայ-
 ներ կը լսէ ու վալսն է որ կը շարունակէ: Կանդ
 կ'առնէ: Մինակ ըլլալ կ'ուզէ, միս մինակ, և ծա-
 ռաներէն մէկուն ուղղելով խօսքը.
 Աբբայ Քօնսրանքին 12

— Գացէ՛ք տիկինին ըսէ՛ք որ յողնած էի, սենեակս ելայ:

Իր սպասուհին Աննի կը մրափէր թիկնաթոռի մը մէջ: Կը ճամբէ զայն...: Ինքն իրեն պիտի հանուի: Բազմոցի մը վրայ կ'իյնայ: Սրտաբեկութիւն մը կը զգայ, սրտաբեկութիւն մը գըրգալի:

Սենեակին դուռը կը բացուի: Տիկին Սքոթն է.

— Տկա՛րէք, Պէթինա:

— Ա՛հ, Սիւզի, դո՛ւք էք, Սիւզիդ իմ: Ի՛նչ աղէկ խելք ըրիք սենեակս գալով...: Նստեցէ՛ք ըովս, ըովիկս նստեցէք:

Տղու մը պէս քրոջը թեւերուն մէջ կծկուեցաւ, իր հրավառ գլխովը զգուելով Սիւզիին զով ուսերը, յետոյ յանկարծ, հեծկլուք մըն է փրցուց, այնպիսի թառանչներով որ կը խեղդէին, կը մղձկէին զինքը:

— Պէթինա, սիրեցեալդ իմ, ի՞նչ ունիք,

— Ոչի՛նչ, ոչի՛նչ... ջիղերէս է... ուրախութենէս է:

— Ուրախութիւն:

— Այո՛... այո՛... կեցէ՛ք... բայց ձգեցէք որ քիչ մը լամ: Ա՛յնքան աղէկ կուգայ լալը...: Բայց մանաւանդ մի՛ վախնաք... մի՛ վախնաք:

Քրոջը համոյրներուն ներքեւ, Պէթինա կը խաղաղի, կը հանդարտի:

— Լմնցաւ, լմնցաւ, պիտի ըսեմ ձեզի...: Ժանին վրայ պիտի խօսիմ ձեզի հետ:

— Ժա՛ն, Ժա՛ն կը կոչէք զայն:

— Այո՛, Ժան կը կոչեմ...: Չնչմարեցի՞ք, ատենէ մը ի վեր ո՛րքան տխուր էր և ո՛րքան թշուառ կ'երեւար:

— Այո՛, արդարեւ:

— Կուգար... անմիջապէս կ'երթար ձեր քովը կը տեղաւորուէր ու հոն կը մնար, մտադրաղ, լռիկ, այն աստիճան որ շատ օրեր, ինքնիրենս հարցուցի ես ինձի, — ներեցէք որ այսպէս սրտաբաց ամէն բան կ'ըսեմ, սովորութիւնս է, գիտէք, — մտովի հարցուցի թէ արդեօք կը սիրէ՞ր ձեզ, Սիւզիդ իմ: Ա՛յնքան սիրազեղ էք, և ասիկա որքան բնական կ'ըլլար: Ոչ թէ ձեզ այլ ինձի համար էր:

— Ձե՞ք:

— Այո՛: Լաւ մտիկ ըրէք...: Հազիւ կը համարձակէր ինձի նայելու: Խոյս կուտար, կը փախչէր ինէ...: Յայտնապէս կը վախնար ինէ: Բայց ճիշդը ըսելու համար, սոսկալի՞ եմ ես: Ո՛չ, այնպէս չէ՞:

— Ստուգիւ ո՛չ:

— Ա՛հ, ո՛չ թէ ինէ կը վախնար, այլ իմ դրամէս, իմ անուիլի՞ դրամէս: Այս դրամը, որ իրեն կը քաշէ ըրտը միւսները, և այնքան սաստիկ կը հրապուրէ զանոնք, այս դրամը կ'ահաբեկէ և կը յուսահատեցնէ Ժանը...: օրովհետեւ ուրիշներուն պէս չէ ան, որովհետեւ...:

— Սիրեցեալդ իմ, զգոյ՛ կեցէք, կը սխալիք թերեւս...:

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ, չեմ սխալիր: Պահ մը առաջ, սանդուղին վրայ երբ կը մեկնէր, քանի մը խօսք ըսաւ ինծի: Այս խօսքերը փուճ բաներ էին... բայց եթէ տեսնէիք իր վրդովումը, թէեւ ամէն ջանք կ'ընէր ինքզինքը բռնելու համար... Սիւզի՛, Սիւզի՛դ իմ, յանուն ձեր վրայ ունեցած խանդադատանքիս, և Աստուած գիտէ՛ ի՛նչ կաթոգին սիրով կը սիրեմ ձեզ, աւասիկ իմ համոզումս, իմ բացարձակ համոզումս. փոխանակ օրիորդ Բէրսիվալ ըլլալու, եթէ հէք փոքրիկ աղջիկ մը ըլլայի առանց դրամի, պահ մը առաջ ժան ձեռքէս բռնած՝ ինծի ըսած կ'ըլլար թէ կը սիրէ զիս, և եթէ այսպէս խօսած ըլլար ինծի, գիտէք ի՛նչ պիտի պատահանէի իրեն:

— Թէ դուք ալ զինքը կը սիրէք:

— Այո՛, և ահա՛ անոր համար այսքան երջանիկ եմ: Սա անյեղլի գաղափար մըն է մտքիս մէջ թէ պիտի պաշտեմ այն մարդը որ իմ ամուսինս պիտի ըլլայ...: Լա՛ւ ուրեմն, չեմ ըսեր թէ կը պաշտեմ ժանը, ո՛հ, տակաւին ո՛հ... այլ ահա կը սկսի, Սիւզի... և ա՛յնքան անուշ կը սկսի:

— Պէթինա, մտահոգ եմ ձեզ բորբոքած տեսնելով: Լաւ գիտեմ թէ Պ. Ռէյնօ շատ ազապատանք ունի ձեզի համար...:

— Ո՛հ, ա՛տկէ աւելի, ա՛տկէ աւելի:

— Շատ սէ՛ր, եթէ կ'ուզէք: Այո՛, իրաւունք ունիք, լաւ հասկցեր էք...: Կը սիրէ ձեզ... և

միթէ արժանի չէ՞ք, սիրեցեալդ իմ, այն բոլոր սիրոյն որով կը սիրեն ձեզ: Իսկ ժանին գալով, — քենէ ինծի կը պլլկի անտարակոյս, ահա՛, ե՛ս ալ, ժան կը կոչեմ, — լաւ, գիտէ՞ք ի՛նչ կը մտածեմ իր վրայ: Ամիսէ մը ի վեր, շատ անգամ երկուքս ալ առիթ ունեցանք իրարու ըսելու...: Բարձր համարում ունիմ իր վրայ, շատ բարձր...: Այսու հանդերձ, ձեզի յարմար ամուսին է արդեօք:

— Այո՛, եթէ կը սիրեմ:

— Խոհական խօսք մը կը փորձեմ ընել և դուք միշտ կը խօսիք...: Ես, Պէթինա, փորձառութիւն մը ունիմ զոք զուք չէք կրնար ունենալ...: Լաւ հասկցէք զիս...: Բարիդ հասնելնուս պէս, շատ վառվոռն, փայլուն, ազնուական ընկերութեան մը մէջ մտանք...: Դուք արդէն կրնայիք, եթէ ուզէիք, մարքիզուհի կամ իշխանուհի ըլլալ...:

— Այո՛, բայց չուզեցի:

— Բնաւ հոգեբնիդ չէ՞ միթէ, եթէ տիկին Ռէյնօ կոչուիք:

— Ամենեւին, եթէ կը սիրեմ...:

— Ա՛հ, նորէն միեւնոյն բանը:

— Որովհետեւ աս է բուն խնդիրը: Ուրիշ չկայ... և ես ալ իմ կարգիս կ'ուզեմ խոհական ըլլալ: Համակարծիք եմ թէ բոլորովին լուծուած չէ, և թէ կարելի է որ քիչ մը շատ շուտ բըռնկեցայ: Կը տեսնէք թէ ո՛րքան խոհական եմ: Ժան վաղը կը մեկնի: Բոան օրէն միայն

վերստին պիտի տեսնեմ զայն: Այս քսան օրուան միջոցին, ժամանակ պիտի ունենամ ինքզինքս հարցաքննելու, ւղղունձեւ ընելու, վերջապէս, աղէկ մը գիտնալու թէ ի՛նչ կ'անցնի կը դառնայ իմ մէջս: Թողցիկ ձեւեր ունիմ, բայց լուրջ և զգօն եմ...: Կ'ընդունի՞ք որ այսպէս է:

— Այո՛, կ'ընդունիմ:

— Լա՛ւ ուրեմն, սա կ'աղաչեմ ձեզի, ինչպէս պիտի աղաչէի մեր մօրը, եթէ ողջ ըլլար: Եթէ քսան օրէն ըսեմ ձեզի. «Սիւզի, ապահո՛վ եմ որ կը սիրեմ զայն,» կը ներէ՞ք որ ես ինքս առանձին երթամ ու հարցնեմ թէ կ'ուզէ՞ ինձի հետ ամուսնանալ: Դուք ալ այսպէս ըրիք Ռիչարին հետ...: Ըսէ՛ք. Սիւզի, թոյլ պիտի տա՞ք այն ատեն:

— Այո՛, պիտի տամ:

Պէթինա ողջագուրեց քոյրը ու ականջն ի վար սա երեք բառերը փսփսաց.

— Ծնորհակա՛լ եմ, մայրիկ:

— Մայրի՛կ, մայրի՛կ: Այսպէս կը կոչէիք զիս, երբ տղայ էիք, երբ մինակ էինք երկուք-նիս աշխարհի վրայ, երբ ձեզ կը հանուեցնէի իրիկունը, Նիւ-Եօրք, մեր անշուք սենեակին մէջ, երբ ձեզ բազուկներուս մէջ կ'առնէի, երբ պզտիկ անկողինուդ մէջ կը պառկեցնէի, երբ երգեր կ'երգէի՝ ձեզ քնացնելու համար: Եւ այն ատենէն ի վեր, Պէթինա, մէկ բաղձանք միայն ունեցայ աշխարհի վրայ. ձեր երջանկութիւնը:

Ասոր համար կը խնդրեմ ձեռնէ որ լաւ մտածէք: Մի՛ պատասխանէք ինձի... ա՛լ չիօսինք ասոր վրայ: Կ'ուզեմ որ ձեզ թողում հանդարտ, անդորր: Աննին ճամբեր էք քովերնուդ...: Կ'ուզէ՞ք որ, այս իրիկուն դարձեալ, ձեր պզտիկ մայրիկն ըլլամ, ձեզ հանուեցնեմ, պառկեցնեմ, ինչպէս երբեմն:

— Այո՛, կ'ուզեմ:

— Իսկ, երբ պառկիք, կը խոստանա՞ք որ խելօք մնաք:

— Պատկերի նման խելօք:

— Ամէն ջանք պիտի ընէ՞ք որ քնանաք:

— Ամէն ջանք:

— Շէնք չնո՛րք, բանի մը վրայ չմտածելո՞վ:

— Շէնք չնո՛րք, բանի մը վրայ չմտածելով:

— Շա՛տ լաւ:

Տասը վայրկեան յետոյ, Պէթինային գողտրիկ գլուխը անուշիկ կը հանդէ՛ր բանուածքներու և ժանեակներու մէջ: Սիւզի կ'ըսէր իր քրոջ.

— Ես վար կ'երթամ, այս մարդիկը գտնելու որոնք շատ անդրալի են ինձի այս իրիկուն: Սենեակս չմտած, պիտի գամ նայիմ թէ կը զընանա՞ք: Մի՛ խօսիք...: Քնացէ՛ք:

Դուրս ելաւ: Պէթինա առանձին մնաց: Խօսքը բռնեց: Ամէն ճիգ թափեց քնանալու համար: Կիսով չափ յաջողեցաւ: Քնէած, թմրած, անուրջի և իրականութեան միջև վարանոտ մնաց: Խոստացեր էր բանի մը վրայ չմտածել, և սակայն

անոր վրայ կը մտածէր, միշտ անոր, միայն անոր, այլ տարտամ ու խառնաշփոթ: Ո՛րքան ատեն անցաւ այսպէս, կարող պիտի չըլլար ըսել: Յանկարծ, իրեն թուեցաւ թէ կը քալեն սենեակին մէջ. աչքերը կէս մը բացաւ և կարծեց թոյրը տեսնել: Բռնը գլուխը ըսաւ մէկէն.

- Գիտէ՛ք, կը սիրեմ զայն:
- Լուցէ՛ք...: Բնացէ՛ք, քնացէ՛ք:
- Կը քնանամ... կը քնանամ:

Այս անգամ ստուգիւ քնացաւ. սակայն սովորականէն նուազ խորունկ, որովհետեւ առաւօտեան ժամը չորսին ատենները, շառաչիւն մը արթնցոց զինքը ընդոտտ, ինչ որ որ մը առաջ բնաւ չպիտի վերդովէր իր քունը: Անձրեւ կը տեղար, հեղեղանման, և Պէթինայի սենեակին մեծ պատուհաններուն կը զարնուէր:

— Ո՛հ, աս անձրեւը, կ'ըսէր միտքէն, պիտի թրջի՛ ան:

Աս եղաւ իր առաջին մտածումը: Բոպիկ ոտքով սենեակին մէջէն անցաւ ու փեղկ մը բացաւ: Լոյսը ծալած էր, մոխրագոյն պղտոր, թանձր. երկինքը ջուրով լեցուած էր. հովը կը փչէր փոթորկայոյզ և անձրեւը կը պտուտքէր, բուքէն մղուած:

Պէթինա ա՛լ չպառկեցաւ: Կը զգար թէ անկարելին պիտի ըլլայ նորէն քնանալ: Բէնեուար մը առաւ վրան ու պատուհանին առջեւ կեցած, անձրեւին նայեցաւ: Որովհետեւ անպատճառ

պիտի երթար ան, կ'ուզէր որ գոնէ բաց օդով երթար, սև պայծառ արեւ մը լուսազարդէր իր առաջին իջեւանը:

Ամիս մը առաջ, Լօնկվալ եկած ատենը, Պէթինա չէր գիտեր թէ ի՛նչ էր իջեւան մը: Այսօր գիտէր: Զինուորական իջեւան մը երեսունէն քառասուն հազարամեթր արշաւարան մըն է, մէկ ժամու դադարով՝ նախաճաշելու համար: Արբայ Գօնսթանէն իրեն սովբեցուց այդ բանը, առաւօտները աղքատներու տունները պտտած ժամանակնին: Պէթինա հարցումներով կը նեղէր երէցը զինուորական բաներու և մասնաւորապէս թընդանօթաճիգներու սպասարկութեանը վրայ:

Ու՛թը կամ տասը փարօսին՝ այս ողորձն անձրեւին տակ: Խեղճ ժան: Պէթինա կը մտածէր որ Թիւոնէր պատանին, Նօթթօն պատանին, Բօլ տը Լավառտանս շատ հանգիստ պիտի քնանային մինչեւ առաւօտեան ժամը տասը, մինչդեռ ժան այս ջրհեղեղը վրան պիտի ընդունէր:

Բօլ տը Լավառտանս. այս անունը իր մտքին մէջ յիշատակ մը կը զարթուցանէր որ տաժանելի կը թուէր իրեն, սա առաջին իրիկուան վալսին յիշատակը...: Ելլե՛լ պարել, երբ ժանին վիշտը յայտ յանդիման կ'երեւար: Այդ վալսին շրջանը Պէթինայի աչքին իրբեւ ոճիր մը կ'երեւէր. սոսկալի բան էր այս ըրածը:

Միթէ՛ ան չէր որ չկրցաւ ըլլալ քաջ ու սըր-

տարաց, ժանին հետ ունեցած այս վերջին խօսակցութեանը մէջ: Ան չէր կրնար, չէր համարձակեր բան մը ըսել, այլ ինք պէտք էր որ աւելի խանդակաթ ու աւելի սրտազեղ ըլլար: Տխուր և տառապալից էր ան, ուստի երբեք պէտք չէր ներքեր որ հետիոտն երթար: Պէտք է կեցնէր, ի՛նչ որ ալ ըլլար: Պէթինայի երեւակայութիւնը կը գործէր ու կը բորբոքէր: Անշուշտ ժան սա տպաւորութիւնը հետը տարած էր, թէ ինք գէշ արարած մըն է, անսիրտ և անգութ:

Ու կէս ժամէն պիտի մեկնէր, մեկնէր քսան օրուան համար...: Ա՛հ, եթէ կարենա՛ր որ և է միջոցաւ...: Բայց այդ միջոցը կար...: Զօրագունդը դարաստանին պատին երկայնքէն պիտի անցնէր, դարատափին տակէն: Եւ ահա՛ Պէթինա մոլեգին տենչ մը զգաց որ երթայ ժանին անցնիլը տեսնէ: Երբ ժան զինքը հոն տեսնէր, այն ատեն պիտի հասկնար թէ ներում խնդրել եկած էր առջի օրը ըրած անգթութիւններուն համար: Այո՛, պիտի երթար...: Բայց Սիւզիին խոստացած էր որ պատկերի նման խելօք ըլլար, և երբ երթար, պատկերի նման խելօք եղած կ'ըլլա՛ր միթէ: Անմեղադրելի ըլլալու համար բաւ էր որ Սիւզիին խոստովանէր ամէն բան, երբ ներս մտնէր, և Սիւզիին պիտի ներէր:

Պիտի երթա՛ր, պիտի երթա՛ր: Միայն թէ ի՛նչպէս հագուէր: Զեռքին տակ ունէր պարահանդէսի շրջագգեստ մը, բեհեզէ բէնեուար մը,

կրուկաւոր մուճակներ և կապոյտ սնդուէ կօշիկ մը պարահանդէսի համար: Սպասաւորները արթնցնել, ըլլալի՛ք բան չէր... ատենն ալ կ'անցնէր... հինգին քառորդ կա՛ր: Զօրագունդը ժամը հինգին պիտի մեկնէր:

Բեհեզէ բէնեուարով և սնդուէ կօշիկներով կրնար գործին մէջէն ելլել. բակին մէջ անշուշտ պիտի գտնէր գլխարկ մը, իր պարտէզի փոքրիկ տրեխները և սկովտեան մեծ կրկնոցը զոր կը հաղնէր, կառք վարելու համար, անձրեւ եղած օրերը: Անհատնում զգուշութիւններով դուռը կէս մը բացաւ. ամէն ոք կը քնանար զղեակին մէջ, պատերուն քովէն կը սահէր, նրբանցքներուն սանդուխէն վար կ'իջնէր:

Միա՛յն թէ փոքրիկ տրեխները հոն ըլլային, իրենց տեղը: Աս էր իր մեծ մտահոգութիւնը: Ահա հոն էին: Պարահանդէսի կօշիկներուն վրայ կապեց զանոնք, ու մեծ կրկնոցին մէջ կը փաթթուեցաւ: Դուրսը՝ անձրեւը կրկնապատիկ սաստկութեամբ կը տեղար ու անոր ձայնը կը լսէր: Նախասենեակներու մէջ անագին հովանոց մը կը տեսնէր զոր ծառաները կը գործածեն երբ կառքին գահակին վրայ նստին. առաւ զայն. ա՛լ պատրաստ էր... բայց, երբ կ'ուզէր դուրս ելլել, տեսաւ որ բակին պատուհան-դռնակը երկաթէ հաստ ձողով մը գոցուած էր: Զանաց վերցնել, բայց երկաթէ ձողը հաստատ կը մնար, կը դիմադրէր, ու բակին ժամացոյցը զանդադօրէն

հինգ կը զարնէր: Ան կը մեկնէր այս վայրկեանին:

Կ'ուզէր տեսնել, կ'ուզէր տեսնել: Առջեւն ելած արգելքներէն կը զրգոուէր, կը կամշոտէր: Մեծ ճիգ մը ըրաւ: Զողը տեղի տուաւ, վար սահեցաւ...: Ահա Պէթինային ձեռքին վրայ երկար ձեղք մը բացուած էր ու անոր մէջէն արեան բարակ մազվզուկ մը կը տեսնուէր: Պէթինա թաշկինակը ձեռքին շուրջը փաթթեց. մեծ հովանոցը առաւ, բանալին կղպանքին մէջ դարձուց, գուռը բացաւ: Վերջապէ՛ս դուրս ելաւ:

Օղը սարսափելի էր, Հովն ու անձրեւը կը կործանէին: Հինգ կամ վեց վայրկեան պէտք էր, փողոցին վրայ նայող դարատափը հասնելու համար: Պէթինա առաջ նետուեցաւ գօտեպինդ, գլխիկոր, իր խոշոր հովանոցին տակ ծածկուած: Յիսուն քայլի չափ առած էր արդէն: Յանկարծ, զայրագին, մոլեգին, աչք կուրցնող մրրիկ մը յարձակեցաւ Պէթինային վրայ, կըրկնոցին մէջ խորատուզուած, քաշուեցաւ վեր հանեց, զրեթէ ոտքը գեանէն կտրեց, բռնաբար դարձուց հովանոցը: Դեռ բան մը չէր ասիկա: Աղէտը կատարեալ էր: Պէթինա կորսնցուց իր փոքր տրեխներէն մէկը...: Տրեխ ըսուելու բաներ չէին, փոքրիկ քնքրիկ շղուականներ էին, գեղեցիկ օգին հագնելու համար:

Եւ այս միջոցին, երբ Պէթինա, յուսակաուր, փոթորիկին դէմ կը մարտնչէր, իր կապոյտ սնդու-

սէ կօշիկովը թրջած, զոր աւազին մէջ կը մխէր, այս պահուն, հովը կը բերէր փողերու հեռուոր բոմբիւնը: Զօրագու՛նդն է որ կը մեկնէր: Պէթինա մեծ որոշում մը կուտար. հովանոցը թողուց, փոքրիկ տրեխը ձեռք ձգեց, աղէկ գէշ կապկցեց և վազելով գնաց, ջրհեղեղը գլխուն վրայ:

Վերջապէս ծառերուն ներքեւ հասաւ. ծառերը քիչ մը կը պահպանէին զայն: Նոր բոմբիւն մը, այս անգամ աւելի մօտ: Պէթինա կարծեց լսել կառքերու դղրդիւնը: Վերջին ճիգ մըն ալ ըրաւ: Ահա դարատափը...: Հասաւ...: Ատե՛նն էր որ հասնէր: Քօան կանգուն անդին, փողահարներու ճերմակ ձիերը կը տեսնէր, և ճամբուն վրայ, մշուշին մէջ տարտամօրէն կը տատանէր թնդանօթներու և գումատակներու երկար շարքը: Դարատափը շրջապատող հինաուուրց թմբիններէն մէկուն տակ ապաստանեցաւ: Նայեցաւ ու սպասեց: Հո՛ն էր ան, ձիաւորներու այս խառնաճաղանձին մէջ: Պիտի կարենա՞ր ճանչնալ: Իսկ ան պիտի տեսնէ՞ր զինքը: Իրպուած մը արդեօք պիտի դարձնէ՞ր անոր գլուխն այս կողմը:

Պէթինա գիտէր թէ ան տեղակալ էր իր զօրագունդին երկրորդ հրետանիին մէջ. զիտէր թէ հրետանի մը վեց թնդանօթէ ու վեց գումարտակէ կը բաղկանար: Այս բանը արբայ փօնսթանօթէնը սովրեցուցած էր իրեն: Պէտք է թողուր որ անցնէր առաջին հրետանին, այսինքն վեց

վեց թնգանօթ ու վեց գումարտակ համբելու էր, և յետոյ ան պիտի անցնէր...:

Ան էր ահա, իր մեծ վարապանակին մէջ պըլլուած, և ան էր որ նախ կը տեսնէր զինքը ու կը ճանչնար: Քանի մը վայրկեան առաջ, Պէթինային հետ ըրած մէկ երկար պտոյտը յիշած էր, իրիկուն մը, գիշերուան մօտ, այդ դարատափին վրայ: Աչքերը վեր առեր էր, ու միեւնոյն տեղը ուր յուշ կ'ածէր թէ տեսած էր զայն, նոյն տեղը նորէն կը տեսնէր:

Բարեւեց, և բաց գլուխը անձրեւին տակ, ետին դառնալով՝ ձիուն վրայէն քանի կը հեռանար, ու ո՛րքան կրնար տեսնել, կը նայէր իրեն: Ինչ որ առջի օրը ըսած էր, նորէն կ'ըսէր իւրովի.

— Վերջին անգամն է:

Պէթինա երկու ձեռքերուն շարժումով հրատեչալի ողջոյնները կը զրկէր անոր, և այս շարժումը կրկնուելով կրկնուելով, ձեռքերն այնքան մօտ, այնքան մօտ, այնքան մօտ կը բերէին շրթունքներուն որ կը կարծուէր թէ...:

— Ա՛հ, կ'ըսէր մտովի եթէ անկէ ետքն ալ չի հասկնար թէ կը սիրեմ զինքը ու չի ներեր գրամիս...:



Թ.

Օգոստոսի 10ն էր, այն օրը ժան Լօնկվալ պիտի դառնար:

Պէթինա առտուն կանուխ արթնցած, անկողնէն ելաւ և իսկոյն պատուհանը վագեց: Պայծառ արեւ մը կը թափանցէր ու կը փարատէր արդէն առտուան գոլորշիները: Երկինք, առջի իրիկունը, սպառնալից էր և ամպամած. Պէթինա քիչ քնացաւ, և գիշերն ի բուն կ'ըսէր ինքնիրեն.

— Միայն թէ չանձրեւէ՛ վաղն առաւօտ:

Սքանչելի օգ մը պիտի ընէր: Պէթինա քիչ մը աւելորդապաշտ էր: Այս բանը յոյս ու սիրտ կուտար իրեն: Օրը աղէկ կը սկսէր և աղէկ պիտի վերջանար:

Պարոն Սքոթ քանի մը օրէ ի վեր եկած էր: Պէթինա իրեն կը սպասէր Հավրի մէջ, ծովագործի վրայ, շոգենաւուն հասնելուն, Սիւզիին և տղոց հետ:

Քանիցս կաթոգին համբուրեցին իրար: Յետոյ Ռիշար իր քենիին ուղղելով խօսքը.

— Է՛լաւ, հարսնիքը ե՞րբ է:

— Ի՛նչ հարսնիք:

— Պ. Ժան Ռէյնօի հետ:

— Ա՛հ, քոյրս զրե՛ց ձեզի:

— Սիւզի՞ն, Բնաւ...: Սիւզին բան մը չըսաւ ինծի...: Դուք էք, Պէթինա, որ ինծի գրեցիք: Ձեր բոլոր նամակներուն մէջ երկու ամիսէ ի վեր այս երիտասարդ սպային խօսքէն զատ ուրիշ խօսք չկայ:

— Բոլոր նամակներո՞ւս մէջ:

— Այո՛, այո՛... և սովորականէն աւելի յաճախ ու աւելի երկարօրէն կը գրէիք: Ձեմ գանգատիր, բայց կը հարցնեմ թէ ե՞րբ պիտի ներկայացնէք ինծի քենեկալս:

Այսպէս խօսելով կատակ կ'ընէր, իսկ Պէթինա կը պատասխանէր.

— Ի՞նչ ատենէն, կը յուսամ:

Պարոն Աքօթ կը հասկնար թէ գործը լուրջ է: Դարձին, վակօնին մէջ, Պէթինա գրած նամակները ետ կ'ուզէր Ռիչարտէն: Նորէն կը կարգար զանոնք: Իրա՛ւցնէ անոր վրայ խօսած էր միշտ իր նամակներուն ամէն էջին մէջ: Իր առաջին տեսակցութեան մանրամասն պատմութիւնը կը գտնէր անոնց մէջ: Ահա ժամին նըկարագրութիւնը երիցատան պարտէզին մէջ, իր յարդէ գլխարկովն ու փաւեակէ աղցանոցով... ու յետոյ դարձեալ պարոն Ժան, մի՛շտ պարոն Ժան: Կը տեսնէր որ իր կարծածէն շատ իսկ առաջ կը սիրէ եղեր:

Արդ՝ օգոստոսի 10ն էր: Նախաճաշը աւարտած էր զղեակին մէջ: Հարրի ու Պէլլա անհամբեր էին: Գիտէին թէ զօրագունը ժամը մէկին ու

երկուքին մէջտեղը պիտի անցնէր գիւղէն: Անոնց խոստացեր էին ցոյց տալ զինուորներուն անցնիլը, և անոնց ինչպէս նաև Պէթինային համար, թնդանօթածիգներու Յրդ զօրագունըին վերադարձը մեծ եւելութիւն մըն էր:

— Պէ՛թիկ մօքրիկ, ըսաւ Պէլլա, Պէ՛թիկ մօքրիկ, մեզի հետ եկուր:

— Եկուր, ըսաւ Հարրի, եկուր. մեր բարեկամ Ժանը պիտի տեսնենք իր մոխրագոյն մեծ ձիուն վրայ:

Պէթինա ընդդիմացաւ, մերժեց, և սակայն ի՛նչ փորձութիւն: Բայց ո՛չ, չպիտի երթար, իրիկունը միայն պիտի տեսնէր Ժանը, այն վճռական բացատրութեան համար՝ որուն կը պատրաստուէր քսան օրէ ի վեր:

Տղաքը իրենց մանկածուններուն հետ գացին: Պէթինա, Սիւզի և Ռիչար դարաստանին մէջ նստան, զղեակին մօտիկը, և հոն տեղաւորուելուն պէս.

— Սիւզի՛, ըսաւ Պէթինա, այսօր ձեր խոստումը պիտի յիշեցնե՞մ ձեզի: Կը յիշէք մեջերնիս անցած խօսքը, իր մեկնելուն իրիկունը: Անանկ որոշեցինք որ, եթէ իր վերադարձին՝ օրը ըսէի ձեզի. «Սիւզի, ապահով եմ զայն սիրելուս», թոյլ պիտի տայիք որ բացէ ի բաց իրեն զիմեմ և հարցնեմ թէ կ'ուզէ՞ զիս կին առնել:

— Այո՛, խոստացայ: Բայց բոլորովին ապահով էք...:

— Բարորովին ապահով: Արդ, կանխաւ կ'ի-
մացնեմ ձեզի որ միտք ունիմ զայն հոս՝ բե-
րելու... ահա, հոս, յարեց ինդալով, այս նստա-
րանին վրայ... և այնպէս խօսիլ անոր հետ,
ինչպէս դուք խօսեցաք ժամանակաւ, Ռիչա-
րին...: Այսպէս ընելով յաջողեցաք Սիւզի...
կատարելապէս երջանիկ էք: Ե՛ս ալ կ'ուզեմ եր-
ջանիկ ըլլալ: Ռիչա՛ր, Սիւզին խօսեցա՞ւ ձեզի
պարոն Ռէյնօի վրայ:

— Սյո՛, և ըսաւ թէ ուրիշ և ոչ մէկ մարդու
վրայ լաւ գաղափար ունի, բայց...:

— Բայց ըսաւ նաեւ թէ գուցէ ինծի համար
քիչ մը նանդարտ, քիչ մը միջակ ամուսնու-
թիւն մըն է...: Ո՛հ, չա՛ր քուրիկ: Կը հաւ-
տա՞ք, Ռիչար, այդ վախը չեմ կրնար գլխէն
հանել: Չի հասկնար թէ ամէն բանէ առաջ
կ'ուզեմ սիրել ու սիրուիլ: Կը հաւտա՞ք, Ռիչար,
անցեալ չաքթու սոսկա՛լի ծուղակ մը լարեց ին-
ծի: Գիտէ՞ք, աշխարհի վրայ Ռոմանէլլի իշխան
մը կայ:

— Սյո՛, կրնայիք դուք ալ իշխանուհի ըլ-
լալ:

— Կարծեմ անհուն դժուարութեանց չպիտի
հանդիպէր այդ բանը...: Լա՛ւ ուրեմն, օր մը,
անխոհեմաբար ըսեր էի Սիւզիին որ, եթէ նեղը
մնամ, Ռոմանէլլի իշխանը ընդունելի կ'երեւար
ինծի: Երեւակայեցէք ի՛նչ ըրաւ: Թիւոներները
կը գտնուէին Թոուվիլի մէջ: Սիւզի փոքրիկ դա-

մը նիւթեց...: Իշխանին հետ ճաշել տուին ին-
ծի... բայց արդիւնքը դժնդակ եղաւ...: Ըն-
դունելի՛...: Սյն երկու ժամերը զոր անցուցի
անոր հետ, ես ինծի հարցնելով անցուցի թէ
ի՛նչպէս կարող եղած էի այդպիսի խօսք մը
ընել...: Չէ, Ռիչար, չէ, Սիւզի, չեմ ուզեր ո՛չ
իշխանուհի, ո՛չ կոմսուհի, ո՛չ մարքիզուհի ըլ-
լալ: Ես կ'ուզեմ տիկին Ռէյնօ ըլլալ... եթէ
պարոն Ժան Ռէյնօ ուզէ... ինչ որ յայտնի
չէ:

Զօրագունդը գիւղ կը մտնէր և ահա՛ յան-
կարծ փողը հնչեց օդին ու տարածութեան մէջ,
ռազմական և զուարթագին: Երեքը միասին
լուռ մնացին: Զօրագունդն էր, Ժանն էր որ
կ'անցնէր...: Զայնը նուազեցաւ, նուաղեցաւ,
և Պէթինա նորէն ըսաւ:

— Չէ՛, յայտնի չէ: Կը սիրէ զիս սակայն, և
չատ, առանց լաւ գիտնալու թէ ի՛նչ եմ ես: Կը
կարծեմ թէ այսօրինակ սոսկում մը չպիտի ազդէի
անոր, եթէ զիս աւելի լաւ ճանչնար, և ասոր
համար է որ ձեռնէ թոյլտուութիւն կը խնդրեմ
որ երթամ այս իրիկուն իրեն հետ խօսիմ ազատ
համարձակ ու բաց սրտով:

— Ձեզի այդ թոյլտուութիւնը կուտանք,
պատասխանեց Ռիչար, երկուքս ալ կուտանք...:
Գիտենք որ, Պէթինա, չէք ընեք այնպիսի բան
մը որ չըլլայ ազնիւ ու վեհանձն:

— Կը փորձեմ գոնէ:

Մանուկները դարձան վաղելով: Ժանը տեսեր էին. փոշիէն ճերմկած էր բոլորովին. բարի լոյս ըսած էր իրենց:

— Միայն թէ, յարեց Պէլլա, հաճոյակատար չեղաւ, մեզի հետ խօսելու համար չկեցաւ... սովորաբար կը կենար, իսկ այս առտու չուզեց:

— Ուզեց, ուզեց, ըսաւ Հարրի, նախ օտակ շարժում մը ըրաւ... և յետոյ չուզեց, գնաց:

— Վերջապէս չկայնեցաւ, և այնքան զուարճալի է գինուորականի մը հետ խօսիլ, մանաւանդ երբ ձիու վրայ ըլլայ:

— Մինակ ատ չէ, մենք պարոն Ժանը կը սիրենք, ան ալ կայ: Եթէ գիտնայիր, հայրիկ, ի՞նչ բարի է, ի՞նչ աղէկ խաղալ գիտէ մեզի հետ:

— Եւ ի՞նչ գեղեցիկ գծագրութիւններ կ'ընէ... Հարրի, չե՞ս յիշեր, այն մեծ խեղկատակը, զոր գծեց, այնքան շարժիկ էր իր գաւազանովը...

— Իսկ կատուն, կատուն ալ կար, ինչպէս կը ձեւացնեն լարախիլին (quarrelkoq) մէջ:

Երկու տղաքը հեռացան, իրենց բարեկամ Ժանին վրայ խօսելով:

Ստուգիւ, ըսաւ պարոն Սքոթ, այս տան մէջ ամենքն ալ կը սիրեն զայն:

— Դուք ալ ամենուն պէս պիտի ընէք, երբ զայն ճանչնաք, պատասխանեց Պէթինա:

Զօրագունդը սկսաւ յառաջանալ մեծ ճամբուն

վրայ, երբ գիւղէն դուրս ելաւ... Աւասիկ այն դարաւազը ուր Պէթինա կը գտնուէր անցեալ առաւօտ... Ժան կ'ընէր ինքնիրեն. «Եթէ հո՞ն ըլլայ:» Կ'անդիտանար ու կ'ակնկալէր միանգամայն... Գլուխը վեր կ'առնէր ու կը նայէր... Հոն չէ՛ր:

Մէյ մըն ալ չտեսաւ զայն: Ալ չպիտի տեսնէր... գոնէ երկար ատեն: Նոյն իրիկունը պիտի մեկնէր ժամը վեցին, Բարիզ երթալու համար: Պատերազմական պաշտօնատան տեսուչներէն մէկը որ հոգ կը տանէր իրեն: Անոր միջնորդութեամբ պիտի ջանար որ ուրիշ զօրագունդ մը զրկեն զինքը:

Ժան շատ խորհեցաւ առանձին, երբ Սէնքթ կը գտնուէր, և ահա աս եղաւ իր խորհրդածութեան արդիւնքը. կարելի չէր, պէտք չէր որ Պէթինայի ամուսինը ըլլար:

Զինուորները երբ ձիերնուն իջան զօրանոցին բակին մէջ, Ժան մնաք բարով ըսաւ իր գնդապետին ու ընկերներուն: Ամէն ինչ վճարուած էր: Ազատ էր, կրնար մեկնիլ... Սակայն չէր երթար: Զորս դին կը նայէր... Ո՛րքան քրջանիկ էր երեք ամիս առաջ, երբ այս մեծ բակէն դուրս կ'ելլէր ձիով, թնդանօթներու զոփիւնով, որոնք կը թաւալէին Սուվինիի սալալատակին վրայ: Այսօր ի՞նչ ավարագին դուրս պիտի ելլէր հոնկէ: Իր կեանքը հոն էր ժամանակաւ... ո՛ւր պիտի ըլլար հիմա:

Տուն մտաւ ու իր սենեակը ելաւ: Տիկին Սքոթին նամակ գրելու սկսաւ թէ պաշտօնական գործի համար հարկադրուած էր մեկնիլ անմիջապէս. ուստի չպիտի կարենար ձաշել զղեակին մէջ. իր յուշարար բարեւները կը յանձնէր օրինորդ Պէթինային համար...: Պէթինա՛...: Ա՛հ, ի՛նչ դժուարաւ գրեց այս բառը...: Գոցեց նամակը...: Պահ մը յետոյ պիտի զրկէր:

Երթալու պատրաստութիւններ կը տեսնէր: Յետոյ պիտի երթար հրաժեշտ առնելու իր կնքահայրէն: Ասիկա ամենէն աւելի ծանր կուգար իրեն...: Քիչ ժամանակի բացակայութեան խօսք պիտի ընէր անոր:

Դրասեղանին դարակը քաշեց, մէջէն ստակ առնելու համար: Առաջին բանը որ աչքին զարկաւ, փոքրիկ նամակ մըն էր. կապուտակ թուղթի վրայ գրուած: Միակ տոմսակն էր զոր Պէթինայէն ստացած էր. «Կը բարեհաճի՞ք գրաբերիս յանձնել այն գիրքը որուն վըայ խօսեցաք ինձի երէկ իրիկուն: Թերեւս քիչ մը լուրջ ըլլայ ինձի համար...: Սակայն կ'ուզեմ կարդալ փորձել զայն...: Մէկ րոպէէն: Կարելի եղածին չափ շուտով եկէք:»

Ստորագրութիւն Պեքիսա: Ժան կը կարդար ու կը կարդար այս քանի մը տողերը...: Բայց քիչ մը ետքը ա՛լ չէր կրնար կարդալ...: Աչքերը կը պղտորէին:

— Իրմէ աս միայն պիտի մնայ ինձի, կ'ըսէր ինքնիրեն:

Նոյն միջոցին, արբայ Բօնսթանթէն գլուխ գլխի տուած՝ Բալինի հետ, իրենց հաշիւները կ'ընէին: Դրամական վիճակներն սքանչելի էր: Դրամակղին մէջ երկու հազար ֆրանքէն աւելի կար: Միւզիին ու Պէթինային բաղձանքը լիովին կատարուած էր. ա՛լ աղքատ չի կար երկրին մէջ: Պառու Բօլինը ատեն ատեն, խղճի փոքրիկ խայթեր ալ կը գտար:

— Կը տեսնէք, տէր երէց, կ'ըսէր, թերեւս քիչ մը շատ կուտանք կոր: Միւս գիւղերուն մէջ տարածայնութիւն կայ թէ հոս ամենուն համար բաց է ողորմութեան զանձանակը: Գիտէ՞ք ի՛նչ պիտի պատահի օրին մէկը, Պիտի գան իբրեւ աղքատ հաստատուիլ Լօնկվալի մէջ:

Երէցը յիսուն ֆրանք կուտար Բօլինին, ան ալ դուրս կ'ելլէր այն 50 ֆրանքը աղքատ մարդու մը տանելու, որ չոր խոտի սայլակի մը վրայէն վար իյնալով թեւը կտորած էր:

Աբբայ Բօնսթանթէն առանձին մնաց երիցատան մէջ, Մտմտուք մը ունէր: Զօրագունդին անցնիլը զիտեց. բայց ժան մէկ վայրկեան միայն կանգ առաւ. տխուր կ'երեւար: Արդէն քանի ատենէ ի վեր, արբան լաւ նկատած էր թէ ժան չունէր իր առջի չէնչող բնաւորութիւնն ու զուարթութիւնը: Երէցը շատ չէր հոգ ըրած, երիտասարդական փոքրիկ վիշտ մը կարծելով զայն, ինչ որ խեղճ ծերունի քահանայի մը գիտնալիք բանը չէր կրնար ըլլալ:

Բայց այն օրը, ժանին մտահոգութիւնը ակներեւ էր:

— Մէկ բոպէէն պիտի գամ, կնքահայր, ըսած էր ան երէցին. ձեզի հետ խօսելու պէտք ունիմ:

Յանկարծ ելած գացած էր: Աբբայ Քօնսթանթէն ժամանակ չէր ունեցած կոչկոռ տալու Լուլուին, կամ լաւ եւս կոչկոռները, քանի որ հինգ վեց հատ դրած էր գրպանը, նկատելով որ Լուլու արժանացած էր այս խնջոյքին, իջեանի տաւր երկայն օրեր ճամբայ կտրելով և քսանի չափ գիշերներ բացօթեայ անցնելով: Արդէն իսկ, տիկին Սքօթին զղեակը հաստատուելէն ի վեր, Լուլու շատ անգամ բազմաթիւ կոչկոռներ ունեցած էր: Աբբայ Քօնսթանթէն մսխող, շռայլ դարձած էր. ինքզինքը միլիոնատէր կը զգար. ժանին ձիուն շաքարը իր աղակատանաց մէկն էր: Նաև օր մը, քիչ մնաց որ իր մըշտընջենական փոքրիկ ճառք պիտի ուղղէր Լուլուին:

— Ասիկա Լօնկվալի նոր զղեկատիրուհին երուն կողմէն է: Այս իրիկուն աղօթեցէ՛ք անոնց համար:

Ժամը երեքն էր, երբ ժան երիցատուն եկաւ, և երէցն անմիջապէս.

— Ըսիր թէ խօսելու պէտք ունիս ինծի հետ...: Ի՛նչ բանի վրայ է.

— Կնքահայր, այնպիսի բանի մը վրայ որ ձեզ պիտի զարմացնէ, վշտացնէ, և որ զիս ալ կը վշտացնէ: Հրատեչտ առնելու կուգամ ձեռնէ:

— Հրատեչտ, կը մեկնի՞ս:

— Այո՛, կը մեկնիմ:

— Ե՛րբ:

— Այսօր իսկ... երկու ժամէն:

— Երկո՛ւ ժամէն, բայց այս իրիկուն զղեակը պիտի ճաշէինք:

— Հիմա տիկին Սքօթին գրեցի, ներում խնդրելու համար: Պարտաւորուած եմ անպատճառ մեկնիլ:

— Ընդհո՞ւպ:

— Ընդհուպ:

— Ո՛ւր կ'երթաս:

— Բարիդ:

— Բարի՛դ: Ինչո՞ւ այդ յանկարծական որոշումը:

— Ո՛չ այնքան յանկարծական: Շատոնց արդէն միտքս դրած էի:

— Բայց ինծի բան մը չէիր ըսած...: Ժան, բան մը կը դառնայ կոր...: Մեծցար հիմա և ա՛լ իրաւունք չունիմ իբրեւ մանուկ վարուելու քեզի հետ, բայց վերջապէս, գիտես թէ ո՛րքան կը սիրեմ քեզ...: Եթէ տագնապներ ու նեղութիւններ ունիս, ինչո՞ւ չես ըսեր ինծի: Թերեւս բարի խորհուրդ մը կրնամ տալ քեզի: Ժան, ինչո՞ւ Բարիդ կ'երթաս:

— Կ'ուզէի չըսել ձեզի...: Պիտի վշտանաք...: Բայց իրաւունք ունիք իմանալու...: Բարիդ կ'երթամ, խնդրելու համար որ զիս ուրիշ զօրագունդ մը զրկեն:

— Ուրի՛չ զօրագունդ մը. Սուվիններն պիտի թողո՞ւս:

— Այո՛, Սուվիններն պիտի թողում... քիչ ատենի համար. բայց վերջապէս Սուվիններն թողուլ, ա՛ս է ուզածս, ա՛ս է կարեւորը:

— Իսկ ես, Ժան, ուրեմն չե՞ս մտածեր զիս...: Քիչ ատենի համար կ'ըսես...: Քիչ ատեն. բայց ես ալ այնքան քիչ ատեն ունիմ ապրելու: Եւ այս վերջին օրերը, ուր Աստուծոյ շնորհը փայլեցաւ վրաս, իմ երջանկութիւնս էր Ժան, այո՛, իմ երջանկութիւնս էր քեզ հոս իմ քովս ունենալ: Իսկ դուն կ'երթա՛ս. Ժան, սպասէ քիչ մը, համբերէ, շատ երկար չպիտի տեւէ, սպասէ որ ամենաբարին Աստուած զիս իրեն կանչէ, սպասէ՛ որ երթամ զտնեմ հոն, առընթեր, հայրդ ալ, մայրդ ալ...: Մի՛ երթար, Ժան, մի՛ երթար:

— Եթէ դուք զիս կը սիրէք, ես ալ ձեզ կը սիրեմ... և դուք լաւ գիտէք ասիկա...:

— Այո՛, գիտեմ:

— Ես ձեզի համար միշտ այն կաթոգին սէրն ունիմ զոր ունէի երբ աղայ էի, երբ դուք զիս առիք, մեծցուցիք: Միբայ չփոխուեցաւ, չպիտի փոխուի երբեք...: Այլ եթէ պարտականութիւնը ու պատիւը կը հարկադրեն զիս երթալ...:

— Ա՛հ, եթէ պարտականութիւնն է, եթէ պատիւն է...: Ա՛լ բան մը չեմ ըսեր, Ժան...: Ամէն բան ետ կը մնայ, ամէն բան, ամէն բան:

Ես քեզ միշտ լաւ դատաւոր ճանչցած եմ քու պարտականութեանդ, քու պատուիդ...: Գնա՛, զաւակս, դնա՛, : Բան մը չեմ հարցներ քեզի: Բան մը չեմ ուզեր գիտնալ:

— Է՛հ ուրեմն, ես կ'ուզեմ ամէն բան ըսել ձեզի, գոչեց Ժան, իր յուզումէն նուաճուած: Որովհետեւ լաւ ևս է որ գիտնաք ամէն բան: Հոս կը մնաք դուք, զգեակ պիտի դառնաք... պիտի տեսնէք... զայն:

— Ո՞վ...:

— Պէթինա՛ն:

— Պէթինա՛ն:

— Կը պաշտեմ զայն, կնքահայր կը պաշտեմ:

— Ո՞վ, իմ խեղճ գուռակս:

— Ներեցէք որ այգի բաներուն վրայ կը խօսիմ ձեզի... ասոնք կ'ըսեմ ձեզի այնպէս ինչպէս պիտի ըսէի հօրս: Եւ արդէն... երբեք չկրցի ըսել մէկու մը, և ասիկա կը խեղդէր զիս...: Այո՛, խելագարութիւն մըն է որ տակաւ վրաս տիրապետեց, կամքիս հակառակ, դուք լաւ կը հասկնաք...: Տէ՛ր Աստուած, հո՞ս ահա սկսայ սիրել զայն: Գիտէ՞ք, երբ իր քրոջը հետ եկաւ... երբ հազար ֆրանքներու փոքրիկ ծրարները... իր մազերը քակուեցան... և իրիկունը, Մարեմայ ամիսը...: Յետոյ թոյլ տրուեցաւ ինձի ազատօրէն, ընտանեբար տեսնել զայն... և դուք իսկ, անդադար, իր վրայ կը

խօսէիք ինծի, իր քաղցրութիւնը, իր բարութիւնը կը գովէիք: Քա՛նի անգամներ ըսիք թէ իրմէ լաւագոյն բան չկայ աշխարհի վրայ:

— Ես ալ այդպէս կը մտածէի... ու այդպէս կը մտածեմ տակաւին... հոս ոչ ոք ինէ լաւ կը ճանչնայ զայն. ե՛ս միայն աղքատներուն խրճիթին մէջ տեսած եմ զայն: Եթէ գիտնայիր, մեր շրջագայութեանց ատեն, առաւօտուն, ո՛րքան քաղցր ու քաջ էր ան: Ո՛չ թշուառութիւնը և ո՛չ տառապանքը չեն խրտչեցնել զայն: Բայց աղէկ չեմ ըներ որ ասոնք քեզի կ'ըսեմ...:

— Ո՛չ, ո՛չ, այլ ևս չեմ ուզեր տեսնել զայն, բայց կ'ուզեմ որ վրան խօսուիլը լսեմ:

— Կեանքիդ մէջ, Ժան, չպիտի հանդիպիս լաւագոյն կնոջ մը, որ ունենայ աւելի բարձր զգացումներ: Նայէ՛ ո՛ր աստիճան. օր մը, — զիս բաց կառքով տարած էր, որ շատ մը խաղալիկներով լեցուն էր, — այս խաղալիկները պզտիկ հիւանդ աղջկան մը կը տանէր, ու զանոնք ձեռքը տալով, խնդացնելու և այն պզտիկ աղջիկը զուարճացնելու համար. այնքան անուշ կը խօսէր անոր հետ, որ քեզ կը մտածէի ու մտովի կ'ըսէի, հիմա կը յիշեմ. «Ա՛հ, եթէ աղքա՛տ ըլլար»:

— Այո՛, եթէ աղքատ ըլլա՛ր. բայց աղքատ չէ՛:

— Ո՛հ, չէ՛...: Վերջապէս, ի՛նչ ընես, զաւակս. եթէ կը չարչարուիս զայն տեսնելով,

իր մօտն ապրելով, որովհետեւ ամէն բանէ առաջ պէտք եղածն աս է որ դուն չտառապիս... դնա՛, այնպէս թո՛ղ ըլլայ, դնա՛...: Եւ սակայն... և սակայն...:

Ծերունի երէցը սկսաւ խօկալ, գլուխը ձեռքերուն մէջ ու քանի մը վայրկեան լուռ մնաց. յետոյ շարունակեց.

— Եւ սակայն, Ժան, գիտե՞ս ի՛նչ բանի վերայ կը մտածեմ: Օրիորդ Պէթինան շատ անգամ տեսայ, Լօնկվալ գալէն ի վեր: Լա՛ւ ուրեմն, կը խորհիմ, — չէի զարմանար այն ատեն, շատ բնական կը թուէր ինծի որ հոգ տանին քեզի, — բայց վերջապէս քու վրադ կը խօսէր միշտ, այո՛, միշտ:

— Ի՛մ վրաս:

— Այո՛, և հօրդ ու մօրդ վրայ: Հետաքրքիր էր իմանալու թէ ի՛նչպէս կ'ապրիս. կը խնդրէր որ իրեն բացատրեմ թէ ի՛նչ է զինուորի մը կեանքը, ճշմարիտ զինուորի մը կեանքը որ իր արհեստը կը սիրէ ու զայն խղճմտութեամբ կը կատարէ: Զարմանալի՛ բան, յորմէ հետէ այս բանը ըսիր ինծի, մտքիս մէջ շատ յիշատակներ կը ծնին: Հազար մանր բաներ իրարու քով կը շարուին, իրարու մօտ կուգան...: Արդ, Հավրէն վերադարձաւ առջի օր, Ժամը երեքին: Լա՛ւ, հասնելէն Ժամ մը ետքը, հոս էր: Եւ իսկոյն, քու վրադ խօսեցաւ ինծի հետ: Հարցուց թէ նամակ գրեցի՞ր ինծի, թէ հիւանդ չէի՞ր

եղած, թէ ե՞րբ պիտի գաս, ո՞ր ժամուն, թէ զօրագունդը գիւղին մէջէ՞ն պիտի անցնէր:

— Անօգուտ է, կնքահայր, այդ յիշատակները միտք բերել:

— Ո՛չ, անօգուտ չէ...: Այնքան դո՛ւ կ'երեւար, ա՛յնքան երջանիկ իսկ, մտածելով թէ քեզի պիտի տեսնէր վերտոին: Այս իրիկուան ճաշը խրախճանք մը պիտի ըլլար իրեն համար...: Բեզ իր քեռայրին պիտի ներկայացնէր, որ եկած է: Այս միջոցիս ո՛չ ոք կայ զդեակը, ո՛չ մէկ հրաւիրեալ: Այս կէտին վրայ շատ կը պընդէր, — և կը յիշեմ իր վերջին խօսքը, — հոն էր դրան սեմին վրայ. «Հինգ հոգի միայն պիտի ըլլանք, ըսաւ ինձի, դուք և պարոն Ժանը, քոյրս, քեռայրս ու ես»: Ու յարեց խնդալով. «Ճշմարիտ ընտանեկան սեղան մը»: Այս բառին վրայ ձգեց զնաց, փախաւ գրեթէ: Ճշմարիտ ընտանեկան սեղան մը: Դիտե՞ս ինչ կը կարծեմ Ժան, պիտե՞ս:

— Պէտք չէ այդպէս կարծել, կնքահայր, պէտք չէ...:

— Ժան, կարծեմ թէ կը սիրէ՞ քեզ:

— Ե՛ս ալ այնպէս կը կարծեմ:

— Դո՛ւն ալ:

— Երբ իրմէ բաժնուեցայ, քսան օր կայ, ա՛յնքան յուզուած էր, ա՛յնքան թունդ ելած էր: Կը տեսնէր որ ախուր եմ ու թշուառ: Չէր ուզեր զիս թողուլ որ մեկնիմ: Դղեակին սան-

դուխին զլուխն էր: Պէտք եղաւ որ հոնկէ փախչիմ... այո՛... փախչիմ: Ի՛իչ մնաց որ պիտի խօսէի, պայթէի, ամէն բան ըսէի իրեն: Յիսուն քայլ առնելէ յետոյ՝ կանգ առի, ետիս դարձայ: Ան այլ ևս չէր կրնար զիս տեսնել: Բոլորովին մութին մէջ էի: Բայց ես կը տեսնէի զայն: Կեցած էր, հոն, անշարժ, ուսերն ու թեւերը բաց, անձրեւին տակ, նայելով այն կողմը ուրկէ կ'երթայի: Թերեւս խենթ եմ, մտածելով որ...: Դուցէ վթութեան զգացում մըն էր միայն: Բայց զթութեանէ աւելի ուրիշ բան մըն էր. գիտէ՞ք ինչ ըրաւ, հետեւեալ առաուն: Սարսափելի օդով մը եկաւ ժամը հինգին, զօրագունդին հետ ճամբուն վրայէն անցնիլ տեսնելու համար, և հոն ի՛նչ կերպով հրաժեշտի ողջոյն տուաւ ինձի...: Ա՛հ, կնքահայր, կնքահայր...:

— Ուրեմն, ըսաւ խեղճ երէցը, բոլորովին մտայոյզ, շփոթահար, ուրեմն ա՛լ բնաւ չեմ հասկնար: Եթէ դու զանի կը սիրես, Ժան, և եթէ ան ալ քե՛զ կը սիրէ:

— Մանաւանդ ատոր համար է որ պէտք է մեկնիմ: Եթէ միայն ե՛ս ըլլալի՛ս, եթէ վստահ ըլլայի թէ իմ սէրս չէ նշմարած, վստահ ըլլայի թէ անկէ ինք ալ չէ խանդավառուած, զայն տեսնելու քաղցրութեանը համար, ու կը սիրէի հեռուէն, առանց ու ե է յոյսի, միա՛յն զինքը սիրելու երջանկութեանը համար...: Բայց ո՛չ

լաւ հասկցաւ ան... և զիս չվհատեցնելէ զատ... վերջապէս անա աս է որ կը հարկադրէ զիս երթալ...:

— Չէ, ա՛լ չեմ հասկնար: Լաւ գիտեմ, խեղճ զաւակս, թէ այնպիսի բաներու վրայ կը խօսինք որոնց մէջ իմաստուն չեմ... բայց վերջապէս, երկուքդ ալ բարի էք, ծաղկահասակ ու սիրուն...: Դուն կը սիրես զայն... անի ալ քեզ կը սիրէ եղեր... և դուն չե՛ս կրնար:

— Հապա իր դրա՛մը, կնքահայր, իր դրա՛մը:

— Ի՛նչ փոյթ իր դրա՛մը, ոչի՛նչ է ան: Միթէ դրամի՞ն համար սիրեցիր զայն...: Մանաւանդ որ հակառակ դրամին՝ սիրեցիր: Խղճմտանքդ, ժանդ իմ, հանդարտ է այդ մասին, և ատ կը բաւէ:

— Չէ՛, այդ չի բաւեր: Բաւական չէ ինք իր վրայ լաւ կարծիք ունենալ. պէտք է որ ուրիշներն ալ ունենան այդ կարծիքը:

— Ո՛հ, ժան, քեզ ճանչցողներուն մէջ ո՞վ կրնայ քու վրադ կասկածիլ:

— Ո՞վ գիտէ...: Եւ յետոյ, այս խնդրէն զատ, դրամէն զատ՝ ուրիշ բան ալ կայ, ուրիշ աւելի լուրջ և աւելի ծանր բան մը: Ես իրեն յարմար ամուսինը չեմ:

— Ուրեմն ո՞վ է արժանաւորագոյնը...:

— Խնդիրը այն է չէ թէ ես ի՛նչ կ'արժեմ. պէտք է նկատել թէ ի՛նչ է ան և ի՛նչ եմ ես. պէտք է հարցնել իւրովի թէ ի՛նչ պիտի ըլլայ

իր կեանքը և ի՛նչ պիտի ըլլայ իմ կեանքս...: Օր մը, Բօլ, — շիտէք, քիչ մը բերնին եկածը կ'ըտէ... բայց այս կերպով աւելի պայծառ կը հասկցուի մարդուս միտքը, — խնդիրը Պէթինային վրայ էր...: Բօլ բան մը չէր կասկածեր... եթէ ոչ... բարի է ան... այսպէս չէր խօսեր: Ուստի, ըսաւ ինձի. «Պէթինային համար այնպիսի ամուսին մը պէտք է, որ բոլորանուէր իրն ըլլայ, բոլորանուէր, ամուսին մը որ ուրիշ հոգ չունենայ, բայց միայն անոր կեանքը մշտնջենի խրախճանք մը ընել. վերջապէս ամուսին մը որ անոր դրամին տրիտուրը հատուցանէ.» Դուք կը ճանչնաք զիս...: Կարելի չէ, պէտք չէ որ այսպիսի ամուսին ըլլամ: Ես զինուոր եմ և զինուոր մնալ կ'ուզեմ: Եթէ զինուորական ասպարէզիս արկածները այնպէս բերեն որ պէտք ըլլայ Ալպեանց մէկ խորշը երթալ կամ Ալժէրիի աննշան գիւղերէն մէկը, կրնա՞մ իրմէ խնդրել որ հետս գայ. կրնա՞մ զայն դատապարտել զինուորի կնոջ կեանքին, որ, վերջապէս, զինուորի կեանք ըսել է քիչ մը: Մտաբերէցե՛ք այն կեանքը զոր կը վարէ ան այսօր, բոլոր այն պերճանքը, բոլոր այն զուարճութիւնները...:

— Այո՛, բաւ աբբան, ասիկա աւելի ծանր է քան դրամի խնդիրը:

— Այնքան ծանր որ խօսք չի վերցնել: Այն քսան օրուան միջոցին, զոր հոն անցուցի, առանձին, բանակին մէջ, շատ իսկ մտածեցի այս Աբբայ Բօնսրանքեհ

ամենուն վրայ... ասիկա միայն մտածեցի...
 ու սիրելով զայն, ինչպէս կը սիրեմ. շատ զօ-
 րաւոր պէտք է ըլլան այն պատճառները, որոնք
 այսօր որոշակի ինձի կը ցուցնեն իմ պարտաւո-
 րութիւնս: Իմ պարտաւորութիւնս է երթալ...
 հեռու, շատ հեռու երթալ, կարելի եղածին չափ
 հեռու: Շատ տառապանք պիտի քաշեմ... այլ
 պէտք չէ՛ որ զայն տեսնեմ վերստին. պէտք չէ՛
 որ տեսնեմ:

Ժան թիկնաթոռի մը վրայ նետուեցաւ, վա-
 աւարանին մօտ. կծկտած մնաց հոն: Ծեր երէցը
 իրեն կը նայէր:

— Բեզ դժբախտ տեսնել, հէ՛ք որդեակ,
 այսպիսի կսկիծ մը ունենա՛ս դուն...: Շատ
 դառն է աս, շատ անիրաւ...:

Այս միջոցին, կամաց մը դուռը զարնուեցաւ:

— Ա՛հ, ըսաւ երէցը... մի՛ վախնար,
 Ժան... ես կը ձամբեմ եկողը...:

Աբբան դէպ ի դուռը ուղղուեցաւ, բացաւ
 դուռը և ետ քաշուեցաւ անակնկալ երեւոյթի
 մը առջեւ:

Պէթինան էր...: Անմիջապէս տեսած էր
 Ժանը, և ուղղակի անոր մօտ երթալով.

— Դ՛ուք... գոչեց: Ո՛հ, ո՛րքան գոհ եմ:
 Ժան ոտքի ելած էր...: Պէթինա անոր եր-
 կու ձեռքերը բռնած, արբային ուղղելով
 ըսաւ.

— Ներում կը խնդրեմ ձեռէ, տէր երէց, եթէ

նախ անոր մօտ գացի...: Ձեզ, երէկ տեսայ...
 իսկ քսան երկար օրերէ ի վեր չեմ տեսած զայն
 չեմ տեսած այն իրիկուսէն ի վեր, ուր մեկնե-
 ցաւ տունէն, տխուր և վշտագին:

Ժանին ձեռքերը միշտ իր ձեռքերուն մէջ
 էին: Ժան զօրութիւն չէր զգար ո՛չ շարժում
 մը ընելու, ո՛չ բառ մը ըսելու:

— Իսկ հիմա, յարեց Պէթինա, հիմա աւելի
 լա՞ւ էք: Ո՛չ, տակաւին ոչ... կը տեսնեմ որ...
 տխուր էք տակաւին...: Ա՛հ, ի՛նչ աղէկ ըրի
 գալովս...: Ներչնչում մը ունեցայ: Սակայն, կը
 նեղուիմ քիչ մը, շատ կը նեղուիմ ձեզ հոս գրե-
 նալուս համար: Պիտի հասկնաք թէ ի՛նչ խըն-
 դրելու կուգամ ձեր կնքահայրէն:

Ժանին ձեռքերը թողուց, ու արբային դառ-
 նալով.

— Կուգամ, տէր երէց, ձեզի ազաչելու որ
 լսէք իմ խոստովանանքս...: Այո՛, խոստովա-
 նանքս...: Բայց դուք մի՛ մտաբերէք երթալ,
 պարոն Ժան: Խոստովանանքս հրապարակաւ
 պիտի ընեմ: Յօժարակամ պիտի խօսիմ ձեր առ-
 ջեւ... և կը մտածեմ ալ թէ այսպէս աւելի լաւ
 պիտի ըլլայ: Նստինք... կ'ուզէ՞ք:

Վստահ ու խիզախ կը զլար ինքզինքը: Տենդ
 ունէր, բայց այն տենդը, որուն մատնուած զին-
 ւորը պատերազմի դաշտին վրայ կ'ոգեւորուի, կը
 դիւցազնանայ, վտանգը կ'արհամարէ: Այն յու-
 զումը, որով Պէթինային սիրտը սովորականէն

արագ կը բարախէր, բարձր ու վսեմ յուզում մըն էր: Իւրովի կ'ըսէր ան.

«Սիրուի՛լ կ'ուզեմ: Սիրե՛լ կ'ուզեմ: Երջանի՛կ ըլլալ կ'ուզեմ: Կ'ուզեմ որ երջանի՛կ ըլլայ ան: Եւ որովհետեւ ան չի կրնար քաջութիւն ունենալ, ինծի անկ է քաջ ըլլալ երկուքնուս համար, ինծի կ'իյնայ յառաջ ընթանալ միայնակ, բարձրագլուխ և անվեհեր, յաղթահարելու մեր սէրն ու մե՛ր երջանկութիւնը»:

Պէթինա իր արտասանած առաջին բառերէն յետոյ կատարեալ ազդեցութիւն կը գործէր արբային ու ժանիւն վրայ: Կը ձգէին որ ըսէ, ու մտիկ կ'ընէին ինչ որ կ'ըսէր: Լաւ կը գոյային որ վսեմ էր ժամը, կը հասկնային թէ ինչ որ անցնէր հոն՝ վճռական, անդառնալի պիտի ըլլար. բայց ո՛չ մէկը, ո՛չ միւսը նախատեսելու վիճակի մէջ էին...: Լուռ նստած էին, գրեթէ մեքենաբար: Կը սպասէին, մտիկ կ'ընէին...: Խուճապի մատնուած այս երկու մարդոց միջեւ, Պէթինա միայն պաղարիւն կը մնար...: Յստակ և որոշ ձայնով մը սկսաւ.

— Պէտք է նախ ձեզի ըսեմ, տէր երէց, և ասիկա՝ ձեր խղճմտանքը բոլորովին հանդարտեցնելու համար, պէտք է ըսեմ ձեզի թէ ես հոս եկայ քրոջս և քեռայրիս հաճութեամբը: Գիտեն թէ ինչո՛ւ համար եկած եմ, գիտեն թէ ի՛նչ պիտի ընեմ: Ոչ թէ միայն գիտեն, այլ և կը հաւանին: Հասկցուեցաւ, այնպէս չէ՞: Լաւ.

զիս հոս բերողը ձեր գրած նամակն է, պարոն ժան, այն նամակը որով իմացուցիք քրոջս թէ չէք կրնար այս իրիկուն գալ մեզի հետ ճաշել և թէ հարկադրուած էք մեկնիլ անպատճառ: Այս նամակը իմ բոլոր խորհուրդներս տակնուվրայ ըրաւ...: Արդարեւ, այս իրիկուն — միշտ քրոջս քեռայրիս թոյլտուութեամբ, — կ'ուզէի ճաշէն ետքը, ձեզ դարաստանը տանիլ, պարոն ժան, նստիլ ձեզի հետ նստարանի մը վրայ, — տեղն ալ տղու պէս որոշեցի կանխաւ, պահ մը առաջ, — հոն, փոքրիկ ճառ մը պիտի ըսէի ձեզի, զոր պատրաստեմ, երկասիրեմ ու գրեթէ գոց ըրեմ էի, որովհետեւ ձեր մեկնելէն ի վեր ուրիշ բանի վրայ չմտածեցի, այլ այս ճառին վրայ միայն: Ես ինծի բերնուց կ'ըսեմ զայն առաւօտէն մինչեւ իրիկուն: Ահա՛ ինչ որ միտքս գրեմ էի ընել և կը հասկնաք թէ ձեր նամակը...: Անճրկեցայ մնացի...: Քիչ մը խորհեցայ և ըսի ինքնիրենս որ, եթէ իմ պզտիկ ճառս ձեր կընքահօր ուղղեմ, գրեթէ ձեզի ուղղածի պէս պիտի ըլլամ: Ուստի ձեզի եկայ աղաչել, տէր երէց, որ հաճիք զիս մտիկ ընել:

— Մտիկ կ'ընեմ, օրիորդ, կակազեց արբան: — Հարուստ եմ, տէր երէց, շատ հարուստ, և անկեղծօրէն խօսելով, շատ կը սիրեմ դրամս, այո՛, շատ կը սիրեմ: Անոր կը պարտիմ այս պերճանքը, որ զիս կը շրջապատէ, այս պերճանքը, զոր չեմ ուրանար, — խոստովանանքս է

անհա, — քնաւ անհաճոյ չէ ինծի: Իսկ բարու-
 րանքս սա է որ տակաւին շատ երիտասարդ եմ.
 տարիքիս հետ կարելի է աս ալ կ'անցնի...: Բայց վստահ չեմ որ պիտի անցնի: Ուրիշ բա-
 րուրանք մըն ալ ունիմ. սա է որ, եթէ քիչ մը
 կը սիրեմ դրամս, ինծի հայթայթած հաճոյքնե-
 րուն համար, շատ մըն ալ կը սիրեմ անոր համար
 որ կը ներէ ինծի բարիք ընել: Կը սիրեմ զայն
 թերեւս անձնամոլութեամբ, այն ուրախութեան
 համար զոր կը զգայ մարդ տալով...: Վեր-
 ջապէս, կարծեմ թէ հարստութիւնս շատ գէշ
 ձեռքի մէջ չի գտնուիր: Լաւ, տէր երէց, ինչ-
 պէս դուք հոգիներ ունիք հոգալու, ես ալ դրամ
 ունիմ հոգալու: Միշտ ըսած եմ ինքնիրենս.
 «Կ'ուզեմ որ ամուսինս նախ և առաջ արժանի
 ըլլայ՝ այս մեծ հարոտութեանս մասնակցելու,
 կ'ուզեմ վստահ ըլլալ որ զայն բարիքի պիտի
 գործածէ, ինծի հետ, որքան որ ես ողջ ըլլամ,
 և ինէ ետքն ալ, եթէ ես իրմէ առաջ մեկ-
 նիմ աշխարհէ:» Ուրիշ բան ալ կ'ըսէի ինքնի-
 րենս...: Կ'ըսէի. «Ան որ իմ ամուսինս պիտի
 ըլլայ ես կ'ուզեմ սիրել զայն:» Եւ անհա, տէր
 երէց, ճշմարտապէս հոս կը սկսի խոստովանան-
 քըս: Մարդ մը կայ, որ երկու ամիսէ ի վեր,
 ամէն ինչ ըրաւ, իր սէրը ինէ ծածկելու հա-
 մար...: Բայց չեմ տարակուսիր որ այս մարդը
 կը սիրէ զիս...: Ժան, այնպէս չէ՞, կը սիրէք
 զիս:

— Այո՛, ըսաւ Ժան, ցած ձայնով, աչքերը
 ոճրագործի մը պէս գոցած, կը սիրեմ ձեզ:

— Աղէկ գիտէի, բայց վերջապէս ձեր բերնէն
 լսելու պէտք ունէի: Իսկ հիմա, Ժան կ'երդուըն-
 ցընեմ ձեզ, ա՛լ բառ մը մի՛ արտասանէք:
 Ձեր որ և է խօսքը անօգուտ պիտի ըլլայ. պիտի
 վրդովէ, պիտի արգիլէ զիս մինչեւ ծայրը հաս-
 նելու և ըսելու ինչ որ կ'ուզեմ անպատճառ ըսել:
 Խոստացէք ինծի նստած տեղերնիդ մնալ, ան-
 շարժ և անխօս...: Կը խոստանամ՞ք:

— Կը խոստանամ:

Պէթինա քիչ մը կը կոբսնցնէր իր համարձա-
 կութիւնը, ձայնը թեթեւ մը կը դողդոջէր: Սա-
 կայն բռնազբօսիկ զուարթութեամբ մը յա-
 րեց:

— Աստուած իմ, տէր երէց, անշուշտ ձեզ չեմ
 ամբաստանեմ այս եղածին համար, սակայն քիչ
 մըն ալ ձերն է յանցանքը:

— Ի՛մա է յանցանքը:

— Ա՛հ, դուք ալ մի՛ խօսիք: Այո՛, կը կրկնեմ
 ձերն է յանցանքը...: Վստահ եմ որ իմ վրաս
 շատ մը աղէկ բաներ ըսիք ժանին, խիստ շատ:
 Թերեւս առանց ատոր, չպիտի մտաբերէր...:
 Միւսոյն ատեն, ինծի ալ, իր վրայ շատ աղէկ
 բաներ կ'ըսէիք. — ո՛չ խիստ շատ իր վրայ,
 ոչ, ոչ, բայց վերջապէս շատ: — Ուստի, ես ձեր
 վրայ այնքան վստահութիւն ունէի որ սկսայ
 քիչ մը աւելի ուշադրութեամբ դիտել ու քննել

զայն: Սկսայ զայն բաղդատել այն ամէն անձե-
րուն հետ, որոնք տարիէ մը ի վեր զիս ամուս-
նութեան խնդրած էին: Ինծի թուեցաւ թէ
ամէն կերպով անոնցմէ բարձր էր...: Վերջապէս
եղաւ օր մը... կամ լաւ ևս իրիկուն մը... ե-
րեք շաբաթ կայ, ձեր մեկնելուն նախորդ օրը,
ժան, հասկցայ որ ձեզ կը սիրէի...: Այո՛,
ժան, կը սիրե՛մ ձեզ...: Կ'երդուընցնեմ ձեզ,
ժան, ոչինչ մի՛ ըսէք... նստած մնացէ՛ք...
մի՛ մօտենաք ինծի: Հոս գալէս առաջ, քաջու-
թեան պաշար առած էի իմ հետս. բայց անա՛ կը
տեսնէք, պահ մը առաջ ունեցած հանդարտու-
թիւնս չմնաց: Սակայն տակաւին բաներ մը
ունիմ ձեզի ըսելիք... և ամենէն կարեւորները:
ժան, լա՛ւ մտիկ ըրէք: Չեմ ուզեր այնպիսի
պատասխան մը ընդունիլ որ ձեր յուզումէն
խլած ըլլամ զայն: Գիտեմ թէ զիս կը սիրէք...:
Եթէ պիտի ամուսնանաք ինծի հետ, չեմ ուզեր
որ միայն սիրով ըլլայ. կ'ուզեմ որ դատողու-
թեամբ ալ ըլլայ: Չեր մեկնելուն նախընթաց
տասը ընի՛րգ օրուան մէջ, այնպիսի հնարքով
ինչ խոյս տուիք, ամէն խօսակցութենէ զգու-
շացաք. որ չկրցայ ինքզինքս ցոյց տալ, ինչպէս
որ եմ: Թերեւս այնպիսի յատկութիւններ ունիմ
զոր դուք չէք գիտեր...: ժան, գիտեմ թէ ի՛նչ
էք դուք, գիտեմ թէ ի՛նչ բանի յանձնառու
պիտի ըլլամ, ձեր կի՛նը ըլլալով, և ձեզի համար
ո՛չ թէ միայն կաթոգին սիրող կին մը պիտի

ըլլամ, այլ նաև կտրիճ սրտով կին մը: Ես ձեր
ամբողջ կեանքը գիտեմ. ձեր կնքահայրը պատմած
է ինծի: Գիտեմ թէ ի՛նչու զինուոր եղած էք,
գիտեմ ի՛նչ պարտականութիւններ, ի՛նչ զոհո-
ղութիւններ կրնաք նախատեսել ապագային հա-
մար...: Ժան, մի՛ տարակուսիք. ձեզ ետ չը-
պիտի կեցնեմ այդ պարտականութեանց, այդ զո-
հողութեանց և ո՛չ մէկէն: Եթէ ձեզի դէմ ըսելիք
մը ունիմ, թերեւս սա է միայն որ այն մտա-
ծումը ունեցաք — ո՛հ, անշուշտ ունեցաք — թէ
ես պիտի փափաքիմ որ ազատ և բոլորովին իմս
ըլլաք, թէ պիտի խնդրեմ ձենէ որ ձեր ասպա-
րէզը թողուք: Երբե՛ք, երբե՛ք, կը լե՛ք, եր-
բեք չպիտի խնդրեմ ձենէ այսօրինակ բան
մը...: Իմ ծանօթներէս աղջիկ մը ըրաւ ատիկա,
երբ ամուսնացաւ. գէ՛շ բան էր ըրածը...: Ես կը
սիրեմ ձեզ և կ'ուզեմ ձեզ այնպէս ինչպէս որ
էք: Որովհետեւ դուք անոնցմէ էք որոնք
փափազեցան ինծի հետ ամուսնանալ, դուք
անոնցմէ տարբեր և լաւագոյն կերպով կ'ապրիք.
անա ասոր համար ես փափաքեցայ ամուսին
ուսնեալ ձեզ: Եթէ դուք ալ անոնց պէս ապրիլ
ուզէիք, ինչ որ չուզեցի, նուազ պիտի սիրէի
ձեզ, կամ թերեւս բնաւ իսկ չպիտի սիրէի, —
և սակայն ասիկա շատ դժուար պիտի ըլլար
ինծի...: Երբ կարենամ ձեզի հետ գալ, պիտի
գամ, և ո՛ւր որ դուք գտնուիք՝ հո՛ն պիտի
ըլլայ իմ պարտականութիւնս, ուր որ դուք

ըլլաք՝ հո՛ն պիտի ըլլայ երջանկութիւնս։ Եւ, եթէ
 այն օրը դայ (*) որ զիս չկարենաք հետերնիդ
 տանիլ, այն օրը ուր պարտիք մինա՛կ երթալ,
 լա՛ւ ուրեմն, ժան, այն օրը, ձեզի կը խոստա-
 նամ քաջ ըլլալ, որ քաջ մնաք դուք ալ...
 Իսկ հիմա, տէր երէց, ոչ իրեն՝ այլ ձեզի կ'ուզ-
 դեմ խօսքս... կ'ուզեմ որ դո՛ւք պատասխա-
 նէք... և ո՛չ ինք, Լսէ՛ք... եթէ զիս կը սիրէ
 և եթէ զիս իրեն արժանի կը գտնէ, իրաւո՞ւնք
 է որ այսքան խստութեամբ ինձի քաւել տայ
 իմ հարստութիւնս... Լսէ՛ք... պէտք չէ՞ որ
 ընդունի իմ ամուսինս ըլլալ։

— Ժան, ըսաւ ծանրօրէն ծերունի քահա-
 նան, ամուսնացիր անոր հետ... պարտաւորու-
 թիւնդ է ատ... և երջանկութիւնդ պիտի ըլլա՛յ։

Պէթինայի մօտեցաւ ժան, թեւերուն մէջ ա-
 աւ, և ճակտին վրայ առաջին համբոյրը դրոշ-
 մեց։

Պէթինա մեղմօրէն ետ քաշուեցաւ, և ար-
 բային ուղղելով խօսքը, ըսաւ.

— Եւ այժմ, տէր երէց, բան մըն ալ պիտի
 խնդրեմ ձեռնէ... կ'ուզէի... կ'ուզէի...։

— կ'ուզէի՞ք։

— կ'աղաչեմ, տէր երէց, համբուրեցէ՛ք զիս։
 Ծերունի քահանան հայրաբար համբուրեց

զայն երկու այտերէն, ու յետոյ ըսաւ Պէթինա.

— Յաճախ ըսած էք, տէր երէց, որ ժան
 ձեր զաւակն է քիչ մը, — ես ալ, այնպէս չէ՞,
 քիչ մը ձեր ազնիկը պիտի ըլլամ։ Երկու զաւակ
 ունեցած կ'ըլլաք։

.....

Ամիս մը ետքը, Սեպտեմբեր 12, կէս օրին
 Պէթինա, հարսի ամենապարզ շրջագգեստով,
 Լօնկվալի եկեղեցիին մէջէն կ'անցնէր, մինչդեռ
 խորանին ետին Յորդ զօրագուհին փողը կը հըն-
 չէր վառվառ ձայնով՝ հնաւուրց եկեղեցիին գմբէ-
 թին ներքեւ։

Նանսի Թիւռնէր խնդրած էր այս հանդիսա-
 ւոր պարագային մէջ երգեհոնը նուագելու պա-
 տիւն ստանձնել, որովհետեւ դաշնավիւնը անե-
 րեւոյթ եղած էր։ Ճաճանչագեղ պոկերով երգե-
 հոն մը դրուած էր եկեղեցիին վերնատան մէջ։
 Այն երգեհոնը՝ օրիորդ Բէրսիվալին կողմէ ար-
 բայ Քօնսթանթինի արուած հարսանեկան ըն-
 ծան էր։

Ծերունի երէցը պատարազն ըսաւ. ժան և
 Պէթինա ծնրադրեցին առջեւը. պսակի արբու-
 դութիւնը կատարեց և յետոյ աղօթքի կեցաւ
 մէկ քանի վայրկեան, թեւատարած, երկնքի
 շնորհը սրտագին հայցելով իր երկու զաւակնե-
 րու

(*) Այն օրը, այսինքն ժամին հօր մահուան ու Ֆրան-
 սայի պարտութեան վրէժը լուծելու օրը։

Այդ միջոցին երգեհոնը հնչեցուց Շոբէնի այն
խոհերգը զոր Պէթինա նուազած էր առաջին
անգամուն որ մտեր էր այս գեղջկական փոքրիկ
եկեղեցիին մէջ, ուր իր կեանքի երջանկութիւն
պիտի սրբագործուի եղեր:

Եւ այս անգամ Պէթինան էր որ լացաւ:

Վ Ե Ր Զ



ՀԱՅԿ ԿՕՇԿԱՐԵԱՆ

Հրատարակիչ-Գրավաճառ.

Պապը Ալի, Բեօիս Էֆէնսի խան քիւ 10

Արտասահմանի Հասցի

B. P. 558 Stamboul

ԷՁ ՄԸ ՄԵՐ ԳՐԱՑԱՆԿԷՆ

Արաքսիա կամ Վարժուհին	Ս. Տիւսար	100
Մայտա	» »	75
Սիրանոյշ	» »	150
Անհետացած Սերունդ մը	Գ. Զօհրապ	100
Կեանքը ինչպէս որ է	» »	50
Լուս Յաւեր	» »	50
Աղքատին Պատիւը	Ա. Ալթունեան	150
Արշին Մալ Ալան		15
Առաքելութիւն ի Ծապլվար	Ե. Օտեան	30
Ընկեր Փանջունի	» »	30
Դատաստանական Խորհդ. առջև	» »	50
Մատնիչը	» »	50
Բերայի Գիշերներ	Յ. Հաճեան	120
Բարեկենդանի Անկուտիները		15
Դարձը	Լ. Շանթ	50

Դերասանուհին	Լ. Շանթ	75
Ճամբուն վրա	» »	40
Երբ Այլեւս Չեն Սիրեր	Ջապել Եսայեան	75
Երկու Խուլեր	Մօլիէր	15
Թողթի Փռուքը	Արշակ Չօպանեան	35
Թապալակներ Բիլիկ Երանոս Աղբար		25
Ինչէ Ընկերվարութիւնը		10
Խոհանոցի Գիրքը		30
Ծրածան Նոր Տաղեր Միտաք Մեծարենց		150
Ընկերը	Վիքթոր Մառկրիթ	100
Մանչ-Աղջիկը		125
Մարդիկներուն Միրքը		60
Յիմար Կոյը	Հանրի Պաթայլ	60
Ոճիրի Պանդուկը		100
Չարիքի Նախարարը	Ուիլիէմ տը Բէօ	75
Պատմուածքներ	Վ. Թոթովենց	75
Պիւրիտան	Միչէլ Չէվաքօ	200
Մանօն-Լեսքօ	Ապպէ Բրէվօ	150
Ռասբութին կամ Սրիկայ վանականը		50
Սիսօնէ Մառի	Գապիէ տը Մօնթէքէն	400
Սաթենիկ Տրդատ	Ս. Թիւթիւնճեան	80
Տրիւրի		40
Տասնօրեակ	Պօքաչիօ	60
Սիրային Ոճիր մը	Բօլ Պուրժէ	100
Տօքթ. Մօօրի Վրէժը		40
Քամելիազարդ Կինը	Տիւմա Որդի	100
Քսան Կախաղանները		75
Կարմիր Ժամուց	Արփիար Արփիարեան	50
Ժողովուրդին Գիրքը	Մ. Նուպարեան	100

Վանականին Սէրը	Ժան Ռամօ	125
Նատիա	Տէլլի	60
Սրտին Չայնը	Բիէն Լուիս	150
Սիրահարի մը Դասերը	Լիւսի Բօլ Մառկրիտ	60
Սօնիա		100
Պէն Հուր		200

Կօսկարեան գրասուեր կը յայտայտէ ամէն տեսակ դպրցական, վիպական, բանաստեղծական, բանաստեղծական գրքեր:

Պայմաններու եւ գեղջի համար դիմել իր միակ եւ անփոփոխ հասցեին՝

B. P. 558 STAMBOUL Հ. ԿՕՏԿԱՐԵԱՆ «ԱՐԵՒ»

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԿԱՐԱՆԸ

Տօքթ. Կ. Փաշաեանի

ՎԵՑ ՈՒ ԿԷՍ ՊՕՐՏԻ ԺԱՌԱՆԳ

ՄՆԱՑԱԾ ՄՆՏՈՒԿԸ

Տ. Փափագեանի

125
50
100
100
200

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page.

33

15m

Wing.

2129

12813

